

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2018

ՀՏԳ 374.7: 06

ԳՄՊ 74.4

Մ 550

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Պատրաստվել է Դի-Վի-Վի ինթերնեյշնլի Հայաստանի մասնաճյուղի,
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի և Յկյան ուսումնառության
հայաստանյան լիգայի կողմից:

Խմբագրակազմ՝

փ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան
Արթուր Սկրտիչյան

ք. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի
վարիչ Արթուր Աթանեսյան

Մ 550 Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաս-
տանում: Ուսումնական նյութերի ժողովածու: -Եր., ԵՊՀ
հրատ., 2018, 302 էջ:

Ուսումնական նյութերի ժողովածուն պատրաստվել է համանուն գիտաժողովի նյութե-
րի ներառմամբ /2017 թ. դեկտեմբերի 5-6, Երևանի պետական համալսարան, Երևան, Հա-
յաստան/ և նվիրված է մեծահասակների կրթության արդի հիմնախնդիրներին, ինչպես նաև
դասավանդման մեթոդաբանական, արժեքաբանական և կիրառական հարցերին: Ժողովա-
ծուն հասցեագրված է գիտակրթական գործընթացներում ներգրավվածներին, կրթության
վարչարարության մասնագետներին և մասնագիտական հասարակական կազմակերպու-
թյունների ներկայացուցիչներին:

ՀՏԳ 374.7: 06

ԳՄՊ 74.4

ISBN 978-5-8084-2304-6

© ԵՊՀ հրատ., 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ.
21-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀՈԶԱԿԱԳԻՐ

Սովորելու ուժն ու բերկրանքը

Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան (ՄԿԵԱ) այս մանիֆեստով առաջարկում է ստեղծել սովորող Եվրոպա՝ այնպիսի Եվրոպա, որն ի վիճակի է շարժվել դեպի ապագան դրական լիցքերով՝ տիրապետելով բոլոր անհրաժեշտ հմտություններին, գիտելիքին ու կարողություններին: Մենք առաջարկում ենք համաեվրոպական միասնական ջանքերն ուղղել նման առաջընթացին, ինչպես նաև գիտելիքահեն հասարակության ստեղծմանը, որը կարող է հաղթահարել մեր ժամանակի մարտահրավերները: Նման մոտեցումը պահանջում է, որ արդեն իսկ մեծահասակների կրթությանն ուղղված կայուն ներդրումներ կատարվեն եվրոպական, ազգային, շրջանային և տեղական մակարդակներում: Նման ներդրումը կփոխհատուցվի երկարաժամկետ կտրվածքով՝ մրցունակության, բարեկեցության, առողջ բնակչության, զարգացման և այլ ոլորտներում:

Մեծահասակների կրթության միջոցով հնարավոր է կյանքն ու հասարակությունը դեպի լավը փոխել: Այն մարդու իրավունք և համընդհանուր արժեք է: Ներկայումս եվրոպական քաղաքականության հիմնական ռազմավարությունը Մեծահասակների ուսումնառության եվրոպական օրակարգն է, որն իրականացվում է անդամ պետությունների մակարդակով՝ ազգային համակարգողների կողմից: ՄԿԵԱ-ի կարծիքով՝ անհրաժեշտ է ոչ միայն կատարելա-

գործել Օրակարգը, այլև հավելյալ քայլեր ձեռնարկել: Այս մանիֆեստը կուրվագծի, թե որը կլինի մեծահասակների կրթության ներդրումը եվրոպական մի շարք քաղաքականություններում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ մման մոտեցումը հանրային լուրջ ներդրումներ է ակնկալում մեծահասակների կրթության կազմակերպությունների և մեծահասակ սովորողների ուղղությամբ:

Շատ որոշում կայացնողներ, գործարարներ և քաղաքացիներ տեղյակ չեն, թե մեծահասակների կրթությունը որքանով կարող է նպաստել հասարակական, տնտեսական և անճնական մարտահրավերները լուծելու գործին: Այս պատճառով ՄԿԵԱ-ն առաջարկում է Մեծահասակների ուսումնառության եվրոպական տարի, որը կբարձրացնի մեծահասակների կրթության մասին իրազեկվածությունը Եվրոպայում: Տարվա կարգախոսը կլինի «Սովորելու ուժն ու բերկրանքը»: Մի կողմից՝ մենք ցանկանում ենք ընդգծել մեծահասակների կրթության տրանսֆորմատիվ ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ ուսանելու դրական փորձը: Շատերը սովորելու նկատմամբ բացասական վերաբերմունք ունեն՝ դպրոցում ունեցած վատ փորձի պատճառով: Ոմանք էլ կարծում են, թե վերապատրաստումը ևս մեկ փորձություն է, որը պետք է հաղթահարել կյանքում հաջողության հասնելու համար: ՄԿԵԱ-ն նպատակ ունի ընդգծել սովորելու դրական կողմը՝ որպես ընդհանուր մոտեցում և որպես սովորելը չկարևորողներին գրավելու միջոց:

Մարտահրավերներ և պատասխաններ

Մեծահասակների կրթությունը կարևորագույն գործիք է ներկայումս Եվրոպայում առկա հիմնական մարտահրավերները հաղ-

քահաբեկու համար: Եվրոպայում աճում է անհավասարությունը ոչ միայն մարդկանց, այլև երկրների ու շրջանների միջև: Եվրոպական երկրների ավելի ու ավելի շատ քաղաքացիներ կարծես հարցականի տակ են դնում եվրոպական արժեքները՝ քվեարկելով այլատյաց և հակաեվրոպական արժեքներ քարոզող կուսակցությունների օգտին, իսկ երիտասարդների որոշ փոքր խմբեր այնքան արմատական են դառնում, որ դիմում են ահաբեկչական գործողությունների: Շատ երկրներում և շրջաններում գործազրկությունը (հատկապես երիտասարդների շրջանում) շատ բարձր է: Աճող թվայնացումը նպաստում է այս իրավիճակին, բայց միննույն ժամանակ աշխատողներից, քաղաքացիներից և սպառողներից նոր հմտություններ և կարողություններ է պահանջում:

Միգրացիան և ժողովրդագրական փոփոխությունները ձևափոխում են Եվրոպայի բնակչության պատկերը: Մարդիկ երկար են ապրում և այդ իսկ պատճառով ուզում են ավելի երկար ակտիվ ու առողջ լինել: Մեզ անհրաժեշտ է նաև միգրանտների թվի աճ, որը, սակայն, ինչ-որ չափով հակադրության մեջ է գործազրկության մակարդակի և աճող այլատյացության հետ: Վերջերս Եվրոպան առերեսվեց փախստականների ահռելի ներհոսքի հետ, ինչը եվրոպական երկրների համար առաջ բերեց հսկայական մարտահրավերներ: Մի կողմից՝ սա առաջացրեց Եվրոպայի քաղաքացիների աջակցության, իսկ մյուս կողմից՝ ատելության և խտրականության ալիքներ: Կլիմայի փոփոխությունը և բնապահպանական այլ մարտահրավերները շարունակում են սպառնալ Եվրոպայի ապագային և պահանջում են ավելի կայուն տնտեսություն, հասարակություն և ապրելակերպ: Մեծահասակների կրթությունը այս հարցերից շա-

տերին դրական պատասխան է տալիս: Այն կարող է օգտակար լինել ինչպես անհատին, այնպես էլ հասարակությանն ու տնտեսությանը:

Մենք ցանկանո՞ւմ ենք նորարարական, ավելի հավասար, կայուն Եվրոպա, որտեղ քաղաքացիները մասնակից են ժողովրդավարությանը, որտեղ մարդիկ արդյունավետ ապրելու և աշխատելու համար ունեն հմտություններ ու գիտելիք և մասնակցում են մշակութային ու քաղաքացիական գործընթացներին երիտասարդ տարիքից մինչև խոր ծերություն:

Այս փաստաթղթում ՄԿԵԱ-ն ներկայացնում է փաստարկներ, ուսումնասիրություններ, օրինակներ և սովորողների պատմություններ, որոնք պարզաբանում են մեր դիրքորոշումը:

Ակտիվ քաղաքացիություն, ժողովրդավարություն և մասնակցություն

ՄԿԵԱ-ն և նրա անդամները հավատարիմ են Եվրոպային և եվրոպական արժեքներին: Մենք հավատում ենք, որ միջմշակութային շփումներն ու համագործակցությունը կարևոր գործոններ են այնպիսի Եվրոպայի համար, որտեղ առաջնային են հարգանքը, մասնակցությունը և միասնականությունը:

Մեծահասակների կրթության շատ կազմակերպություններ ձևավորվել են ազատական շարժումների արդյունքում (բանվորների, կանանց կամ կրոնական կազմակերպություններ): Ներկայումս ևս մեծահասակների կրթությունը տրամադրում է գիտելիք և անհրաժեշտ հմտություններ ժողովրդավարությունը և քաղաքացիական դիրքորոշումը զարգացնելու համար: Բացի դրանից՝ մեծահա-

սակների կրթությունը կարող է ամրապնդել քաղաքացիական հասարակությունը և նոր լիցք հաղորդել:

Եվրոպայում արմատական հայացքների աճը ցույց է տալիս, որ ժողովրդավարական արժեքները, հանդուրժողականությունն ու հարգանքը վերահաստատման կարիք ունեն: Միջնակութային և միջկրոնական երկխոսությունները կարող են մեծ դեր խաղալ այդ գործընթացում:

Մեծահասակների կրթությունը կարող է զարգացնել ժողովրդավարությունը, ակտիվացնել կենսունակ քաղաքացիական հասարակության թափանցիկությունն ու առաջընթացը, ինչպես նաև աջակցել քննադատական մտածողությանն ու հզորացմանը:

Մեծահասակների մրցունակության միջազգային գնահատման ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հստակ փոխկապակցվածություն կա վստահության և քաղաքական ազդեցության ու հմտությունների մակարդակի միջև: Որքան քիչ են մարդու տարրական հմտությունները, այնքան ավելի ցածր են ինստիտուցիոնալ կառույցների հանդեպ վստահությունն ու հավատն առ այն, որ կարելի է անհատական մակարդակում ազդեցություն ունենալ:

Այն մարդիկ, ովքեր մասնակցում են մեծահասակների կրթությանը, ավելի հաճախ են կամավորություն անում:

Լավագույն փորձի օրինակ

Ռուսինիայում «Առաջնայինը քաղաքացիներն են» ծրագիրը ամբողջ երկրում զգալի ազդեցություն ունեցավ փոքր համայնքների՝ մասնավորապես գյուղական համայնքների համար: Ծրագիրը ջանում է քաղաքացիներին տալ ձայնի իրավունք՝ որոշելու, թե ինչն է առաջնահերթ իրենց համայնքի համար: Այն նաև սովորեցնում է նրանց այնպիսի լուծումներ գտնելու հմտություններ, որ կարող են իրականացվել հենց քաղաքացիների կողմից: Միասին նրանք վեր են հանում համայնքային խնդիրները, բարձրաձայնում են դրանցից առաջնայինները և համագործակցաբար մշակում են գործողությունների ծրագրեր:

«Առաջնայինը քաղաքացիներն են» ծրագրի արդյունքը մեծապես գերազանցեց նախնական սպասելիքները:

Արդյունքում մարմինները սկսեցին ընկալվել ոչ միայն որպես որոշում կայացնողներ, այլ նաև որպես համայնքը զարգացնելու գործընկերներ: Հարց է առաջանում՝ ի՞նչ պետք է անել, և մենք ինքներս ի՞նչ կարող ենք անել մեզ և մեր համայնքի համար:

Լավագույն փորձի օրինակ

Շվեդական Իբն Ռուշդ իսլամական ուսումնասիրությունների ասոցիացիան իրականացնում էր խաղաղությանը միտված ծրագիր: Երկրի բոլոր շրջաններից երիտասարդ մահմեդականներ դարձել էին խաղաղության գործակալներ: Նրանք ստացել էին գիտելիք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են խաղաղության խնդիրների, բռնության դեմ պայքարի և մարդկային իրավունքների թեմաներով աշխատելու համար: Ծրագրի նպատակն է պայքարել իսլամաֆորիայի դեմ (վախ և թշնամություն իսլամի հանդեպ), որն առկա է հիմնականում արևմուտքի հասարակության շրջանում, ինչպես նաև մահմեդականների շրջանում տարածված արևմտաֆորիայի դեմ, որն արտացոլվում է արևմուտքի հանդեպ՝ վախի և թշնամության դրսևորումներում: Հիմնադրվեց մահմեդական խաղաղության շարժման հիմնադրամը:

Տվյալներ հետազոտություններից

Հանրային համախմբման տեսանկյունից կրթությունը կարող է կարևոր դեր խաղալ՝ նպաստելով վստահությանը, քաղաքացիական համագործակցությանը և հանցագործության ավելի ցածր մակարդակին: Անհատի ներգրավվածությունը կրթության մեջ կանխատեսում է նաև նրա ներգրավվածությունը հասարակական կյանքում, քանի որ ինչքան շատ է սովորողը ներգրավված իր կրթության մեջ, այնքան ավելի պատրաստակամ է հասարակական կյանքում դրական դեր ունենալուն: Մեծահասակների կրթությունը հանգեցնում է նաև ռասայական հանդուրժողականության բարձրացմանը և ավելացնում ընտրական գործընթաց-

ներում մասնակցության հավանականությունը: Փրեսթոնը վերլուծում է մեծահասակների կրթության ազդեցությունը մարդկանց հասարակական կյանքի և արժեքների ձևավորման վրա: Նա գտնում է, որ կրթությունը կարող է ազդեցություն ունենալ անհատի ֆորմալ և ոչ ֆորմալ հանրային մասնակցության վրա: Ինչ վերաբերում է ոչ ֆորմալ մասնակցությանը, ապա դա օգնում է անհատներին հիմնել, պահպանել, վերականգնել և հաստատել հանրային ցանցեր: Բացի դրանից՝ կրթությունը կարող է ազդել արժեքների ձևավորման վրա: Այսպես, օրինակ, հարցվողները խոսել են այն մասին, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել կրթությունը հանդուրժողականության, փոխըմբռնման և հարգանքի վրա: Քաղաքացիական և հանրային ներգրավվածությունը որպես կրթության արդյունք վերլուծվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից:

Կյանքի հմտություններ անհատների համար

Մեծահասակների կրթությունը կարող է բազմաթիվ հմտություններ և գիտելիք տալ՝ հանգեցնելով բազմաթիվ արդյունքների և նպատակների, այդ թվում՝ տարրական հմտությունից մինչև լեզվի ուսուցում, ժամանցային դասընթացից մինչև մասնագիտական ուսուցում, ընտանեկան կրթությունից մինչև առողջապահություն: Սրանք հմտություններ են, որոնք օգտակար կլինեն անհատներին իրենց ողջ կյանքի ընթացքում: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոչ միայն ինքնին կրթությունն է կարևոր մարդկանց համար: Մեծահասակների ոչ ֆորմալ կրթությանը մասնակցելը ունի մի շարք այլ առավելություններ: Այն կարող է կյանքեր

փոխել և տալ նոր հնարավորություններ ու նոր աշխատանք, ուղի հարթել դեպի ֆորմալ կրթություն, դպրոցական կրթությունը կիսատ թողածին վերադարձնել դպրոց, օգնել ծնողներին երեխաների հետ շփումներում, ակտիվացնել մարդկանց ստեղծագործական ու մշակութային ձիրքերը և սովորեցնել ավելի առողջ ապրելակերպ:

Տվյալներ հետազոտություններից

Առկա տվյալները ցույց են տալիս, որ մեծահասակ սովորողները բազմաթիվ առավելություններ են ստանում մեծահասակների կրթությունից: Նրանք ֆիզիկապես ավելի առողջ են և վարում են ավելի առողջ ապրելակերպ: Նրանք ստեղծում են հասարակական նոր կապեր և իրենց ընկալմամբ ավելի բարեկեցիկ են: Բացի դրանից՝ մարդիկ, ովքեր մասնակցում են մեծահասակների լիբերալ կրթությանը, ավելի ոգևորված են մասնակցելու ցկյանս կրթությանը և այն տեսնում են որպես իրենց կյանքը բարելավելու միջոց: Այդ արդյունքների մասին տեղեկանում ենք տարբեր ոլորտների կրթվողների կողմից՝ լեզվի, արվեստի դասընթացներից մինչև սպորտի և քաղաքացիական կրթության մասնակիցներից: Կրթության ցածր մակարդակով մարդիկ մեծահասակների կրթությունից ավելի շատ առավելություններ են ստանում:

Լավագույն փորձի օրինակ

Մեղր Միացյալ Թագավորությունից է: Նա ավելի քան տասներեք տարի ագորաֆորիա ուներ: 2007 թվականի սեպտեմբերին նա իր մեջ համարձակություն գտավ և անդամագրվեց գրաճանաչության դասընթացի: Չնայած ծայրահեղ նյարդային վիճակին՝ նա

սկսում է հաճախել դասընթացների՝ հասկանալով, որ օրեցօր իր համար ավելի է հեշտանում այդ դասընթացներին հաճախել: Մեղը շատ ոգևորված էր Հուլյ կրթական կենտրոնի դասընթացներով: Նա հանձնում է սկսնակների երրորդ մակարդակի քննությունը, այնուհետև գրաճանաչության երկրորդ և առաջին մակարդակները: Նա հասնում է իր հաջորդ նպատակին ևս՝ հանձնելով թվաբանության առաջին մակարդակի քննությունը:

Մեղը ցանկանում էր օգնել ուրիշներին և հաճախում է կամավորության դասընթացների ու սկսում է կամավորություն անել մտավոր խնդիրներ և հաշմանդամություն ունեցող մեծահասակների խմբակում: Քանի որ նա ցանկանում էր դասընթացավար դառնալ, հանձնում է մասնագիտական որակավորման ուսուցման աջակցության առաջին մակարդակը և հաջողությամբ հաճախում է ցկյանս կրթության ուսուցման դասընթացների, որոնք նա շուտով կավարտի: Այժմ ինքնավստահ Մեղը հաճույքով ժամանակ է անցկացնում իր ընտանիքի հետ տնից դուրս: Նա 38 կիլոգրամ նիհարել է, կամավորություն է անում և շարունակում է սովորել:

«Այժմ ինձ ոչինչ չի կանգնեցնի: Ես ոչնչից մոր կյանք եմ ձեռք բերել և միայն այն բանի շնորհիվ, որ կրկին սկսեցի սովորել», - ժպտում է Մեղը:

Հանրային միասնություն, արդարություն և հավասարություն

Կրթության մակարդակը մեծապես ներազդում է մարդկանց հնարավորությունների վրա՝ սկսած նրանց աշխատանքի տեսակից մինչև կյանքի տևողությունը:

Կրթության դրական ազդեցությունը նկատելի է վերջինիս վերարտադրողական բնույթում. կրթության ավելի բարձր մակարդակ ունեցող մարդիկ հակված են սովորել շարունակելու և որպես այդպիսին կրթությունը շարունակելու ավելի շատ հնարավորություններ ունեն, քան կրթության ավելի ցածր մակարդակ ունեցողները:

Մեծահասակների կրթությունը կարող է վաղ տարիքում չստացած կրթության պակասը լրացնել և ակտիվացնել հանրային ներգրավվածությունը: Տարրական հմտությունների դասընթացներից մինչև այլընտրանքային միջնակարգ դպրոց կամ փախստականների համար լեզվի դասընթացներ առաջարկելով՝ մեծահասակների կրթությունը տալիս է անհատական մակարդակում կյանքը բարելավելու շատ հնարավորություններ: Այն նաև հանրային հավասարակշռման մեծ դեր է կատարում՝ ստեղծելով ավելի արդար հասարակություն և խթանելով տնտեսական աճը:

Հանրային միասնության առավել բարձր մակարդակի հասնելու համար անհրաժեշտ է առավել ակտիվ ներգրավել այն խմբերին, որոնք չեն մասնակցում կրթական տարբեր գործընթացների:

Ճիշտ մոտեցում կիրառելու դեպքում կավելանա մարդկանց ներգրավվածությունը բոլոր ոլորտներում՝ լինի դա հասարակական կյանքի, ժողովրդավարության, տնտեսության, արվեստի թե մշակույթի:

Լավագույն փորձի օրինակ
Լա Վեռնեդա-Սուրբ Մարթի մեծահասակների դպրոցում նորեկ մասնակիցներին ողջունելը և ճիշտ ընդունելը չափազանց կարևորվում են: Յուրաքանչյուր նոր մասնակցին անհատական մո-

տեցում է ցուցաբերվում, ժամանակ է տրամադրվում: Նախորդ տարիների մասնակիցները ընդունելության, գրանցման և խմբերի մեջ ընդգրկման ժամանակ կարևորագույն դեր են խաղում, քանի որ նրանք արդեն ունեն շփման փորձ և հասկանում են, թե ինչ է նշանակում առաջին անգամ գալ: Նոր մասնակցի կոնկրետ խմբում ընդգրկվելու մասին որոշումը կատարվում է երկխոսության և փոխհամաձայնության արդյունքում: Ուշադրություն է դարձվում նրան, որ յուրաքանչյուր մարդ հասկանա, թե ինչ գործընթացով է կատարվում ընտրությունը, և ընդգրկվի այն խմբերում, որտեղ նա առավելագույնս կարող է սովորել: Անձնակազմն ու կամավորներն ամեն ինչ անում են, որ մասնակիցների մոտ քննության տպավորություն չստեղծվի:

Լավագույն փորձի օրինակ

Շվեդիայում առկա «Սովորելը խթանող ժողովրդական բարձրագույն դասընթացները», որոնք նպաստում են աշխատանք փնտրող երիտասարդների շարունակական կրթությանը, բավականին լավ արդյունքներ են գրանցել: Դասընթացներից հետո մասնակիցների քառասուն տոկոսը սկսել է կամ ավելի շատ աշխատել, կամ ավելի շատ սովորել, և ավելի քան երկու երրորդը հակված է շարունակել կրթությունը և հավատում է, որ կրթությունը դեպի աշխատանք տանող ուղին է:

Շվեդիայի ողջ տարածքում այս հաստատությունները փախուստականների համար կազմակերպում են դասընթացներ, որոնք նպաստում են շվեդական հասարակությունում նրանց ինտեգրմանը, ինչպես նաև ստեղծվում են ուսումնական խմբակներ՝ ապաստարան փնտրող փախստականների համար: Այս կոնկ-

րեստ ջանքերը հաջողությամբ են պսակվել, քանի որ դրանք հիմնված են արդեն իսկ գոյություն ունեցող մեծահասակների կրթության կառույցների և կազմակերպությունների վրա, որոնք կանոնավոր կերպով հովանավորվում են պետական մակարդակով: Առկա է մեծահասակների կրթության կայուն մոդել, որը ճկուն արձագանք է տալիս հասարակության մարտահրավերներին և նոր կարիքներին:

Զբաղվածություն և թվայնացում

Զբաղվածության և կրթության միջև դրական կապն ակնհայտ է: Կրթված աշխատակիցները կարևոր են նորարարության, արդյունավետության, մրցունակության և ձեռներեցության համար: Աշխատավայրում սովորելը իրենից ներկայացնում է ցկյանս ուսումնառության կարևորագույն խթաններից մեկը, իսկ բոլոր շահառուների հետ սոցիալական հարաբերությունների ստեղծումը առավել քան կարևոր է: Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան, կարևորելով հմտությունների բարելավումը, ինչպես նաև նոր հմտությունների ձեռք բերումը, գտնում է, որ զբաղվածության համար նպաստավոր է ցանկացած ուսումնառություն: Ասոցիացիայի դիրքորոշումն այն է, որ սովորելը պետք է նպաստի թե՛ առանցքային հմտություններին, թե՛ այլ հարակից հմտությունների ձեռքբերմանը: Չուտ տեխնիկական մոտեցման վտանգն այն է, որ սովորած հմտությունները կարող են շատ արագ ոչ պիտանի դառնալ: Եթե մենք համատեղենք սովորելը, նորարարությունն ու մրցունակությունը այլ բնագավառի առավել խորքային գիտելիքների հետ, ապա կարող ենք ունենալ ավելի պատրաստված և մրցունակ աշ-

խատուծ, որը համադրում է կրթության և սովորելու տարբեր ձևաչափերը իր հմտությունները միշտ արդիական պահելու նպատակով:

Կանխատեսումները հստակ ցույց են տալիս, որ Եվրոպան ապագայում կարիք է ունենալու ավելի շատ գիտելիքի և ավելի քիչ չափով է օգտագործելու ցածր որակավորմամբ աշխատուժ: Դրա ամենալավ օրինակը թվայնացման զարգացումն է, որը հանգեցնելու է բազմաթիվ փոփոխությունների. առցանց կառավարությունից մինչև առցանց գնումներ և համացանցով պայմանավորված այլ փոփոխություններ: Դա նշանակում է, որ մենք պետք է լրացնենք թվայնացման արդյունքում առաջացած բացը և վստահ լինենք, որ յուրաքանչյուր ոք ունակ է համակարգիչ, թաբլեթ կամ սմարթֆոն օտագործել: Մենք նաև պետք է ենթադրենք, որ աշխատանքի շատ տեսակներ կամ արդեն իսկ անհետացել են, կամ անհետանալու են, իսկ փոխարենը նորերն են ստեղծվելու: Եվրոպան գիտելիքամետ աշխատուժի կարիք է ունենալու՝ այդ փոփոխություններին հարմարվելու համար, իսկ սովորելը այդ ուղղությամբ առանցքային ներդրումն է: Պետական շատ ծառայություններ և գործիքներ, որոնք նպաստում են քաղաքացիական մասնակցությանը, այժմ արդեն հասանելի են առցանց: Թվային հմտություններն ապահովում են թվային ընդգրկվածություն և մասնակցություն: Բացի դրանից՝ սպասարկման ոլորտն էլ ենթարկվելու է արմատական փոփոխությունների, ինչը կհանգեցնի մարդկային գործուժի նվազեցմանը: Նույնը վերաբերում է նաև առցանց կրթությանը, որն առաջարկում է բազում հնարավորություններ, բայց նաև նվազեցնում է մարդկային գործունը, որը կարևոր է շատ սովորողների հա-

մար: Մեծահասակների կրթությունը ապահովում է այնպիսի հարթակներ, որոնք բարեկեցության, հոգեկան առողջության, համերաշխության և սոցիալական փոխըմբռնման մի մասն են: Սա այն է, ինչի կարիքը Եվրոպան շատ ունի:

Տվյալներ հետազոտություններից
ԲեԼԼ (BeLL) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծահասակների լիբերալ կրթությանը մասնակցությունը բազմաթիվ առավելություններ ունի վերջիններիս համար: Դրանց ազդեցությունն ակնհայտ է մասն անհատի անմիջական սոցիալական խմբերի վրա՝ ընտանիք, աշխատավայր, այլ սոցիալական միջավայրեր: Այսինքն՝ մեծահասակների լիբերալ կրթությունն ապահովում է օգուտներ հասարակության համար: 8646 հարցվողների 70-87 տոկոսը զգացել է դրական տեղաշարժ սովորելու ոգևորության, հասարակական փոխըմբռնման, ընդհանուր բարեկեցության մեջ:

Միգրացիա և ժողովրդագրական փոփոխություն

Մեծահասակների կրթությունը կարող է էական դեր ունենալ Եվրոպայում փախստականների ներկայիս իրավիճակին արձագանքելու հարցում: Քաղաքացիական և միջմշակութային կրթության միջոցով անդամ երկրների քաղաքացիների շրջանում փախստականների համար կարելի է ստեղծել բարենպաստ միջավայր ԵՄ անդամ երկրներում: Լեզվի կամ տարրական հմտությունների դասընթացների շնորհիվ փախստականներն ի վիճակի կլինեն դառնալ իրենց նոր հայրենիքի ակտիվ քաղաքացիներ: Միջմշակու-

քային երկխոսությունները կարող են նպաստել տեղացիների և փախստականների միջև փոխըմբռնմանը՝ փախստականներից օգնելով հասկանալ իրենց նոր հայրենիքի մշակույթը, տարբերություններն ու հասարակական կյանքը, իսկ տեղացիներին օգնելով ընդունել նոր սովորույթներ և իրենց երկիրը տանել ապագայամետ ժողովրդավարության ուղով: Ապագայում Եվրոպան ավելի շատ փախստականների կարիք է ունենալու, որպեսզի հաղթահարի ներկայումս ընթացող ժողովրդագրական փոփոխությունները: Ժողովրդագրական փոփոխություններին զուգընթաց ակտիվ ծերացումը միմիայն հնարավոր կլինի ապահովել կյանքի ողջ ընթացքում կրթության հասանելիության դեպքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթվող տարեցներն ավելի ակտիվ են, ավելի շատ են կամավորություն անում, ավելի երկար են աշխատում և ավելի առողջ են: Ուստի ժողովրդագրական ժգնաժամի դեպքում խնդրի լուծումներից մեկը հենց կրթվող տարեցներն են, ովքեր նաև բարենպաստ ազդեցություն են ունենում եվրոպական ժողովրդավարության վրա: Ավելին, սերունդների միջև փորձի և գիտելիքի փոխանակման միջոցով սովորելը հնարավորություն է տալիս տարեց, ավելի փորձառու մարդկանց և երիտասարդներին օգտվել միմյանց գիտելիքներից, մյուս կողմից էլ միասնական տեսլականը նպաստում է միջսերնդային համախմբմանը և հանրային երկխոսությանը, ինչը կարևոր է ճգնաժամի ժամանակ:

Լավագույն փորձի օրինակ
Ֆաթիման Իռլանդիա է ժամանել 2013 թվականի նոյեմբերին մոր և երկու եղբայրների հետ: Նա Դուբլինում ապրել է երեք

ամիս, հետո իր ընտանիքի հետ տեղափոխվել է Թուլլամոր: Ֆաթիման փախստական է Աֆղանստանից: Նա սկզբում գնում է Իրան, հետո՝ Սիրիա, որտեղ ապրում է մոտ երեք տարի: Երբ նա ժամանում է Իռլանդիա, սկսում է մասնակցել Արդարադատության նախարարության կողմից ֆինանսավորվող լեզվի դասընթացների: Ֆաթիմայի կարծիքով՝ դասընթացը իրեն մեկուսացնում էր և հնարավորություն չէր տալիս ինտեգրվել իռլանդացիների միջավայրին: Հետո նա տեղեկանում է մասնագիտական կրթության վերապատրաստման VIOS ծրագրի մասին, տեղափոխվում է այնտեղ և արդեն ավարտում է առաջին տարին: VIOS ծրագիրը երկու տարվա դասընթաց է. սովորաբար ուսանողները առաջին տարում ստանում են նախնական վկայական, իսկ երկրորդում՝ ավարտական վկայական: Ֆաթիման վստահ էր, որ ինքն ի վիճակի է ստանալ ավարտական վկայական երկու տարբեր առարկաներում և Թուլլամորի կրթական կենտրոնի հովանավորությամբ նա ուսանում է ֆիզիկա և քիմիա: Ֆաթիման նաև իր պրակտիկ աշխատանքի համար օգտվում է Աթլոն տեխնոլոգիական ինստիտուտի հնարավորություններից: Ֆաթիման շատ ջանասեր է, անգլերենին հիանալի է տիրապետում: Նա կարծում է, որ Լաիս և Օֆֆալի կրթական և ուսումնական խորհուրդը իրեն շատ է օգնել, և նա ապագայի նկատմամբ մեծ հույսեր ունի:

Կայունություն

Բոլոր ոլորտներում կայունությունը Եվրոպայում դառնում է իսկական մարտահրավեր՝ միջավայրի պահպանումից և տրանսպոր-

տից մինչև էներգաարդյունավետություն: Մի կողմից՝ Եվրոպայի քաղաքացիները շատ տեղեկատվության կարիք ունեն, մյուս կողմից էլ՝ կա նորարարությունների կարիք, որպեսզի ձևավորվեն նոր սպրեյակերպ, նոր ծրագրեր, նոր մոտեցումներ: Մեծահասակների կրթությունը կարող է տրամադրել ինֆորմացիա, բանավեճի հարթակներ և ստեղծարար մտքեր: Մեծահասակների կրթությունը կայուն զարգացման երեք հիմնական հարթությունների՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական, փոխկապակցման կարևոր գործիք է և կարող է նպաստել ՄԱԿ-ի 2030 թվականի օրակարգին: Կայուն զարգացման համար իրավամամբ անհրաժեշտ է որոշակի կրթություն ստանալ՝ հատկապես ոչ ֆորմալ կրթություն, որը կարող է մեծ ազդեցություն ունենալ: Մեծահասակների կրթությունը կարող է հսկայական ներդրում ունենալ ինչպես Լիսաբոնի կայուն, ընդգրկուն, խելամիտ աճի օրակարգում, այնպես էլ Ջունքերի օրակարգում: Մեծահասակների կրթությունը կարող է խթանել աշխատատեղերի ստեղծումը, կայուն աճն ու միասնական թվային շուկայի ստեղծումը: Աջակցելով կայունությանը՝ մեծահասակների կրթությունը կարող է նպաստել միասնական էներգետիկ համակարգի ձևավորմանը և կլիմայի փոփոխության առաջադեմ քաղաքականությանը: Մեծահասակների կրթությունը կարող է ամրապնդել միասնական շուկան՝ աշխատողներին տրամադրելով ազատ տեղաշարժի համար անհրաժեշտ հմտություններ, ինչպես նաև խթանել եվրոպական արժեքներն ու վստահությունը:

Տվյալներ հետազոտությունից

Մեծահասակների կրթությունը կենտրոնական դեր ունի կայուն զարգացման համար: Դանիայում Ֆոլկեօպպլիսունգ կամ «Տեղեկատվություն մարդկանց համար» կոչվող դասընթացները հիմնված են քաղաքացիական հասարակության ձևավորման հյուսիսային ավանդույթների վրա: Խմբերը, որոնց հետ ուսանողները աշխատելու են, բազմազան են և ներառում են մեծահասակ կրթվողներին, տեղացիներին և դպրոցի ուսուցիչներին: Ծրագրերը, որոնցում ուսանողները աշխատելու են, քեմատիկորեն հետևյալն են՝

- Կայուն շինություններ և պարագաներ,
- Կայուն սնունդ,
- Համագործակցություն տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության և տեղական մասնավոր կազմակերպությունների միջև, որի նպատակն է 2021 թվականի տեղական ծրագրի աշխուժացումը,
- Բնապահպանության և կայուն կառավարման համակարգեր,
- Էթիկական սպառում և գլոբալ քաղաքացիություն:

Լավագույն փորձի օրինակ

Ավստրիական “Umweltberatung” բնապահպանական խորհուրդը մշակել է էներգաարդյունավետ վարորդական վկայական: Դա գործիք է մասնավոր տարածքներում, մանր և միջին ձեռնարկություններում և համայնքներում էլեկտրաէներգիայի խնայողության համար:

Մեր առօրյայում էլեկտրաէներգիայի խնայողությունը նպաստում է էներգիայի ծախսի կրճատմանը, ինչը չափազանց կարևոր է աղքատության շեմին գտնվող մարդկանց համար:

Էներգիայի գիտակցաբար օգտագործումը և էլեկտրաարդյունավետ ապրելակերպի խթանումը նույնպես նպաստում են ծախսերի կրճատմանը և օգնում են աղքատության դեմ պայքարին: Էլեկտրաէներգիայի գիտակցաբար սպառումը աշխատավայրում նույնպես նպաստում է ծախսերի կրճատման միջոցով մրցունակության բարձրացմանը: Ձեռնարկությունների կողմից քարոզվող ռեսուրսների ճիշտ օգտագործման սկզբունքը կարող է նպաստել, որ աշխատողները իրենց անձնական կյանքում ևս կարևորեն կենսակայունությունը:

Մեծահասակների կրթությունը և եվրոպական քաղաքականությունները

Մեծահասակների կրթությունը նպաստում է՝

- ԵՄ-ի խելացի, կայուն և ներառական աճի ռազմավարությանը:
- Եվրոպական ռազմավարության առանցքային արժեքներին, այն է՝ հավասարությանը, հանրային միասնությանը, ակտիվ քաղաքացիությանը, ինչպես նաև ստեղծարարությանն ու նորարարությանը:

- Եվրոպայում զբաղվածության մակարդակի բարձրացմանը՝ մարդկանց օգնելով վերագտնել աշխատանք, սովորեցնելով նրանց հավելյալ հմտություններ և դարձնելով ավելի մրցունակ:
- Ցածր որակավորմամբ մարդկանց (որոնք, ըստ վիճակագրության, 80 միլիոնանոց հսկայական բանակ են կազմում) քանակի նվազեցմանը: Այս մարդիկ ավելի քիչ են ներգրավված ցկյանա ուսումնառության գործընթացում: Մեծահասակների կրթությունը օգնության և աջակցության ծրագրեր է իրականացնում այդ մարդկանց ձեռք մեկնելու համար:
- ԵՄ-այն թիրախի համաձայն, ըստ որի՝ պետք է ամենաքիչը 20 միլիոնով կրճատվի աղքատության կամ սոցիալական բացառման սպառնալիքի տակ գտնվող մարդկանց թիվը, քանի որ կրթությունը նպաստում է ինքնավստահության հաստատմանը, սոցիալական ներառմանը և զբաղվածությանը:

Աշխատանքից և աճից մինչև թվային միասնական շուկա, կլիմայի փոփոխությունից մինչև ներքին շուկա, միգրացիայից մինչև գլոբալ հարցեր, մեծահասակների կրթությունը նպաստում է ոչ միայն ԵՄ-ի 2020 թվականի օրակարգին, այլև Ջունքերի օրակարգին: Բացի դրանից՝ մեծահասակների կրթությունը կարևոր միջոց է նաև ՄԱԿ-ի 2030 թվականի օրակարգի իրականացման և դրա կայուն զարգացմանը հասնելու համար:

Մեծահասակների կրթությունը խաղաղ, բարգավաճ, համախմբված և ապագայի մարտահրավերներին դիմակայող Եվրոպային հասնելու անհրաժեշտ գործոններից է:

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ԱՐԴԻ
ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՄԲ**

ՎԱՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
մագիստրատուրայի և լրացուցիչ կրթության բաժնի պետ*

Ներածություն

Աշխարհում տեղի ունեցող տեխնոլոգիական հեղաշրջիչ փոփոխությունները և գլոբալիզացիոն շարժերը ենթադրում են տնտեսության բոլոր ճյուղերի, այդ թվում՝ կրթական համակարգի վերափոխումներ՝ ըստ զարգացման նախանշված առաջնահերթությունների:

Այս տեսանկյունից համընդհանրացվող աշխարհը մի կողմից՝ մարտահրավեր է, սպառնալիք, իսկ մյուս կողմից՝ զարգացման անսպառ հնարավորություն, այդ թվում՝ կրթական համակարգերին ներկայացվող արդի պահանջների և անհրաժեշտ վերափոխումների տեսանկյունից: Որակյալ կրթություն իրականացնելու հիմնահարցերը միշտ էլ գտնվել են զարգացած աշխարհի ուշադրության և հետազոտությունների կենտրոնում, սակայն կրթության արդիականացման հիմնահարցերը՝ պասիվ ուսուցումից ակտիվ ուսուցման անցման հիմնախնդիրների վերաբերյալ, վերջին տարիներին հատկապես դարձել են առավել շատ քննարկվող: Չնայած այդ ամենին՝ ներկայումս ևս որակյալ կրթություն իրականացնելու համար շատ են հիմնախնդիրները և սպառնալիքները, որոնք ունեն սուբյեկտիվ և

օբյեկտիվ ամենատարբեր պատճառներ: Դրանց շարքում առավել առաջնահերթը ուսումնական գործընթացում արդի կրթական տեխնոլոգիաների ու մեթոդների և, առհասարակ, պասիվ ուսուցումից ակտիվ ուսուցման անցնելու, կրթության մեջ ժամանակի պահանջով տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաները ներդնելու հիմնահարցերն են¹: «Տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց շարժառիթները բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում կրթական հաստատություններին վերափոխվել»²:

Պետության և հասարակության կայուն զարգացման պայմաններում անընդհատ փոփոխվում են կրթությանը ներկայացվող պահանջները: Այս առումով ժամանակակից աշխարհում կրթական համակարգերը բավական դինամիկ են, ուստի ուսումնական հաստատությունները մի կողմից, արձագանքելով փոխակերպվող այդ պահանջներին, փորձում են դրանց հաշվառմամբ հնարավորինս արդիական կրթական ծառայություններ մատուցել, բայց մյուս կողմից էլ՝ հարկադրված են պահպանելու արդեն իսկ գործածելի և իրենց արդյունավետությունն ապացուցած համակարգերը: Երբ

¹ Տե՛ս 1. Challenges to Designing and Implementing Active and Integrated Learning Experiences. Available at [<http://www.cdio.org/implementing-cdio-your-institution/implementation-kit/teaching-learning/challenges>]; Prince M. Does Active Learning Work? A Review of the Research. Journal of Engineering Education, 2004, No. 93(3), էջ 223-231:

² Davis, N.E., & Tearle, P. (Eds.). (1999). A core curriculum for telematics in teacher training. Available at: www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/tteach98.htm

խոսվում է կրթության զարգացման դինամիկայի և, դրա հաշվառմամբ, ուսումնական գործընթացում արդիականացման, վերափոխումների անհրաժեշտության մասին, այդ ամենի իրականացման լավագույն հնարավորություն և միջոց համարվում է ակտիվ կրթական միջավայրի ստեղծմամբ կրթական նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառությունը: Ակտիվ ուսուցման պարագայում ուսումնառության շեշտը գերազանցապես դրվում է կիրառական կարողությունների, հմտությունների և կոմպետենցիաների³ զարգացման վրա՝ ուսումնառողի մոտ ձևավորելով հաշվետվողականության, պատասխանատվության, ինքնուրույն վերլուծելու, որոշումներ ընդունելու, դրանք գործնականորեն կիրառելու կայուն հատկանիշներ և որակներ: Առաջատար կրթական համակարգերում ակտիվ ուսուցման անցման համատեքստում ներդրվում է պրոբլեմային ուսուցումը⁴ որպես վերը նշված խնդիրների լուծման նորագույն մանկավարժական տեխնոլոգիա: Այն թույլ է տալիս ուսուցումը կազմակերպել գործողության, փորձի և այդ փորձը գործնակա-

³ Կոմպետենցիա՝ «Կոմպետենտություն» - (լատ.՝ պատշաճ, ընդունակ), իրազեկություն, ձեռնահասություն, ...: 1. Որոշակի սոցիալ-մասնագիտական կարգավիճակ ունեցող անձանց գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձի համապատասխանության չափն է նրանց կողմից կատարվող աշխատանքի և հիմնահարցերի լուծման բարդության իրավական մակարդակին: 2. Կառավարման մարմնի, պատասխանատու անձի իրավասության ոլորտն է, հարցերի շրջանակը, որոնց գծով նրանք օժտված են որոշումներ ընդունելու իրավասությամբ (Հ. Հ. Պետրոսյան, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսումնական ձեռնարկ, Ե., 2012, էջ 550):

⁴ Омарова А.А. Современная технология проблемного обучения//Современные наукоемкие технологии.–2011.–№ 1.–С.73-75:<http://www.top-technologies.ru/ru/article/view?id=26632>, Պրոբլեմային ուսուցման մասին տե՛ս նաև Terry Barrett, Problem-Based Learning in Higher Education, Module Handbook 2017, <https://www.ucd.ie/t4cms/Problem-based%20Learning%20Module%20Handbook.pdf>:

նորեն կիրառելու հիման վրա⁵: Ըստ այդմ, ուսումնառողները նորամուծական մեթոդների միջոցով ուսանում են ինքնուրույն ու ստեղծագործաբար մոտենալ ուսումնական գործընթացին և դառնում են ակտիվ կրթության հիմնորոշ բաղադրիչը՝ խնդիրներ ձևակերպելով, իրենց սխալները վերլուծելով և գնահատելով, սովորում են պլանավորել և կառավարել սեփական ուսուցման ամբողջ գործընթացը:

***Կրթական տեխնոլոգիաների և մեթոդների նշանակությունն
արդի ուսումնական գործընթացներում***

Ինչպես նշվեց, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ ակտիվ ուսուցման կազմակերպումը դարձել է արդի կրթության առանցքային շարժիչ ուժը և արդյունավետության ապահովման կայուն երաշխիքը: Ներկայում տարբեր ուսումնական հաստատություններում նույն մասնագիտությամբ պատրաստվող կադրերի կրթական ծրագրերի որակը բնորոշող առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն դրանց կրթական միջավայրի, ուսումնական բազմազանեցված պլանի, որակյալ դասախոսական կազմի որակներով, այլև կրթության իրականացման, այն է՝ կրթական տեխնոլոգիաների և մեթոդների համակարգով: Իրապես, դա արդի կրթության հիմնորոշիչ առանձնահատկությունն է, որով նաև պետք է մրցեն և տարբերակվեն ուսումնական հաստատությունները միմյանցից:

⁵ St'u Robert W. Clark, Mark D. Threeton, John C. Ewing. The Potential of Experiential Learning Models and Practices In Career and Technical Education & Career and Technical Teacher Education. “Journal of Career and Technical Education”, winter 2010, vol. 25, N 2 (<http://ejournals.lib.vt.edu/JCTE/article/view/479/657>):

Ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման տեխնոլոգիական և մեթոդական հիմնահարցերը բոլոր ժամանակներում էլ եղել են մանկավարժագիտության առանցքային խնդիրներից: Դրանց վերաբերյալ առավել արդիական աշխատանքների⁶ ուսումնասիրությունները փաստում են, որ հենց ճիշտ ընտրված և արդյունավետ տեխնոլոգիաներն ու մեթոդներն են ի վերջո հանգեցնում կրթության բովանդակության և նպատակների ամբողջական իրացմանը: Բացի դրանից՝ ամրագրվում է այն հատակ աքսիոմը, որ կրթության մեջ արդի տեխնոլոգիաների և մեթոդների կիրառությունը կրթության կազմակերպման, դրա բովանդակության և նպատակների արդյունավետության տեսանկյունից ունի բացառիկ առաջնակարգ դեր և նշանակություն: Այդ խնդիրը առկա է նաև ներկայում առաջնակարգ դիրքեր զբաղեցնող առաջատար կրթական համակարգերում, որոնք հասկացել են այդ ամենի կարևորությունը և շարժվում են կրթական վերափոխումները արդի կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման միջոցով:

Հայտնի փաստ է, որ կրթության համակարգը մշտապես կարիք ունի վերանայումների, ճշգրտումների, սակայն այս բնագավառում փոփոխությունները չեն կարող կրել հեղափոխական-արմատական բնույթ, քանի որ դա էլ իր մեջ պարունակում է մեկ այլ վտանգ, երբ կրթական այդօրինակ փոփոխությունները անխուսա-

⁶ Տե՛ս 1. Հ. Հ. Պետրոսյան, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսումնական ձեռնարկ, Ե., 2012: 2. Хуторский А., Формы и методы обучения, М., 2005. 3. Pyatt E., Using Cases in Teaching. Teaching and Learning with technology, Penn State University, 2006. 4. Damodharan V., Rengarajan V., Innovative methods of Teaching, Dublin, 2000.

փելիորեն հանգեցնում են հիմնահատակ տապալման: Հետևաբար, աստիճանական, փուլաչափ, գիտականորեն հիմնավորված վերանայումներով է պետք նորոգել կրթական գործընթացը, վերացնել առկա բացթողումները և թարմացնել կրթության բովանդակությունը: Արդյունքում, աներկբա է, որ որպես այս նախանշված նպատակի հնարավորություն՝ անփոխարինելի է կենսական վերափոխումներ իրականացնելը հենց ուսումնական գործընթացում արդի կրթական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Այս առումով անհրաժեշտ է նախ հստակեցնել իրականացվող կրթության նպատակները և հետո միայն մշակել դրան համապատասխան մեթոդաբանություն: Արդի պայմաններում կրթության նպատակը ուսումնառողների մոտ անձնային որակներ, մասնագիտական ուղղվածության համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և կոմպետենցիաներ ձևավորելն ու զարգացնելը, ինչպես նաև դրանք անընդհատ կատարելագործելու նախադրյալներ ստեղծելն է: Ինչպես երևում է, կրթության նպատակը բազմակողմ, ընդգրկուն և բարդ երևույթ է, որը պահանջում է գիտականորեն հիմնավորված և արդյունավետ մեթոդական քաղաքականության իրականացում:

Վերը նշված պահանջները ենթադրում են վերջնարդյունքահեն և ուսումնառողամետ կրթական ծրագրերի նախագծում և իրականացում՝ դասավանդման և ուսումնառության վերը նշված հիմնորոշ տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Այդ պահանջների հիման վրա նախագծված արդի կրթական ծրագրերը պետք է նախատեսեն դասավանդման և ուսումնառության այնպիսի միջավայրի ստեղծում, որն անմիջականորեն ուղղված պետք է լինի մի կողմից՝

ամբողջական կրթական ծրագրի և առանձին դասընթացների վերջնադրյունքների ապահովմանը (դասավանդման տեսանկյուն), իսկ մյուս կողմից՝ այդ արդյունքներով պայմանավորված վերջնադրյունքների ձեռքբերմանը (ուսումնառության տեսանկյուն): Այդ առաջնահերթություններից ելնելով՝ արդի կրթության մեջ անցում է կատարվել «դասախոսակենտրոն ուսուցում»-ից «ուսումնառողակենտրոն ուսուցման»⁷: Արդյունքում, օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել դասավանդման և ուսումնառության ամենատարբեր տեխնոլոգիաների, ձևերի և մեթոդների կիրառումը, իսկ դրանց արդյունավետությունը գնահատել՝ առաջնորդվելով բացառապես այն մոտեցումով, թե որքանով են դրանք նպաստում ուսումնառողների կողմից ակնկալվող կրթական վերջնադրյունքների ձեռքբերմանը:

Վերը նշված առաջնահերթություններից ելնելով՝ հարկավոր է մեկ անգամ ևս անդրադառնալ ուսուցման գործընթացում տեխնոլոգիաների և մեթոդների կիրառության դերին և նշանակությանը՝ վերարժևորելով, վերաիմաստավորելով դրանց տեղը, դերը, նշանակությունը, դրանց ընտրության և կիրառման բնույթը: Հանդիսանալով կրթական գործընթացի իրականացման առանցքային գործոնը, միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման նախապես պլանավորած նպատակը և վերջնադրյունքը, ապահովում է ուսումնառողների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, ողջ ուսումնական գործընթացը դարձնում է օրգանապես համակցված, բազմաբովանդակ և հետաքրքիր: Այսպիսով՝ ուսումնական գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ, անփոխարինելի դեր և

⁷ Տե՛ս Ա. Ս. Բուդաղյան, Ս. Բ. Կարաբեկյան, Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց, Ե., 2010, էջ 14:

նշանակություն՝ անդրադառնալով երեք կարևոր հիմնահարցերի (կատեգորիաների) բացատրությանը. ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ, ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (կրթական տեխնոլոգիաներ և մեթոդներ): Կարելի է ասել, որ վերջին կատեգորիան առնչվում է մնացած երկուսին, և դրանց բնույթն ու կիրառությունն են պայմանավորում առաջին երկուսի հաջողությունը, արդյունավետությունը և որակը: Արդի մանկավարժագիտության մեջ մեթոդը բնութագրվում, սահմանվում, հասկացվում է իբրև մի կողմից՝ դասավանդողի, իսկ մյուս կողմից՝ ուսումնառողի գործունեության եղանակ, ուսումնական միջավայրում դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործակցություն, գործունեություն՝ միտված կրթական նպատակների իրականացմանը և վերջնարդյունքների ձեռքբերմանը⁸: Կարելի է ասել, որ «մեթոդը» դասախոսի համար դասավանդման, իսկ ուսումնառողների համար գիտելիքներ յուրացնելու, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու, գիտական աշխարհայացք ձևավորելու, անհրաժեշտ ընդունակություններ և ստեղծագործական գործունեություն զարգացնելու եղանակ է: Ժամանակակից կրթությանը ներկայացվող պահանջների համաձայն՝ կրթության իրականացման մեթոդաբանությունը պետք է դասակարգել ըստ առանձին հասկացությունների՝ «դասավանդման մեթոդներ» և «ուսումնառության մեթոդներ»՝ ըստ իրենց գործածական նշանակության: Դրանք միմյանցից թվացյալ անջատ, տարբեր գործառնություններ ունեցող, բայց կրթական միևնույն նպատակների իրակա-

⁸ Տե՛ս Վ. Վ. Մելքոնյան, Դասավանդման և ուսումնառության մեթոդներ, միջոցներ, Ուղեցույց դասախոսական կազմի համար, ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան, Ե., 2017, էջ 9:

նացմանը նպաստող, միմյանց փոխկապակցված, փոխըացնող երևույթներ են: Հետևաբար, կարևոր է նախ և առաջ հատակեցնել դրանց գործառնությունների շրջանակը՝ ամրագրելով դրանց դասակարգման, ինչպես նաև ընտրության և կիրառության հիմնական գործոնները, արդի մոտեցումները:

Կրթական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել, և, ինչպես նշվեց, դրանք կախված են կրթության նպատակը և բովանդակությունը պայմանավորող մի շարք գործոններից: Այսինքն՝ դրանց կիրառելու նպատակը ոչ թե պարզապես ուսումնական գործընթացը կամ առանձին վերցրած դասապրոցները աշխուժացնելն է կամ մանկավարժական վարպետությամբ փայլելն ու փաստաթղթային պահանջներին բավարարելը, այլ, առաջին հերթին, մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ ուսումնական նպատակներին, վերջնարդյունքներին հասնելն է: Հետևաբար, եթե արդեն իսկ կիրառվող, թեկուզև փորձված ավանդական տեխնոլոգիաները և մեթոդները չեն նպաստում այդ առաջնահերթ խնդիրների լուծմանը, ուրեմն պետք է փոխել կամ կատարելագործել դրանք: Իսկ եթե կիրառվող տեխնոլոգիաները և մեթոդները արդյունավետ են, բայց ակնհայտ է, որ առաջադրված նպատակները և վերջնարդյունքները չեն համապատասխանում առկա պահանջներին, ուրեմն անհրաժեշտ է վերանայել նպատակները և վերջնարդյունքները:

Արդի կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք էական հանգամանքներով և գործոններով, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և

կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը՝ դասավանդողի և ուսումնառողի գործունեության տեսանկյունից:

Դասավանդողը պետք է՝

- իմանա ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը, վերջնարդյունքները, ժամաքանակը,
- պատկերացում ունենա ուսումնառողների թվաքանակի, տարիքի, աշխատունակության, շահագրգռվածության, անձնական ընդհանուր հատկանիշների և կարողունակությունների մասին,
- վերլուծի նյութատեխնիկական և կազմակերպական պայմանները, կիրառված նախորդ մեթոդների արդյունավետությունը, դասավանդող-ուսումնառող փոխհարաբերությունները:

Ուսումնառողը պետք է՝

- հստակ իմանա՝ ի՞նչ է անում և ինչո՞ւ,
- մշտապես տեղյակ լինի՝ ի՞նչ է ակնկալվում իրենից,
- վստահ լինի, որ դասավանդողը աջակից և օգնող է:

Այս ամենի ընդգրկումով, ի վերջո, ի՞նչ տեխնոլոգիաներ և մեթոդներ են անհրաժեշտ արդի պայմաններում արդյունավետ և ակտիվ ուսուցում կազմակերպելու համար: Համադրելով ասպարեզում եղած տարբեր ժամանակներում առաջադրված մոտեցումները, դասակարգումները՝ ժամանակակից կրթության բովանդակությանը և պահանջներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները ներկայացնում ենք երեք մեծ խմբերով՝ համապա-

տասխանաբար դասավանդողի և ուսումնառողի կրթական գործունեության կազմակերպման տեսանկյունից:

1. Առաջին խումբ. գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձևավորող, իմաստավորող և ամրակայող մեթոդներ, որոնց շարքին դասվում են խոսքային, զննական և գործնական մեթոդները:

Խոսքային մեթոդներ են դասախոսությունը, պատմումը, բացատրությունը, զրույցը, բանավեճը և այլն:

Զննական մեթոդներն են ձևավորումը, պատկերազարդումը, ցուցադրությունը, տեսամեթոդը, ուսումնասիրությունները, դիտումները և այլն:

Գործնական մեթոդներն են գրավոր աշխատանքները, վարժությունները, աշխատանքը տպագիր և էլեկտրոնային աղբյուրների հետ (ընթերցանություն, մշակում, պլանի կազմում, ամփոփ, հակիրճ շարադրանք), լաբորատոր աշխատանքները և փորձերը, ուսումնաարտադրական աշխատանքը, աշխատանքային առաջադրանքների կատարումը և այլն:

Այս մեթոդախմբի կիրառումը հնարավորություն է ընձեռում, որ.

➤ Դասավանդողը ներկայացնի և շարադրի գիտելիքները «պատրաստ վիճակում» և կազմակերպի ուսումնառողների ուսումնական, մասնագիտական գործունեությունը՝ գիտելիքների յուրացման և ամրապնդման, նոր գիտելիքների որոնման, կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների ձևավորման, գործողությունների կատարման օրինակին համապատասխան՝ անպայման

հաշվի առնելով նրանց ընկալման մակարդակը: Օրինակ՝ պրոբլեմային շարադրման ժամանակ նա պետք է ցույց տա հիմնախնդրի լուծման աստիճանական ճանապարհը:

➤ Ուսումնառողներն ընկալում, իմաստավորում, մտապահում և անսխալ վերարտադրում են ստացած գիտելիքները, դասավանդողի անմիջական ղեկավարությամբ վերլուծում, համադրում, համեմատում, ընդհանրացնում, եզրահանգում, պատրաստի օրինակներով պրակտիկ գործողություններ կատարում:

2. Երկրորդ խումբ. Ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական գործունեությունը զարգացնող մեթոդներ, որոնց շարքին են դասվում ինդուկտիվ, դեդուկտիվ, ինտերակտիվ, վերարտադրողական, մասնակի որոնողական կամ էվրիստիկական հետազոտական, ուսումնական գրույց, հարց ու պատասխան, բանավեճ, ուղղորդված քննարկում, ուղեղային գրոհ (բրեյնստորմինգ), գործնական և դերային խաղեր, փինբորտ տեխնիկա, խնդրային (պրոբլեմային) շարադրման և այլ մեթոդները:

Այս մեթոդախմբի կիրառման արդյունքում՝

➤ դասավանդողը ներկայացնում է գիտելիքների առավել առանցքային մասը միայն, կազմակերպում է ուսումնառությունը՝ այն դարձնելով ավելի շատ գիտելիքների որոնման և ձեռքբերման գործընթաց,

➤ ուսումնառողները ինքնուրույն պատասխանում են տրված հարցերին, համեմատում, ընդհանրացնում, կատարում են եզրահանգումներ, լուծում պրոբլեմային իրավիճակներ և ճանաչողական խնդիրներ:

3. Երրորդ խումբ. Ինքնուրույն աշխատանքի և հետազոտության մեթոդախումբ, որն իր մեջ ներառում է նախագծերի, անհատական-գործնական, պրոբլեմային հանձնարարությունների և այլ մեթոդներ⁹: Դրանց կիրառումը նպատակ ունի ուսումնառողների մոտ արթնացնել և ակտիվացնել ինքնուրույն ուսումնառության գործընթացը, նպաստել նրանց կողմից հիմնախնդիրների ընկալմանը, ինքնուրույն լուծումներ գտնելուն, ինչպես նաև՝ պատրաստել նրանց հետազոտական աշխատանքներ կատարելուն:

Տարբերակվում են ինքնուրույն աշխատանքի երեք տեսակներ.

1. Նոր գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. այս դեպքում ուսումնառողները դասավանդողի հանձնարարությամբ կամ սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում են ուսումնական թեմաներին առնչվող համապատասխան լրացուցիչ գրականություն, համառոտագրում են նոր գիտելիքները, ընդհանրացնում և իմաստավորում են դրանք, կիրառում պրակտիկայում:

2. Նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու ինքնուրույն աշխատանք. նման աշխատանքները իրականացվում են ուսումնական լսարաններում, լաբորատորիաներում, արհեստանոցներում, մարզադահլիճում: Այս դեպքում ուսումնառողները ինքնուրույնաբար ծանոթանում են դիտազննական պարագաներին, ուսուցման տեխնիկական միջոցներին, ճանաչում գործիքները, սարքերը, մեքենաները: Իրենց համար մշակում են դրանք ճիշտ կիրառելու կարողություններ ու հմտություններ, լաբորատորիաներում,

⁹ Տե՛ս Հ. Հ. Պետրոսյան, Պրոբլեմային ուսուցումը և նախագծերի մեթոդը, «Մանկավարժական միտք», N 3-4, 2010:

դասավանդողի ղեկավարությամբ, կատարում են փորձեր, խորացնում ձեռք բերած գիտելիքները, դրանք դարձնում ապացույցելի:

3. Ինքնուրույն հետազոտական արեղծագործական աշխատանքներ. Դրանք կատարվում են տարբեր թեմաների շուրջ ուսումնառողների կողմից հետազոտական ուսումնասիրություններ իրականացնելու, դասավանդողի ղեկավարությամբ գիտական հոդված, զեկույց, ելույթ, նախագիծ պատրաստելու և այլ տիպի աշխատանքներ իրագործելու միջոցով:

Այս մեթոդախմբի կիրառման արդյունքում՝

➤ դասավանդողը ուսումնառողներին գիտելիքներ չի տալիս, այլ նրանց հետ ձևակերպում է հիմնախնդիրը, առաջադրանքը և օպերատիվ ձևով ղեկավարում է դրանց կատարման գործընթացը,

➤ ուսումնառողները գիտելիքները ձեռք են բերում ինքնուրույնաբար՝ հիմնախնդրի լուծման գործընթացում, առաջադրանքի կատարման ընթացքում նրանք են որոշում պլանավորված արդյունքներին հասնելու ճանապարհներն ու միջոցները, կատարում են ինքնուրույն, խմբային և դասախոսի ղեկավարությամբ հետազոտական աշխատանքներ, կատարում համապարփակ ուսումնասիրություններ, վերլուծություններ և այլն¹⁰:

¹⁰ Տե՛ս Վ. Վ. Մելքոնյան, Դասավանդման և ուսումնառության մեթոդներ, միջոցներ, Ուղեցույց դասախոսական կազմի համար, ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան, Ե., 2017, էջ 13-15:

**ՀՀ-ում ակտիվ ուսուցմանն անցնելու համար արդի կրթական
տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման հիմնախնդիրները**

ՀՀ կրթական համակարգը ևս, լինելով համաշխարհային կրթական ընտանիքի մի մասնիկը, չի կարող անմասն լինել արդի կրթության առջև ծառացած մարտահրավերից և խնդիրներից: Հատկապես Բոլոնյան համակարգին ՀՀ միանալուց հետո շատ են քննարկվել, վերլուծվել ՀՀ կրթական համակարգի հիմնախնդիրները, և նախանշվել բարեփոխումների ուղղությունները¹¹: Դրանցում որպես այդ հիմնախնդիրների լուծման հնարավորություն նախանշվել են նաև կրթական համակարգի արդիականացման հնարավորությունները, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը՝ ակտիվ ուսուցման կազմակերպմամբ: Դրա պահանջարկը կապված է կրթությամբ ներկայացվող նոր պահանջներով և չափանիշներով՝ միտված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին համադրելի կրթական ծառայություններ մատուցելուն: Այդ խնդիրների լուծմանն են ուղղված, օրինակ, բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների չափանիշ-չափորոշիչներում ներառված մի քանի առանցքային պահանջներ¹²: Մասնավորապես, բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման 3-րդ չափանիշի 2-րդ չափորոշիչը սահմանում է.

¹¹ Տես, օրինակ, Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն, ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն Բուդապեշտ, հուլիս 2013 թ.,

http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf:

¹² Տես ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ, Ե., 2015, էջ 28-42:

«ՄՈւՀ»-ն (մասնագիտական ուսումնական հաստատություն) ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը»¹³, իսկ ծրագրային հավատարմագրման չափանիշների 3-րդ տիրույթը սահմանում է. «ՄԿԾ-ի (մասնագիտության կրթական ծրագիր) շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը»¹⁴: Ասել է թե՛ հստակ ամրագրված չափանիշ-չափորոշիչները պատվիրակում են բուհերին իրականացնել արդյունավետ և արդի կրթական տեխնոլոգիաներով ու մեթոդներով ակտիվ ուսուցում: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրումների շրջանակներում փորձագիտական գեկույցների¹⁵ ուսումնասիրությունները, ինչպես նաև դրանց հիման վրա իրականացված վերլուծությունները, ՀՀ-ում ակտիվ ուսուցման և ուսումնական գործընթացում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման խնդիրները և խոչընդոտները պայմանավորված են մի շարք առանցքային գործոններով, մասնավորապես.

¹³ Նույն տեղում, էջ 31:

¹⁴ Նույն տեղում, էջ 39:

¹⁵ Տե՛ս՝ 1. Փորձագիտական գեկույցներ, <http://www.anqa.am/hy/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%B4/?ExpertReports=2015#ExpertReports>, 2. Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն, ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն Բոսլապեշտ, հուլիս 2013 թ., էջ 35-38, http://www.osf.am/wpcontent/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf:

1. Քաղաքականություն. Արդի կրթական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման կարևոր պայման է բուհերի կողմից սահմանված համապատասխան քաղաքականության ոչ բավարար վիճակը: Բուհական համակարգերը պետք է իրենց ներքին փաստաթղթային ամրագրումներով արտացոլեն վերը նշված պահանջները, ստեղծեն նախադրյալներ իրականացնելու ակտիվ ուսուցում՝ արդի տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ: Չնայած նրան, որ վերջին տարիներին, կապված հիմնականում կապված բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման պահանջների հետ, բուհերի հայեցակարգային փաստաթղթերում արվել են համապատասխան փոփոխություններ, սակայն դրանք առավել շատ իմպերատիվ բնույթ են կրում և չունեն դրանք կիրառող օղակների կողմից համապատասխան ընդունելություն:

2. Դասախոսական կազմ. Դասախոսական կազմի կողմից միշտ չէ, որ ողջունվում և կիրառվում են ակտիվ ուսուցման բաղադրիչները, իսկ որոշ դեպքերում էլ դրանք կրում են առավելապես ձևական բնույթ: Իհարկե, բուհական համակարգում կան շատ դասախոսներ (հատկապես երիտասարդ և միջին սերնդի դասախոսները), որոնք հաջողությամբ կիրառում են ակտիվ ուսուցումը՝ արդյունավետորեն կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ և մեթոդներ, բայց դա, ըստ ամենայնի, համակարգային բնույթ չի կրում: Դրանց պատճառները տարբեր են և առանձին լուրջ ուսումնասիրության կարիք ունեն: Համենայն դեպս, ակնհայտ է, որ դասախոսների շրջանում առկա է շարժառիթավորման և արդի մեթոդներ կիրառելու անհրաժեշտության գիտակցման, կամքի որոշակի պակաս:

3. Ռեսուրսներ. Հայտնի է, որ արդի կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման համար անհրաժեշտ են բավարարյուն ֆինանսական բազայի առկայություն և ֆինանսական շոշափելի ռեսուրսներ: Իհարկե, այս գործոնը մեծապես կախված է բուհերի իրականացվող քաղաքականությունից և առաջնահերթություններից, սակայն, մյուս կողմից էլ, ռեսուրսների սակավությունը ներկայում խնդիր է տնտեսության բոլոր բնագավառների համար:

4. Հետազոտություններ. Առաջավոր կրթական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրմամբ արդի ուսումնական գործընթաց իրականացնելու համար չափազանց կարևոր են այդ տիրույթում անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելը և առաջավոր փորձի ուսումնասիրումը: Ակնհայտ է, որ առաջին հերթին հենց բուհը ինքը պետք է ստանձնի նշված տիրույթում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին համալիր հետազոտություններ իրականացնելու պատվիրակման գործառույթը:

Միանշանակ կարելի է փաստել, որ վերը նշված բոլոր գործոնները ուղիղ կապ ունեն բուհի որդեգրած ռազմավարական զարգացման ուղենիշների և իրականացվող քաղաքականության հետ, քանի որ, եթե առկա են ցանկություն և համապատասխան կամք, ապա վերը նշված բոլոր հիմնախնդիրները լուծման ենթակա են:

Այս ամենի հաշվառմամբ կարելի է փաստել, որ արդի կրթական տեխնոլոգիաները և մեթոդների կիրառումը բխում են ժամանակի պահանջներից, դրանց ներդրումը արդի ուսումնական գործընթացում պահանջարկված և անխուսափելի է: Դրանց ներդրումը հնարավորություն կտա ԵԲԿՏ-ի հետ համադրելի դարձնել իրականացվող ուսումնական գործընթացը, լինել յուրատիպ, փոխան-

ցել առաջավոր փորձը, հնարավոր դարձնել կրթության բարեփոխումները, դյուրինացնել ուսումնական գործընթացի կազմակերպումը՝ ներառել ակտիվ և խառը ուսուցման բաղադրիչներ՝ ստեղծելով հետաքրքիր, ընկալելի, մասնակցային, մոտիվացված ակտիվ կրթական միջավայր:

QUALITY EDUCATION THROUGH APPLICATION OF THE MODERN TEACHING TECHNOLOGIES AND METHODS

Vanik Melkonyan

Head of Department on Graduate and Additional Education,

NDRU of MoD of RA

Modern tendencies of development of higher education with implementation of innovative strategies and use of innovative teaching methods are discussed in the article. The author demonstrates some approaches to quality assurance designed in order to accompany modernization in higher education.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի
ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական
լեռնոլոգիաների ամբիոնի վարիչ, փ. գ. թ.*

Սոցիոլոգիան՝ որպես համալսարանական մասնագիտություն, ԵՊՀ-ում ներդրվեց ու սկսեց զարգանալ 1980 թվականից, երբ հիմնադրվեց Սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիան: Այն սկսեց իրականացնել համալսարանական կյանքին նվիրված սոցիոլոգիական հետազոտություններ և միաժամանակ կազմակերպել սոցիոլոգիական որոշ դասընթացների դասավանդումը համալսարանում: 1986 թվականին ԵՊՀ-ում բացվեց Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնը, որն էլ ստանձնեց սոցիոլոգիայի գծով համալսարանական կրթությամբ մասնագետների պատրաստման պատասխանատվությունը: Սոցիալական աշխատանքը ԵՊՀ մասնագիտությունների ցանկում հայտնվեց 1996 թվականին՝ արդեն գործող Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի նախաձեռնությամբ: Երկու մասնագիտությունների հետագա զարգացումը համալսարանական միջավայրում ընթացավ երկու ուսումնական ծրագրերի սերտ կապի պայմաններում: Սոցիոլոգիայի մասին տարիների ընթացքում կուտակված պատկերացումները և դասավանդման փորձը դասախոսներին թույլ տվեցին սահուն ներդնել նաև սոցիալական աշխատանքի գծով կրթական ծրագիրը: Որոշ հիմնարար դասընթացներ

լսում էին երկու բաժնի ուսանողներն էլ: Չնայած սոցիալական աշխատանքի կրթական ծրագրի հետագա տարանջատմանը և որոշակի յուրահատկությունների ձեռքբերմանը՝ ձևավորված ընդհանուր մոտեցումը, որ սոցիոլոգիան ուսումնասիրում է հասարակությունը և հայտնաբերում զանազան օրինաչափություններ, իսկ սոցիալական աշխատանքը զբաղվում է հասարակական հարաբերությունների բարելավմամբ՝ հենվելով այդ օրինաչափությունների վրա, առ այսօր պահպանվում է: Իրադարձությունների մոտավորապես նույնպիսի ընթացք արձանագրվել է ԱՄՆ-ում: 1892 թվականին Չիկագոյի համալսարանում բացվում է ԱՄՆ-ում սոցիոլոգիայի առաջին ամբիոնը, որը սկսում է սոցիոլոգիայի գծով մասնագետներ պատրաստել: Այդ բաժին ընդունվում էին և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Սակայն ավարտելուց հետո եթե տղամարդիկ գերադասում էին զբաղվել տեսական աշխատանքով, ապա կանայք գերապատվությունը տալիս էին հետազոտություններին, դրանց արդյունքները սոցիալական փոփոխություններին ծառայեցնելուն: 1920 թվականին այդ նույն համալսարանում բացվում է սոցիալական աշխատանքի բաժինը: Դրանից հետո սոցիոլոգիայի բաժնում աշխատող կանայք տեղափոխվում են նորաբաց բաժինը, որովհետև նոր մասնագիտությունն իրենց ավելի հոգեհարազատ էր, բացի դրանից՝ նախորդ բաժնում նրանց նկատմամբ վերաբերմունքը խտրական էր՝ տղամարդիկ կարծում էին, որ սոցիոլոգիան կանացի զբաղմունք չէ: Նրանց ավելի էին գրավում սոցիալական փոփոխություններին մասնակցելը, սոցիալական խնդիրների լուծումը: Սոցիոլոգիան համարվում էր տեսական գիտություն: Այսպիսով՝ սոցիալական աշխատանքի բաժնի բացմամբ Չիկագոյի համալսար-

րանի սոցիոլոգիայի բաժնի կանայք՝ և՛ սովորողները, և՛ աշխատակիցները, գտան իրենց խնդիրների լուծումը¹: Սոցիալական աշխատանք մասնագիտության հետագա զարգացումը աշխարհում հանգեցրեց նրան, որ դրանով հիմնականում կանայք սկսեցին զբաղվել: Հայաստանում նույնպես կանայք բացարձակ մեծամասնություն են կազմում սոցիալական աշխատանքի ոլորտում:

Վերևում նշվածից հետևում է, որ չնայած ակնհայտ տարբերություններին, որոշակի կապ կա սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք մասնագիտությունների միջև: Այդ կապի մասին հուշում է հենց նրանց անվանումներում առկա սոց- արմատը: Ակնհայտ է, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է հասարակությանը: Մասնագիտությունների անվանումներում այդ արմատը հաճախ թյուրիմացության մեջ է գցում անիրազեկներին: ԵՊՀ սոցիալական աշխատանքի գծով առաջին ընդունելություններից հետո հաճախ պարզվում էր, որ որոշ ուսանողներ շփոթել են սոցիալական աշխատանքը սոցիոլոգիայի հետ: Նույնիսկ սոցիալական ծառայությունների աշխատակիցների վերապատրաստումների ընթացքում հանդիպում են մարդիկ, ովքեր չեն տարբերում սոցիալական աշխատանքը սոցիոլոգիայից:

Ի՞նչ կապ կա սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի՝ որպես երկու մասնագիտությունների միջև: Այս հարցը հաճախ ծագում է ոչ այն պատճառով, որ ՀՀ-ում սոցիալական աշխատանքի մասին իրազեկվածության ցածր մակարդակը ոմանց թույլ չի տալիս դրանք տարբերել միմյանցից, և ոչ էլ այն պատճառով, որ այս-

¹ Տե՛ս Irene Levin, Marit Haldar & Aurelie Picot, Social Work and sociology: historical separation and current challenges.//Nordic Social Work Research, <http://www.tandfonline.com/loi/rnsw20>:

տել այդ մասնագիտությունը ձևավորվել ու զարգացել է սոցիոլոգիական միջավայրում և սոցիոլոգների կողմից: Հարցը զուտ մեթոդաբանական է, քանի որ երկու մասնագիտություններն էլ գործունեն հասարակության հետ, ապա շատ կարևոր է հասկանալ դրանցից յուրաքանչյուրի մոտեցումները և փոխադարձ կապը:

Եթե մի պահ չխորանանք մանրամասների մեջ և փորձենք պարզապես այդ երկու մասնագիտությունների անվանումներից ելնելով՝ դատել, ապա կարող ենք ասել, որ սոցիոլոգիան զբաղվում է հասարակության ուսումնասիրմամբ, իսկ սոցիալական աշխատանքը փորձում է լուծել անհատների և խմբերի կյանքում ծագող սոցիալական հիմնախնդիրները: Սոցիոլոգների հիմնական նպատակն է ճանաչել հասարակությունը², հայտնաբերել նրան անհանգստացնող խնդիրները, սոցիալական աշխատողներինը՝ ազատել մարդկանց իրենց կյանքը դժվարացնող սոցիալական հիմնախնդիրներից, զարգացնելով նրանց՝ մեծացնել սոցիալական գործառնան նրանց հնարավորությունները³: Ե՛վ սոցիոլոգիան, և՛ սոցիալական աշխատանքն իրենց ներդրումն են ունենում սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում: Առաջինը հայտնաբերում է դրանք, բացատրում դրանց առաջացման պատճառները, նույնիսկ հաղթահարման միջոցներ առաջադրում, երկրորդը զբաղվում է դրանց հաղթահարմամբ: Սոցիոլոգիան գործում է ինչպես ակադեմիական գիտություն՝ ուսումնասիրում է սոցիալական երևույթները և հայտնաբերում օրինաչափություններ: Սոցիալա-

² Ст'ю Философский энциклопедический словарь, М., 1989, էջ 614:

³ Ст'ю А. Morales, W. Sheafor, Social Work: A Profession of many faces, Allyn and Bacon, էջ 40:

կան աշխատանքը հիմնականում զբաղվում է կոնկրետ մարդկանց կյանքում ծագած կոնկրետ խնդիրների լուծմամբ: Ճիշտ է, սոցիալական աշխատողները մակրոմակարդակում միջամտության արդյունքում նպաստում են սոցիալական հիմնախնդրի՝ որպես սոցիալական երևույթի հաղթահարմանը, բայց հիմնականում նրանք աշխատում են կոնկրետ շահառուների հետ: Եթե անգամ ընդունենք, որ սոցիալական աշխատանքը գիտություն է, ապա պետք է համաձայնենք, որ այն շատ հեռու է ակադեմիական լինելուց: Սոցիալական աշխատանքը պրակտիկ մասնագիտություն է: Իրավացի կլինենք, եթե ասենք, որ այն դեպքում, երբ սոցիոլոգիան ախտորոշում է սոցիալական հիվանդությունները, սոցիալական աշխատանքը բուժում է դրանցից: Անգամ գիտութաբանության նորկանտական ավանդույթների համատեքստում տեսանելի է սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի մնան կապը: Սոցիոլոգիան օրենքներ սահմանող՝ նոմոթետիկ գիտություն է, սոցիալական աշխատանքը՝ այդ օրենքները կիրառող՝ իդեոգրաֆիկ գիտություն:

Սոցիալական աշխատանքի պրակտիկան իրականացվում է միկրո-, մեզո- և մակրո- մակարդակներում: Սոցիալական աշխատողների շահառուներն են սոցիալական տարբեր խնդիրներ ունեցող անհատները, խմբերը, այդ թվում և՛ ընտանիքները, համայնքները: Սոցիալական աշխատողները մասնակցում են նաև օրենսդրական փոփոխություններին, հետևաբար վերջին հաշվով երկրի ողջ բնակչությունը կարող է լինել նրա հավաքական շահառու: Որ մակարդակում էլ գործի սոցիալական աշխատողը, նրա միջամտության համար ուղեցույց և հիմք են հանդիսանում սոցիոլոգիայի կողմից մշակված հայեցակարգերը և տեսությունները: Սոցիոլոգիան

տեսական հիմք է ստեղծում սոցիալական աշխատանքի համար: Սոցիալականացում և շեղվող վարք, մանկություն և ծերություն, աղքատություն և միգրացիա, գործազրկություն և անօթևանություն, ընտանիք, կրթություն և առողջապահություն՝ ասիա սոցիալական ինստիտուտների և հիմնախնդիրների ոչ լրիվ շարքը, որոնք ժամանակի ընթացքում ստիպել են զարգացնել սոցիալական աշխատանքի պրակտիկան և կազմակերպել մասնագիտացում այս կամ այն ուղղությամբ: Սոցիոլոգիայի զարգացման ընթացքում ստեղծված միջին մակարդակի տարբեր տեսությունները հիմք են հանդիսացել սոցիալական աշխատանքի համապատասխան ուղղություններով մասնագիտանալու համար: Հասկացում և գործողություն՝ ասիա սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի կարճ բնութագրերը⁴ հասարակության մեջ ունեցած նրանց հիմնական դերի տեսակետից:

Սոցիոլոգիան սոցիալական աշխատողներին ապահովում է իրականության ճանաչողության և փոփոխության գիտական մեթոդներով: Գործ ունենալով տարբեր տիպի շահառուների հետ, սպասարկելով բնակչության սոցիալապես խոցելի խմբերին՝ նրանք օգտվում են սոցիոլոգիական տարբեր տեսություններից, որոնք բացատրում են անձի ու տարբեր խմբերի գործունեության, սոցիալական ինստիտուտների գործառնման ու սոցիալական գործընթացների դրսևորման օրինաչափությունները: Սոցիոլոգիան սոցիալական աշխատողներին զինում է հետազոտական գիտելիքներով ու հմտություններով, որոնք նրանք կիրառում են ամենօրյա պրակտիկայում՝ դեպքերը վարելիս կամ էլ սոցիալական հիմնախնդիրները քացահայտելիս: Առանց սոցիոլոգիական գիտելիքների սոցիալա-

⁴ St'u Peter R. Day, Sociology in social work practice, Macmillan Education, էջ 6:

կան աշխատողների գործունեությունը գիտական չէր լինի: Սոցիոլոգիան ուսումնասիրում է հասարակությունը՝ որպես մի ամբողջություն, որպես համակարգ, որպես սոցիալական օրգանիզմ, սոցիալական աշխատանքն էլ փորձում է բարելավել այդ համակարգի գործառույթը, բուժել այդ օրգանիզմի սոցիալական հիվանդությունները: Սոցիալական աշխատողների միջամտությունը նպաստում է մարդկանց կյանքի բարելավմանը: Իզուր չեն սոցիալական աշխատողներին անվանում սոցիալական փոփոխության գործակալներ: Նրանք սկսում են մարդկանց կարիքներին ֆիզիկական միջավայրի պարզագույն հարմարեցումից և հասնում մինչև սոցիալական միջավայրում բարդ փոփոխությունների իրականացումը, որպեսզի այն նույնպես հարմարեցվի մարդկանց կարիքներին: Սոցիոլոգիան բանալի է տրամադրում սոցիալական աշխատողին խնդրահարույց տարբեր միջավայրեր և իրավիճակներ մուտք գործելու համար: Սոցիոլոգիան որոշակի իրավիճակներ սահմանում է որպես խնդրահարույց՝ ելնելով սոցիալական համակարգերի զարգացման օրինաչափություններից: Օրինակ՝ ամուսնալուծությունը, կոնֆլիկտները և աղքատությունը ընտանիքների համար, վարքային տարբեր շեղումները, հաշմանդամության փաստերը անհատների համար: Սոցիալական աշխատողները զբաղվում են սոցիալական համակարգերի գործառական կարողությունների հզորացմամբ, այն դեպքում, երբ սոցիոլոգները զբաղվում են այդ համակարգերի գործառնան օրինաչափությունների հայտնաբերմամբ: Սոցիալական աշխատանքում բազմաթիվ ուղղություններ են ձևավորվել ու զարգանում այն տեսությունների հիմքերի վրա, որոնք մշակվել են սոցիոլոգիայի շրջանակներում: Եթե չլինեի շեղվող ու հանցագործ վարքի

սոցիոլոգիան, չէր զարգանա իրավախախտների հետ սոցիալական աշխատանքի կամ պրոբացիոն աշխատանքի ոլորտը: Ընտանիքի, կրթության ու առողջապահության սոցիոլոգիական հայեցակարգերի զարգացումը հնարավոր է դարձրել համապատասխան ինստիտուտներում սոցիալական աշխատանքի ներդրումը:

Սոցիոլոգիան իր զարգացման ընթացքում մշակել է սոցիալական երևույթների ուսումնասիրման գիտական մեթոդների հսկայական զինանոց: Դրանք այսօր հաջողությամբ կիրառվում են բոլոր այն ոլորտներում, որոնք ինչ-որ չափով առնչվում են հասարակությանը: Սոցիալական հիմնախնդիրների ժամանակին բացահայտումն ու մանրակրկիտ ուսումնասիրությունը սոցիոլոգների մասնագիտական հիմնական պարտականությունն են: Աղքատություն, անօթևանություն, միգրացիա, հանցագործություններ, բռնություններ, գործազրկություն, ամուսնալուծություններ, կոնֆլիկտներ՝ ահա խնդիրների այն ոչ լրիվ ցանկը, որոնք ուղեկցում են ժամանակակից հասարակություններին և սոցիոլոգներին ստիպում իրենց հետազոտական ուշադրությունը սևեռել իրենց վրա:

Այսպիսով՝ սոցիոլոգիան յուրահատուկ մեթոդաբանական հիմք է սոցիալական աշխատանքի միջամտությունների համար: Սոցիալական աշխատանքը հայտնի է որպես ինտերվենտիվ մասնագիտություն: Բոլոր այն դեպքերում, երբ մարդիկ բախվում են սոցիալական հիմնախնդիրներին, և նրանց գործառույթը տարբեր համակարգերում խանգարվում է, սոցիալական աշխատողները միջամտում են, երբեմն նույնիսկ ներխուժում, եթե իրավիճակը ճգնաժամային է: Որպեսզի միջամտությունները չխաթարեն համակարգերի գործառույթը, այլ բարելավեն դրանք, ընտրված ռազմավարու-

թյունը և մարտավարությունը պետք է համապատասխանեն համակարգերի զարգացման առանձնահատկություններին: Սոցիոլոգիան սոցիալական աշխատողներին զինում է հենց այդպիսի գիտելիքներով ու հմտություններով:

Սոցիոլոգները սովորաբար չեն զբաղվում իրենց հետազոտությունների արդյունքների ներդրմամբ: Դասական առումով գիտության նպատակը նոր փաստերի, այսինքն՝ օրենքների և օրինաչափությունների բացահայտումն է: Եթե Դյուրկհեյմը բացահայտել էր ու նկարագրել ինքնասպանությունների պատճառները և տեսակները որպես հետազոտող, ապա դրանց հաղթահարմամբ ինքը չէր զբաղվում: Իսկ ահա բժիշկները, դաստիարակները, զինվորական հրամանատարները, բանտերի աշխատակիցները և բոլոր այն մասնագետները, ովքեր մարդկանց հետ են աշխատում, պետք է ուշադիր լինեն, որպեսզի կանխվեն իրենց շահառուների մոտ նման դեպքերը: Սոցիալական աշխատանքի պրակտիկայում էլ բազմաթիվ իրավիճակներ են առաջանում, երբ մասնագիտությունը պահանջում է զգոնություն, որ կանխվեն ինքնասպանության փորձերը՝ հիվանդության թերմինալ փուլ, շոկային իրավիճակներ, կյանքի որակի կտրուկ վատացումներ և այլն: Օգտվելով սոցիոլոգիայի հայտնագործություններից՝ սոցիալական աշխատողները ոչ միայն հաղթահարում են մարդկանց կյանքում ծագող դժվարին իրավիճակները, այլև կանխարգելում են դրանց առաջացումը: Կանխարգելիչ միջամտությունն ավելի արդյունավետ է սոցիալական աշխատանքում, քան վերականգնողը: Սոցիալական հիմնախնդիրների կանխարգելումը վաղ միջամտությունների օգնությամբ թույլ է տալիս ոչ միայն խնայել հսկայական ռեսուրսներ, այլև խուսափել սո-

ցիալական լարվածության օջախների ձևավորումից: Սոցիալական աշխատողներն ավելի մեծ ջանքեր են ներդնում սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում, քան սոցիոլոգները⁵: Ժամանակագրական առումով ավելի ուշ հայտնվելով մասնագիտությունների ցանկում՝ սոցիալական աշխատանքը գալիս է լրացնելու սոցիոլոգիային՝ պրակտիկայում փորձելով կիրառել այն ամենը, ինչը սոցիոլոգիան հայտնաբերում է սոցիալական ճանաչողության ընթացքում: Սոցիալական աշխատանքն օգնող մասնագիտություն է, և սոցիոլոգիան նրան օգնում է բացահայտել օգնության անհրաժեշտությունը և միջամտել սոցիալական համակարգերի կյանքին այն ձևերով ու միջոցներով, որոնք թույլ կտան խուսափել դրանց գործառնական խանգարումներից: Այսպիսով՝ սոցիոլոգիան մեթոդաբանական հիմք է հանդիսանում սոցիալական աշխատանքի համար, առանց որի սոցիալական աշխատողների միջամտությունները կդառնան կամայական ու չհիմնավորված, իսկ արդյունքը կլինեն խառնաշփոթն ու քաոսը: Սոցիոլոգիային առնչվող մասնագիտական գրականության մեջ երբեմն կարելի է հանդիպել «կիրառական սոցիոլոգիա» հասկացությանը, որն իրավամբ ավելի շատ վերագրելի է սոցիալական աշխատանքին, քան թե այն բովանդակությանը, որն անվանում են այդ բառով: Ավելին, որոշ վերապահումներով սոցիալական աշխատանքը նույնիսկ կարելի է անվանել գործնական սոցիոլոգիա, քանի որ իրականում սոցիալական աշխատանքն է սոցիոլոգիայի հայտնագործությունները կիրառում կյանքում, որպեսզի բարելավի ինչպես ողջ հասարակության, այն-

⁵ Տե՛ս D.Kallen, D. Mille⁸, A. Daniels, “Sociology, Social Work and Social Problems”, Sociological Practice: Vol. 7: Iss.1, Article 14// <http://digitalcommons.way.ne.edu/socprac/vol7/iss1/14>, էջ 105:

պես էլ նրա մասերը կազմող համայնքների, խմբերի և անհատների
կյանքը:

SOCIOLOGY AS THEORETICAL-METHODOLOGICAL BASIS FOR SOCIAL WORK

Artak Khachatryan

*PhD, Head of Department of Social Work and Social Technologies,
Faculty of Sociology, Yerevan State University*

The article examines the link between sociology and social work. Comparing the approaches to social issues of these disciplines, the conclusion is that sociology studies the society and discovers social problems and ways of their solution, and social work is dealing with specific issues that arise in the lives of socially vulnerable people. The main conclusion is that sociology is a methodological basis for social work, by equipping social workers with knowledge and skills for professional competent interventions.

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻ ՇՈՒԲՁ

ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ

*ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական
տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ, ս. գ. ք.*

Քսանմեկերորդ դարում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական հրամայականը ինտելեկտի և գիտելիքների վրա հիմնված հասարակության ձևավորումն է, որի համատեքստում առանձնահատուկ կարևորվում է մեծահասակների կրթությունը¹: Վերջինս, ինչպես նաև ողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը կարևոր գրավականներից է, որոնք ուղղորդում են անձին դեպի հաջող և անընդհատ զարգացող կարիերա: ՀՀ-ն, դառնալով Բոլոնյան գործընթացի լիիրավ անդամ, առաջին քայլը կատարեց դեպի գիտելիքահեն տնտեսություն՝ պարտավորվելով համապատասխանեցնել կրթության ոլորտում գործող օրենսդրությունը եվրոպական չափանիշներին: Գործող օրենսդրության համապատասխանեցումը, այն է՝ նոր օրենքների ընդունումը, օրենքների իրականացման մեխանիզմների ստեղծումը ենթադրում են աշխատատար և երկարաժամկետ գործընթացներ: Հարկ է նշել, որ առ այսօր ՀՀ-ում

¹ Մեծահասակների կրթություն է համարվում հանրակրթության տարիքն անցած անձանց՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ, ինչպես նաև մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվող կրթությունը, որը քաղաքացիների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, տեխնիկական միջոցների, կենսագործունեության միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական ծառայությունների միջոցով ընթացող կրթական գործընթացն է (ՀՀ կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի նիստի N 53 արձանագրային որոշման հավելված):

բացակայում է մեծահասակների կրթության քաղաքականության նպատակների և բովանդակության հստակ ըմբռնումը:

Ներկայումս մեծահասակների կրթության կազմակերպումը համարվում է արդիական հիմնախնդիր ամբողջ աշխարհում, որի լուծումից մեծապես կախված է յուրաքանչյուր պետության տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակը: Սա, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրակրթական դպրոցի, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունքները կարելի է տեսնել հեռահար ապագայում, մինչդեռ մեծահասակների կրթության արդյունքները տեսանելի են շատ մոտ ապագայում:

Շարունակական կրթության ոլորտի ֆրանսիացի հայտնի մասնագետ Պ. Լանգրանի կարծիքով՝ «...կրթության ապագան մեծապես կախված է մեծահասակների կրթությունից»²:

Մեծահասակների կրթության կազմակերպման գործընթացում առանձնակի կարևորվում է ուսուցման մեթոդների և տեխնիկաների ընտրության խնդիրը, քանի որ մեծահասակների ուսուցումն ունի որոշակի առանձնահատկություններ: Նախքան այդ առանձնահատկությունները քննարկելը հարկ է նշել, որ մի շարք հեղինակների³ մեծահասակների արդյունավետ ուսուցման կազմակերպման գործում ավելի շատ կարևորում են ակտիվ ուսուցման դերը: Վերջինս չի ենթադրում դասավանդողի կողմից պատրաստի գիտելիքի

² Воронкина Л.Т. Повышение квалификации руководителей общеобразовательных учреждений различных видов как андрагогическая проблема, Вестник Ставропольского государственного университета, 53/2007, ст. 19.

³ Балаев А.А. Активные методы обучения. М., 2006., Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991., Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула, 2002.

մատուցում, մտապահում և վերաբարձրություն: Ուսուցման այս ձևի դեպքում շեշտը դրվում է ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերման վրա⁴: Ըստ էության ակտիվ ուսուցման նպատակն է ներգրավել ուսումնառողներին (սովորողներին) ինքնուրույն իմացական գործունեության մեջ, մոտիվացնել վերջիններիս լուծելու ցանկացած ճանաչողական խնդիր, սովորեցնել կիրառել նրանց կողմից ձեռքբերված գիտելիքները:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ակտիվ ուսուցման մեթոդների տարբեր տիպաբանումներ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ թե՛ հայրենական, և թե՛ օտարերկրյա մասնագիտական գրականության մեջ բացակայում են «ակտիվ ուսուցման մեթոդ» հասկացության միասնական ընդունելի սահմանումներ, որի պատճառով դրանց կիրառման ժամանակ երբեմն շփոթ է առաջանում: Յուրաքանչյուր հեղինակ տալիս է այս հասկացության իր մեկնաբանությունն ու սահմանումները, որոնք թեև, որպես կանոն, ունեն իմաստային համաման ծանրաբեռնվածություն, սակայն հաճախ ամբողջովին նույնական չեն⁵: Ընդհանրացնելով մասնագիտական գրականության մեջ առկա մի շարք սահմանումներ՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ ակտիվ ուսուցման մեթոդների ներքո ենթադրվում է բոլոր այն հնարավոր մեթոդների կիրառումը, որոնք նպաստում են ուսումնառողների ճանաչողական գործունեությանը, կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որն էլ իր հերթին ենթադրում է մտքերի ազատ փո-

⁴ Տե՛ս Балаев А. А., նշվ. աշխ., էջ 49-50:

⁵ Տե՛ս Анцибор М. М., նշվ. աշխ., էջ 115:

խանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Ակտիվ ուսուցման մեթոդների թվին են դասվում ուսուցման այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարները, վերապատրաստումները, պրոբլեմային ուսուցումը, համագործակցային ուսուցումը, ուսուցողական խաղերը, խմբային քննարկումները և այլն: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ մեթոդների ընտրությունը հիմնվում է հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:

Քննարկելով մեծահասակների ուսուցման առանձնահատկությունները՝ Մալքոլմ Շեֆերդ Նուլզը⁶ առանձնացնում է մի քանի հատկանիշներ, որոնցով ուսումնառող մեծահասակները տարբերվում են ուսումնառող երեխաներից/դեռահասներից⁷: Դրանք են.

- ***Ինքնագնահատականը.***

Տարիքի աճին զուգընթաց անձի «ես» կոնցեպցիայի զարգացման վրա մեծապես ազդում են անձի գիտելիքները, հմտությունները, կարողությունները, որոնք օգնում են դառնալ ինքնաբավ: Այսպես, օրինակ, երեխաները սովորում են իրենց ծնողներից, ուսուցիչներից՝ վստահելով նրանց գիտելիքներին, հմտություններին, փորձին, մինչդեռ մեծահասակները գիտեն՝ ինչպես սովորել և խորությամբ ուսումնասիրել այս կամ այն թեման:

⁶ Վերջինս գիտական շրջանառության մեջ է դրել «անդրագոգիկա» տերմինը: Անդրագոգիկան մեծահասակների կրթության պրակտիկան ուսումնասիրող և ընդհանրացնող գիտություն է: Վերջինիս՝ որպես ինքնուրույն գիտության տեսական հիմքերի ձևավորման գործում մեծ է գիտնականներ Մ. Նուլզի, Պ. Սմիթի, Պ. Ջարվիսի, Ս. Ջմեյովի և այլոց ավանդը:

⁷ Տե՛ս Knowles, M. The Adult Learner: A Neglected Species (3rd Ed.). Houston, TX: Gulf Publishing, 1984, էջ 97-115:

- ***Մեծահասակ ուսումնառողի փորձառությունը.***

Մեծահասակ սովորողները ունեն որոշակի փորձառություն, որը կարող է կիրառվել որպես ռեսուրս նրանց ուսումնառության ընթացքում:

- ***Սովորելու պատրաստակամությունը.***

Մեծահասակ ուսումնառողները սովորաբար պատրաստակամ են ձեռք բերել այնպիսի գիտելիքներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն նրանց ճիշտ կողմնորոշվել կենսական դժվարին իրավիճակներում: Սրանով է թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ մեծահասակ ուսանողները առավելապես հետաքրքրված են այնպիսի առարկաների ուսումնասիրմամբ, որոնք անմիջականորեն առնչվում են նրանց կյանքին և օգնում հասնել իրենց առջև դրված նպատակներին:

- ***Ուսուցման վրա կենտրոնացումը.***

Մեծահասակ սովորողները հիմնականում ցանկանում են ստանալ այնպիսի գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց հասնել իրենց առջև դրված նպատակներին, ունենալ առաջխաղացում կարիերայում, բարելավել իրենց կյանքը հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Մեծահասակ ուսումնառողները խուսափում են ձեռք բերել այնպիսի գիտելիքներ, որոնք նրանք չեն կիրառելու տևական ժամանակ:

- ***Սովորելու մոտիվացիան.***

Մեծահասակները սովորաբար ունեն նոր գիտելիքներ ձեռք բերելու ներքին մոտիվացիա: Սա իր հերթին ենթադրում է, որ նոր գիտելիքի ձեռքբերումը մեծահասակ սովորողի համար պատճառաբանված է և հիմնավորված: Այլ կերպ ասած՝ վերջինս հստակ գի-

տի, թե ինչու է ուզում ձեռք բերել նոր գիտելիք և որտեղ է այն կիրառելու:

Ամերիկացի հայտնի հոգեբան Կարլ Ռոջերսը մեծահասակների ներքոնշյալ հոգեբանական առանձնահատկությունները դիտում է որպես արդյունավետ ուսուցման նախադրյալներ.

- մարդիկ ունեն սովորելու մեծ պոտենցիալ,
- ուսուցումն արդյունավետ է այն դեպքում, երբ այն ակտուալ է անձի համար, ինչպես նաև եթե նրա «ես» կոնցեպցիային վտանգ չի սպառնում,
- ուսուցման գործընթացում անձը ներգրավվում է ամբողջությամբ, ինչի արդյունքում փոփոխություններ են տեղի ունենում անձի ինքնակառավարման և ինքնաընկալման գործընթացներում,
- ինքնաքննադատությունը, բարձր ինքնագնահատականը խթանում են ստեղծագործական գործընթացը, ամրապնդում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ անկախությունը, ինքնավստահությունը⁸:

Ըստ էության Ռոջերսը մեծահասակին դիտում է որպես ուսուցման գործընթացի նախաձեռնողի, պատասխանատու մասնակցի: Սակայն չպետք է մոռանալ, որ ամեն դեպքում ուսուցման նպատակների սահմանման հարցում պատասխանատու է դասավանդողը:

Մեծահասակների ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցման մեթոդների ընտրությամբ: «Ի՞նչ մեթոդներ է նպատակահարմար կիրառել» հարցին

⁸ Տե՛ս Carl R. Rogers, H. Jerome Freiberg. Freedom to Learn, Merrill, 1994, էջ 198-215:

պատասխանելու համար նախևառաջ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին՝ «արդյո՞ք մեծահասակները ունակ են յուրացնելու նոր գիտելիքներ»։ Չնայած տարիքի աճին գուզընթաց օրգանիզմի շատ գործառնություններ ետընթաց են ապրում (թուլանում են տեսողությունը, լսողությունը, հիշողությունը, նոր տեղեկատվությունը ընկալելու դժվարություններ են առաջանում), սովորելու կարողությունը մեծահասակների (20-60 տարեկան) մոտ էական փոփոխությունների չի ենթարկվում։ Ընդ որում, մտավոր աշխատանք կատարող անձանց մոտ այդ կարողությունը ավելի երկար է պահպանվում։

1980-ականներին ԱՄՆ-ում իրականացված հետազոտությունները (National Training Laboratories in Bethel, Maine) հնարավորություն են տալիս ընդհանրացնել մեծահասակների շրջանում ուսուցման տարբեր մեթոդների արդյունավետությանը վերաբերող տվյալները⁹, որոնք ներկայացված են աղյուսակում։

Աղյուսակ 1. Ուսուցման մեթոդների արդյունավետությունը

<i>Ուսուցման ձևերը</i>	<i>Տոկոսային հարաբերությունը</i>
Դասախոսություն	<i>5%</i>
Ընթերցանություն	<i>10%</i>
Ատոլիո/վիդեո նյութերի կիրառում	<i>20%</i>
Դեմոնստրացիա/ցուցադրություն	<i>30%</i>
Բանավեճ	<i>50%</i>
Պրակտիկ առաջադրանքներ	<i>75%</i>
Այլոց ուսուցում/գիտելիքի անհապաղ կիրառում	<i>90%</i>

⁹ St'u Learning Pyramid, National Training Laboratories in Bethel, Maine, https://www.fitnyc.edu/files/pdfs/CET_Pyramid.pdf, 12.03.2018 թ., ժ. 12:33:

Միևնույն ժամանակ շատ մեծահասակներ ուսուցման գործընթացում բախվում են մի շարք դժվարությունների, որոնք հիմնականում պայմանավորված են հոգեբանական գործոններով՝ սեփական հեղինակության մասին անհանգստությունը, շրջապատում ոչ կոմպետենտ երևալու մտավախությունը և այլն: Բացի դրանից՝ այսօր մեծահասակների ուսուցման գործընթացին խոչընդոտում է նաև մանկավարժական նախկին մոտեցումների ազդեցությունը՝ իրենց բացասական հետևանքներով հանդերձ՝ դոգմատիկ ուսուցումը, ուսումնառության ընթացքում դասախոսությունների գերակայությունը, տեսության և պրակտիկայի միջև անջրպետը, պատրաստի գիտելիքների յուրացման վրա շեշտադրումը և այլն:


Մեծահասակների ուսուցումը իրենից ներկայացնում է որոշակի փուլերից բաղկացած գործընթաց, որը, ըստ Դեվիդ Կոլբի և նրա գործընկերների, ցիկլիկ բնույթ ունի: Վերջիններիս կողմից մշակված 4 փուլանոց էմպիրիկ մոդելը (Experiential Learning Model)¹⁰ հնարավորություն է տալիս ուսումնասիրել մեծահասակների ուսուցման գործընթացը: Իրենց հետազոտությունների արդյունքում Դ. Կոլբին և նրա գործընկերները պարզել են, որ մարդիկ սովորում են փորձառության, դիտարկման և ռեֆլեքսիայի, վերացական հայեցակարգման, ակտիվ փորձարկումներ կատարելու միջոցով՝ նախապատվությունը տալով վերոնշյալ մեթոդներից որևէ մեկին: Ըստ Կոլբի և նրա գործընկերների՝ ուսուցումը՝ որպես գործընթաց, բաղկացած է «իրականացման» և «մտածողության» կրկնվող փուլերից: Սա իր հերթին նշանակում է, որ իրականում հնարավոր չէ

¹⁰ Stu Kolb, D. Experiential Learning as the Science of Learning and Development. Englewood Cliffs, NJ, Prentice Hall, 1984:

ինչ-որ բանի վերաբերյալ նոր գիտելիք ձեռք բերել՝ պարզապես կարդալով այդ մասին կամ լսելով դասախոսություն:

Կուրքի մոդելի (ցիկլի) փուլերը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Փծապատկեր 1. Կուրքի ցիկլիկ մոդելը



Այժմ ներկայացնենք ցիկլի փուլերը:

Անճնական փորձ

Որոշակի փորձի առկայությունը անհրաժեշտ է այն ոլորտում, որտեղ անձը ցանկանում է նոր գիտելիքների ձեռք բերել կամ զարգացնել հմտությունները: Բացի դրանից՝ այդ փորձի հիման վրա անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ արդյունքների կարելի է հասնել:

Փորձի իմաստավորում

Անձը վերլուծում է իր փորձի հիմնական բաղադրիչները:

Տեսական հայեցակարգեր.

Այս փուլում հարկավոր է ընդհանրացնել փորձի արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը՝ ստեղծելով որոշակի մոդել, որը հնարավորություն կտա նկարագրել այդ փորձը:

Կիրառում պրակտիկայում.

Ըստ էության այս փուլում փորձարկվում և ստուգվում է մշակված հայեցակարգի պիտանելիությունը հետագա աշխատանքների համար: Համապատասխանաբար այս փուլից հետո ձեռք է բերվում նոր «անճանական փորձ», և շրջանը նորից կրկնվում է:

Ընդհանրացնելով ձեռք բերված նոր գիտելիքները և ներառելով դրանք արդեն իսկ գոյություն ունեցող գիտելիքների համակարգում՝ անձը անցում է կատարում վերացական պատկերացումների և հասկացությունների: Այդ նոր գիտելիքները, ըստ էության, վարկածներ են, որոնք ստուգվում են տարբեր իրավիճակներում սկսիվ փորձարկումների միջոցով: Ուսուցման գործընթացը կարող է սկսվել ցանկացած փուլից: Այն ընթանում է ցիկլիկ կերպով այնքան ժամանակ, քանի դեռ չի ձևավորվել պահանջվող, անհրաժեշտ հմտությունը: Երբ անձը յուրացնում է մեկ հմտություն, նրա ուղեղը պատրաստ է յուրացնել մեկ ուրիշը:

Ձարգացնելով Դ. Կոլբի գաղափարները՝ անգլիացի հոգեբաններ Պ. Հանին և Ա. Մամֆորդը նկարագրել են ուսուցման տարբեր ոճեր, ինչպես նաև մշակել նախընտրելի ոճի բացահայտման քեսթ (Honey Mumford Preferred Learning Style Test)¹¹, որը լրացնելիս էլ,

¹¹ St'u Honey, P., Mumford, A. The Manual of Learning Styles, Peter Honey Associates, 1986:

ըստ էության, նպատակահարմար է սկսել մեծահասակների ուսուցումը:

Վերոհիշյալ հետազոտողները առանձնացնում են ուսուցման հետևյալ ոճերը՝ «ակտիվիստներ», «մտածողներ», «տեսաբաններ» և «պրագմատիկներ»: Վերոնշյալ ոճերը նախընտրող սովորողները ուսուցման գործընթացի և դրա մասնակիցների նկատմամբ ունեն տարբեր պահանջներ: Որպես կանոն, ուսուցման այս ոճերը իրականության մեջ «մաքուր ձևով» հազվադեպ են հանդիպում, քանի որ գրեթե բոլոր սովորողների մոտ առկա են ուսուցման բոլոր ոճերին բնորոշ որոշակի տարրեր: Սակայն յուրաքանչյուր սովորող նախընտրում է ուսուցման որոշակի ոճ, որը գերակայող է և պայմանավորում է ուսուցման մեթոդների ընտրությունը:

Այսպես՝ «ակտիվիստները» հնարավորինս շատ գիտելիք են ձեռք բերում, երբ նրանք ներգրավված են, օրինակ, հիմնախնդրի լուծման գործընթացում և հանդես են գալիս որպես ակտիվ գործող անձ: Հետևաբար ուսումնառության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են, օրինակ, դասախոսությունը, մասնագիտական գրականության ընթերցումն ու վերլուծությունը, սեմինար պարապմունքները, բանավեճերը, արդյունավետ չեն ուսուցման այս ձևը նախընտրող սովորողների համար: Փոխարենը արդյունավետ են կոնկրետ իրավիճակների ուսումնասիրությունը, գիտափորձերը, խմբային քննարկումները՝ դերային տեխնիկայի կիրառմամբ:

«Մտածողները», որպես կանոն, սովորում են՝ լսելով, դիտարկելով և վերլուծելով այն, ինչ տեղի է ունենում: Ուսուցման այս ոճը նախընտրող մարդիկ վերլուծում են բոլոր հնարավոր պատճառներն ու հետևանքները նախքան որևէ եզրակացության հանգելը:


Նրանք ուսուցման գործընթացում հնարավորինս պասիվ դիրք են զբաղեցնում: Դասախոսությունները, ընթերցանությունը, դեմոստրացիան ուսուցման իդեալական մեթոդներ են այս ոճը նախընտրող սովորողների համար:

«Տեսաբանները» նախընտրում են ուսումնասիրել տարբեր տեսություններ՝ իրականությունը հասկանալու համար: Նրանց բնորոշ են վերլուծելն ու սինթեզելը, սուբյեկտիվ դատողություններից խուսափելը: Սովորաբար ուսուցման այս ոճը նախընտրող անձանց համար ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ է, եթե նոր գիտելիքի ձեռքբերումը հիմնված է որոշակի մոդելների, հայեցակարգերի, փաստերի վրա: Ըստ էության, տեսաբանները նախընտրում են պասիվ ուսուցման մեթոդները:

«Պրագմատիկներին» բնորոշ հիմնական հատկանիշն այն է, որ վերջիններս նախընտրում են ձեռք բերել այնպիսի գիտելիք՝ ուսուցման տարբեր մեթոդների կիրառմամբ, որն անհրաժեշտ է, օգտակար է և կարող է օգնել լուծել որոշակի արդիական խնդիրներ: Այլ կերպ ասած՝ սրանք պրակտիկ ուսումնառողներն են:

Համադրելով Կոլբի ուսուցման գործընթացի ցիկլիկ մոդելն ու Հանիի և Մամֆորդի կողմից մշակված ուսուցման ոճերը՝ կարող ենք գալ այն եզրահանգման, որ արդյունավետ ուսուցումը ենթադրում է *փորձարկում* (որոշակի գործողությունների իրականացում), *վերանայում* (վերլուծել կատարվածը), *եզրահանգում* (կոնկրետ եզրակացություններ կատարելը), *պլանավորում* (որոշում կայացնել սպագայում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ):

Սխեմատիկորեն այդ համադրումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Այսպիսով՝ մեծահասակների ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է, որի կառուցվածքով, ձևերով և բովանդակությամբ է պայմանավորվում ուսուցման գործընթացի բնույթը: Մեծահասակների ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցման մեթոդների ընտրությամբ: Իսկ դրանք ընտրելիս նախապատվությունը տրվում է ակտիվ ուսուցման մեթոդներին, որոնք հնարավորություն են ընձեռում լուծելու կրթական հետևյալ խնդիրները՝ ուսումնառողների ճանաչողական ակտիվության բարձրացում, կրթական գործընթացին նրանց ակտիվ ներգրավում, ճանաչողական գործընթացների (խոսք, հիշողություն, մտածողություն), ինչպես նաև ստեղծագործական մտածելակերպի զարգացում, ինքնագործունեության խթանում:

ON THE PROBLEM OF CHOICE OF TEACHING METHODS FOR ADULTS

Marine Yarmaloyan

*PhD, Assistant Professor at the Department of Social Work and Social
Technologies, Yerevan State University*

The effectiveness of adults' teaching process is mainly conditioned by the choice of teaching methods. The author substantiates the use of active teaching methods which provide an excellent opportunity to solve a number of educational tasks and reach desirable results.

**ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԱՄՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՐՏՅՈՒՄ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԱԱԾ գիտակրթական կենտրոնի

պետի տեղակալ, ի. գ. ք.

ԱՆՆԱ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

ՀՀ ԱԱԾ գիտակրթական կենտրոնի մեթոդիստ

ԱՄՆ բարձրագույն ռազմական դպրոցն աշխատում է զինծառայողների պատրաստման համար կիրառել ամենաառաջադեմ և արդիական մեթոդները: Լսարանային պարապմունքների ժամանակ դասախոսություններ անցկացվում են համարյա բոլոր առարկաներից՝ բացառությամբ լեզվական պատրաստությունից:

Դասախոսությունների ընդունված հիմնական խնդիրներն են ուսումնասիրվող նյութի վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը, սովորողների մոտ թեմայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, ուսումնասիրվող առարկայի հիմնական հայեցակարգերի և տեսությունների ընկալման ապահովումը:

Վերջին շրջանում ԱՄՆ բարձրագույն ռազմական դպրոցում դասախոսությունն օգտագործվում է ոչ թե որպես տեղեկատվության աղբյուր, այլ որպես ուղղորդող ձև, որպեսզի լսարանային պարապմունքներին ավելի քիչ ժամանակ հատկացվի, քան ինքնուրույն աշխատանքին: Դասախոսության ընթացքում սովորաբար ընդհանուր ակնարկ է կատարվում որևէ բաժնի, արծարծվում են

բարդ և առանցքային հարցեր, մեթոդական ցուցումներ են տրվում ինքնուրույն աշխատանքի համար: Որպես կանոն, դասախոսության տևողությունը 50-60 րոպե է, սակայն դասախոսի ցանկությանը այն կարող է ձգվել մինչև 90 րոպե: Մինչ դասախոսության անցկացումը յուրաքանչյուր ունկնդրի հատկացվում է անհրաժեշտ ուսումնական նյութի սեղմագիրը (trots):

Համաձայն ամերիկյան մանկավարժության կանոնների՝ ուշադրության առավելագույն կենտրոնացումը 15 րոպե է, այդ պատճառով յուրաքանչյուր 15 րոպեն մեկ ցուցադրվում են փաստագրական և խաղարկային ֆիլմերից փոքրիկ հատվածներ: Այդ ընթացքում դասավանդողը պատասխանում է ցանկացած հարցի, կատարվում է մտքերի փոխանակություն: Դասախոսության վերջին 10 րոպեների ընթացքում անցկացվում է գրավոր հարցում¹:

ԱՄՆ բարձրագույն ռազմական դպրոցում դասավանդման գործընթացում կիրառվում են դասախոսության տարբեր տեսակներ, ինչպես օրինակ՝

- տեղեկացնող դասախոսություն, որը, նախքան ավելի բարդ նյութին անցնելը, օգտագործվում է որպես ներածական նյութ,
- պատկերագարողություններով՝ դիտելի օրինակով (իլյուստրացիոն), որի ժամանակ, շեշտադրելով կոնկրետ փաստերը, դասախոսը փորձում է պատկերավոր ներկայացնել իր տեսակետը և եզրահանգումները,

¹ Болдуин Т., Карпенко С. Гуманитарное образование в США // Свободная мысль, 1994, N 1, С. 100-109.

- բանավեճային, որի տարատեսակն է դասախոսություն-վահանակը (բարձրակարգ մասնագետների կողմից որոշակի ճանաչում ունեցող որևէ կոնկրետ խնդրի քննարկումը),
- սոկրատեսյան, որի ժամանակ դասախոսը կիրառում է հարցերի մի ամբողջ համակարգ՝ հարց-պնդում, հարց-որոշում, հարց-ծուղակ և այլն:

Ամերիկացի գիտնական Դ. Տանների կարծիքով՝ «հարց տալը ուսուցման հիմքն է, և պատասխանի որակը կախված է խելամիտ հարցադրումից: Ընկալելով հարցադրումը՝ ունկնդիրը սովորում է զարգացնել իր՝ մտածելու, ստեղծագործելու, ճանաչողական և հաղորդակցվելու ունակությունները»:

Ռ. Մակմասթերը նշում է, որ «...հիմքում ընկած են հարցի նկատմամբ սովորողի հետաքրքրվածությունը, նրա պատասխանելու ցանկությունը՝ դրանով ցույց տալով իր իսկ կոմպետենտությունը»:

Ամերիկացի մանկավարժները գտնում են, որ սխալ պատասխաններ չկան. յուրաքանչյուր պատասխան արժանի է հարգանքի: Հարց տալը բնույթով ունիվերսալ է և ընդունելի ցանկացած տիպի պարապմունքի ժամանակ²:

Բարձրագույն ռազմական-ուսումնական հաստատություններում դասախոսություններ կարդալու են հրավիրվում հմուտ մասնագետներ՝ ամենաբարձրակարգ քաղաքացիական ուսումնական հաստատություններից պրոֆեսորներ, ԱՄՆ քաղաքական և պետական գործիչներ: Օրինակ՝ այդ նպատակով ազգային պաշտ-

² Dahlke R. M., Morash R. P. Discussion in College and University Teaching. Wash, 1992, V.30, No.2, P.56-59.

պանության ինստիտուտ են հրավիրվում կոնգրեսականներ և պառլամենտի անդամներ, զինված ուժերի և միացյալ հրամանատարության նախարարներ և հրամանատարներ:

ԱՄՆ զինված ուժերի շտաբերի պետերի կոմիտեի նախագահն անձամբ պատասխանատու է ազգային պաշտպանության ինստիտուտի գործունեության համար և կանոնավոր հաճախումների ընթացքում հանդես է գալիս դասախոսություններով, համաժողովներում և գիտաժողովներում զեկույցներով: Մասնավորապես ռազմական քոլեջի ունկնդիրների առջև ելույթ են ունենում հյուպատոսները և աշխարհի տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաները:

Ամերիկյան մանկավարժության մեջ բանավեճի մեթոդի ընդգծված կողմնակիցներն են Լ. Հարիսոնը, Ռ. Դահլիկը, Ռ. Մորաշը, Ա. Հեդերսոնը, Ի. Սմիթը, Կ. Սփիթը և այլք³:

Ըստ Ի. Սմիթի՝ բանավեճը նպաստում է ունակությունների իրացմանը և սովորողին հնարավորություն ընձեռում ձևավորել որոշում կայացնելու, միջանձնային հարաբերությունները կարգավորելու և ձեռք բերված գիտելիքները խորացնելու հմտություններ⁴:

Կ. Սփիթը բանավեճը ներկայացնում է որպես ուսումնական գործընթացի իդեալական մոդել, քանի որ անհատի էության հիմքում ընկած է խնդրի համատեղ լուծման անհրաժեշտությունը⁵:

Տարբեր հեղինակներ նշում են բանավեճի տարբեր տեսակներ և քանակ: Ի. Հարիսոնը հակված է բանավեճի այնպիսի տեսակներ

³ Smith I. Teaching with Discussion: A Review I Educational Technology. Englewood Cliffs, 1988, V. 18, No. 11, P.40-48.

⁴ Նույն տեղում:

⁵ Speeth K. L. Good Discussion. A Joint Research // Improving College and University Teaching. Wash., 1988, V.26, No.4, P. 218-220.

րին, ինչպիսիք են վահանակ-բանավեճը, ֆորումը, համաժողովը (սիմպոզիում), գումարումը (սեսիա)⁶:

Ի. Սմիթն առանձնացնում է բանավեճի 3 տեսակ՝

1. ուսանող-առաջնորդի (լիդերի) ղեկավարությամբ (առանց դասախոսի),

2. առանց ուսանող-առաջնորդի և առանց դասախոսի,

3. էվոլյուցիոն (պրոգրեսիվ)՝ դասախոսի մասնակցությամբ⁷:

ԱՄՆ ռազմական ուսումնական հաստատությունների շարքում ամենատարածվածը վահանակ-բանավեճն է, որն ավարտվում է խմբի ավագի գլխատուսումնական աշխատանքների արդյունքների ամփոփումով:

Համաժողովը ունկնդիրների համառոտ ելույթները և ընդհանուր եզրահանգումների ձևակերպումն է:

Վահանակ-բանավեճին և համաժողովին սովորաբար հաջորդում է ֆորումը, որին հատուկ է հարց-պատասխան ձևը, իսկ մասնակիցներին թույլատրվում է ելույթ ունենալ ոչ սահմանափակ ժամանակահատվածում, եթե այդ ընթացքում հնարավոր է լինում պահպանել լսարանի հետաքրքրվածությունը:

Ազատ բանավեճի ևս մեկ տեսակն է ոչ մեծ ճիւղեր, որի ժամանակ լսարանը բաժանվում է 2 մասի, խմբերից յուրաքանչյուրը աշխատում է բանավեճի ընդհանուր թեմայի խնդիրներից մեկի լուծման ուղղությամբ:

⁶ Garrison I. I. Communicating in Small Groups // J. Business Education. Wash, 2002, V.57, No. 1, P. 33-36.

⁷ Smith I., նույն տեղում:

Պարբերաբար քաղաքացիական քոլեջներից և ինստիտուտներից հրավիրվում են ուսանողներ՝ մասնակցելու ռազմաքաղաքական և սոցիալական խնդիրների շուրջ ծավալվող բանավեճերին:

Անհրաժեշտ է նշել, որ բանավեճն ավելի շատ համապատասխանում է ինչպես ամերիկյան կրթական համակարգի ավանդույթներին, այնպես էլ առհասարակ ամերիկյան հոգեկերտվածքին:

Պարապմունքների ժամանակ մթնոլորտն անկաշկանդ է, և բացակայում է սխալ անելու մտավախությունը: Սովորողներն ազատ արտահայտում են իրենց մտքերը, ընդունում ուրիշների կարծիքները, կարողանում պատշաճ կերպով և փաստարկված բանավիճել:

ԱՄՆ սպաների պատրաստման ժամանակակից ըմբռնումը հիմնվում է փոքր խմբերով ուսուցման վրա: Ներկայումս հիմնականում ուշադրություն է դարձվում ոչ թե դասախոսության մեթոդով նյութի հաղորդմանը, այլ ոչ մեծ ուսումնական խմբերով աշխատելուն (մինչև 15 ունկնդիր): Պրոֆեսորադասախոսական կազմը ձգտում է այնպիսի մթնոլորտ ստեղծել, որը կարող է նպաստել, որ ունկնդիրները մշտապես մտածեն, մտքերն արտահայտեն, իրենց գաղափարներն ազատ շարադրեն և կարողանան կիրառել հատուկ դասընթացի ժամանակ ընդունված տեսակետերն ու ըմբռնումները:

Հարկավոր է նաև նշել, որ մեր բարձրագույն դպրոցում ընդունված «գործնական պարապմունք» տերմինը համարժեք չէ այդ տերմինի՝ ԱՄՆ ուսումնական հաստատություններում ընդունված նշանակությանը և սովորաբար համապատասխանում է փոքր խմբերով պարապմունքներին:

Փոքր խմբերի ձևավորումը ուսումնական գործընթացի կազմակերպման ավելի ճկուն ձև է համարվում: Հաճախ փոքր խմբերը նույնպես բաժանվում են ենթախմբերի (5-8 ունկնդիր): Անդամներ, որոնք ինքնուրույն են փնտրում այս կամ այն խնդրի լուծումը, այնուհետև միմյանց հետ կիսում մտքերը, քննարկում այլընտրանքային տարբերակներ:

ԱՄՆ սպայական կազմի պատրաստման գործընթացում իր տարբեր դրսևորումներով լայնորեն կիրառվում է փոքր խմբերով պարապմունքների մեթոդը:

«Ակվարիում» մեթոդը ենթադրում է սովորողների բաժանում 3 անվանական խմբերի: Առաջին խմբի սովորողները ստանում են առաջադրանքը և սկսում քննարկել, երկրորդ խումբը հետևում է նրանց, գրի առնում նրանց գաղափարները, երրորդ խումբը դասախոսի հետ քննարկում է առաջին և երկրորդ խմբերի գործունեությունը:

Այս մեթոդը հաճախ կիրառվում է ռազմական պատմություն առարկայի ժամանակ՝ ռազմական գործողությունները քննարկելիս և վերլուծելիս:

Կոնկրետ իրավիճակի մեթոդը («casse study») հաճախ օգտագործվում է ռազմական հոգեբանության գործնական պարապմունքի ժամանակ կոնկրետ խնդրի լուծման համար, ինչպես օրինակ՝ կոնֆլիկտային իրավիճակը զինվորական կոլեկտիվում: Յուրաքանչյուրը պետք է ինքնուրույն վերլուծի իրավիճակը, մշակի լուծման մի քանի տարբերակ և ընտրի լավագույն կամ նախընտրելի տարբերակը, գրավի ունկնդիրներին՝ նրանց մեջ արթնացնելով նոր

և խնդրի լուծման համար անհրաժեշտ գաղափարներ: Իրավիճակը պետք է լինի բավականին բարդ և միաժամանակ լուծելի:

Նշանակալի հաջողություն ունի «իրավիճակային ուսուցում» (classes studies) անունը ստացած ուսուցման մեթոդը, որի ընթացքում առավել մանրամասնորեն մասնավոր ասպեկտներով ուսումնասիրվում են խնդրահարույց իրավիճակները: Սովորողներին առաջարկվում է վեր հանել խնդիրը, հիմնավորել լուծման միջոցները, խնդրի լուծումն արագացնելու համար գտնել անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև իրականացնել խնդրահարույց իրավիճակների հնարավոր հետևանքների կանխատեսումները:

Դ. Սպիտցերը պնդում է, որ ուսուցման այս եղանակի արդյունավետության հիմնական պատճառներն են հաղորդակցման հմտությունների բարելավումն ու կատարելագործումը, համագործակցությունից ստացված բավականությունը, ունկնդիրների շրջանում ուսման նկատմամբ հետաքրքրության առաջացումը, մի շարք արժեքավոր որոշումներ ընդունելու հնարավորությունը, իրավիճակի լուծման ոչ ավանդական մոտեցումների ավելի հաճախակի օգտագործումը⁸:

ԱՄՆ բոլոր ռազմական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացում առաջատար դեր ունեն տարաբնույթ խաղերը:

Մեծ ճանաչում ունեն մասնավորապես դերային խաղերը: Որոշ դեպքերում ընդհանուր սցենարով կապված խաղերը ներառվում են ուսումնառության ամբողջ դասընթացի մեջ:

⁸ Garrison I. I., նույն տեղում:

Պարապմունքների ընթացքում ուսումնական խաղերի անցկացումն ունի իր դրական կողմերը. խաղի ժամանակ ձևավորվում են գործնական հմտություններ և ունակություններ հետագայում մասնագիտական գործունեության մեջ կիրառելու համար, մշակվում են անհատական շփման ձևեր: Սակայն, միաժամանակ այդ մեթոդը պահանջում է նախապատրաստման ավելի շատ ժամանակ, սցենարի հանգամանալից մշակում, սովորողների բարձր պատրաստվածություն:

Այսպիսով՝ ԱՄՆ ռազմական բուհերի ուսումնական պարապմունքների անցկացման մեթոդների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ սպայական կազմի պատրաստման գործընթացում կիրառվում են ունկնդիրների ուսուցման բազմաբնույթ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հասնել անհրաժեշտ արդյունքների:

BASIC METHODS OF CLASS WORK IN THE US MILITARY UNIVERSITIES

Artyom Ter-Harutyunyan

PhD, Vice-Head of Scientific-Educational Center of the NSS of Armenia

Anna Gabrielyan

Methodist at Scientific-Educational Center of the NSS of Armenia

The article reflects on some methods of teaching and class work practiced in the US military universities. Some of the methods discussed are general ones and in use by many of the civil and military universities, and some other methods are interesting to be applied for the subjects taught in the military academies.

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՐԲԵԹՈՒՆԳԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

ԱՐԵՄ ՄԿՐՏՅԱՆ

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի

ամբիոնի ասիստենտ, ս. գ. ք.

Ժամանակակից մարդը ապրում է ծառայության կամ բարիքի փոխանակման հիման վրա ստեղծված հասարակական համակարգում: Այսպիսի համակարգը ենթադրում է հասարակության բոլոր անդամների մասնակցություն փոխանակման պրոցեսին, հետևաբար, բոլոր մարդիկ անընդհատ ներգրավված են փոխանակման գործընթացներում: Յուրաքանչյուր մարդ խանութում ապրանքի գները համեմատելիս զբաղվում է առևտրային հաղորդակցությամբ՝ անգամ չգիտակցելով դա: Առևտրային հաղորդակցության կամ դրա դրսևորումների այս կամ այն տեսակին կարելի է հանդիպել ամենուր՝ քաղաքներից մինչև գյուղեր: Քաղաքային կյանքը՝ որպես ավելի դինամիկ համակարգ պարունակում է առևտրային փոխանակման հարաբերությունների առավել ինտենսիվ դրսևորումներ, բայց այդպիսի հարաբերություններ գոյություն ունեն ամենուր, որտեղ ձևավորված է շուկա՝ որպես առաջարկի և պահանջարկի ինտերակցիաների ակտուալ կամ նոմինալ միջավայր¹:

Առևտրային հարաբերությունները կազմում են ժամանակակից մարդու առօրյայի անբաժան մասը, և դրանք փոխանակման գործ-

¹ Տե՛ս <http://www.businessdictionary.com/definition/market.html> 13.03.2018 թ.:

ընթացում համապատասխանության ստեղծմանն ու գործընթացի կանոնակարգմանը ուղղված ժամանակակից մարքեթինգի հիմքն են: Չնայած այն հանգամանքին, որ մարքեթինգային գործընթացներում ընդգրկվում են հասարակության բոլոր անդամները, մարքեթինգային հաղորդակցությունը իրականացնում և վերահսկում է շուկայում միմյանց հետ հաղորդակցվող կողմերից միայն մեկը, իսկ մյուս կողմը՝ որպես հաղորդակցության տեղեկատվության հասցեատեր, կատարում է հաղորդակցության գնահատում: Այդպիսի գնահատում իրականացնելուց հրաժարվելու անհնարինությունը (անգամ ապրանքի/ծառայության բոյկոտը հաղորդակցության գնահատում է) այն հիմնական պատճառն է, որը ստիպում է մարդուն գիտակցաբար կամ անգիտակցաբար ընդգրկվել մարքեթինգային հաղորդակցության մեջ: Մարքեթինգային հաղորդակցության իրականացման գրագետ ուղիների ստեղծմանը, այդ հաղորդակցության արդյունավետության բարձրացմանն են ուղղված ժամանակակից մարքեթինգային հաղորդակցության հիմնական խնդիրների ուսումնասիրությունները:

Մարքեթինգային հաղորդակցությունը զանգվածային հաղորդակցությունն է և հիմնականում իրականացվում է տարբեր կառույցների, կազմակերպությունների կողմից իրենց հասարակայնության հետ փոխանակման հարաբերությունների ստեղծման, պահպանման և վերարտադրման համար: Որպես զանգվածային հաղորդակցություն՝ այն գերծ չէ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացող ազդեցությունից: Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները հաջողությամբ իրացվում են մարքեթինգային հաղորդակցությունում: Այդպիսի «էլեկտրոնային»

հաղորդակցությունները ստեղծել են նոր հնարավորություններ մարքեթինգային ուղիների կազմակերպման տեսանկյունից, որոնք առավել արդյունավետ են ժամանակ խնայելու, ֆինանսական ծախսերի և թիրախավորման տեսանկյուններից: Մարքեթինգի կազմակերպման էլեկտրոնային ուղիների կարևորությունը թերևս անժխտելի է ժամանակակից սոցիալ-տնտեսական համակարգերում: Համացանցից օգտվողների՝ օրեցօր ավելացող թվաքանակը հանգեցրեց նոր՝ վիրտուալ շուկայի ստեղծմանը, որը սակայն հանդես եկավ ինտերակցիայի նոր կանոններով և պայմաններով:

Վիրտուալ միջավայրում մարքեթինգային հաղորդակցության կազմակերպման խնդիրների ուսումնասիրությամբ է զբաղվում մարքեթինգի նոր գիտաճյուղ՝ էլեկտրոնային մարքեթինգը: Թեև էլեկտրոնային մարքեթինգը պահպանում է ավանդական մարքեթինգի հիմնական տեսամեթոդական հիմքերը, սակայն դրանք դիտարկում է ինտեգրված վիրտուալ շուկայի հաղորդակցական առանձնահատկություններին: Հիմնական փոփոխությունները ստեղծում են միանգամայն տարբերվող համացանցային գործիքները, ինչպիսիք են սոցիալական ցանցերը, տարբեր առցանց ֆորումները և էլեկտրոնային ՁԼՄ-ները: Էլեկտրոնային մարքեթինգի հիմնական առավելություններից են առավել ճշգրիտ թիրախավորման հնարավորությունները, տեղեկատվության ավելի արագ փոխանակման հնարավորությունը, ակնթարթային վիճակագրության ստացումը և այլն: Բոլոր այս հնարավորություններն ի հայտ եկան արդի տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ: Իսկ մեր օրերում մարքեթինգային հաղորդակցությունները դարձել են էլ ավելի տարաբնույթ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը

գուգընթաց: Մարքեթինգային հաղորդակցության ավանդական մոդելները այժմ հաջողությամբ կիրառվում են վիրտուալ տիրույթում՝ ապահովելով անհամեմատ ավելի մեծ արդյունավետություն: Հաղորդակցության արդյունավետության բարելավման մշտական հիմնախնդիրը համապատասխան լուծումներ է ստանում էլեկտրոնային նոր գործիքների մշակմանը և համացանցի մասսայականացմանը զուգահեռ: Սոցիալական իրականության մեջ գոյություն ունեցող հաղորդակցության ուղիները, որպես կանոն, ստանդարտացվում են և փոխանցվում՝ որպես հաստատուն գիտելիք, ինչն էլ ձևավորում էր ավանդական մարքեթինգի հիմնական մեթոդները: Սակայն, էլեկտրոնային հաղորդակցման ուղիները, ի տարբերություն ավանդականների, խիստ դինամիկ են և չեն ենթարկվում ստանդարտացման: Համացանցը ընձեռում է «անսահմանափակ» հնարավորություններ՝ հաղորդակցության ուղիների համադրության բազմաթիվ տեխնոլոգիաներ են առկա, որոնք համալրվում են ահռելի արագությամբ:

Ի տարբերություն մարքեթինգային հաղորդակցությունների մասին գիտելիք տրամադրող բազմաթիվ ավանդական առարկաների՝ «էլեկտրոնային մարքեթինգ» դասընթացը՝ որպես մեծահասակների կրթության համակարգում և բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկա, օժտված է մի շարք անխտուսափելի առանձնահատկություններով: Դրանցից առավել հիմնային է սովորողներին նախապատրաստելը ցանկացած մարքեթինգային հաղորդակցություն վիրտուալ տիրույթում պատկերացնելու հնարավորությանը և նպատակահարմարությանը: Իրականությունից դեպի վիրտուալ իրականություն անցումը էլեկտրո-

նային մարքեթինգ դասավանդող դասախոսի հիմնական մարտահրավերն է: Ժամանակակից համացանցը ընձեռում է միևնույն արդյունքին հասնելու բազմապիսի հնարավորություններ, ուստի անգամ համացանցի հասկացության պատկերացումը տարբեր մարդկանց մոտ միջնորդավորված է իրենց խիստ սուբյեկտիվ ընկալումներով:

Մարքեթինգային հաղորդակցություններ ուսումնասիրելը միշտ էլ սկսվում է հաղորդակցությունների տեսության՝ որպես առանձին գիտական ուղղվածության ուսումնասիրությունից: Մոդելային սխեմաները, որոնք բացատրում են ժամանակակից սոցիալ-տնտեսական բարդ հաղորդակցությունները, միշտ էլ վտանգված են էլեկտրոնային տիրույթում անկիրառելի համարվելու առումով: Մարքեթինգային շատ գործընթացներ էլ իրենց հերթին հիմնված են ավանդական մեթոդների հիման վրա, և էլեկտրոնային ֆրագմենտները այդպիսի գործընթացներում ավելացնում են հարմարավետություն և ճկունություն: Սակայն անգամ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացվածության ներկայիս բարձր մակարդակը չի ապահովում մարքեթինգային հաղորդակցությունների վերջնական քվայնացում, և շատ դեպքերում ավանդական ու էլեկտրոնային ուղիները հանդես են գալիս որպես փոխլրացումներ: Այսպիսով, օրինակ, էլեկտրոնային կոմերցիան հիմնված է ավանդական կոմերցիայի համակարգի վրա, իսկ էլեկտրոնային ցանցերի օգտագործումը այդ համակարգին միայն ճկունություն է տալիս²:

Այսպիսով՝ էլեկտրոնային մարքեթինգի դասավանդման առաջնային խնդիրներն են.

² Տե՛ս Պողոսյան Ա., էլեկտրոնային կոմերցիա, Եր., 2005, էջ 10:

- իրականությունից վիրտուալ իրականություն անցումը ապահովելը,
- և՛ ավանդական հաղորդակցությունների, և՛ էլեկտրոնացիոն գործընթացների համադրելիության գաղափարի յուրացումը:

Ինչպես ավանդական, այնպես էլ էլեկտրոնային մարքեթինգում առաջնային կարևորության դեր են կատարում նախաարշավային և հետարշավային հետազոտությունները, ինչպես նաև շուկայի և սպառողական վարքի ուսումնասիրությունները: Ուստի, էլեկտրոնային մարքեթինգի առարկայի ուսումնասիրությունը ենթադրում է գիտելիքների որոշակի մակարդակ հաղորդակցությունների տեսությունների, սոցիոլոգիական հետազոտական մեթոդների և տնտեսագիտական տարրական հաշվարկների մասին: Ենթադրվում է նաև ուսանողների փորձառության որոշակի մակարդակ, և շատ բարձրագույն ուսումնական հաստատություններում առարկան դասավանդվում է բակալավրիատի բարձր կուրսերում և մագիստրատուրայում, իսկ մեծահասակների շարունակական կրթության համակարգում՝ մագիստրատուրային համապատասխանող ուսումնական ծրագրերի շրջանակներում:

Մարքեթինգային հաղորդակցություններում կարևոր հանգամանք է սպառողական վարքի դրդապատճառների ուսումնասիրությունը: Այս տեսանկյունից կարող են որպես հաղորդակցությունների արդյունավետության աստիճանի վրա ազդող պատճառներ հանդես գալ սպառողի շրջակա միջավայրը, նրա միջանձնային հարաբերությունները, ինքնակազմակերպման առանձնահատկու-

թյունները և անհատական առանձնահատկությունները:³ Մարքեթինգի տեսություն դասավանդելու հիմնախնդիրներից է ուսանողներին սպառողական վարքի հնարավոր հայտնի մոդելներին ծանոթացնելը՝ դրանց դրոպապատճառների մասին գիտելիքներ հաղորդելը: Այս առումով հետաքրքիր է առաջնահերթ և առանձին դիտարկել «Սնորի էֆֆեկտ»-ը և «Վերլենի էֆֆեկտ»-ը⁴ որպես սպառողական վարքի առավել տարածված և առավել կառավարելի խթաններ:

Կարևոր է հաշվի առնել նաև, որ էլեկտրոնային հաղորդակցության իրականացումն այսօր չի սահմանափակվում միայն համակարգչի մակարդակով, այն շատ հաճախ իրականացնում է նաև սմարթ-հեռախոսների և համապատասխան ծրագրային ապահովմամբ հաղորդակցական այլ սարքավորումների միջոցով: Այսպիսի սարքավորումները հարմար է կրել առօրյայում, և դա է նաև այն հիմնական պատճառներից մեկը, որ ժամանակակից սպառողները ունեն ծառայությունների էլեկտրոնացման սպասումներ տեղեկատվություն տրամադրող մասնագիտացված կազմակերպություններից:⁵ Ընդ որում, այս սպասումներն առկա են ինչպես սպառող-կոմերցիոն համակարգեր, այնպես էլ սպառող-կառավարող համակարգեր հաղորդակցություններում, ինչն էլ էլեկտրոնային հաղոր-

³ St'u Котлер Ф., Основы маркетинга, Издательский дом "ВИЛЬЯМС", Москва, 2007, էջ 192:

⁴ St'u Leibenstein H., Bandwagon, Snob, and Veblen Effects in the Theory of Consumers' Demand, The Quarterly Journal of Economics, Vol. 64, No. 2 (May, 1950), Oxford University Press, էջ 183-207:

⁵ St'u Eriksen K., Hemmingsen C., Online Marketing. New models of advertising?, Aalborg University, 2015, էջ 14:

դակցությունը դարձնում է կարևոր, ինչպես բիզնեսի, այնպես էլ ցանկացած այլ ժամանակակից կազմակերպության համար:

«Էլեկտրոնային մարքեթինգ» դասընթացի նպատակն է սովորողներին ծանոթացնել ժամանակակից էլեկտրոնային մարքեթինգի առանձնահատկություններին, էլեկտրոնային մարքեթինգի գոյություն ունեցող տեխնիկաներին, դրանց կիրառման առանձնահատկություններին, ժամանակակից էլեկտրոնային մարքեթինգի նպատակներին և խնդիրներին, էլեկտրոնային մարքեթինգի դրսևորման եղանակներին և օպտիմալ կիրառման հնարավորություններին, ինչպես նաև մարքեթինգի առանցքային տարր հանդիսացող գովազդի շրջանառման սխեմաներին, գովազդային ժամանակակից հաղորդակցությունների կառուցվածքին: Դասընթացի կրթական վերջնարդյունքներն են՝

- գիտելիքներ էլեկտրոնային մարքեթինգի և գովազդի հետ կապված խնդիրների, դրանք ուսումնասիրելու համար կիրառվող մեթոդների, տեսական ուղղությունների մասին,
- ժամանակակից էլեկտրոնային մարքեթինգի և գովազդի տեխնիկաների և գործիքների իմացություն,
- էլեկտրոնային մարքեթինգի գոյություն ունեցող տեխնիկաների կիրառման եղանակների իմացություն,
- տարբեր իրավիճակներում առավել օպտիմալ հանդիսացող մարքեթինգային ռազմավարությունների և գովազդի տեսակների ընտրության կարգի իմացություն,
- որպես խորհրդատու տարբեր գործունեության ոլորտներ ունեցող կազմակերպությունների, խմբերի և անհատների համար հանդես գալու կարողություն,

- Էլեկտրոնային մարքեթինգային և գովազդային արշավներ կազմակերպելու և դրանց արդյունքները վերլուծելու կարողություն,
- Հայաստանում էլեկտրոնային մարքեթինգի և հայալեզու գովազդային հաղորդակցությունների առանձնահատկությունները վերլուծելու կարողություն:

Էլեկտրոնային հաղորդակցության ուսումնասիրության կարևոր նախապայմաններից է լսարանում դասընթացի ընթացքում մշտական համացանցի առկայությունը: Լսարանում ցուցադրվող համակարգչի էկրանը կարևոր է դասախոսի կողմից բերվող վիճակագրական և վերլուծական ինֆորմացիայի պրակտիկ ցուցադրության համար: Գործիք կայքերը, որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությունները, էլեկտրոնային շուկաները և էլեկտրոնային բազաները դասավանդվում են ցուցադրման միջոցով: Քանի որ էլեկտրոնային մարքեթինգը ենթադրում է տարբեր տեխնոլոգիաների և գործիքների առկայություն, հետևաբար դրանցից առավել կարևորների և հանրաճանաչների առանձին քննարկումը կարող է դառնալ ուսանողների համար սեմինար աշխատանքներ պատրաստելու առաջադրանք: Սեմինարների անցկացումը առավել նպատակահարմար է կազմակերպել ընդհանուր դասընթացի վերջին հատվածում, երբ ուսանողներն արդեն տիրապետում են գիտելիքների որոշակի մակարդակի:

Որպես էլեկտրոնային գործընթացների ուսումնասիրության նախապատրաստական փուլ կարող է արդյունավետ լինել համացանցի և ծրագրավորման հիմունքների ուսումնասիրությունը: Օրինակ՝ HTML ծրագրավորման լեզվի բավարար իմացությունը կարող

է հեշտացնել կայքերի կառավարման վահանակների աշխատանքի ուսումնասիրությունը: Նախապատրաստական փուլը կարևոր է նաև համացանցի պոտենցիալի բացահայտման և ներկայացման տեսանկյունից, քանի որ լիարժեք պատկերացում էլեկտրոնային մարքեթինգային հաղորդակցության, ժամանակակից աշխարհում ունեցած դերի մասին ուսանողները կազմում են հենց համացանցի պոտենցիալի բացահայտումից հետո: Այսպիսով՝ սովորողը հստակ պատկերացում է ստանում համացանցի մասին և այն դիտարկում ավելի լայն սպեկտրով, քան համացանցի սովորական օգտատերերը, և դա հիմնական նախապատրաստական աշխատանքն է կոնկրետ տեխնոլոգիաներ ուսումնասիրելուց առաջ:

Դասընթացի ավարտական քննությունը կարող է լինել պրակտիկ աշխատանք ամբողջական դասընթացի ուսումնասիրությունից հետո, իսկ էլեկտրոնային հաղորդակցության հիմունքներ կամ տեսություն առարկայի դեպքում առավել նպատակահարմար է միայն ընթացիկ քննություններով վերջնարդյունքի ստացումը, քանի որ անընդհատ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաները դարձնում են անհնար մշտահաստատուն հայեցակարգերի առկայությունը: Համացանցում կոմերցիոն գործունեության արդյունավետությունը պահպանելու համար անհրաժեշտ է անընդհատ իրականացնել տեխնոլոգիական կատարելագործում, մասնավորապես անհրաժեշտ է նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրում կոմերցիոն հաղորդակցությանը:⁶

⁶ St' u Журавлев В. А., CRM Технологии как средство повышения эффективности и качества коммерческой деятельности предприятий, “Электронный маркетинг”, 2016, էջ 11:

Կախված դասավանդման համար նախատեսված ժամաքանակից՝ «Էլեկտրոնային մարքեթինգ» դասընթացը կարող է բաղկացած լինել հետևյալ հիմնական բաժիններից.

1. Էլեկտրոնային մարքեթինգի սահմանումը, ուղղվածությունը և նպատակները:

2. Անցումը դեպի էլեկտրոնային՝ մարքեթինգի զարգացումը:

3. Էլեկտրոնային մարքեթինգի կիրառման աճը պայմանավորող գործոնները:

4. Գովազդի մշակում և փորձարկում, գովազդային արշավներ:

5. Էլեկտրոնային գովազդ:

6. Էլ-փոստային և ֆորումային մարքեթինգ:

7. Բրենդինգը և բրենդի առաջխաղացումը համացանցում:

8. PR-ը և հեղինակության կառավարումը համացանցում:

9. Կայքերի մարքեթինգային կառուցվածքի մշակում:

10. Գործընկերային /աֆիլիատ/ մարքեթինգ, գործընկերային ծրագրերի կազմում:

11. Էլեկտրոնային մարքեթինգը սոցիալական ցանցերում:

12. SEO օպտիմալացում (որոնողական համակարգերի օպտիմալացում):

13. Նախաարշավային հետազոտություններ:

14. Էլեկտրոնային արշավների ռազմավարությունները և իրականացումը:

15. Օնլայն շտեմարաններ և բազաներ:

16. Բլոգի ստեղծում և կառավարում:

Կարելի է եզրակացնել, որ էլեկտրոնային մարքեթինգը արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ է պայմանավորված և պետք է ուսումնասիրվի այդ տեխնոլոգիաների փոփոխություններին զուգընթաց կատարելագործվող մեթոդաբանության հիման վրա:

METHODOLOGICAL PROBLEMS OF TEACHING E-MARKETING COMMUNICATIONS

Arem Mkrtchyan

*PhD, Assistant Professor, Department of Applied Sociology,
Yerevan State University*

The article demonstrates some methodological approaches to effectively teach E-Marketing Communications, taking into consideration specifics of the audience, as well as labor market demands to those specializing in the field of Public Relations and Marketing who will have to demonstrate appropriate knowledge and skills.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ
ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՍԱՄՎԵԼ ՊԻՊՈՅԱՆ

*Խ. Աքովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի, կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի պրոֆեսոր*

Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ ՄԿՈՒ) համակարգում վերջին երկու տասնամյակում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնք վերջին տարիներին հիմնականում նպատակաուղղվել են կրթության բովանդակության և կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը: Այդ գործընթացների սկզբունքային հիմնաքարը սոցիալական գործընկերության միջոցով կարողությունների զարգացմանը միտված կրթության ապահովումն էր, ինչը նպատակ ուներ պատրաստել աշխատաշուկայի կարիքներին համապատասխան և մրցունակ կադրեր: ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության ձևավորման և հետագա զարգացման նպատակով ընդունվել են մի շարք նորմատիվ ակտեր, որոնցից են.

- «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերու-

թյան հայեցակարգը⁷», որը, ի թիվս համագործակցային մի շարք այլ գործողությունների, ներառում է ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում կոլեգիալ կառավարման մարմինների՝ Խորհուրդների ձևավորման կարգը:

- «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտային հանձնաժողովների ձևավորման կարգը⁸», համաձայն որի՝ հանձնաժողովները բաղկացած են սոցիալական գործընկերների կողմից առաջադրված և կամավորության սկզբունքով գործող 11-19 անդամներից: Նրանց գործառույթները նպատակաուղղված են մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների նախագծերի փորձաքննությանը, դրանց իրագործման և վերանայման հետ կապված հարցերի քննարկմանն ու եզրակացության տրամադրմանը:

Վերոգրյալ փաստաթղթերը նպաստել են, որ կնքվի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն» հասարակական կազմակերպության միջև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը», որում հստակեցվում են կողմերի՝ ՄԿՈՒ համակար-

⁷ «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգ», ՀՀ կառավարության արձանագրային որոշում, 2009 թ. մայիսի 7:

⁸ «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտային հանձնաժողովների ձևավորման կարգ», ՀՀ կրթության և գիտության նախարարի 11.04.2012 թ. No 267-Ն հրաման:

գում իրականացվելիք զարգացման ծրագրերն ու համագործակցության ուղիները:

Նման համագործակցության նախանշված ուղիներից թերևս առավել հաջողված իրականություն կարող են համարվել՝

- սոցիալական գործընկերությունը Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի ձևավորման ու գործունեության գործընթացներում,
- սոցիալական գործընկերությունը ՄԿՌԻ ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ձևավորման ու գործունեության գործընթացներում,
- սոցիալական գործընկերությունը ՄԿՌԻ ոլորտի պետական կրթական չափորոշիչների մշակման և փորձագիտական եզրակացությունների տրամադրման գործընթացում (ներկայում պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման գործընթացում արձանագրվել է որոշակի առաջընթաց: Առկա է պետական կրթական չափորոշիչի ձևաչափը, մշակվել է ավելի քան 170 նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչ, մշակվել և փորձարկվել է չափորոշիչի փորձագիտական եզրակացության ձևաչափը, ստեղծվել է 14 ոլորտային հանձնաժողով, որոնք պատասխանատու են չափորոշիչների մասնագիտական փորձաքննությունն իրականացնելու և երաշխավորող եզրակացություն տալու համար),
- սոցիալական գործընկերների համատեղ ջանքերով ՄԿՌԻ ոլորտի ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկների,

մեթոդական երաշխավորությունների մշակումն ու տրամադրումը ուսումնական հաստատություններին, դասախոսների և ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների վերապատրաստումները, ՄԿՈՒ հիմնախնդիրներին նվիրված համաժողովների կազմակերպումն ու անցկացումը,

- ՄԿՈՒ համակարգում դուրս համակարգի ներդրման առաջին փորձերը առանձին մասնագիտությունների գծով առանձին ուսումնական հաստատություններում:

Սակայն, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԿ) կողմից կատարված մոնիթորինգային դիտարկումները վկայում են, որ սոցիալական գործընկերությունը ՄԿՈՒ հաստատություններում դեռևս ցանկալի մակարդակի վրա չէ, և որ կոլեգիալ կառավարման մարմինների գործունեությունն ուսումնական հաստատություններում շոշափելի արդյունքներ չի ապահովում, ինչն էլ իր հերթին հաստատում է, որ այս ուղղությամբ դեռ անելիքներ շատ կան: Այս առումով հատկանշական է, որ 2016 թ. դեկտեմբերի 29-ին ուժի մեջ մտած «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» («Better Qualifications for Better Jobs») ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրում նշված է, որ ՄԿՈՒ համակարգում սոցիալական գործընկերության արդյունավետության հասնելու համար անհրաժեշտ է վերանայել սոցիալական գործընկերության հայեցակարգը, հատկապես ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների գործառույթները, հստակեցնել և ընդլայնել դրանք, ուսումնասիրել ոլորտային կոլեգիալ կառավարման մարմինների գործունեությու-

նը, խորհրդի ձևավորման գործընթացները կարգավորող փաստաթղթերը (կարգեր, ընթացակարգեր, նորմատիվային փաստաթղթեր), հետազոտել սոցիալական գործընկերության ոչ ակտիվ համագործակցության պատճառները, դրանք համադրել կոլեգիալ կառավարման այլ՝ իրապես համագործակցային խորհուրդների հետ, բարձրացնել խորհուրդների հաշվետվողականությունը, ներկայացնել համապատասխան առաջարկներ ՄԿՈՒ հաստատություններում խորհուրդների աշխատանքների բարելավման և արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ մեր կողմից կատարվել է հետազոտություն, որի նպատակն է ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության առկա խնդիրների վերհանումը և դրա հիման վրա այդ գործընկերության արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան գործողությունների մշակումը:

Հետազոտության իրականացման մեթոդաբանությունը

Ելնելով հետազոտության նպատակից՝ հետազոտության շրջանակներում տեղեկատվությունը մեր կողմից հավաքվել է ստորև ներկայացված մեթոդներով.

- SWOT վերլուծություն,
- փաստաթղթերի վերլուծություն,
- ֆոկլուս խումբ,
- փորձագիտական հարցազրույցներ,
- հարցաթերթիկներ (աշխատանքային խմբի կողմից հարցաթերթիկները մշակվել են ըստ թիրախային խմբի առանձնահատկությունների (գործատու, արհմիության ներկայացու-

ցիչ, ուսանող, դասախոս, ուսումնական հաստատության տնօրեն և այլն),

- հեռախոսագանգեր,
- պաշտոնական հարցումներ,
- մասնագիտական գրականության ուսումնասիրում:

Ֆոկլուս խմբերի ձևաչափով հանդիպումներ են տեղի ունեցել ՄԿՈՒ քաղաքականություն մշակողների (5 անձ), ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կառավարման խորհրդի նախագահների և անդամների, այդ թվում՝ գործատուների (16 անձ), արհմիության ներկայացուցիչների (12 անձ), ՀՀ զբաղվածության ծառայության (14 անձ), ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների վարչական աշխատողների (10 անձ), դասախոսների (22 անձ), ուսանողների (9 անձ) և այլ շահառուների (13 անձ) հետ:

Հետազոտության արդյունքները

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության հետագա զարգացումը նպատակ ունի նպաստել ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության հիմնական կողմերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, գործատուների, քաղաքացիական հասարակության, այդ թվում և՛ արհեստակցական միությունների ներկայացուցիչների միջև համագործակցության բազմակողմ համաձայնության ձևավորմանը և սոցիալական գործընկերության իմստիտուցիոնալացմանը, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում ձևավորված սոցիալական գործընկերությունը թույլ կտա Հայաստանի Հանրապետության կառավարությանը

գործատուների և արհեստակցական միությունների, քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների հետ ձեռնամուխ լինել աշխատաշուկայի զարգացող պահանջներին ու անձի պահանջմունքներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության կազմակերպմանն ու իրականացմանը, ինչը և ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության համընդհանուր խնդիրն է: Այդ խնդրի իրականացումը պետք է հենված լինի հետևյալ սկզբունքների վրա՝

- կողմերի իրավահավասարության,
- կոլեկտիվ բանակցությունների ազատության,
- կողմերի շահերը հաշվի առնելու և հարգալից վերաբերմունք դրսևորելու,
- կողմերի ներկայացուցիչների լիազորվածության,
- քննարկման առաջարկվող հարցերի ընտրության ազատության,
- պարտավորություններ ստանձնելու կամավորության,
- ընդունվող պարտավորությունների իրատեսական լինելու,
- կողմերի և նրանց ներկայացուցիչների կողմից աշխատանքային օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման վրա:

Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության նորովի ձևավորման և հետագա արդյունավետ զարգացման համար ՄԿՈՒ ոլորտում մեր կողմից առաջարկվում է սոցիալական գործընկերության երեք մակարդակ՝ ազգային, տեղական և ոլորտային: Քննարկենք դրանք առանձին-առանձին:

1. Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության ազգային մակարդակը

Ազգային մակարդակով սոցիալական գործընկերությունը պետք է իրականացվի Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի⁹ (այսուհետ՝ ՄԿՈՒԶԱԽ) կողմից: Այն պետք է լինի քառակողմ՝ պետական կառավարման լիազոր մարմինների, գործատուների, արհեստակցական միությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խորհրդակցական մարմին, որի նպատակն է լինելու Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում պետական քաղաքականության, ռազմավարության, զարգացման ուղղությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը այդ ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնին:

ՄԿՈՒԶԱԽ-ի հիմնական գործառույթները պետք է լինեն՝

- Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ռազմավարությանը և զարգացման ծրագրերին, ոլորտի քաղաքականությանը վերաբերող այլ փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի քննարկումը և առաջարկությունների ներկայացումը դրանց վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետության տնտեսության համար նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պլանավորման և բովանդակության, մասնագետներին ու դրանց պատրաստմանը

⁹ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի նոյեմբերի 21-ի N 814-Ս որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»: Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թ. դեկտեմբերի 11-ի N 1012-Ս որոշում:

ներկայացվող պահանջների և պայմանների քննարկումը և առաջարկությունների ներկայացումը դրանց վերաբերյալ,

- Հայաստանի Հանրապետության ՄԿՌԻ ոլորտի բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:

Առաջարկում ենք, որ ՄԿՌԻԶԱԽ-ը բաղկացած լինի 20 անդամից, որտեղ հավասար թվաքանակով ընդգրկված կլինեն սոցիալական գործընկերության կողմերից առաջադրված թեկնածուները:

ՄԿՌԻԶԱԽ-ի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ՄԿՌԻԶԱԿ-ի ու Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական միջին ու նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրեններ, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նիստերին, ըստ անհրաժեշտության, կարող են հրավիրվել նաև այլ անձինք:

2. Հայաստանի Հանրապետության ՄԿՌԻ ոլորտում սոցիալական գործընկերության տեղական մակարդակը

Տեղական մակարդակով սոցիալական գործընկերությունը, ինչպես և նախկինում էր, պետք է իրականացվի ուսումնական հաստատություններում ձևավորված կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ ՄԿՌԻՀԽ) կողմից:

ՄԿՈՒՀԽ-ը պետք է լինի բազմակողմ խորհրդակցական մարմին, որի հիմնական նպատակն է լինելու ՄԿՈՒ ուսումնական հաստատության գործադիր մարմնին խորհրդատվության տրամադրումը ուսումնական հաստատության առավել արդյունավետ կառավարման և աշխատաշուկայում մրցունակ կադրեր պատրաստելուն նպաստելու համար:

Առաջարկվում են ՄԿՈՒՀԽ-ի հետևյալ հիմնական գործառնությունները.

1) տեղական աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների, գործատուների պահանջների և աշխատատեղերի մասին տեղեկատվության տրամադրումը,

2) ուսումնական հաստատության ռազմավարական զարգացման ծրագրերի մշակման գործընթացներին մասնակցությունը և խորհրդատվության տրամադրումը, քննարկումն ու հաստատումը,

3) ուսումնական հաստատության ռազմավարական զարգացման ծրագրերից բխող միջոցառումների մշակման գործընթացներին մասնակցությունը, քննարկումը և հաստատումը,

4) ուսումնական հաստատության տարեկան և այլ հաշվետվությունների քննարկումն ու հաստատումը,

5) ՄԿՈՒ ոլորտի պետական զարգացման ծրագրերի, օրենսդրական բարեփոխումների քննարկումը և ուսումնական հաստատության կողմից դրանց իրականացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը,

6) ուսումնական հաստատության գործունեությունից բխող խնդիրների քննարկումը և դրանց լուծման մասին առաջարկությունների ներկայացումը,

7) ՄԿՈՒ և զբաղվածության ոլորտները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը,

8) ուսումնական հաստատությունում ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների ցանկերը աշխատաշուկային համապատասխանեցնելու ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

9) ուսանողների և աշխատողների սոցիալական և աշխատանքային պայմանների բարելավման առաջարկությունների ներկայացումը և աջակցությունը,

10) ուսումնական հաստատության կողմից տրվող ուսանողական նպաստների մասին առաջարկությունների ներկայացումը,

11) ուսանողների գործնական ուսուցման կազմակերպման և ծառայողական առաջխաղացման զարգացման աջակցությունը,

12) ուսումնական հաստատությունում իրականացվող կրթության և ուսուցման որակի ու համապատասխանության անընդհատ բարելավման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը,

13) ուսումնական հաստատության ուսումնանյութական հենքի բարելավման նպաստումը,

14) դասավանդողների մասնագիտական որակավորման բարելավման աջակցությունը,

15) ուսումնական հաստատության կողմից ոչ ֆորմալ կրթություն իրականացնելուն ուղղված գործընթացներին աջակցությունը,

16) ուսումնական հաստատությունում ներառական կրթության համակարգի ներդրման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը և ներառական կրթության իրականացման աշխատանքների աջակցությունը,

17) ուսումնական հաստատությունում ձեռնարկությունների, այդ թվում՝ սոցիալական ձեռնարկությունների ստեղծման ու գործունեության նպաստումը,

18) ուսումնական հաստատության կարիերայի կենտրոնների ստեղծման գործուն աջակցությունը և այդ կենտրոնների գործունեության բարելավման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը:

ՄԿՈՒՀԽ-ների անհատական կազմերը պետք է հաստատվեն պետական կառավարման լիազորված մարմնի կողմից: Նրանք կարող են կազմված լինել մինչև 20 անդամից՝ ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերներ ճանաչված կողմերի, ինչպես նաև տվյալ հաստատության (կազմակերպության) մանկավարժական անձնակազմն ու ուսանողներին ներկայացնող անդամներից՝ հետևյալ համասանրությամբ՝

- 1) դասախոսներ՝ 10%,
- 2) ուսանողներ՝ 10%,
- 3) հիմնադիր՝ 10%,
- 4) լիազոր պետական մարմին՝ 20%,
- 5) գործատուներ՝ 30%,
- 6) արհեստակցական միություններ՝ 10%,

7) ոլորտային հասարակական կազմակերպությունների կամ դրանց միությունների, կամ բարեգործական, այդ թվում՝ արտասահմանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ 10%:

Հիմնադրին հատկացված տեղերում կարող են ընդգրկվել նաև տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի ներկայացուցիչներ:

Խորհրդի տվյալ կազմի լիազորությունների ժամկետը նպատակահարմար ենք գտնում սահմանել 5 ուսումնական տարի: Խորհրդի լիազորությունները, նրա անդամների իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանվեն տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

3. Հայաստանի Հանրապետության ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության ոլորտային մակարդակը

Ոլորտային հանձնաժողովները կարող են ստեղծվել հետևյալ որևէ տարբերակով կամ դրանց համակցմամբ՝

- առանց իրավաբանական անձի կարգավիճակի,
- իրավաբանական անձի կարգավիճակով:

Ոլորտային հանձնաժողովների գործունեության նպատակները պետք է լինեն՝

- կողմերի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը,
- մասնագիտական կրթությունն ու ուսուցումը տվյալ ոլորտում գիտելիքների, կարողությունների և հմտությունների պահանջարկի փոփոխություններին առավել արագ արձագանքող դարձնելը,
- աշխատուժի հմտությունների կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակումը, տվյալ ոլորտում ընկերությունների մրցունակության բարձրացումը:

Ոլորտային հանձնաժողովների առաջարկվող գործառնություններն են՝

- ոլորտի զարգացման հետ կապված տարբեր հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը շահագրգիռ կողմերին,
- ոլորտում պահանջվող կարողությունների, ներկայիս և ակնկալվող թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության տարածումն ուսումնական հաստատություններում, զբաղվածության կենտրոններում,
- ոլորտի ձեռնարկությունների աշխատուժի հմտությունների որակական և քանակական մոր պահանջների վերհամումը, յուրաքանչյուր զբաղմունքի համար որակավորման մակարդակի և վկայագրման պահանջների մասին առաջարկություններ ներկայացնելը,
- ոլորտի զբաղմունքների նկարագրերի, պետական կրթական չափորոշիչների, աշխատուժի կարողությունների և հմտությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների նախագծերի փորձաքննությունը և եզրակացություններ տրամադրելը,
- ոլորտում պահանջվող կարողությունների և առաջարկվող ուսումնական ծրագրերի միջև առկա բացերը լրացնելու համար երկխոսության նախաձեռնումը կրթություն և ուսուցում իրականացնողների հետ:

Ոլորտային հանձնաժողովների ստեղծումը պետք է կատարվի ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով, և նրանց քանակն ու կազմը պետք է համաձայնեցվեն սոցիալական գործընկեր-

ների հետ: Ոլորտային հանձնաժողովների քանակը կարող է փոփոխվել՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում տնտեսության և կրթության զարգացման գերակա խնդիրներից:

Այսպիսով՝ ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության զարգացման վերոգրյալ մոտեցումները կնպաստեն ՄԿՈՒ համակարգի թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ ուսուցման միջոցով իրականացվող և/կամ դրանցից աջակցություն ստացող կարողութեամբ ուսումնառության բարելավմանը և կծառայեն ոչ միայն ի նպաստ այնպիսի խմբերի, ինչպիսիք են գործազուրկները կամ որակավորում չունեցող անձինք, միգրանտները, երիտասարդները, այլև հմուտ աշխատակազմի պակաս զգացող մասնավոր հատվածի՝ կրթության և բիզնեսի միջև փոխշահավետ, բաց և արդյունավետ երկխոսության հաստատման միջոցով: Արդյունքում ակնկալվում են ՄԿՈՒ համակարգի հեղինակության, ուսումնական հաստատությունների շրջանավարտների մրցունակության բարձրացում և շահերի պաշտպանվածություն աշխատաշուկայում, որոնք իրենց հերթին կհանգեցնեն աղքատության հաղթահարմանն ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

**THE CURRENT STATE OF SOCIAL PARTNERSHIP IN PRIMARY
AND SECONDARY VOCATIONAL EDUCATION AREA AND
DEVELOPMENT PERSPECTIVES IN REPUBLIC OF ARMENIA**

Samvel Pipoyan

*Khachatur Abovian Armenian State Pedagogical University, Professor of the
Chair of Biology and its Teaching Methods*

The formation of social partnership in VET area is a universal issue. It touches upon the interests of all community layers; hence it needs broad public discussion. The coordinating role of the discussion results and the direct participation should take over the Republic of *Armenia* government and the representatives of employers, trade unions and civil society. As a result, it is expected to raise the reputation of VET system, competitiveness of educational institutions' alumni and protection of interests in the labor market which in their turn will cause poverty reduction and social-economic development of the country.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

ՄԱՐԻՆԱ ԳԱԼՍՅԱՆ

Երիտասարդական ուսումնասիրությունների

ինստիտուտի տնօրեն

Ներածություն

Զբաղվածությունը երիտասարդական ուսումնասիրությունների ամենաքննարկվող թեմաներից է: Զբաղվածությունը՝ որպես կրթությունից աշխատանք անցման հիմնական փուլերից, բաղկացուցիչներից մեկը, երիտասարդության սոցիոլոգիայի հիմնական խնդիրներից և առաջնահերթություններից է: Զբաղվածությունը քննարկվում է որպես որոշիչ գործոն երիտասարդների ինքնության, բարեկեցության և ապագայի համար¹: Մասնագիտական գրականության մեջ հաճախ կարելի է «զբաղվածություն» հասկացությունը տեսնել «աշխատանք» հասկացության հետ միասին կամ փոխարեն²: Այս հոդվածում քննարկվելու է երիտասարդների զբաղվածության հարցը, որը առնչվում է երիտասարդների կողմից աշխատաշուկայում ներկայացվող առաջարկի, տնտեսության տարբեր ոլորտներում երիտասարդների գործունեության, ֆորմալ և ոչ ֆոր-

¹ Roberts, K., Problems and priorities for the sociology of youth, Basingstoke, 2003, Palgrave Macmillan, p 13-28


² Cieslik M., Simpson D., Key Concepts in Youth Studies, 2013, p. 147-153

մալ զբաղվածության, մասնագիտական կրթության և ուսուցման հարցերին³:

Երիտասարդների զբաղվածության և գործազրկության ընդ- հանուր վիճակը

Երիտասարդների շրջանում գործազրկության և զբաղվածության ցուցանիշներում վերջին տարիների ընթացքում կտրուկ փոփոխություններ չեն գրանցվել: Ինչպես ցույց են տալիս պաշտոնական վիճակագրական տվյալները, ինչպես նաև հետազոտական արդյունքները, երիտասարդների զբաղվածության մակարդակը միջինում կազմում է շուրջ 32%, իսկ գործազրկությունը՝ 28%: Ընդ որում, այս ցուցանիշները, շատ փոքր տատանումներով՝ 1-2% չափով, վերջին 10 տարիների ընթացքում նույնն են մնացել՝ չնայած տարվող պետական, միջազգային ծրագրերին և ներդրումներին: Երիտասարդների զբաղվածության ամենաբարձր ցուցանիշ դիտարկվում է 25-29 տարիքային խմբի մոտ՝ 53%, իսկ ամենացածրը՝ 15-19 տարիքային խմբի մոտ՝ 8%: Երիտասարդների շրջանում գործազրկության ցածր մակարդակը խոցելի է դարձնում երիտասարդներին մի քանի պարամետրով՝ ֆինանսական անկախության, կենցաղային անկախության և արդյունքում նաև մտավոր անկախության տեսանկյունից:

³ Համաձայն ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի՝ «Երիտասարդ» համարվում են 16-30 տարեկան անձինք:




Փծապատկեր 1. Երիտասարդների զրադվածության ու գործազրկության մակարդակը (%), ԱՎԾ, 2017թ.

Միջազգային փորձը վկայում է, որ երիտասարդ տարիքում գործազրկությունն իր ազդեցությունն է թողնում ինչպես անհատի, այնպես էլ երկրի տնտեսության զարգացման հետագծի վրա: Այսպես՝ «Բացառման գիմը» հետազոտական աշխատության մեջ արված են հետևություններ երիտասարդ տարիքում գործազրկության՝ աշխատավարձի և զրադվածության վրա ունեցող երկարաժամկետ ազդեցության վերաբերյալ.

- 22 տարեկանում յուրաքանչյուր 3 ամիս գործազրկությունը քերում է 28 և 33 տարեկանում լրացուցիչ 1.3 ամիս գործազրկության:
- Մինչև 22 տարեկանը երկարաժամկետ՝ 26 ամիս գործազրկություն ունեցած անձինք, որպես կանոն, իրենց հասակակիցներից պակաս են վաստակում՝ 28 տարեկանում՝ 1400-1650 դոլարով, 30 տարեկանում՝ 1050-1150 դոլարով:

- Մեկ այլ նմանատիպ հետազոտություն փաստում է, որ մինև 23 տարեկան հասակը մեկ տարի գործազրկության փորձ ունեցող տղամարդիկ 10 տարի անց վաստակում են իրենց հասակակիցներից 23% -ով պակաս և 16%-ով պակաս՝ 20 տարի անց⁴:



Գծապատկեր 2. Գործազուրկ երիտասարդներն ըստ աշխատանք փնտրելու տևողության, ԱՎԾ, 2017թ.

Ինչպես ցույց են տալիս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալները, գործազուրկ երիտասարդների հիմնական մասի դեպքում աշխատանք գտնելու տևողությունը շատ ավելին է, քան 3 ամիսը:

Երիտասարդների ֆինանսական և տնտեսական անկախությունը Հայաստանում


Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից մշակված «Երիտասարդների անկախության համաթիվ»

⁴ Prince's Trust, 2007, www.princes-trust.org.uk

մեթոդաբանությամբ իրականացված վերլուծության համաձայն՝ Հայաստանում երիտասարդները բնութագրվում են միջինից ցածր ընդհանուր անկախության ցուցանիշով. անկախության ինդեքսի միջին արժեքը կազմել է 0.4 բալ [0-1] սանդղակի համար: Երիտասարդների անկախության համաթիվը ներառում է չորս հիմնական բաղադրիչներ՝ ֆինանսական անկախություն, տնտեսական անկախություն, մտավոր և կենցաղային անկախություն: Երիտասարդների անկախության համաթիվը սերտորեն կապված է աշխատաշուկայում ներգրավվածության հետ. զբաղված և չզբաղված երիտասարդների անկախության ինդեքսի միջին արժեքները նշանակալիորեն տարբերվում են, ընդ որում աշխատաշուկայում ներգրավված երիտասարդները դրսևորում են առավել բարձր անկախություն⁵:

Միջինում առավել անկախ են արական սեռի ներկայացուցիչները: Տարիքը ևս նշանակալի գործոն է. տարիքի աճին զուգընթաց՝ անկախությունը ևս ավելանում է: Սա ևս վկայում է այն մասին, որ զբաղվածությունը նպաստում է առավել անկախ լինելուն. տարիքի ավելանալուն զուգահեռ՝ ավելանում է երիտասարդների զբաղվածության մակարդակը:

⁵ ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2013 թ. Երևան, http://www.ystudies.am/wp-content/uploads/2014/12/The_issues_of_youth_employment_in_the_RA_armenian.pdf [01.12.2017 թ.]:



**Գծապատկեր 3. Երիտասարդների զբաղվածության մակարդակը
(%), ԱՎԾ, 2017 թ.**

Արդյունքում, ՀՀ երիտասարդները, հատկապես մինչև 24 տարիքային խմբի երիտասարդները, գտնվում են բավականին խոցելի վիճակում տնտեսական և ֆինանսական առումով:

ՀՀ երիտասարդների ֆինանսական անկախությունը բավականին անհամասեռ է և բևեռացված. երիտասարդների շուրջ 63%-ը դրսևորում է ֆինանսական լիովին կախվածություն, իսկ մոտ 25%-ը լիովին ֆինանսական անկախություն է դրսևորում: Այսինքն՝ երիտասարդների մեծ մասը գտնվում է ֆինանսապես լիովին կախվածության մեջ, իսկ ընդամենը մեկ քառորդը ֆինանսապես կարողանում է լիովին հոգալ իր գործառնության անհրաժեշտ պայմաններին ուղղված ծախսերը:

Բնութագրելով երիտասարդների խմբերը ըստ ֆինանսական անկախության՝ պետք է նշել, որ ֆինանսապես առավել անկախ են 23-ից բարձր տարիքային խմբերի արական սեռի ներկայացուցիչները, ընդ որում, առավել անկախ են այն երիտասարդները, ովքեր ունեցել են արտագնա աշխատանքային փորձ: Հարկ է նշել նաև, որ միջին մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդների ֆինանսական անկախությունը բավականին ցածր է:

Տնտեսական ակտիվությունը ցույց է տալիս երիտասարդի՝ զբաղվածության ոլորտում ներգրավվածությանը ուղղված գործունեության ինտենսիվությունը: Տնտեսական ակտիվությունը ենթադրում է երիտասարդի կողմից տնտեսական հարաբերություններում ներգրավվելու նրա ջանքերը: Այս ցուցանիշն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հասկանալ երիտասարդի զբաղվածությունը կամ զբաղված լինելուն ուղղված նրա ջանքերը: Պետք է նշել, որ երիտասարդները դրսևորում են բավականին ցածր տնտեսական ակտիվություն, տնտեսական համաթվի միջին արժեքը կազմել է 0,29 բալ 0-1 սանդղակի համար: Ըստ հետազոտության տվյալների՝ երիտասարդների 53%-ը ընդհանրապես չի դրսևորում տնտեսական ակտիվություն, իսկ երիտասարդների 19,1% դրսևորում է մաքսիմալ տնտեսական ակտիվություն: Այստեղ մենք տեսնում ենք նմանատիպ իրավիճակ՝ համեմատելով երիտասարդների ֆինանսական ակտիվության հետ: Պետք է նշել, որ բնականաբար ֆինանսական անկախությունը և տնտեսական ակտիվությունը սերտորեն կապված են (կոռելյացիայի գործակցի արժեքը կազմում է 0,604), այսինքն՝ ինչքանով երիտասարդը ավելի ակտիվ է տնտեսապես, այնքանով նա ավելի ֆինանսապես անկախ է:


Սակայն այդ երկու բնութագրիչները ըստ էության տարբերվում են մեկը մյուսից: Օրինակ՝ գյուղաքնակ երիտասարդները դրսևորում են ավելի ցածր տնտեսական ակտիվություն՝ ի տարբերություն քաղաքաքնակների: Դա պայմանավորված է զբաղվածության առանձնահատկություններով գյուղում և քաղաքում: Այստեղ հարկ է նշել մարզերի քաղաքներում բնակվող երիտասարդների խնդրահարույց վիճակը. դրսևորելով միջին տնտեսական ակտիվություն՝ այնուամենայնիվ այդ երիտասարդները դրսևորում են բավականին ցածր ֆինանսական անկախություն: Այսինքն՝ տնտեսական ակտիվությունը չի պայմանավորում երիտասարդի ֆինանսական անկախությունը մարզային քաղաքում կամ գյուղում: Երիտասարդների շուրջ 32%-ը զբաղված է գյուղատնտեսության ոլորտում, և ֆինանսական առումով անկախ չէ:

Առավելագույն տնտեսական ակտիվությունը նկատվում է արական սեռի ներկայացուցիչների մոտ. նրանք ավելի շատ են աշխատում կամ ավելի շատ աշխատանքային ստաժ ունեն, քան իգական սեռի ներկայացուցիչները, ում արդյունքները բավական ցածր են միջին ցուցանիշներից:

Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի միջև կապը Հայաստանում

Երիտասարդների զբաղվածության և նրանց մասնագիտական կրթության միջև գործում է ուղիղ կապ, սակայն մասնագիտական կրթության և գործազրկության միջև ևս կա ուղիղ կապ, այսինքն՝ մասնագիտական կրթությունը նպաստում է զբաղվածության ապահովմանը, սակայն չի երաշխավորում նաև այն: Գործազուրկ երի-


տասարդների կեսից ավելին ունի բարձրագույն կրթություն, ինչպես զբաղված երիտասարդները:



Պժապատկեր 4. *Զբաղված, տնտեսապես ոչ ակտիվ և գործազուրկ երիտասարդներն ըստ կրթական մակարդակների, ԱՎԾ, 2015 թ.*

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդների միայն մի փոքր մասը՝ 20%-ը, ունի բարձրագույն կրթություն, իսկ մեծ մասը միջնակարգ կամ ցածր կրթություն ունի: Փաստորեն, մասնագիտական կրթությունը նպաստում է երիտասարդների տնտեսական ակտիվությանը, ինչը դրական միտում է:

Բարձրագույն կրթության ոլորտում ներգրավված երիտասարդների մասնագիտական բաշխվածությունը ներկայացված է ստորև՝



Գծապատկեր 5. Ուսանողների մասնագիտական ուղղվածությունը,
Eurostudent, 2016

Երիտասարդների զբաղվածության ոլորտների և մասնագիտությունների համեմատությունից պարզ է դառնում, որ Հայաստանում մասնագիտական կրթությունը չի նպաստում երիտասարդների զբաղվածությանը՝ երիտասարդները ստանում են այնպիսի մասնագիտություններ, որոնց իրացման համար հայաստանյան աշխատաշուկայում կան մի շարք խոչընդոտներ: Այս ամենը հանգեցնում է տնտեսական համակարգում կառուցվածքային գործազրկությանը:

Հայաստանում կրթություն-աշխատաշուկա կապի ապահովման արդյունավետ մեխանիզմների պակասը պայմանավորված է մի քանի գործոնով: Ուսումնական հաստատությունները գործատուներին մասնակից չեն դարձնում կրթության կազմակերպման և բովանդակության մշակման գործընթացներին: Ներկայումս կրթության որակի վերահսկողությունը իրականացվում է հենց կրթական

համակարգի ներսում: Սակայն առավել արդյունավետ կլիներ, եթե գործատուն ոչ միայն հանդես գար որպես պատվիրատու, այլև որպես կրթական գործընթացի վերահսկող և գնահատող:

Խնդիրը նաև թաքնված է տնտեսական համակարգում: Հայաստանում մասնավոր հատվածի ընկերությունների գերակշիռ մասն ունի կարճաժամկետ պլանավորման հորիզոն, և սակավաթիվ են երկարաժամկետ ներդրումային ծրագրերը: Ընկերությունների շրջանում բացակայում է հստակ ձևակերպված պահանջարկը երկարաժամկետ հեռանկարում մասնագետների նկատմամբ:

Մասնագիտական կրթության համակարգը նպաստում է կայուն, սակայն հետընթաց հասարակական կառուցվածքի ստեղծմանը: Մի կողմից կրթության ինստիտուտի հիմնական պատվիրատուների պահանջարկը բավարարվում է: Մյուս կողմից, սակայն, շուկայում առաջանում է մի շարք մասնագիտացումների ավելցուկ՝ տնտեսագիտական, իրավաբանություն և կառավարում⁶:

Կրթության և աշխատաշուկայի կապի մեկ այլ ցուցանիշ է զբաղված երիտասարդների աշխատանքի և մասնագիտական կրթության կապը: Մասնագիտական կրթություն ունեցող երիտասարդների զգալի մասը աշխատում է ոչ իր մասնագիտությամբ: Ըստ երիտասարդների զբաղվածության հետազոտության տվյալների՝ հարցված աշխատող երիտասարդների 36%-ը աշխատում է իր մասնագիտությամբ, 34%-ի զբաղվածությունը բացարձակապես չի համապատասխանում մասնագիտությանը, իսկ 14%-ի զբաղվա-

⁶ Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2015 թ., Երևան:

ծությունը հիմնականում համապատասխանում է իրենց մասնագիտությամբ: Իսկ գործազուրկ երիտասարդների 55%-ը ցանկանում է շարունակել կրթությունը: Նրանց շրջանում 40%-ը ցանկանում է փոխել իր մասնագիտացումը, 40%-ը ցանկանում է շարունակել նույն մասնագիտացմամբ, իսկ մնացած 20%-ը ցանկանում է մասնագիտացում ձեռք բերել, քանի որ դեռևս չունի⁷:

Մտահոգիչ է նաև այն փաստը, որ տարիների ընթացքում գործազուրկների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը շարունակաբար աճել է տարեկան միջինը 11%-ով, և 2011 թ. բացարձակ արժեքով բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկները զիջում են միայն կրթություն չունեցողներին⁸:

Այս խնդիրները հանգեցնում են մի իրավիճակի, երբ կրթությունը չի դիտարկվում որպես կարևոր գործոն աշխատանք գտնելու համար ինչպես երիտասարդների, այնպես էլ գործատուների մոտ: Աշխատանք գտնելու ամենակարևոր գործոն երիտասարդները նշում են ծանոթությունը, ինչը նշանակում է, որ այսօր Հայաստանում աշխատանք գտնելու համար միայն մասնագիտական կրթությունն ու կարողությունները բավական չեն:

Միայն մասնագիտական կրթությունը բավական չէ աշխատանք գտնելու համար նաև, քանի որ ուսումնական հաստատություններում քիչ ուշադրություն է դարձվում, այսպես կոչված, փափուկ կամ սոցիալական հմտությունների (Soft skills) զարգացմանը՝

⁷ ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2014 թ., Երևան:


⁸ Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2015 թ., Երևան:

հաղորդակցական, կառավարչական և այլ անձնային հմտություններին, ինչը գործատուների կողմից պահանջված որակներ են: Իսկ ամուր, մասնագիտական կամ տեխնիկական հմտություններ (Hard skills) զարգանում են ուսումնական հաստատություններում մասնակիորեն, սակայն այսօրվա աշխատաշուկան մասնագետից պահանջում է լինել ճկուն և բավական պատրաստված:

Լրացուցիչ դասընթացների դերը երիտասարդների զբաղվածության հարցում

Զբաղվածության ապահովման հարցում երիտասարդները կիրառում են մի շարք ռազմավարություններ՝ մեծ մասը օգտագործում է սոցիալական կապիտալը աշխատանք գտնելու հարցում: Մյուս մասը պլանավորում է մեկնել արտերկիր, ընդ որում, խոսքը միգրացիոն տրամադրվածության մասին է, քանի որ չնայած երիտասարդների 40%-ը պլանավորում է մեկնել երկրից, սակայն միայն 8%-ն է ռեալ քայլեր կատարել այդ ուղղությամբ⁹: Սակայն այս տրամադրվածությունը հանգեցնում է երիտասարդների տնտեսական պասիվությանը՝ նրանք չեն փնտրում աշխատանք Հայաստանում: Գործազուրկ երիտասարդների մյուս հատվածը՝ 30%-ը, աշխատանք գտնելու համար մասնակցում է լրացուցիչ դասընթացների:

⁹ ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2014 թ., Երևան:



Գծապատկեր 6. Երիտասարդների մասնակցությունը լրացուցիչ դասընթացների

Դասընթացը և կրթությունը հաճախ փոխարինաբար են կիրառվում, երկուսն էլ ներառում են ուսուցման և ուսումնառության գործընթացները, սակայն այս երկու հասկացությունները տարբեր են և ունեն տարբեր նշանակություններ: Կրթությունը հիմնականում ենթադրում է երկարատև ուսուցում՝ նպատակ ունենալով ապահովել փաստերի, հասկացությունների, դեպքերի, մարդկանց, իրերի և այլնի մասին գիտելիքներ և հասկացում (իմանալ ինչ և ինչու), ինչպես նաև քննադատական և ինքնավերլուծական հմտություններ: Իսկ դասընթացը ավանդաբար կոչված է լուծելու առանձին խնդիրներ՝ ուղղված կոնկրետ հմտությունների բարելավմանը (իմանալ ինչպես (knowing how to)): Հետևաբար, երիտասարդների հիմնական մասը դասընթացների մասնակցությունը դիտում է որպես

գրադվածությանը նախապատրաստում¹⁰: Ինչպես տեսանք, Հաստատանում ևս այս ռազմավարությունը լայնորեն կիրառվում է երիտասարդների կողմից: Խնդիրն այն է, որ դասընթացները կարող են երիտասարդներին խոցելի դարձնել նրանց երկարատև մրցունակության համար: Բազմաթիվ ուսումնասիրություններ փաստում են միջազգային պրակտիկայում այս հանգամանքի մասին: Դասընթացները շատ են կողմնորոշված դեպի աշխատաշուկայի առաջարկը (աշխատողների որակները)՝ փոխանակ աշխատաշուկայի իրական պահանջարկին կողմնորոշված լինելուն (նոր աշխատանք)¹¹:

Դասընթացները կարողանում են նպաստել երիտասարդների գրադվածության մակարդակի բարձրացմանը, սակայն դա իրավիճակային և կարճաժամկետ լուծում է, իսկ գրադվածության մակարդակի երկարաժամկետ և խորքային լուծումը գտնվում է մասնագիտական կրթության որակական փոփոխությունների, աշխատաշուկայի իրական պահանջարկի բացահայտման, դրան համապատասխան կրթական քաղաքականության մշակման գործընթացներում:

Եզրակացություններ

Այսպիսով՝ կարող ենք կատարել մի շարք եզրահանգումներ՝ կապված աշխատաշուկա-կրթություն համագործակցության հաստատման համատեքստի հետ.

¹⁰ Cieslik M., Simpson D., Key Concepts in Youth Studies, 2013, p. 71

¹¹ Նույն տեղում, p. 74:

- ՀՀ-ում մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի շահերի վեկտորները տարբեր ուղղություններ ունեն, ինչը հակասություն է առաջացնում բուհերի շրջանավարտ հանդիսացող երիտասարդ մասնագետների կողմից առաջարկվող ծառայությունների կառուցվածքի, որակի և քանակի և տնտեսության իրական պահանջարկի միջև: Ներկայումս մասնագիտական կրթության համակարգը հիմնականում ուղղորդված է դեպի սեփական ծառայությունների անմիջական սպառողները՝ դիմորդները և նրանց ծնողները, այլ ոչ դեպի գործատուները:
- Ազատ շուկայական հարաբերությունների համատեքստում սկզբունքորեն փոխվել են աշխատանքային հարաբերությունների բնույթը, աշխատաշուկայի կարգավորման սկզբունքներն ու մեխանիզմները, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի ձևավորման օրինաչափությունները: Մասնագիտությունների ու զբաղմունքների ոլորտը դարձել է առավել դինամիկ, բազմագործոն և դժվար կանխատեսելի, արդյունավետ չի գործում մասնագետների պատրաստման պետական պատվերի համակարգը, ինչի հետևանքով Հայաստանի աշխատաշուկայում առկա է որակական և քանակական անհավասարակշռություն, որն արտահայտվում է գործազրկության բարձր իրական մակարդակով, որոշ մասնագիտությունների գծով՝ կադրերի գերարտադրությամբ և որոշ դեպքերում՝ պահանջարկ ունեցող մասնագետների պակասորդով: Այսպես, օրինակ, միայն տնտեսագետների և իրավաբանների առաջարկը

ՀՀ-ում մի քանի անգամ գերազանցում է պահանջարկին: Մինչդեռ բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակվում է այդ ուղղություններով մասնագետների զանգվածային պատրաստումը:

- Հաջորդ խնդիրը վերաբերում է ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի ոչ արդյունավետ գործառնությանը: Երիտասարդների կողմից բարձրագույն կրթության առկայությունը ներկայումս դիտարկվում է որպես որոշակի պարտադիր պայման, անհրաժեշտություն: Ընդ որում, դպրոցը դիտվում է որպես նախապատրաստական փուլ ԲՈՒՀ ընդունվելու համար, իսկ բարձրագույն կրթությունը դիտարկվում է որպես կյանքում հաջողության հասնելու պարտադիր պայման: Մասնագիտությունների ընտրության դրդապատճառների ուսումնասիրությունը հանգեցնում է սակայն այն եզրակացությանը, որ շրջանավարտների համար նախ առաջնահերթ է որոշակի կրթամակարդակ ունենալը, իսկ հետո միայն կոնկրետ մասնագիտությունը:
- Երիտասարդների կողմից առավել հաճախ կիրառվող ռազմավարությունը՝ ուղղված զբաղվածության հնարավորությունների և մրցունակության բարձրացմանը, մասնագիտական լրացուցիչ դասընթացների մասնակցությունն է: Ընդ որում, այդ դասընթացների հիմնական մասը վճարովի է, որոնց վճարը մեծամասամբ ապահովում են երիտասարդների ծնողները: Լրացուցիչ դասընթացների շրջանակներում երիտասարդները զարգացնում են ինչպես փափուկ կամ սոցիալական հմտությունները (Soft skills)՝ հաղորդակ-

ցական, կառավարչական և այլ անձնային հմտություններ, ինչը գործատուների կողմից պահանջված որակներ են, այնպես էլ ամուր, մասնագիտական կամ տեխնիկական հմտությունները (Hard skills), ինչը վկայում է մասնագիտական կրթության բովանդակային բացերի մասին:

YOUTH PARTICIPATION IN PROFESSIONAL TRAININGS AS A TOOL FOR ADAPTATION TO LABOR MARKET DEMAND

Marina Galstyan

Youth Studies Institute

Director

A number of sociological researches has been conducted in the Republic of Armenia during the last 10 years aims to identify different aspects or challenges the youth faces with. One of the most important and widely discussed topics in this regard is the issue of youth employment. Link between education and labour market is one of the most discussed issues related with youth employment.

Employment among young people (*aged 16-30*) in Armenia is estimated to be 30%, that is to say 30% of young people have income generating jobs at the time of the research. If we add also economically active youth, this number raises up to 50%. The labor force participation rates of youth in rural and urban areas are more or less the same (43.9 and 44.2%, respectively) but, among working youth, vulnerable employment – defined as own-account work and unpaid family work – is much more widespread in rural areas (52.3% of working youth) than in urban areas (13.7%). However there is a difference for labour force participation rate in rural and urban areas for the whole population (72.5% and 58.3% respectively). Moreover, low employment rate among young people affects their living

conditions since the social security system doesn't offer necessary resources to meet basic needs. Financial independence among young people displays their ability to cover the expenses of most basic needs in their family. The research suggests that the level of financial independence among young respondents is rather low. The average index of financial independence among respondents was 0.3(0 to 1, *Richter scale*).

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԵՎԳԵՆԵ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*ԵՊՀ սոցիալական աշխատանքի և
սոցիալական տեխնոլոգիաների
ամբիոնի ասիստենտ, ս. գ. ք.*

Հայաստանում համայնքային սոցիալական աշխատանքի զարգացումը թևակոխում է նոր փուլ: Դա մեծամասամբ պայմանավորված է այն օրենսդրական փոփոխություններով, որ վերջին մի քանի տարիների ընթացքում կատարվել են թե՛ բնակչության սոցիալական պաշտպանության, թե՛ տեղական ինքնակառավարման բնագավառներում: Մասնավորապես, դեռ 2014 թվականին ընդունվել է ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», որի միջոցով սահմանվել են համայնքային սոցիալական աշխատողի հիմնական իրավունքները և պարտականությունները, իսկ 2016 թվականին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքը, որն ամրագրել է 5000-ից ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքներում սոցիալական աշխատողի հաստիք ունենալու պահանջը:

Օրենսդրական այս փոփոխությունները և դրանցից բխող նախաձեռնություններն ու ծրագրերը նպաստում են Հայաստանում համայնքային սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացմանը: Այնուամենայնիվ, այդ ճանապարհին դեռևս առկա են մի

շարք հիմնախնդիրներ, որոնցից հարկ է առանձնացնել համայնքային սոցիալական աշխատանքի կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրները: Սակայն մինչ այդ խնդիրներին անդրադառնալը նախ ուսումնասիրենք Հայաստանում համայնքային սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրման փորձը և համայնքային սոցիալական աշխատողների պատրաստման ու վերապատրաստման գործում ձևավորված պրակտիկան:

Համայնքային սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրումը մեր երկրում ընթացել է երեք տարբեր ուղղություններով: Դրանցից մեկի նախաձեռնողը կառավարությունն էր, որի՝ դեռ 2006 թվականին ընդունված N 926-Ն որոշմամբ մարզպետարանների աշխատակազմերի սոցիալական ծառայությունների տարածքային մի քանի գործակալություններ հանձնվեցին քաղաքային հինգ համայնքների ենթակայությամբ¹: Չնայած գործակալությունների ենթակայության փոփոխությամբ դրանց կողմից մատուցվող ծառայություններն էական փոփոխություններ չկրեցին, այնուամենայնիվ դրանք սկսեցին համարվել համայնքային սոցիալական ծառայություններ, իսկ աշխատողներին տրվեց համայնքային ծառայողի դասային աստիճան: Քաղաքային ենթակայության սոցիալական աջակցության տարածքային բաժիններն այսօր էլ գործում են նույն ենթակայությամբ, սակայն սահմանափակվում են միայն պետական սոցիալական ծրագրերի իրականացմամբ՝ հնարավորություն չունենալով անհատականացված և տեղային առանձնահատկու-

¹ Տե՛ս «ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի մի շարք սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ քաղաքային համայնքային ենթակայության հանձնելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 928-Ն որոշում, 2006:

թյուններից ու կարիքներից բխող ծառայություններ մատուցել կոնկրետ համայնքներում:

Համայնքային սոցիալական աշխատանքի զարգացման մյուս ուղղությունն ապահովեցին տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունները: Վերջիններս դեռ 2000-ականների սկզբներից բնակչության խոցելի խմբերի սոցիալական աջակցության ցուցաբերմանը միտված ծրագրերում ներմուծեցին համայնքային սոցիալական աշխատանքի բաղադրիչը և շահառուների սոցիալական սպասարկումը սկսեցին իրականացնել համայնքային սոցիալական աշխատողի գործունեության միջոցով: Մինչ օրս հասարակական կազմակերպություններից շատերը կարևորում են սոցիալական ծառայությունների կազմակերպումը տեղական մակարդակում և շահառուներին սոցիալական աջակցության տրամադրումն իրենց բնակչության վայրում:

Համայնքային սոցիալական աշխատանքի զարգացման մյուս ուղղության պատասխանատուները հենց համայնքներն են, մասնավորապես տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք, ջանալով որևէ կերպ արձագանքել բնակիչների սոցիալական հիմնախնդիրներին և օրըստօրե սրվող սոցիալական կարիքներին, իրենց նախաձեռնությամբ համայնքային ծառայողների շարքում ներմուծել են սոցիալական հարցերի համար պատասխանատու մասնագետի հաստիք կամ գործող հաստիքներից մեկին վերագրել նմանատիպ գործառնություններ իրականացնելու պարտականություններ: Չնայած այդ պարտականությունները որոշ առումներով հարում են համայնքային սոցիալական աշխատողի գործառնություններին, այնուամենայնիվ, մասնագիտական պատրաստվածության,

ֆինանսական և մի շարք այլ խնդիրների պատճառով համապատասխան հաստիք զբաղեցնող մասնագետները դժվարանում են բնակչությանը տրամադրել համայնքային սոցիալական աշխատանքի համալիր և հասցեական ծառայություններ:

Որքան տարբեր են Հայաստանում համայնքային սոցիալական աշխատանքի ներդրման և զարգացման ուղղությունները, այնքան տարբեր մոտեցումներ են որդեգրվել համայնքային սոցիալական աշխատանքի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներում: Այդ գործընթացների հիմնական պատասխանատուներից են սոցիալական աշխատանքի մասնագետների պատրաստմամբ զբաղվող բարձրագույն ուսումնական հաստատությունները: Հայաստանում գործում է այդպիսի 6 հաստատություն: Դրանք չնայած չեն պատրաստում համայնքային սոցիալական աշխատանքի նեղ մասնագիտացում ունեցող կադրեր, այնուամենայնիվ, «զբաղվում են ընդհանուր սոցիալական աշխատանքի կադրերի պատրաստմամբ և մասնագիտական դաշտը պարբերաբար համալրում են բարձր որակավորում ունեցող կադրերով²»:

Այսօր արդեն ակնհայտ է այն միտումը, համաձայն որի՝ համայնքային սոցիալական աշխատանքի ծառայություններում առաջնահերթություն է տրվում սոցիալական աշխատանքի՝ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներին: Սակայն, պայմանավորված այդ կադրերի փոքրաթիվ լինելով, ինչպես նաև ելնելով

² Տե՛ս Խաչատրյան Ա., Սոցիալական աշխատանքի գիտության զարգացման հնարավորությունները Հայաստանում/ Սոցիալական աշխատանքի տեսությունը, կրթությունն ու պրակտիկան արդի բարեփոխումների համատեքստում. գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու-2012, Երևան, «Աստղիկ», 2013, էջ 79:

այն հանգամանքից, որ ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է տալիս սոցիալական աշխատանքի՝ կրթություն չունեցող մասնագետներին համապատասխան վերապատրաստումներ անցնելու դեպքում ևս գործել որպես սոցիալական աշխատող³, դաշտը շարունակաբար համալրվում է նաև սոցիալական աշխատանքի՝ կրթություն չունեցող մասնագետներով: Այդ մասնագետների վերապատրաստումների հարցը դառնում է հրատապ խնդիր, որին արձագանքելու նպատակով մշակվել և ներդրվել են որոշ մեխանիզմներ: Մասնավորապես Երևանի պետական համալսարանում, որը «Հանրապետությունում սոցիալական աշխատանքի գծով կադրերի պատրաստման առաջատարներից է⁴», գործում է հեռավար ուսուցման համակարգը, որի միջոցով մասնագիտական կրթություն ստանում և պարբերաբար վերապատրաստվում են սոցիալական աշխատանքի ապագա կամ ներկայիս մասնագետները: Մյուս տարբերակը համայնքային ծառայողների համար կազմակերպվող վերապատրաստումները և ատեստավորման գործընթացներն են, որոնք նախատեսված են տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող սոցիալական ծառայությունների մասնագետների համար: Դրանք կազմակերպվում և անց են կացվում օրենքի պահանջով, առնվազն երեք տարին մեկ անգամ: Սակայն վերոնշյալ վերապատրաստումները դժվար է կոչել «բուն մասնագիտական», քանի որ դրանք առավելապես սահմանափակ-

³ Տե՛ս «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 39:

⁴ Տե՛ս Խաչատրյան Ա., ՀՀ-ում սոցիալական աշխատանքի կրթությանը և պրակտիկային այսօր ներկայացվող մարտահրավերները/Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումներ. Գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու- 2014, Երևան, «Աստղիկ», 2015, էջ 98:

վում են մասնագիտությանը և հարակից ոլորտներին վերաբերող օրենսդրական դաշտի ուսումնասիրությամբ:

Սոցիալական աջակցության տարածքային մարմինների մասնագետները, համալիր սոցիալական ծառայությունների ներդրմամբ պայմանավորված, վերջին 5 տարիների ընթացքում անցան սոցիալական դեպքի վարմանը նվիրված մասնագիտական վերապատրաստումներ, սակայն դրանց շարունակականության խնդիրը դեռևս լուծված չէ:

Հասարակական կազմակերպությունները համայնքային սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման խնդիրը փորձում են լուծել յուրովի՝ կարճատև վերապատրաստումներ կազմակերպելու, ոլորտի փորձագետների մասնակցությամբ տեղերում փորձի փոխանակման և ուսուցման միջոցառումներ անցկացնելու, իրենց մասնագետներին կրթական համապատասխան ծրագրերում ներգրավելու միջոցով:

Այսպիսով՝ մենք այսօր ունենք համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստման բավականին «խայտաբղետ» դաշտ, տարաբնույթ մոտեցումներ և բազմազան մեխանիզմներ: Սակայն հաշվի առնելով համայնքային սոցիալական աշխատանքի նոր զարգացումները, ինչպես նաև մեծ թվով կադրերի վերապատրաստման անհրաժեշտությունը՝ կարևոր է ներդնել մասնագետների վերապատրաստման միասնական համակարգ:

Այսօր սոցիալական աշխատանքի մասնագետների վերապատրաստումներով, բացի բարձրագույն ուսումնական հաստատություններից, զբաղվում է նաև ՀՀ կառավարությունը՝ ի դեմս աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստի-

տուտի: Համապատասխան լիազորություններ ունի նաև սոցիալական աշխատողների մասնագիտական ընկերությունը, որը սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիան է: Բոլոր այդ կառույցների լիազորությունները, դրանց միջև գործառնությունների ու պարտականությունների բաշխումը, ինչպես նաև համագործակցության եզրերն ու ձևաչափերը հստակեցված չեն: Դրանց գործունեությունը համաձայնեցված չէ և չի նպաստում սոցիալական աշխատանքի գծով կադրերի պատրաստման կամ վերապատրաստման միասնական համակարգի ներդրմանը: Այդ ուղղությամբ առաջնային քայլերից կարող են լինել սույն կառույցների միջև գործառնությունների հստակ բաշխումը և համագործակցության մեխանիզմների ներդրումը. դրանք քայլեր են, որոնք կարող են էապես նպաստել նաև համայնքային սոցիալական աշխատանքում կադրային խնդիրների լուծմանը: Կարևոր է նաև քննարկել ու համաձայնության գալ համայնքային սոցիալական աշխատողների պատրաստմանը և վերապատրաստմանը վերաբերող բովանդակային խնդիրների, մասնավորապես ուսումնառության կազմակերպման նախընտրելի ձևաչափերի, ուսումնական ծրագրերի, մոդուլների բովանդակության շուրջ:

Անդրադառնալով սոցիալական աշխատանքի կրթության միջազգային փորձին՝ նշենք, որ սոցիալական աշխատանքի գծով կադրերի պատրաստման գործընթացներում հատուկ շեշտադրում է ստանում *փորձառական ուսուցման* (experiential learning) մեթոդը, որը ենթադրում է.

1. գիտելիքահեն ուսումնառության միջոցով ձեռք բերված գիտելիքների և հմտությունների կիրառում պրակտիկայում,

2. անմիջապես գործնական աշխատանքների և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների ու հմտությունների յուրացում և դրանց կիրառում,

3. փորձառու մասնագետների գործունեության դիտարկում և վերլուծություն, օրինակ՝ տեսադիտումների միջոցով⁵:

Փորձառական ուսուցման դեպքում կրթական գործընթացների առանցքում դրվում են մասնագիտական փորձը և դրա միջոցով յուրացված գիտելիքներն ու հմտությունները⁶: Սոցիալական աշխատանքի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներում այս մեթոդն ունի էական նշանակություն, քանի որ սոցիալական աշխատանքը կիրառական մասնագիտություն է և չի կարող հիմնվել միայն տեսության ուսումնասիրություններ ենթադրող ուսուցման մեթոդների վրա: Ավելին, տեսաբաններից շատերը պնդում են, որ սոցիալական աշխատանքի կրթության համակարգում մասնագիտական պրակտիկական և անհրաժեշտ փորձի ձեռքբերումն առաջնային դեր ունեն⁷: Համայնքային սոցիալական աշխատանքում այս մեթոդի կիրառումը ևս կարևորվում է, քանի որ հնարավորություն է ընձեռում սոցիալական աշխատանքի մասնագետներին սովորել հենց համայնքում գործելու միջոցով. հանգամանք, որից շահում է և՛ սովորողը, և՛ համայնքը, քանի որ հնարավոր է դառնում համայնքին անհրաժեշտ սոցիալական ծառայությունների

⁵ St'u Learning and Teaching in Social Work: Towards Reflective Practice/ Margaret Yelloy, Mary Henkel, Jessica Kingsley Publishers, London, Philadelphia, 2005, էջ 8:

⁶ St'u Perspectives on thinking, learning and cognitive styles/Robert Sternberg, Routledge, New York, 2001, էջ 14:

⁷ St'u Eleanor R. Tolson, Judy Kopp. The practicum: clients, problems, interventions and influence on students practice/ Journal of Social Work Education, #24, 1988, էջ 123-124:

մատուցումը զուգակցել մասնագետների ուսուցմամբ⁸: Փորձառական ուսուցման վերոնշյալ մեթոդներն ընդունված է հակիրճ բնութագրել որպես **«ուսուցում գործելու միջոցով»**: Դրանց կիրառումը սոցիալական աշխատանքի կադրերի պատրաստման և վերապատրաստման ընթացքում ապահովվում է ուսումնական պրակտիկաների, փորձնական գործունեության կազմակերպման միջոցով⁹:

Համայնքային սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման գործընթացներում ուսուցման ընդունված մեթոդների կիրառումը Հայաստանում կունենա իր յուրահատկությունները: Նախ դա պայմանավորված է նրանով, որ այսօր մեր երկրում գործող սոցիալական աշխատողներն ունեն տարբեր կրթություն և մասնագիտություն, իրենց մասնագիտական գործունեության մասին ունեն տարբեր պատկերացումներ և տարբեր չափով են հավատարիմ այն պահանջներին, որոնք մասնագիտությունը ներկայացնում է իրենց¹⁰: Հետևաբար, անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել նրանց կրթական կարիքների հանդեպ: Դա նշանակում է, որ այդ մասնագետների կրթությունը կամ շարունակական ուսուցումն անհրաժեշտ է կազմակերպել գիտելիքների նախնական գնահատման ընթացակարգերի կիրառումից հե-

⁸ St'u Mylo G. Jennings. Community practice: a training ground for social work students. The Qualitative Report, 6 (1,) 2001, <http://nsuworks.nova.edu/tqr/vol6/iss1/1>, 17.03.2018, ժամը 15:40:

⁹ St'u Eleni Papouli. Field learning in social work education: Implication for educators and instructors/Field educator, 4.2, 2014, էջ 5:

¹⁰ St'u Խաչատրյան Ա., ՀՀ-ում սոցիալական աշխատանքի կրթությանը և պրակտիկային այսօր ներկայացվող մարտահրավերները/Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումներ. Գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու-2014, Երևան, «Աստղիկ», 2015, էջ 88:

տո¹¹, որի միջոցով հիմնավորված կդառնա յուրաքանչյուր մասնագետի համար ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը:

Համայնքային սոցիալական աշխատանքի գծով արդյունավետ վերապատրաստումների համակարգ ունենալու նպատակով կարևոր է վերապատրաստումների ընթացքում համադրել տեսության ուսուցման մեթոդաբանությունը փորձառական ուսուցման մեթոդների հետ: Տեսության ուսուցման գործընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ է ակտիվորեն ներառվել կրթական տարաբնույթ գործընթացներում: Բայց քանի որ համայնքային սոցիալական աշխատանքի գործող մասնագետներն ունեն աշխատանքային հիմնական զբաղվածություն, կարող են հեռու գտնվել կրթական հաստատություններից, որտեղ սովորաբար կազմակերպվում են այդպիսի գործընթացները, ապա առաջարկվում է նրանց համար վերապատրաստումները կազմակերպել հեռավար ուսուցման մեթոդներով:

Հեռավար ուսուցումը սոցիալական աշխատանքում նորություն չէ: Այն նպատակ ունի սոցիալական աշխատանքի դասընթացներն ավելի հասանելի և մատչելի դարձնել նրանց համար, ովքեր ունեն զբաղվածության, ժամանակային, տեղաշարժման և մի շարք այլ բնույթի խնդիրներ առկա ուսուցման մեթոդաբանությամբ ուսանելու համար¹²: Մինչդեռ ժամանակ, հեռավար ուսուցման բացասական

¹¹ Տե՛ս Սահակյան Ա., Հարատև կրթություն. սոցիալական աշխատողների հարատև կրթության առանձնահատկությունները ՀՀ-ում: Սոցիալական աշխատանքի տեսությունը, կրթությունն ու պրակտիկան արդի բարեփոխումների համատեքստում. Գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու-2012, Երևան, «Ասողիկ», 2013, էջ 95:

¹² Տե՛ս Distance education in social work: Planning, teaching and learning/Paul Abels, Springer Publishing Company, 2005, էջ 5:

հետևանքների մեղմման նպատակով անհրաժեշտ կլինի ունենալ կարճաժամկետ հանդիպումներ և առերես քննարկումներ վերապատրաստողների հետ: Դրանք կարելի է կազմակերպել յուրաքանչյուր մոդուլի ուսումնասիրության ընթացքում մի քանի անգամ և ծառայեցնել անհատական կամ խմբային խորհրդատվությունների տրամադրմանը, ծագած հարցերին պարզաբանումներ ներկայացնելուն և առաջացած խնդիրներին լուծումներ տալուն: *Առցանց ուսուցման և առերես հանդիպումների համադրումն* էականորեն կնպաստի համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստումների արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսի մեթոդաբանությամբ սոցիալական աշխատողների վերապատրաստումներ արդեն իրականացվում են *ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիայի կողմից*, սակայն այն եզակի է իր գործունեությամբ, չնայած որ ունի մասնաճյուղեր Հայաստանի երեք քաղաքներում¹³: Բացի դրանից՝ համայնքային սոցիալական աշխատանքի մասնագետների մեծ հոսքը սպասարկելու և նրանց նեղ մասնագիտացում ենթադրող վերապատրաստումներն ապահովելու համար անհրաժեշտ է, որ լաբորատորիան առաջարկի համայնքային սոցիալական աշխատանքի գծով վերապատրաստումների կրթական առանձին ծրագիր՝ իր բոլոր բաղադրիչներով:

Պրակտիկայում վերապատրաստվողներին ուղղորդելու համար նպատակահարմար կլինի կազմակերպել տեղերում նրանց խորհրդատվությունների տրամադրումը ոլորտի փորձագետների և

¹³ Տե՛ս ԵՊՀ պաշտոնական կայք,
<http://www.ysu.am/faculties/hy/Sociology/section/structure/amb/132>, 17.03.2018,
ժամը 11:40:

կրթական հաստատությունների մասնագետների կողմից: Նման խորհրդատվություններն ուղղված կլինեն նաև համայնքային սոցիալական աշխատողների գործունեության ընթացքում մասնագիտական սկզբունքների և չափորոշիչների կիրառմանը նպաստելուն:

Պրակտիկ գործունեության ընթացքում համայնքային սոցիալական աշխատողներին հնարավոր է աջակցել նաև համայնքներում համապատասխան ուղղվածությամբ սուպերվիզիայի ծառայություններ կազմակերպելու միջոցով: Սոցիալական աշխատանքում *սուպերվիզիան* սահմանվում է որպես համագործակցության վրա հիմնված ընթացակարգերի ամբողջություն, որի դեպքում սուպերվիզիա իրականացնող մասնագետը *վարչական, կրթական և աջակցային մեթոդների* կիրառման միջոցով նպաստում է սուպերվիզիա ստացող *մասնագետի աճին և նրա կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանը*¹⁴:

Համայնքային սոցիալական աշխատողների ուղղորդվող պրակտիկան և սուպերվիզիայի ծառայությունների ներդրումը ՀՀ համայնքներում կարևոր նշանակություն կունենան նաև այն մասնագետների կարողությունների զարգացման համար, ովքեր ունեն սոցիալական աշխատանքի կրթություն, սակայն կարիք ունեն ձեռք բերելու մասնագիտական փորձ:

Գիտելիքահեն կրթության և փորձառական ուսուցման մեթոդների օպտիմալ զուգակցման ապահովումը կարևոր խնդիր է նաև սոցիալական աշխատանքի կադրեր պատրաստող կրթական հաստատությունների համար, որոնց դեպքում կրթական գործընթացնե-

¹⁴ Տե՛ս Անտոնյան Մ., Սահակյան Ա., Խաչատրյան Ա., Մարկոսյան Ռ., Գեղամյան Ն., Ոսկանյան Ա., Սուպերվիզիան սոցիալական աշխատանքում. ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2016, էջ 7:

ըը կազմակերպվում են գիտելիքահեն ուսուցման մեթոդների ճնշող մեծամասնությամբ: Այս իրավիճակն առաջացնում է դաշտային աշխատանքների և ուսումնական պրակտիկայի վերակազմակերպման, ինչպես նաև լսարանային պայմաններում գործնական հմտությունների ուսուցման հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտություն:

Համայնքային սոցիալական աշխատանքի գծով կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացներում էական ազդեցություն կարող է ունենալ նաև նրանց շարունակական շփումը մասնագիտական հանրության հետ: Դա ենթադրում է ակտիվ մասնակցություն մասնագիտության հիմնախնդիրներն արծարծող կամ զարգացման հեռանկարներին վերաբերող գիտական, հետազոտական աշխատանքներին, համապատասխան ուղղվածություն ունեցող միջոցառումներին:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ մեր երկրում ներդրված են համայնքային սոցիալական աշխատանքի պատրաստման և վերապատրաստման ընթացակարգեր, մեխանիզմներ, սակայն դրանք շատ բազմազան են, խիստ տարանջատված, երբեմն՝ նույնիսկ միմյանց հակասող: Այնինչ ներկայումս անհրաժեշտ է հարթել նման բոլոր խնդիրները համայնքային սոցիալական աշխատանքի զարգացման նոր փուլի կողմից առաջադրվող մարտահրավերներին արդյունավետորեն արձագանքելու համար: Այդ նպատակով առաջարկվում է Հայաստանում համայնքային սոցիալական աշխատանքի կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացները կազմակերպել՝ առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով և մոտեցումներով.

- *Համայնքային սոցիալական աշխատողների պատրաստման համար.*

1. ուսումնական պրակտիկայի վերակազմակերպման միջոցով ապահովել դրա կարևոր դերը սոցիալական աշխատանքի բարձրագույն կրթության համակարգում,

2. խթանել փորձառական ուսուցման մեթոդների կիրառումը լսարանային պայմաններում,

3. պարբերաբար իրականացնել համայնքային սոցիալական աշխատանքի ոլորտում կուտակված փորձի ուսումնասիրությանը և վերլուծությանն ուղղված աշխատանքներ, ստացված արդյունքների մասին շարունակաբար իրազեկել ուսանողներին, որպեսզի նրանք կարողանան հետևել ոլորտի փոփոխություններին,

4. ստեղծել նախադրյալներ մոտ ապագայում համայնքային սոցիալական աշխատանքի գծով նեղ մասնագիտացմամբ կրթական ծրագրեր իրականացնելու համար:

- *Համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստման և շարունակական կրթության ապահովման համար.*

1. իրականացնել մասնագետների գիտելիքների նախնական գնահատում, որից հետո կազմակերպել նրանց մասնագիտական վերապատրաստումները,

2. համայնքային սոցիալական աշխատանքի գծով կրթություն ստանալու կամ գիտելիքները համալրելու կարիք ունեցող մասնագետների համար կազմակերպել համայնքային սոցիալական աշխատանքի հեռավար դասընթացներ՝ զուգակցելով դրանք նաև առերես հանդիպումներով,

3. հեռավար դասընթացների համար մշակել համայնքային սոցիալական աշխատանքին վերաբերող առանձին ուսումնական ծրագրեր, մոդուլներ, ուսումնաօժանդակ նյութեր,

4. համայնքներում մասնագետների ուսումնական պրակտիկան կամ փորձնական գործունեությունը կազմակերպելու ու մասնագիտական փորձի կիրառումն ուղղորդելու համար ներդնել համայնքային սոցիալական աշխատանքի գծով խորհրդատվական կամ սուպերվիզիայի ծառայություններ, այդ նպատակով համագործակցել ոլորտի փորձագետների կամ կրթական հաստատությունների մասնագետների հետ,

5. ապահովել վերապատրաստումների շարունակականությունը և թեմատիկ համապատասխանեցումը մասնագետների կրթական կարիքներին,

6. նպաստել համայնքային սոցիալական աշխատողների շփմանը մասնագիտական հանրության հետ, խթանել նրանց մասնակցությունը մասնագիտական, գիտական, հետազոտական, օրենսդրական և այլ ուղղվածության տարբեր միջոցառումներին:

Առաջարկվող քայլերը, կարելի է ասել, ներկայացնում են համայնքային սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման յուրօրինակ մոդել, որը տեղայնացված է և հարմարեցված հայաստանյան մասնագետների կարիքներին ու խնդիրներին, և որի կիրառումը հրատապ է՝ պայմանավորված մեր երկրում համայնքային սոցիալական աշխատանքի զարգացման նոր փուլի մեկնարկով:

COMMUNITY SOCIAL WORKERS' PREPARATION AND TRAINING ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA

Yevgine Vardanyan

*Ph.D, Assistant Professor at the Department of Social Work and Social
Technologies, Yerevan State University*

Community social work has passed to a new degree of its development in Armenia. The processes that have enhanced those changes mainly take place in legal level. The aim of those legislative changes are to contribute to the further development of community social work in Armenia. But if in the legal level the main necessary mechanisms and procedures have already been developed, there are still a lot of issues related to human resources development.

The aim of this article is to analyze the experience that we already have in the processes of community social workers' preparation and training, reveal the main problems related to that and to suggest the possible solutions for those problems, which refer both to organizational aspects and methodological issues.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՉԼՈՒԾՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՐԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀԱՊՀ դոցենտ, «Մեծահասակների կրթություն և
ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ նախագահ, Կ. Գ. Բ.*

Հայաստանում ոչ ֆորմալ կրթությունը կանոնակարգված ձևով չի իրականացվում, քանի որ այս ոլորտում դեռևս բացակայում է միասնական պետական քաղաքականությունը, և այս գործունեությունը համարվում է ավելի շատ ձեռնարկատիրական, քան ուսումնական: Միաժամանակ պետք է նշել, որ որոշ ուսումնական հաստատություններ՝ քոլեջներ և համալսարաններ, իրականացնում են տարբեր թեմաներով դասընթացներ, որոնց մասնակցում է մեծահասակ բնակչությունը:

Մեծահասակների կրթությունը մեր պետության կողմից գրեթե չի ուղղորդվում և, համապատասխանաբար, չի ֆինանսավորվում:

Այս առումով Հայաստանում գոյություն ունեցող իրավիճակին բացարձակ ճշտությամբ համապատասխան են հնչում dvv-International-ի նախկին տնօրեն, ICAE-ի փոխնախագահ Հերբերտ Հինսենի բառերը, որոնք նա գրել է իր ծրագրային «Հարատև ուսումնառությունը և մեծահասակների կրթության ոսկե հատույթները» հոդվածում, որը ստեղծվել էր «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպության համանուն ամսագրի խմբագրական կոլեգիայի

պատվերով հատուկ առաջին համարի համար. «Անհրաժեշտ է, որ բոլորը միավորեն իրենց ձայնը այն արդարացի վրդովմունքին, որ մեծահասակների կրթությունը, գրավելով կրթական սեկտորի մեծ մասը և մեծամասամբ առնչվելով նրան, մեծ դեր ունենալով երկրի տնտեսության մեջ, պետական ֆինանսավորման հարցում մյուս սեկտորների համեմատությամբ ավելի քիչ ուշադրության և ֆինանսավորման է արժանանում, քան մյուսները¹»:

Հայաստանում մեծահասակների կրթության ոլորտը լիարժեք նկարագրելու համար անհրաժեշտ է նշել dvv-International գերմանական կազմակերպությունն ու հատկապես «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպությունը (ՄԿՈՒՈԿԸ ՀԿ), որը հիմնադրվել է 2005 թվականին և միավորում է կրթության ոլորտում գործող պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների շուրջ 40 ղեկավարներին և մասնագետներին:

Մեր երկրում ոչ ֆորմալ կրթության կարևորությունը պետականորեն ճանաչելու երաշխիք հանդիսացավ 2009 թ. Կառավարության կողմից պաշտոնապես ընդունված «Ցկյանս ուսումնառության հայեցակարգը», որի համահեղինակն են պատիվ ունեցել լինել: Հայեցակարգում ներառված են եղել ոլորտի հիմնական գործառույթները, դրանց հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց հնարավոր լուծումները: Մոտակա ժամանակներս նախատեսվում է նոր Հայեցակարգի մշակումը:

¹ H.Hinzen Lifelong Learning and Golden Triangles in Adult Education // «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում», հ. 1-2, Երևան, ՄԿԵՎՈՒՈԿԸ - 2008, էջ 21-29:

Հարկ է նշել, որ 2011 թվականին ՄԿՈՒՈԿԸ հասարակական կազմակերպության ծրագրերից մեկի շրջանակներում հեղինակի ղեկավարությամբ Հայաստանում առաջին անգամ իրականացվեց մեծահասակների կրթության (ՄԿ) բնագավառում վերլուծական հետազոտություն, որում ուսումնասիրվել էին ոչ ֆորմալ կրթության ֆինանսավորման հարցերը, վերլուծվել էր ՀՀ բոլոր մարզերում բնակչության մասնակցությունը մեծահասակների կրթությանը և ուսումնառությանը՝ տարբեր հաստատություններում կազմակերպված թրեյնինգների տեսքով:

Ոչ ֆորմալ եղանակով կրթության իրականացման կարևոր տեսակ է գիտելիքների և հմտությունների փոխանցման այսպես կոչված «ուստա-աշակերտ» ավանդական ճանապարհը: Ըստ մեր հետազոտության արդյունքների՝ Հայաստանում աշակերտության եղանակով ուսումնառություն է ստանում տարեկան շուրջ 15.000 մարդ, որոնք վարպետներին վճարում են ընդհանուր ծավալով 2 մլրդ 810 մլն ՀՀ դրամ:

Ոչ ֆորմալ կրթության եղանակով իրականացվող մեծահասակների կրթության և հարատև ուսումնառության (ՄԿ և ՀՈՒ) դասին է պատկանում նաև գիտելիքի և հմտության փոխանցումը կրկնուսույցների միջոցով: Հիմնվելով ոչ ֆորմալ կրթության ոլորտում մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների² տվյալների վրա՝ Հայաստանում տարեկան շուրջ 140.000 մարդ է գնում կրկնուսույցների ծառայություններ տարբեր առարկաներից և վճարում դրանց համար շուրջ 40 միլիարդ դրամ: Հաշվի առնելով, որ

² Երիտասարդների և մեծահասակների ոչ ֆորմալ կրթության ազգային (միջակայ) զեկույց, ՄԿՈՒՈԿԸ ՀԿ-2011, 38 էջ:

ԿԳՆ 2010 թվականի բյուջեն կազմում էր 98050 միլիոն դրամ, անհրաժեշտ է փաստել, որ կրթության վրա ծախսված մասնավոր միջոցները հավասար են պետական միջոցների մոտ կեսին:

Մեր կարծիքով, կարելի է առանձնացնել դիտարկվող ոլորտում առկա մի շարք չլուծված խնդիրներ, որոնց շարադրումն այստեղ հեռու է ամբողջական լինելուց, իսկ թվարկման հերթականությունը պայմանավորված չէ կարևորությամբ:

1. Արդի պայմաններում անհրաժեշտ է մեծահասակների կրթության մասնագիտության ինստիտուցիոնալացումը, ասել է թե՛ տվյալ մասնագիտության ճանաչումը, անդրագոգիկայի հայկական գիտական դպրոցի ձևավորումն իր ուղղություններով: Կարևոր է նաև լուծել մասնագետների սոցիալական խորշի հարցը: Ինստիտուցիոնալացմանը կնպաստի նաև ՄԿ մասնագետների ինտեգրումը կրթական համակարգում պետական ներգրավվածության և հասարակական կարծիքի ստեղծման միջոցով:

2. Մեծահասակների մասնագիտական կրթությունը համալրելու և առավել օգտակար դարձնելու նպատակով հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ուսուցանվողը նեղ մասնագիտության ստանալուն զուգահեռ հարաբերի իր զարգացումը նաև սոսկ դասական հումանիտար կրթության ազդեցությամբ: Սրանով մենք ուզում ենք բացահայտել անհրաժեշտ լուծում պահանջող մասնագետների գիտելիքների հումանիզացման խնդիրը:

3. Խնդիր կա խթանելու ՄԿ և ՀՈՒ ոլորտի վերլուծական խորը հետազոտությունների կատարումը, վերջապես լուրջ քաղաքականություն խնդրո հարցի շուրջ մշակելու նպատակով՝ զուգահեռ ապահովելով որոշակի պետական ֆինանսական հատկացումներ:

4. Ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակով ձեռք բերված կրթության ճանաչումն ու վավերացումը նույնպես շարունակում են մնալ չլուծված խնդիրներից մեկը:

5. ՀՌԻ համակարգի գործառույթների դասին է պատկանում մասնագիտությունների կարգավորումը պետության կողմից: Մեր երկրում մասնագիտական գործունեության ծավալման իրավունքի համար հատուկ լիցենզիա է պահանջվում միայն մի շարք մասնագիտությունների դեպքում, օրինակ՝ ֆինանսական և հաշվապահական աուդիտ իրականացնելը: Բացի դրանից՝ ՀՀ կառավարության կողմից նախատեսված է մասնագիտությունների մի ցանկ, որոնք մոտ ժամանակներում կդասվեն որպես պետության կողմից կարգավորվող (regulated) մասնագիտություններ: Կարգավորվող մասնագիտությունների ցանկում առաջին հերթին հացթուխի, հրուշակագործի, բարմենի և մի քանի այլ մասնագիտություններն են: Դեռ վերջնականապես մշակված չէ մասնագիտությունների պետական կարգավորման և մշտադիտարկման գործընթացի մոդելը: Ավելի շատ են հարցականները, քան պատասխանները: Կարգավորվող մասնագիտությունների խնդիրը կարելի է արդյունավետ լուծել ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակով ձեռք բերված կրթության ճանաչման և վավերացման գործընթացներին զուգահեռ:

6. ՄԿ այն համակարգը, որը պետք է կառուցենք և զարգացնենք մեր երկրում, ինչ խոսք, պետք է ուղղված լինի անձի կատարելագործմանը, նրա ինքնակրթության համար նախադրյալներ ապահովելուն: Մենք համոզվել ենք մեր հետազոտությունների արդյուն-

քում³, որ ՄԿ-ն՝ որպես երևույթ, անհրաժեշտ է դիտարկել մեթոդա-
բանական կտրվածքում, այլ ոչ թե որպես կրթատեսակ, որը պայ-
մանավորված է տարիքային կատեգորիայով: Սակայն հետագա
խորը գիտական հետազոտությունների ընթացքում սոցիալական
գիտության տեսությամբ թելադրված տարիքային թիրախավոր-
մամբ պայմանավորված՝ մանրամասնումը անխուսափելի կլինի:
Կարևոր կլինի նաև բնակչության տարբեր սոցիոտնտեսական խմ-
բերին և ենթախմբերին պատկանող մարդկանց տարբեր կատեգո-
րիաների ուսումնառության (հատկապես՝ ինքնակրթության) նպա-
տակների, մոտեցումների, մեթոդների հետազոտումը: Այնուհետև
անհրաժեշտ կլինի որոշել տարբեր կատեգորիաներին պատկանող
մարդկանց փոխազդեցությունը, օրինակ՝ «ուստա-աշակերտ» հա-
րաբերություններում:

7. Անպատճառ կարևոր խնդիրներից են շարունակում մնալ
պրակտիկ անդրագոգիկայի հմտություններին տիրապետող ար-
հեստավարժ մասնագետների քանակի սակավությունը և ՄԿ մեթո-
դաբանության ու տեխնիկաների տարածման գործը:

8. Անհրաժեշտ է նշել, որ ՄԿ և ՀՈՒ բնագավառում մեկ ան-
գամ եվրոպական CEDEFOP կազմակերպությունը փորձ է կատա-
րել մշակել մասնագիտական բառարան⁴, սակայն տերմինների ան-
հատակությունը աշխարհում դեռ ակնհայտ է:

ՀՀ պաշտոնական տերմինաբանության և մանկավարժության
մասնագիտական ոլորտներում կիրառման համար առաջարկում

³ Սարգսյան Ա., Մեծահասակների կրթություն. մեթոդներ և գործողություններ, մե-
նագրություն, երաշխավորված է Խ. Արովյանի անվ. ՀՊՄՀ ԳԻԽ կողմից, Երևան,
«Ճարտարագետ», 2016, 300 էջ:

⁴ Terminology of European education and training policy // European Centre for the
Development of Vocational Training, 2008, 45 p.

ենք հետևյալ հասկացությունները և նրանց համարժեքները միջազգային ընդունված տերմինաբանության մեջ:

Անդրագոգիկա (Andragogy, Андрагогика)՝ մեծահասակներին սովորեցնելու գիտություն: Կրթության հիմնական «շարժիչ ուժը» ուսումնառումն է այն ժամանակ, երբ ուսուցիչը գործընթացի համակարգողի, ֆասիլիտատորի/ուղորդողի դերում է հանդես գալիս, յուրօրինակ «ճարտարապետ» է, որը նոր ձևեր, մեթոդներ և հնարավորություններ է ստեղծում:

Անձի կրթական միջավայրը (Personal Learning Environment, образовательное пространство личности) ձևավորում է ինքնագիտակցում, ինքնակազմակերպում, մասնագիտական զարգացման ինքնապլանավորում և ինքնուրույն կարողության ռեալիզացում բաղադրիչ մասերի հաջորդաբար և հետևողական իրագործմամբ:

Առաջանցիկ կրթություն (Advancing Education, опережающее образование)՝ կրթություն, որի բովանդակությունը ձևավորվում է հանրօգուտ գործունեության սուբյեկտ մասնագետին տրվելիք հեռանկարային պահանջների կանխատեսման հիման վրա:

Առանցքային կոմպետենություններ (Key Competences, Ключевые компетенции)՝ բոլոր անհատների ինքնադրսևորման ու ինքնազարգացման, ակտիվ քաղաքացիության և սոցիալական ներգրավվածության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի ամբողջություն:

Բազմամասնագետ (Multiprofessional, мультипрофессионал)՝ անձ, որը շարունակական անընդմեջ ուսումնառության, առավելապես ինքնուսուցման և կարճաժամկետ դասընթացներին մասնակ-

ցելու արդյունքում ձեռք է բերել կոմպետենտություններ և աշխատում է մի քանի մասնագիտությամբ զուգահեռ:

Գնահատում (Assesement, Оценка)՝ սահմանված չափանիշներին ուսուցման արդյունքների համապատասխանությունը ստուգելու և համեմատելու գործընթաց:

Դաստիարակություն (Воспитание)՝ ուսումնառության ձևերից մեկն է և ձեռք է բերվում ինչպես ֆորմալ և ոչ ֆորմալ, այնպես էլ ինֆորմալ ուսումնառության եղանակով, օրինակ՝ առաջին հերթին ընտանիքում:

Էլեկտրոնային ուսումնառություն, հեռահար ուսուցում (elearning, distance learning, Электронное обучение, дистанционное обучение)՝ ուսումնառության գործընթաց, որն իրականանում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով և հնարավորություն է տալիս ուսումնառողին ուսուցանողից հեռու տարածության վրա գտնվել և ինքնուրույն ընտրել սովորելու համար հարմար ժամերը:

Էվտագոգիկա (Heutagogy, Эвтагогика)՝ ինքնակրթությունը կազմակերպելու գիտություն: Գաղափարն իրենից ներկայացնում է անդրագոգիկայի վերարտադրումն ու զարգացումը, սակայն եթե անդրագոգիկան մեծահասակներին սովորեցնելու կամ նրանց ուսումը ֆասիլիտացնելու/ուղղորդելու գիտությունն է, ապա էվտագոգիկայի գաղափարն ու պրակտիկան ենթադրում են ցանկացած տարիքի մարդկանց հոլիստիկ/համընդգրկուն ուսուցմանը խթանելու արվեստն ու գիտությունը: Էվտագոգիկան միակ տեսությունն է, որը օգնում է ուսանողներին հասկանալ և հետագայում կառավարել իրենց անձի կրթական միջավայրը (ԱԿՄ- PLE):

Ինֆորմալ ուսումնառություն (Informal learning, информальное обучение)՝ կրթության մի եղանակ է, որը ենթադրում է կրթության ձեռք բերումը՝ իբրև աշխատանքի, ընտանիքի կամ հանգստի հետ կապված, կամ ցանկացած այլ առօրյա գործողությունները ուղեկցող արդյունք: Այն կազմակերպված կամ համակարգված չէ ժամանակի կամ ռեսուրսների առումով: Ինֆորմալ կրթությունը մեծամասամբ կանխատեսված չէ սովորողի կողմից:

Լրացուցիչ կրթություն/ուսումնառություն (Youth and Adult Education/Learning, дополнительное образование/обучение)՝ կրթություն/ուսումնառություն, որը հնարավորություն է տալիս կյանքում մրցունակ լինելու համար անձի նախկինում ստացած գիտելիքները քարմնացնել կամ անձի վերաորակավորումն ապահովել: Դիտարկվում են լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական կրթության/ուսումնառության տեսակները: Այդ գործընթացը հնարավորություն է տալիս շուկայի պահանջին կամ անձի ներքին պահանջմունքներին արագ արձագանքելու, ինչպես նաև լրացնելու, վերանայելու կամ նորը ձեռք բերելու նախընթաց կրթության հիմքի վրա կամ նոր ոլորտում:

Լրացուցիչ մասնագիտական կրթություն/ուսումնառություն (Youth and Adult Professional Education, Continuing Vocational Education and Training, CVET), երիտասարդների և մեծահասակների մասնագիտական կրթություն և ուսումնառություն (дополнительное профессиональное образование / обучение)՝ կրթություն/ուսումնառություն, որի նպատակն է աշխատաշուկայում ընդգրկվելու համար պահանջվող կոմպետենտություններին համապա-

տասխանող գիտելիքով, հմտություններով և ունակություններով գինել մարդկանց:

Լրացուցիչ ոչ մասնագիտական կրթություն/ուսումնառություն (Education and Learning for Personal development), անձի զարգացմանը միտված ուսումնառություն (дополнительное непрофессиональное образование / обучение)՝ կրթություն/ուսումնառություն, որի նպատակն է, զարգացնելով մարդու ընդհանուր գիտելիքները, հմտություններն ու ունակությունները, ապահովել նրա անձնական աճը, քաղաքացիական գիտակցության հասունությունը և մշակութային զարգացվածության աստիճանի բարձրացումը:

Կարողություն (Competency – компетентность)՝ ձեռք բերված գիտելիքների և անձնական, սոցիալական և/կամ մեթոդաբանական հմտությունների կիրառման կարողություն, վերաբերմունք/զգացողություն, որը պետք է ունենալ տվյալ գործն անելիս:

Կոմպետենտություն (Competence- Компетенция)՝ ձեռք բերված գիտելիքների, հմտության և կարողության համալիրը, այսինքն՝ իմացության ամբողջականության առկայությունը փաստող ունակություն:

Կրթության շարունակականության սկզբունք (Continuing Education – преемственность образования)՝ կրթական մեկ մակարդակից մյուսին անցնելու հնարավորություն:

Հարատև ուսումնառություն (ողջ կյանքի ընթացքում) (Lifelong Learning, непрерывное образование, образование на протяжении всей жизни)՝ ողջ կյանքի ընթացքում ձեռք բերվող կրթություն, որի ընթացքում անհատը անընդհատ բարելավում է իր գիտելիքները, հմտությունները, կարողություններն ու արժեքային համակարգը՝

ելնելով անհատական, սոցիալական կամ մասնագիտական կարիքներից:

Հմտություն (Skill, навык, умение)՝ գիտակցված գործունեության ավտոմատացված կիրառում: Խնդիրների լուծման և առաջադրանքների կատարման համար գիտելիքներ կիրառելու ունակությունն է: Տարբերակվում են ճանաչողական (ներառյալ՝ տրամաբանական, ներքնբնոյողական (ինտուիտիվ) և ստեղծագործական մտածողության կիրառում) և գործնական հմտություններ (ներառյալ՝ ձեռքի ճարտարությունը և մեքոդների, նյութերի, գործիքների ու սարքերի կիրառում):

Մասնագիտական կողմնորոշում (Professional/carrier consultancy, профессиональная ориентация)՝ մասնագիտական խորհրդատվություն, անձի հնարավորությունների և ունակությունների գնահատում՝ համապատասխան մասնագիտության ընտրություն կատարելու և համապատասխան կրթության ուղի ընտրելու համար:

Մեծահասակների կրթություն (Adult Education, Образование для взрослых)՝ գիտություն կամ մասնագիտություն, որի նպատակն է.

- երիտասարդներին և մեծահասակներին ընդհանուր կրթություն տրամադրել նրանց հետաքրքրող ոլորտների շուրջ,
- հնարավորություն տալ ձեռք բերել նոր որակավորումներ, որոնք տարբեր պատճառներով հասու չեն եղել նախընթաց ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթության ընթացքում,
- բարելավել կամ թարմացնել որոշակի բնագավառի հմտություններ և ունակություններ:

Նշվածը իրագործվում է երիտասարդների և մեծահասակների համար նախատեսված ընդհանուր կամ լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական կրթության արդյունքում, որը ձեռք է բերվում մասնագիտական և/կամ անձնական դրդապատճառներից ելնելով:

Նախընթաց կրթություն (Prior Learning, предварительный уровень образования)՝ մինչ տվյալ պահը այս կամ այն կերպ ձեռք բերած կրթություն:

Ոչ ֆորմալ ուսումնառություն (Nonformal learning – неформальное образование)՝ պլանավորված գործողություններում ներդրվող կրթության մի եղանակ է, որը ենթադրում է ուսուցանվողի տեսանկյունից նպատակադրված գործողություն, սակայն հստակորեն սահմանված չէ որպես ուսումնառություն (հաշվի առնելով ուսուցման նպատակները, ուսումնառության ժամկետները կամ ցուցաբերված աջակցությունը):

Ուսուցում (Teaching/Studying, обучение)՝ դասավանդողի և ուսումնառուի համատեղ նպատակաուղղված գործունեություն է, որի արդյունքում ուսումնառուն ձեռք է բերում գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, և ձևավորվում է արժեքային համակարգը տվյալ նյութի վերաբերյալ:

Ուսումնառություն (Learning, получение обучения)՝ կրթական գործընթաց, որի ժամանակ անհատը յուրացնում է տեղեկություններ, գաղափարներ ու արժեքներ՝ այդպիսով ձեռք բերելով գիտելիք, հմտություն և/կամ կարողություններ:

Ուսումնառության արդյունք (Learning outcome, результат обучения)՝ գիտելիքի, հմտությունների և ունակությունների ամբողջություն, որն անհատը ձեռք է բերում և/կամ ի վիճակի է ցուցադրել ուսումնական գործընթացի ավարտից հետո՝ լինի դա ֆորմալ, ոչ ֆորմալ, թե ինֆորմալ եղանակով իրականացված ուսուցում:

Ուսումնառության արդյունքի վավերացում (ճանաչում)

ա) Verification of Learning outcomes (ֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում/վավերացում)/ квалификационная оценка результатов формального обучения - Ֆորմալ ճանաչում. որակավորում (վկայական, դիպլոմ կամ տիտղոս), հաստատում կամ կրեդիտներ ստանալու միջոցով ձեռք բերված հմտությունների և ունակություններին պաշտոնական կարգավիճակ տալու գործընթաց:

բ) Validation of Nonformal and Informal Learning (ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատում)/ признание и валидация результатов неформального и информального обучения - Սոցիալական ճանաչում. ձեռք բերված հմտությունների և/կամ ունակությունների կարևորության ճանաչում տնտեսական կամ սոցիալական ոլորտի շահագրգիռ անձանց կողմից:

Ուսումնառության վկայական (Certificate, диплом, сертификат, квалификационный документ)՝ կրթական գործընթացին/ դասընթացին մասնակցությունը կամ հաջող ավարտը վկայող փաստաթուղթ:

Ֆորմալ կրթություն (Formal learning, формальное образование)՝ կրթության մի եղանակ է, որը ենթադրում է ուսումնական

ծրագրերի սահմաններում կազմակերպված և համակարգված միջավայրում ուսուցում (օրինակ՝ ուսումնական կամ քրեյնինգային հաստատությունում) և հստակորեն բնութագրվում է որպես պատճառական կրթություն (նպատակի, ժամի և ռեսուրսների առումով): Ֆորմալ կրթությունը կրթվողի տեսանկյունից կանխամտածված գործողություն է: Այն ավարտվում է վավերացմամբ և վկայականի ստացմամբ:

**Some problems in the field of Adult Education theory
and practice in Armenia**

Arevik Sargsyan

*Dr. of Engineering, Assoc. Professor of NPUA,
President of Adult Education and Lifelong learning NGO*

The mainstream actors and issues in the field of Adult Education in Armenia are described. The role of Adult Education and Lifelong Learning Association as a pioneer investigator in the field is presented. Some unsolved problems in the field are shown. The short vocabulary of terminology in Armenian designed.

**ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԼԵԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դոցենտ, պ. գ. ք.,

*«Երիտասարդ պատմագետների
ստոցիացիա» ՀԿ նախագահ*

Հասարակական փոփոխություններից հետո կրթական համակարգը կանգնել էր վերարժևորման, ուսուցման նոր ձևերի և հիմնարարայինների վերանայման անհրաժեշտության առջև: Անցումային ժամանակաշրջանում, որը առարկայորեն բնորոշ էր մասներ հանրապետությանը, ճգնաժամը հաղթահարելու համար առաջադրվում էին նոր հետազոտական մոտեցումներ, որոնք հաճախ ներկայանում էին որպես արհեստականորեն ներմուծված մեթոդներ, և որոնց կիրառումը շատ դեպքերում պատճառ դարձավ սերունդների արժեքային համակարգի վերափոխման համար:

Նոր մարտահրավերներին ընդառաջ միջազգային շուկայում կենսունակ լինելու համար յուրաքանչյուր երկրի տնտեսական ռազմավարության մեջ առանձնակի կարևորություն են ստանում կրթությունը՝ որպես մրցունակության կարևոր գործոն, և, հետևաբար, մաս կրթական համակարգը՝ որպես մարդկային կապիտալի զարգացումն ապահովող հաստատություն:

Թե՛ միջազգային գործընթացները և թե՛ կրթության դերի մեծացումը հանգեցրին նրան, որ ներկայումս աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում ընթանում են կրթական համակարգի վե-

բափոխումներ, որոնք ուղղված են մի կողմից՝ ոլորտի միջազգայնացման մարտահրավերներին շահեկանորեն դիմակայելուն, մյուս կողմից՝ կրթական համակարգի տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Ուստի, առաջանում է կրթական համակարգի արդիականացման և վերափոխումների խնդիր, որի լուծումը պահանջում է ոլորտում լուրջ քաղաքականության մշակում և իրագործում, որն էլ պետք է նպաստի քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Հայկական կրթական համակարգը իր ուրույն տեղն ունի համաշխարհային կրթական համակարգում, և բնական է, որ այն անմասն չէր կարող լինել համընդհանուր կրթական զարգացումներից:

Դարեր շարունակ հայ ժողովրդի համար կրթությունն ու մշակույթը եղել են նրա գոյատևման առանցքային միջոցներից մեկը: Հեթանոսական շրջանից սկսած մինչև մեր օրերը հայ ժողովուրդն անսահման ջերմությամբ է նվիրվել կրթության համակարգի ստեղծման, նրա արդյունավետության բարձրացման և միջազգային առաջավոր չափանիշներին համապատասխան զարգացման ապահովմանը:

Հայոց պատմությունը լի է օտարերկրյա զավթիչների կողմից Հայաստանի կրթական և մշակութային օջախների վերացման փորձերով: Հայ ժողովրդի թշնամիները հայությանը վերացնելու ռազմավարության հիմքում միշտ ընտրում էին սեփական հավատքից, լեզվից, կրթությունից և մշակույթից նրան զրկելու մարտավարությունը: Սկսած 13-րդ դարի կեսերից՝ Հայաստանի ինքնիշխանության թուլացման, անկման և օտարերկրյա տիրապետության

շրջանում հայ դպրոցը և համալսարանական կյանքը ծանր հարվածներ ստացան: Սակայն ժողովուրդը քաջ գիտակցում էր, որ առանց մայրենի լեզվի և գրականության, սեփական հավատքի, կրթության ու մշակույթի անկարելի է ազգի գոյատևումը, և համագլխին մեծ ճիգերով, ուր էլ որ լիներ, բացում էր իր դպրոցը, իր եկեղեցին, կերտում ազգային մշակույթ: Մղձավանջային այս շրջանում հայ մշակութային կյանքն առավելապես զարգանում էր օտար ափերում՝ Հնդկաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Ղրիմում, Լեհաստանում, Վրաստանում և այլ հայ գաղթավայրերում:

Հայ կրթության և մշակույթի զարգացման համար պատմական անմախսադեպ նշանակություն ունեցան Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայոց գրերը¹, որոնք լայն հնարավորություններ ստեղծեցին ամենուրեք դպրոցներ և բարձրագույն ուսումնական ու գիտական կենտրոններ հիմնելու համար: 6-14-րդ դարերում գիտական բուռն աշխատանքներ են ծավալվում Վաղարշապատի, Շիրակի, Կարսի, Անիի, Կամրջաձորի, Սանահինի, Կայենաձորի, Խորվիրապի, Հաղպատի, Գլաձորի, Տաթևի, Նաբեկա վանքի, Կճա վանքի, Հաղարծինի, Նոր Գետիկի, Այրիվանքի և Սսի բարձրագույն կրթական կենտրոններում: Հատկապես ուշագրավ էին շուրջ մեկ դար գործող Գլաձորի և Տաթևի համալսարանները, որոնք ժամանակի մտավորականության կողմից բնորոշվել էին որպես «Երկրորդ Աթենք», «Իմաստության մայրաքաղաք»: Ընդ որում, այստեղ դասավանդում էին եվրոպական միջնադարյան համալսարաններում ուսու-

¹ Բ. Հարությունյան, Հայոց գրերի ստեղծման թուականի շուրջ, «Հանդես ամսօրեայ», հայագիտական ուսումնաթերթ, հունվար-դեկտեմբեր, թիվ 1-2, Վիեննա-Երևան, «Մխիթարեան» հրատ., 2005, էջ 122-132:

ցանվող բոլոր առարկաները, այն տարբերությամբ միայն, որ լատիներենի փոխարեն դասավանդումն իրականացվում էր հայերենով:

13-րդ դարում որոշ վարդապետարաններ, որոնցում ուսուցանում էին ժամանակի առավել բանիմաց, հեղինակավոր և անվանի գիտնականներ, վերածվեցին համալսարանների: Մեծ ավանդ ունեցող համալսարաններից էր, ինչպես նշեցինք, Գլաձորի համալսարանը, որտեղ ուսման տևողությունը 7-8 տարի էր: Համալսարանն ուներ իր կանոնադրությունը, իսկ շրջանավարտները ստանում էին «Ծայրագույն վարդապետի» (մագիստրոսի) գիտական աստիճան: Գլաձորի համալսարանի փակվելուց հետո 14-15-րդ դդ. Հայաստանի առաջատար ուսումնական կենտրոնն էր Տաթևի համալսարանը:

19-20-րդ դարերում Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատության բացակայությունը ստիպում էր հայ երիտասարդությանը մեկնել Պետերբուրգի, Մոսկվայի, Բեռլինի, Լայպցիգի, Հայդելբերգի, Փարիզի, Ժնևի, Դորպատի և այլ քաղաքներ՝ համալսարանական կրթություն ստանալու: Այդ ժամանակաշրջանում հայ մշակույթի զարգացմանը անգնահատելի ծառայություններ մատուցեցին Մոսկվայի Լազարյան, Էջմիածնի Գևորգյան ճեմարանները և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Եվ, այնուամենայնիվ, բոլոր ժամանակներում հայ մտավորականության և ընդհանրապես հայության երազանքն է եղել մայրենի հողի վրա ունենալ ազգային կրթական համակարգ՝ մայր բուռ:

Առաջին հանրապետության գոյության ընթացքում՝ 1919 թ. մայիսի 16-ին, որոշում ընդունվեց հիմնադրել Հայաստանի պետական համալսարանը, որը հետագայում վերանվանվեց Երևանի պե-

տական համալսարան (ԵՊՀ)²: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա կրթական համակարգի հիմքը դրվել է Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920 թթ.) և այնուհետև զարգացել խորհրդային իշխանության տարիներին: 1920-1930-ական թվականների վերափոխումների հետևանքով վերացավ զանգվածային անգրագիտությունը: 1932 թ. անցումը պարտադիր տարրական կրթության թույլ տվեց 7-8 տարվա ընթացքում բնակչության անգրագիտությունը 83%-ից իջեցնել 16%-ի: Իսկ 1960-ական թվականներին դպրոցների լայնամասշտաբ կառուցումը հնարավորություն տվեց անցնել պարտադիր միջնակարգ կրթության: Խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում Հայաստանում գոյություն ուներ միայն պետական կրթական համակարգ, որը նախադպրոցական, պրոֆտեխնիկական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթական ենթահամակարգերով ապահովում էր հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային և գիտական առաջընթացը:

Հայաստանի երկրորդ (խորհրդային) հանրապետության տարիներին³ (1921-1991 թթ.) ԵՊՀ-ի հիմքի վրա կազմավորվեց ներկայումս գործող պետական բուհերի մեծ մասը: Խորհրդային ժամանակաշրջանում հայկական մտածողության բնորոշ գիծը բարձրագույն կրթության ավանդաբար բարձր վարկանիշն էր:

² ԵՊՀ հիմնադրման մասին մանրամասն տե՛ս Երևանի պետական համալսարան, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1981, Երևանի պետական համալսարանի պատմության 90-ամյա ֆակուլտետը, Ե., «Բավիղ», 2009, Երևանի պետական համալսարանը երեկ, այսօր, վաղը, Երևան, ԵՊՀ հրատ., 1999:

³ Վ. Վարդանյան, Դպրոցը Հայաստանի առաջին և երկրորդ հանապետություններում, 1918-1925 թթ. իրավիճակի համեմատական վերլուծություն, «ՎԷՄ» համահայկական հանդես, թիվ 3(28), հոկտեմբեր-դեկտեմբեր, Ե., «ՎԷՄ» հանդես, 2009, էջ 96-103:

Խորհրդային կրթական համակարգում ամեն ինչ հիմնավորված էր և փաստարկված. կային հարկային արտոնություններ, սահմանված չափանիշներ և ֆինանսավորման մեխանիզմներ: Համակարգը պլանավորում էր ոչ միայն մասնագետների անհրաժեշտ քանակը, այլ նաև ապահովում էր մասնագիտական զբաղվածությունը և բոլոր ֆինանսական ծախսերը, որոնք կատարվում էին բուհերի կողմից: Ֆինանսավորումը կատարվում էր միայն բյուջեից, կրթությունն անվճար էր բոլորի համար: Համակարգը հիմնականում ձևավորում էր երկրի մտավոր ներուժը, և դիտվում էր զարգացած համակարգ: Այն բնութագրվում էր ինչպես իր ձեռքբերումներով, այնպես էլ թերություններով:

Որպես ձեռքբերումներ նշենք երկրի բնակչության անգրագիտության վերացումը, դպրոցական համակարգի թեև մնացորդային, բայց կայուն ֆինանսավորումը, լայն թափ ստացած դպրոցաշինության կայուն տեմպերը, հատկապես կրթության մատչելիությունը, գյուղաբնակ և քաղաքաբնակ սովորողների կրթության մակարդակի ոչ էական տարբերությունը, ուսուցչի բարձր վարկանիշը, նրա նյութական համեմատաբար բարվոք վիճակը, որի հետևանքով բարձր էր դպրոցների կադրային ապահովվածությունը, տղամարդ ուսուցիչների առկայությունը, դասագրքերի, ուսումնամեթոդական գրականության, գրենական պիտույքների մատչելիությունը, գիտամակավարժական պարբերականների առկայությունը, աշակերտներին հիմնարար գիտելիքներ տալու դպրոցի կարողությունը, համակարգի կառավարման օրենսդրական դաշտի առկայությունը, ինչպես նաև հասարակության և պետության առջև դպրոցի պատասխանատվության և հաշվետու լինելու բարձր աստիճանը:

Այս ամենի կողքին խորհրդային շրջանի կրթական համակարգին բնորոշ էին մաս մի շարք թերություններ, որոնցից էին կրթության չափից ավելի գաղափարականացվածությունը, կրթական համակարգի կառավարման խիստ կենտրոնացումը, դպրոցական ինքնավարության տարրերի բացակայությունը, կրոնի և կրոնական բնույթի հոգևոր արժեքների բացարձակ մերժումը, կրթության բովանդակության միօրինակությունը, համամիութենական ծրագրերից և մեթոդներից բացի, ազգային առանձնահատկություններին համապատասխան, ազգային բնավորություն ձևավորող այլ ուսումնական նյութի և մեթոդների ներդրման սահմանափակումները, ինչպես հասարակական կյանքի մյուս ոլորտներում, այնպես էլ կրթական համակարգի զարգացման գործում պետության չափից ավելի գերակայված դերը, սովորողների շրջանում ինքնուրույնության, ստացած գիտելիքների հիման վրա նոր խնդիրներ լուծելու սահմանափակ կարողությունը, թույլ կիրառական կողմը: Թեև խորհրդային տարիներին (1970-1980-ական թվականներ) փորձեր արվեցին երկրում իրականացնել կրթական վերափոխումներ, սակայն այդ ծրագրերում առաջին տեղում էին պետության շահերը և գաղափարախոսությունը, ինչն ինքնին արդեն մարդկային զարգացման գործընթացը կաշկանդող գործոն է համարվում: Այնուամենայնիվ, երկրի կրթական ներուժը օգտագործվում էր հասարակության զարգացման նպատակով:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, կարևորվում էին ժողովրդավարական և իրավական պետության կառուցումը, հասարակական և տնտեսական

զարգացման համաշխարհային միտումներին ինտեգրվելը: Հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխումները քելադրում են կրթական համակարգի բարեփոխման անհրաժեշտություն: Այդ նպատակին հասնելու համար հասարակությունը պետք է ձեռք բերեր նոր գիտելիքներ, նոր տեղեկատվություն և տեխնոլոգիաներ: Հետևաբար, էական վերափոխումներ էր պահանջում բարձրագույն կրթության համակարգը, որը պետք է զարգանար ոչ միայն քանակապես, այլև որակապես:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում առաջընթաց լուրջ քայլերից էր ԱԺ-ի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը⁴, ապա նաև «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիրը»⁵: Ըստ այդմ, պետական և ազգային կարևորագույն խնդիրներ են կրթության համակարգի զարգացումը, որակի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության բարձրացումը:

Բարձրագույն կրթության համակարգի որակական վերափոխման համար անհրաժեշտ են հիմնավորված գործողություններ կրթության ժողովրդավարացման և նյութական հագեցվածության ուղղությամբ: Անհրաժեշտ էր օգտագործել այլ քաղաքակրթություն-

⁴ ՀՀ օրենքը կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին ընդունվել է 26.06.2001: Սույն օրենքով կազմվել է ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը, որը մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն: Այս մասին մանրամասն տե՛ս Կրթության զարգացման պետական ծրագիր, 2001-2005 թթ., Ե., 2000:

⁵ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիր, URL://<http://www.parliament.am/>:

ների փորձը, մշակված միտումները և այդ ամենը կիրառել մեր կրթական համակարգում:

Առհասարակ, որպես կանոն, կրթությանը բնորոշ է երկու հատկանիշ՝ պահպանողականությունը, առանց որի հնարավոր չեն մարդկության կուտակած գիտելիքների պահպանումն ու փոխանցումը, և նորարարությունը, որ ընդգրկում է գիտության և նոր տեխնոլոգիաների բոլոր նվաճումները կրթական գործառույթում՝ հասարակության պահանջներին համապատասխան⁶:

Համաշխարհայնացման փոփոխությունները թելադրում են նոր հրամայականներ: Կրթությունը դառնում է իրական մեխանիզմ, որն ապահովում է անձի ընկալունակությունը նոր իրողություններին: Նման պայմաններում մրցունակ կարող է դառնալ միայն այն հասարակությունը, որը կկարողանա իր կրթական քաղաքականությունը վերակողմնորոշել ըստ նոր սոցիալական պատվերի, այսինքն՝ ձևավորել սոցիալական նոր տիպ, որը լինի բազմակողմանի զարգացած, ազգային և համաշխարհային մշակույթին հաղորդակից⁷: Նա պետք է լինի համամարդկային մարդասիրական արժեքներ դավանող, բոլոր մարդկանց ազգային, մշակութային արժեքները հարգող և պաշտպանող, ռասայական, ազգային-էթնիկական, մշակութային, լեզվական և այլ խոչընդոտները հաղթահարող, սեփական կարողությունները հասարակության բարօրության համար կիրառող և քաղաքակրթական զարգացման որակական նոր մակարդակի անցնելուն, պետությունների հետ խելամիտ ինտեգրմանը (քաղաքական, տնտեսական և այլ) նպաստող սոցիալական

⁶ *Ղ. Լեյ*, Культура и мир детства, Москва, 1988, № 233.

⁷ Տե՛ս *Ռ. Սիրադիլին*, նշվ. աշխ., էջ 18:

անձնավորություն⁸:

Արդի ժողովրդավարական հասարակության մեջ առաջին պլան են մղվում սոցիալական հասարակության, արդարության և քաղաքացիական մասնակցության հիմնախնդիրները: Այդ իսկ պատճառով հատուկ ուշադրություն է հատկացվում այն սոցիալական խմբերին, որոնք պատմականորեն կամ տվյալ փուլում հայտնվել են ոտնահարված կամ անհավասար պայմաններում: Խտրականության, անհավասարության դեմ պայքարը ոչ միայն օրակարգի հարց էր, այլև համընդհանուր քաղաքակրթության գործընթացի հանգուցային խնդիր: Բազմաթիվ կազմակերպություններ ջանքեր են գործադրում գենդերային անհավասարությունը, անհավասարակշռությունն ու անհամաչափությունը վերացնելու, կանանց դրությունը բարելավելու, նրանց շահերը պաշտպանելու և քաղաքական որոշումների կայացման ոլորտում նրանց մասնակցությունը ընդլայնելու համար⁹: Խնդիրն այն է, որ կրթական ոլորտի ավելի խորացող առևտրականացման պայմաններում այլընտրանքային միջոցներն ավելի շատ ներդրվում են տղաների, քան աղջիկների կրթության ոլորտում: Այս ամենը կատարվում է այն պարզ պատճառով, որ ներդրումներից ստացվող ընդհանուր նյութական օգուտը տղամարդկանց և կանանց համար մույնը չէ: Կանանց համար ավելի դժվար է վերադարձնել կրթության մեջ ար-

⁸ Ս. Բաբայան, Գենդերային կրթությունը որպես մոր հարացույց, Գենդերային կրթությունը որպես մոր սոցիալ-մշակութային հարացույց, գենդերային հետազոտություններ, N 18, Ե., «Ասողիկ», 2003, էջ 51-52:

⁹ Տե՛ս Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն, միջազգային իրավական փաստաթղթերի և ՀՀ օրենքների և օրենսդրական ակտերի ժողովածու, Ե., «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, գենդերային հետազոտությունների կենտրոն», 2006:

ված ներդրումները՝ կապված մի շարք խնդիրների հետ, ինչպիսիք են, օրինակ, խտրականությունը աշխատավայրում, կնոջ կենսաբանական վիճակը՝ ծննդաբերության և խնամքի ժամանակ հարկադրական գործազրկությունը և այլն:

Այս գերխնդիրը թելադրում է անխուսափելի վերափոխումներ հասարակական կյանքի մի շարք ոլորտներում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը պետք է դառնար մրցունակ և առաջատար զարգացող ոլորտ, և այստեղ վերափոխումներն անխուսափելի են:

CIVIL SOCIETY AND EDUCATION. HISTORICAL REVIEW

Lilit Mkrtchyan

YSU, Faculty of History, PhD

According to us, in the development of civil society we have a great contribution to education. Through education, it is possible to achieve a change in the consciousness of the society. But it should not be artificially correlated with reform and change. It is necessary to take into account national values and to localize the change taking into account the history of people's history. In this article we tried to present the Armenian education way.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ԺԱՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

*ՀՀ կրթության և գիտության նախարարության
կրթական ծրագրերի կենտրոնի ծրագրերի ղեկավար, ս. գ. ք.*

Կրթության և սոցիալական արդարության առնչությունները բազմաթիվ են: Կրթությունը դիտվում է իբրև գործընթաց, որը, հասարակության ներսում սոցիալական շարժունության միջոց լինելով, ինքնին սոցիալական արդարության եղանակ է: Այս առումով անկախ իր կոնկրետ խնդիրներից՝ կրթությունն ավել կամ պակաս չափով իրագործում է սոցիալական արդարության ապահովման գործառույթը: Սակայն կրթության և սոցիալական արդարության առնչությունը դիտարկելի է մաս կրթական համակարգին ներհատուկ լինելու տեսանկյունից: Այսպես՝ սոցիալական արդարությունը կրթության ոլորտում սահմանվում է իբրև նպատակ և իբրև գործընթաց¹: Սոցիալական արդարությունն իբրև կրթության ոլորտի նպատակ մատնանշում է հասարակության բոլոր խմբերի լիարժեք և հավասար մասնակցության վիճակը, որը փոխադարձաբար ձևված է՝ այդ խմբերի կարիքները բավարարելու համար: Որպես գործընթաց՝ սա նշանակում է, որ կրթության ոլորտում սոցիալական արդարության նպատակի իրագործումը պետք է լինի ժողովրդավար և մասնակցային գործընթաց, որը ներառական է և հնարավոր է դարձնում համագործակցաբար օգտագործել անհրաժեշտ կարողությունները փոփոխությունների ճանապարհին:

¹ Bell, L.A. (1997) *Theoretical foundations for social justice education*. In M. Adams, L.Bell&P.Griffin, *Teaching for diversity and social justice: A sourcebook* (pp. 3-15). New York, Routledge,

Որպես քաղաքականության հնարավոր շրջանակ՝ կրթության ոլորտում սոցիալական արդարության մասին խոսակցությունը պետք է ընթանա երկու հիմնական ուղղությամբ՝ սոցիալական արդարությանը նպաստող ինստիտուցիոնալ միջավայր ու ենթակառուցվածքներ և կրթության՝ սոցիալական արդարությանը միտված բովանդակություն: Բնականաբար, այս երկուսը փոխլրացնող են և փոխկապված: Առանց համարժեք ինստիտուցիոնալ միջավայրի սոցիալապես արդար բովանդակությունը չի կարող ունենալ այն հանրային ազդեցությունը, որ ընձեռում է անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը: Այդուհանդերձ, առանց այդ բովանդակության էլ առկա ինստիտուցիոնալ միջավայրն ու ենթակառուցվածքները կարող են լինել զուտ արտաքին շրջանակ, որ սկսում է ձևացնել սոցիալական արդարությունը առանց այն իրապես ապահովելու:

Սոցիալական արդարությանը նպաստող ինստիտուցիոնալ միջավայրի և ենթակառուցվածքների մասին առարկայական խոսելու համար որպես շրջանակ կարող է հանդես գալ սոցիալական իրավունքների հայեցակարգը՝ առաջ քաշված Եվրոպական միության կողմից: Հայեցակարգը համատեղ ստորագրվել է Եվրոպական խորհրդարանի, Եվրոպական խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի միջև 2017 թվականի նոյեմբերի 17-ին՝ Շվեդիայի Գոթենբուրգ քաղաքում կայացած «Արդարացի աշխատատեղեր և աճ» խորագրով կայացած սոցիալական համաժողովի ընթացքում²:

Դրա ստորագրմանը նախորդել են Եվրոպայի ապագայի տեսլականի վերաբերյալ քննարկումները, որոնց շրջանակներում

² European pillar of Social Rights (2017.12.27-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://ec.europa.eu/commission/sites/beta-political/files/social-summit-european-pillar-social-rights-booklet_en.pdf)

դեռևս 2017 թվականի մարտին առաջ են քաշվել միասնական Եվրոպայի զարգացման հինգ սցենարներ: Առանձին քննարկվել են նաև այդ սցենարներից որևէ մեկի ընտրության դեպքում Եվրոպայի սոցիալական ուղղվածության հիմնահարցերը³:

Եվրոպայի սոցիալական ուղղվածությունն, այսպիսով, ներկայացվում էր Եվրոպայի հետագա միասնական զարգացման հնարավորությունների հարցում գլոբալ քաղաքականության ընտրությունից կախված. այն կամ սառեցվում է, կամ նեղացվում՝ ավելի արդյունավետ լինելու նպատակով, կամ խորացվում և ընդլայնվում: Այն, որ տարեսկզբի այս քննարկումները հանգեցրին նոյեմբերին սոցիալական իրավունքների հայեցակարգի ստորագրմանը, Եվրոպայում սոցիալական արդարության՝ գլոբալ քաղաքականությունից կախվածության թուլացման փորձ է, որ, անկախ գլոբալ սցենարի ընտրությունից, ձևակերպում է մարդու սոցիալական իրավունքների առաջնայնությունը:

Մասնավորապես, սոցիալական արդարությունը կրթության ոլորտում ներկայացված է հետևյալ իրավունքներում⁴.

³ Reflection paper on the social dimension of Europe, European Commission, COM(2017) 206 of 26 April 2017 (2017.12.27-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://ec.europa.eu/commission/sites/beta-political/files/reflection-paper-social-dimension-europe_en.pdf)

⁴ The European Pillar of Social Rights in 20 principles (2017.12.27-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://ec.europa.eu/commission/priorities/deeper-and-fairer-economic-and-monetary-union/european-pillar-social-rights/european-pillar-social-rights-20-principles_en)

Բաժին 1. Հավասար հնարավորություններ և աշխատաշուկայի հասանելիություն

1. Կրթություն, վերապատրաստում և ցկյանս ուսումնառություն

Յուրաքանչյուր ոք ունի որակյալ և ներառական կրթության, վերապատրաստման և ցկյանս ուսումնառության իրավունք՝ հանրային լիարժեք մասնակցության և աշխատաշուկայի փոխակերպումները հաջող կառավարելու համար անհրաժեշտ հմտությունները պահպանելու և ձեռք բերելու համար:

3. Հավասար հնարավորություններ

Անկախ գենդերային, ռասայական, էթնիկ, կրոնական, ֆիզիկական և մտավոր կարողությունների, տարիքի և սեռական կողմնորոշման բնութագրերից՝ յուրաքանչյուրն ունի հավասար վերաբերմունքի և հնարավորությունների իրավունք զբաղվածության, սոցիալական պաշտպանության, կրթության և հանրային ապրանքներին ու ծառայություններին հասանելիության տեսանկյունից: Խոցելի խմբերի հավասար հնարավորությունները պետք է խթանվեն:

4. Ակտիվ աջակցություն զբաղվածությանը

Յուրաքանչյուր ոք ունի զբաղվածության և ինքնագրադվածության հեռանկարների՝ ժամանակին և պատշաճ աջակցության իրավունք: Այս իրավունքը ներառում է աշխատանքի որոնման, վերապատրաստման և վերաորակավորման համար աջակցություն ստանալու իրավունքը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի փոխանցել սոցիալական պաշտպանության և վերապատրաստման իրավունքը մասնագիտական փոխակերպման ընթացքում:

Բաժին 3. Սոցիալական պաշտպանություն և ներառում

11. Երեխաների խնամք և աջակցություն

Երեխաներն ունեն մատչելի վաղ մանկության կրթության և բարձրորակ խնամքի իրավունք: Երեխաներն ունեն աղքատությունից պաշտպանման իրավունք: Խոցելի խմբերի երեխաները ունեն հավասար հնարավորությունների ապահովման համար հատուկ ծրագրերի և նախաձեռնությունների իրավունք:

Կարևոր է, որ Հայաստանում կրթության ոլորտում սոցիալական արդարության սահմանումը՝ որպես ռազմավարական շրջանակ, ելնի սոցիալական իրավունքների համարժեք ձևակերպումից: Դրանք պետք է լինեն այն հիմնական ուղենիշները, որոնք կկառավարեն կոնկրետ քաղաքականությունները:

Հիմք ունենալով սոցիալական իրավունքների հայեցակարգը՝ իրականացվել են այն գործիքայնացնելու տարբեր փորձեր: Մասնավորապես այդ փորձերից են սոցիալական արդարության շրջանակում երկրների քաղաքականության չափումները: Նախաձեռնություններից մեկը Եվրոպական միության անդամ երկրների համար հաշվարկվող սոցիալական արդարության ինդեքսն է: Ինդեքսի ցուցիչներից մեկը արդար կրթությունն է, որ չափվում է քանակական և որակական հետևյալ ցուցանիշներով⁵.

1. Կրթական քաղաքականություն (որակական ցուցանիշ) – չափվում է շուրջ 100 փորձագետների փորձագիտական գնահատականների հիման վրա:

⁵ Schraad-Tischler, D., Schiller, C., Heller, S.M., Siemer, N., Social Justice in the EU – Index Report 2017 Social Inclusion Monitor Europe, https://www.bertelsmannstiftung.de/fileadmin/files/BSt/Publikationen/GrauePublikationen/NW_EU_Social_Justice_Index_2017.pdf

2. Սովորողի սոցիալ-տնտեսական բնութագիրը և առաջադիմությունը – հաշվարկում է սովորողների առաջադիմության և սոցիալ-տնտեսական հատկանիշների միջև կապը՝ քանակական արտահայտվածությամբ:

3. Նախադպրոցական կրթությանը հատկացված ծախսերը – հաշվարկում է ընդհանուր կրթության բյուջեում նախադպրոցական կրթության վրա հատկացված ծախսերի մասնաբաժինը: Այդ մասնաբաժինը դիտարկվում է նաև երկրի բյուջեի նկատմամբ ընդհանուր առմամբ:

4. Ուսումը ցածր դասարաններում անավարտ թողածներ – հաշվարկում է այն սովորողների համամասնությունը, որոնք դուրս են մնում կրթական համակարգից տարրական դպրոցից և միջին դպրոցի առաջին տարիներին:

5. Միջնակարգ կրթություն չստացածներ – հաշվարկում է այն սովորողների համամասնությունը, որոնք չեն ավարտում միջնակարգ կրթական հաստատությունը: Սրանց մեջ ներառված են ուսումը ցածր դասարաններում անավարտ թողածները, սակայն գումարվում են նաև ավելի բարձր դասարաններից ուսումը կիսատ թողածները, միջին դպրոցից հետո ավագ դպրոց չգնացածները, ինչպես նաև ավարտական քննությունները հաջողությամբ չհանձնածները:

6. Երկրի արդյունքները PISA⁶ համակարգում – PISA-ն սովորողների գնահատման միջազգային ծրագիր է՝ հիմնված 15-ամյա

⁶ PISA-ի առանցքում սովորողների առաջադիմության դիտարկումն է ընթերցանության, մաթեմատիկայի և բնագիտական ուղղություններով: PISA-ն նաև տվյալներ է հավաքագրում սովորողների դիրքորոշումների և մոտիվացիայի վերաբերյալ,

սովորողների հմտությունների և գիտելիքի՝ երեք տարին մեկ իրականացվող փորձարկման վրա, ինչը հիմք է դառնում տարբեր երկրների կրթական համակարգերի համեմատական գնահատման համար: Հայաստանը չնայած մի քանի տարի առաջ ցուցաբերել էր ցանկություն մասնակցել այս ուսումնասիրությանը, սակայն այն այդպես էլ իրականություն չդարձավ:

Վերոնշյալ ցուցանիշների հաշվարկը Հայաստանի համար կարող է լինել այն գործիքներից մեկը, որ թույլ կտա համեմատական վերլուծություն անել հայաստանյան կրթության համակարգի սոցիալական արդարության չափի վերաբերյալ՝ գնահատելով մեր դիրքը այլ երկրների համադրությամբ: Ընդ որում, PISA-ին չմասնակցության հետևանքով վեցերորդ ցուցանիշով երկրի արդյունքների բացակայությունը կարող է մասամբ լրացվել TIMSS⁷ համակարգում Հայաստանի մասնակցության տվյալներով: Չնայած երկու համակարգերի սկզբունքային տարբերություններին՝ այդուհանդերձ դրանք հայաստանյան հանրակրթության համակարգի արտաքին գնահատման տվյալներ են միջազգային զգալի փորձառություն գրանցած համակարգի կողմից, ինչը կարող է օգտակար լինել:

քանակական չափում է իրականացնում այնպիսի հմտությունների համար, ինչպես խնրի համագործակցային լուծումն է և այլն: PISA-ն չի ելնում կրթակարգերից, այլ դիտարկում է այն բովանդակությունը, որ համեմատաբար ընդհանրական է տարբեր կրթակարգերի համար՝ առավել կարևոր համարելով սովորողների կարողությունները խնդիրների վերլուծության, մեկնաբանման և կարգավորման ուղղությամբ: Առավել մանրամասն տե՛ս <http://www.oecd.org/pisa/aboutpisa/>:

⁷ TIMSS & PIRLS միջազգային հետազոտությունների միջոցով հավաքագրվում է պարբերական և միջազգայնորեն համադրելի տեղեկատվություն մաթեմատիկական և բնագիտական ուղղությունների համար չորրորդ և ութերորդ դասարանցիների շրջանում, ինչպես նաև ընթերցանության հմտությունների մասով: Ի տարբերություն PISA-ի՝ այս հետազոտությունները ելնում են ուսումնասիրվող երկրների կրթակարգերից: Մանրամասները տե՛ս այստեղ՝ <https://timssandpirls.bc.edu/>:

Բացի կրթության ոլորտում սոցիալական արդարության գնահատման համադրելի ցուցանիշների դիտարկումից՝ կրթության ոլորտում սոցիալական արդարությանն ուղղված նախաձեռնությունները կարող են էապես շահել այլ երկրների փորձի ուսումնասիրությունից: Փոխադարձ ուսուցման կարևորությունը հաշվի առնելով՝ 2012-ին նախաձեռնվեց կրթության սոցիալական ուղղվածության նպատակով փոխադարձ ուսուցման հատուկ հարթակը՝ *Peer learning for social dimension*⁸: Այն բազմաչափ որոնման համակարգի հնարավորություններով առցանց հարթակ է, որում տեղակայված է բազմաբնույթ տեղեկատվություն տարբեր երկրներում կրթության ոլորտում սոցիալական արդարության ապահովման տեսանկյունից գործարկված և նախատեսված ծրագրերի ու քաղաքականությունների մասին: Այս նույն նախաձեռնության շրջանակներում 2014 թվականին իրականացվեց նաև Հայաստանի կրթական համակարգի սոցիալական ուղղվածության գնահատումը: Ուսումնասիրության արդյունքները նույնպես հասանելի են հարթակում⁹: Ընդ որում, որպես Հայաստանի կրթության համակարգում սոցիալական արդարության խթանման հետագա քայլեր՝ ուսումնասիրության հեղինակ հանդիսացող միջազգային փորձագիտական խմբի կողմից առաջ են քաշվել մի շարք նպատակներ՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներում¹⁰:

⁸ *Peer learning for social dimension* - Փոխադարձ ուսուցում կրթության սոցիալական ուղղվածության համար (2017.12.27-ին հասանելի է այստեղ՝ <http://www.pl4sd.eu/>):

⁹ Armenia. Final Report, (2017.12.27-ին հասանելի է այստեղ http://www.pl4sd.eu/images/Country_Reviews/CR_Final_Report_Armenia.pdf):

¹⁰ Առաջարկները վերաբերում են առավելապես բարձրագույն կրթության ոլորտին, քանի որ ուսումնասիրության առանցքը բարձրագույն կրթական համակարգն էր:

Կարճաժամկետ նպատակներ

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում նախատեսել տվյալների հավաքագրում սովորողների սոցիալական բնութագրիչների մասով: Կրթական համակարգի ազդեցությունը սովորողների տարբեր խմբերի վրա հասկանալու լավագույն ճանապարհը կրթական քաղաքականության առանցքային հարցերի վերաբերյալ վերջիններիս կարծիքների հաշվառումն է, օրինակ՝ թե որքանով է ներառական կամ արդյունավետ կրթական համակարգը: Տվյալների հավաքագրման կիրառվող համակարգերի օգտագործումը (ինչպես միասնական ընդունելության քննություններին գրանցումը կամ ընդունելության վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունները) կարող է բերել պահանջվող հավելյալ միջոցների կրճատման: Ոչ պարբերական ուսումնասիրություններն այս պարագայում կարող են օգտագործվել լրացուցիչ տվյալներ հավաքագրելու համար, ինչը հնարավոր չէ անել վարչական համակարգի միջոցով պարբերականության սկզբունքով:

Մշակել բարձրագույն կրթության համակարգում խոցելի խմբերի ներկայացվածության հայտանիշներ: Որոշ խմբերի մասնակցությունը կարող է խթանվել, եթե կառավարությունը բուհական համակարգում ներկայումս ընդհանրապես չներկայացված կամ շատ փոքր թիվ կազմող խմբերի սովորողների ներգրավվածության ազգային ուղենիշներ մշակի համընդհանուր և ինստիտուցիոնալ մակարդակների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձրագույն կրթության օրենքում արդեն իսկ թվարկվում են բուհական համակարգում թերներկայացված կոնկրետ խմբեր, ուղե-

նշային ցուցանիշներ կարող են սահմանվել հենց այդ թվարկված խմբերի համար:

Միջնաժամկետ նպատակներ

Մշակել սովորողների աջակցության առավել համակարգված մոտեցում, որը հիմնված կլինի ոչ թե առաջադիմության, այլ կարիքի վրա: Ներկայումս սովորողների աջակցության նշանակալի մասը ուղղորդված է նրանց, ովքեր կարող են մուտք ունենալ բարձրագույն կրթության համակարգ մույնիսկ այդ աջակցության բացակայությամբ: Սա առանց այդ էլ սուղ միջոցների վատնում է: Նույն միջոցները կարող էին առավել արդյունավետ ծախսվել խոցելի խմբերի ուսանողների վրա, ովքեր կուզեին շարունակել ուսումը բուհում, սակայն չեն կարող դա թույլ տալ ֆինանսական և կամ այլ (ինչպես օրինակ՝ ֆիզիկական սահմանափակ կարողությունները, երեխայի առկայությունը) պատճառներով: Սովորողների աջակցության համակարգը կարող է ընդլայնվել նաև անուղղակի աջակցության միջոցով՝ կեցության, տրանսպորտի, խորհրդատվության և այլ ծառայությունների տեսքով: Ուսանողներին տրամադրվող ծառայությունների զարգացման և ինտեգրման ազգային ռազմավարությունը կարող է միավորել այս ջանքերը և ավելի թափանցիկ դարձնել հատկապես շահառուների համար:

Մշակել դպրոցում կրկնուսուցման պահանջի նվազեցման ինտեգրված ռազմավարություն: Կրկնուսուցումը և դրա նվազեցման ուղղությամբ կատարվող քայլերը պետք է համարվեն ներկա կրթական համակարգի մաս: Չնայած հանրակրթության ոլորտում վերջին շրջանում ձեռնարկված որոշ քայլերին՝ ինչպես ավագ դպրոցների կառուցվածքի ներդրումը, առավել զգալի քայլեր պետք է իրա-

կանացվեն թե՛ առաջարկի, թե՛ պահանջարկի ուղղությամբ: Առաջարկի ուղղությունը պահանջում է հայաստանյան ընտանիքների համար կրկնուսուցման արժեքի վերաբերյալ ավելի մեծ թափանցիկություն: Պահանջարկի տեսանկյունից սովորողներն ազգային ստուգատեսներին և քննություններին պետք է ավելի լավ պատրաստվեն հենց դպրոցների կողմից:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետությունն ու շարունակականությունը դիտարկել բուհերի և սովորողների տեսանկյունից: Այս խնդիրը թերևս կշարունակի մնալ նշանակալի, քանի որ թե՛ պետության, թե՛ տնային տնտեսությունների կողմից ֆինանսավորումը խիստ սուղ է: Այդուհանդերձ, տպավորություն կա, որ ներկա համակարգի կառուցվածքը հնարավորինս արդյունավետը չէ: Բուհերը ստիպված են իրենց կայունությունն ապահովել վարձավճարների բարձրացման միջոցով, ինչն ավելի մեծ ճնշում է ենթադրում սովորողների և նրանց ընտանիքների համար: Սրան հավելվում է այսպես կոչված վճարովի և անվճար տեղերի ռոտացիայի արդյունքում ստեղծվող լարվածությունը, որ կարող է բացասական լինել սովորողների առաջընթացի համար: Այստեղ չկան արագ լուծումներ, սակայն ակնհայտ է, որ բարձրագույն կրթության ֆինանսավորումն առանցքային խնդիր է:

Վերանայել քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները: Այս առաջարկը կարելի է ուղղել կամայական երկրի, որ վերապրում է բազմազան բարեփոխումների շրջան: Այդ բարեփոխումների ազդեցությունը լիարժեք դարձնելու համար առանցքային է դառնում հետևյալ պայմանների ապահովումը. անհրաժեշտ տվյալները և հիմնավորող տեղեկատվությունը հասանելի

են և հաջողությամբ օգտագործվում են քաղաքականության մշակման ու գնահատման համար, ինչպես նաև քաղաքականության մշակման և իրականացման գործընթացը հնարավորինս ներառական է: Հայաստանյան կրթական համակարգի շատ գործորդներ և շահառուներ՝ ինչպես ուսուցիչներն ու դասախոսները, սովորողները, գործատուները, կառավարության կողմից նախաձեռնված վերջին բարեփոխումների նկատմամբ սեփականատիրության փոքր զգացում ունեն, և սա բացասաբար է ազդում դրանց ներուժի իրացման վրա: Այս խնդիրը կարող է հասցեսագրվել քաղաքականությունների մշակման և իրականացման ընթացքում քննադատական կարծիքների առավել մեծ ներգրավվածությամբ:

Երկարաժամկետ նպատակ

Խթանել բոլորի համար կրթական հավասար հնարավորությունները հասարակության սոցիալական նորմերի խորաքնին ուսումնասիրության արդյունքում: Կրթության սոցիալական չափումը բարելավելը ներառում է նաև սովորողների գենդերային (իգական և արական), ինքնության (սեռական, քաղաքական և կրոնական) և պատկանելության (սոցիալ-տնտեսական նկարագիր) տարբերությունների դրական ճանաչում և մշակութային հասկացում: Երկարաժամկետ կտրվածքում ցանկալի է, որ բարձրագույն կրթությունը ոչ թե արտացոլի համրային նորմերը, այլ վերոթվարկյալ առումներով դերային տիպար դառնա հասարակության այլ հատվածների համար:

Թվարկված վերջին նպատակը չի դասվում կրթության սոցիալական արդարության ինստիտուցիոնալ միջավայրի և ենթակա-

ռուցվածքների խնդիրների շարքին: Այն բարձրացնում է նաև կրթության բովանդակության հիմնահարցերը՝ հիշեցնելով դժվար փոփոխելի, սակայն էական ազդեցություն ունեցող հանրային կառուցվածքների և նորմերի մասին: Այս տեսանկյունից կրթության սոցիալական արդարության ինստիտուցիոնալ միջավայրի և ենթակառուցվածքների քաղաքականության մշակումն ու իրացումը, բոլոր խնդիրներով հանդերձ, թվում են դյուրին, երբ խոսակցությունը վերաբերում է կրթության բովանդակության սոցիալական արդարությանը: Թեմայի դիտարկման տեսանկյունից երկակի նշանակություն կարող է ունենալ յուրաքանչյուրիս համար դրա զգացմունքային հագեցվածությունը՝ հիմնված անձնական փորձառության վրա: Զգացմունքային այդ հագեցվածությունը մի կողմից՝ ապահովում է գործողության մեծ հավանականություն, մյուս կողմից՝ անկատ դառնում քաղաքականությունների գնահատման եթե ոչ միակ, ապա գերակշիռ դիտանկյուն: Ուստի առավել կարևոր է սահմանել այն շրջանակը, որը դառնում է կրթության բովանդակության սոցիալական արդարության խնդիրների ախտորոշման և կարգավորումների փնտրտուքի միջոցը: Մոտեցումները տարբեր են: Այս աշխատանքի շրջանակներում ընտրվել է կրթության բովանդակության սոցիալական արդարության որոշման հնգաչափ մոդելը՝ որպես երևույթն առավել բազմաչափ և տարբեր անկյուններից դիտարկելու հնարավորություն¹¹:

Եվ այսպես՝ կրթության բովանդակության սոցիալական արդարության հինգ կողմերն են.

¹¹ Hackman, Heather W. (2005) *Five Essential Components for Social Justice Education, Equity & Excellence in Education*, 38:2, 103 - 109

Համալիր բովանդակություն, որ երեք առանցքային ոլորտ է ներառում՝ տեղեկատվությունը փաստերի վերաբերյալ, այդ տեղեկատվության պատմական կոնտեքստավորումը և մակրո-միկրո բովանդակային վերլուծությունը: Սա նշանակում է, որ կամայական կրթական բովանդակություն սոցիալական արդարության ապահովման համար սովորողներին պետք է ընձեռի փաստերի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառելով նաև կոնկրետ իրադարձության կամ դեպքի վերաբերյալ ոչ միայն գերակշիռ տեսակետը, այլ նաև գոյություն ունեցող հնարավոր այլընտրանքային մեկնաբանությունները: Այլ կերպ ասած՝ տեղեկատվությունն այս դեպքում հնարավոր է միայն և միայն իբրև բազմազան ու բազմադեմ տեղեկատվություն: Այդուհանդերձ, տեղեկատվությունը չի կարող ինքնին նպաստել մտածելու գործընթացին, եթե պատմականորեն իմաստավորված չէ: Ճշմարտությունը հնարավոր է ներկայացնել վերժամանակյա և վերերկրային մի կտրվածքում, երբ կարդում ես, ու կարծես թե ամեն ինչ ճշմարտաման է, բայց նկարագրված է այնպես, որ կարող էր տեղի ունեցած լինել կամայական երկրում կամայական ժամանակ: Գիտելիքի պատմականությունն այն կարևորագույն միջոցն է, որ ցույց է տալիս տվյալների և ժամանակի կապը, բացահայտում ներկայի կապը անցյալի հետ: Պակաս կարևոր չէ նաև մակրո-միկրո վերլուծությունը, որի միջոցով հանրային փորձառությունը շաղկապվում է անհատական փորձառությանը: Մարդը կարողանում է տեսնել սեփական կյանքի ու հանրային իրադարձությունների և գործընթացների փոխկապվածությունը՝ ըստ այդմ սեփական կյանքը բարելավելու միջոց դիտարկելով հանրային կյանքի բարեփոխումը:

Քննադատական վերլուծության գործիքներ: Ըստ Հաքմընի՝ նույնիսկ համալիր բովանդակությունը միայնակ չի կարող լսարանում կամ դասասենյակում ժողովրդավար և սովորողների իրավագործությունը խթանող միջավայր ձևավորել: Դրա պատճառները, ըստ նրա, չորսն են.

- տեղեկատվության փոխանցումը բավարար չէ դրա՝ խորքային գիտելիքի վերածման համար,
- տեղեկատվությունը ցույց չի տալիս սովորողի վարքի/գործողության հնարավորությունը,
- տեղեկատվության փոխանցումը կարող է ստեղծել ճշմարտության դոգմատիկ միջավայր, այնինչ սոցիալապես արդար լսարանում/դասասենյակում ամբողջ բովանդակությունը քննարկելի է,
- առանց իշխանական հարաբերակցության և ճնշման մեխանիզմների ներկայացման տեղեկատվության փոխանցումը կարող է նպաստել ճնշված խմբերի լուսանցքավորմանը:

Այս խնդիրներից խուսափելու համար հարկ է սովորողներին, ըստ Հաքմընի, սովորեցնել քննադատական վերլուծություն, որը չարչրկված մի բառ է դարձել կրթության ոլորտում՝ կորցնելով իմաստավորվածության մի զգալի մաս: Իրականում քննադատական վերլուծությունը պահանջում է հետևյալ պայմանները.

- տեղեկատվության դիտարկել բազմակի, ոչ գերիշխող դիրքերից, որպես ոչ թե այդ գերիշխող դիրքի հավելորդ, այլ վավեր՝ անկախ միմյանցից,

- ապակենտրոնացնել սովորողների վերլուծական շրջանակը և նրանց միտքը բացել ավելի լայն փորձառությունների համար,
- վերլուծել իշխանության և ճնշման հետևանքները,
- խորհել այն մասին, թե ինչ այլընտրանքներ են առկա վերլուծության ենթարկվող խնդրի իրողության գերիշխող տեսակետի նկատմամբ:

Սոցիալական փոփոխության գործիքներ: Իրականությունը հաճախ հիասթափեցնող է, հատկապես երբ այն բազմակողմանի և խորը ուսումնասիրում ես: Այդուհանդերձ, սոցիալական փոփոխության գործիքներն են, որ թույլ են տալիս սովորողի հուսալիսաբության և անգործության զգացումը փոխարինել գործորդ լինելու հնարավորության գիտակցմամբ՝ կոնկրետ գործիքների ուսուցման միջոցով: Այս մոտեցումն է, որ խնդրականացնում է լուծության՝ հայրենասիրություն լինելու փաստը և ցույց տալիս կարծիքների ձևավորման և արտահայտման նշանակությունը, դրանց իրացմանը հետամուտ լինելու կարողությունը:

Անհատական վերափոխաստավորում: Կրթության սոցիալական արդարության այս կողմը այն մասին է, որ անհրաժեշտ է հասկանալ քո սեփական դիրքը, հանդես գալու տեսանկյունը: Սրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գերիշխող դիրք ունեցողները ակտիվորեն ուսուցանվում են չտեսնելու իրենց գերիշխող դիրքը, այն ուսուցանվում է իբրև նորմ հասարակության և մարդկության համար, գերիշխող դիրք ունեցողները ոչինչ չեն արել այդ արտոնության համար: Այս մեխանիզմը թույլ է տալիս, որ գոյություն ունեցող գերիշխման հարաբերությունները շարունակեն

աննկատ կերպով գործել իբրև ճնշման մեխանիզմ՝ իբրև հասարակության գործառնության միակ հնարավոր ձև:

Բազմամշակութային խմբային դիմամիկայի վերաբերյալ իրազեկվածություն: Կրթության բովանդակության սոցիալական արդարության այս բաղադրիչը ձևակերպում է դասաստեղյակի կամ լսարանի սոցիալական կառուցվածքը հասկանալու խնդիրը: Անհրաժեշտ է կրթական այդ միջավայրը պատկերացնել այն մշակութային համատեքստում, որ կառուցում է կոնկրետ սովորողների և ուսուցիչների/դասախոսների տիպերը, ինքնությունները: Ում անունից ես դու հանդես գալիս կրթական այդ գործընթացում, ով է խոսում քո փոխարեն ու քո միջոցով, ում եմ ուղղված քո փաստարկներն ու հակափաստարկները. սա է հիմնական խնդիրը. հասկանալ դասաստեղյակի խմբային դիմամիկան և ուսուցչի ու ուսանողների սոցիալապես կառուցակցված ինքնությունները:

Այս հինգ բաղադրիչները այն շրջանակն են, որոնք կարող են հիմք դառնալ հայաստանյան կրթական բովանդակության վերագնահատման համար: Շահառուները և փորձագետները կարող են անձնական փորձառության և փորձագիտական իրազեկվածության հիման վրա իրականացնել կրթական բովանդակության սոցիալական արդարության համալիր չափում, որը թույլ կտա քարտեզագրել առկա խնդիրները և կառուցել դրանց կարգավորման ճանապարհային քարտեզ՝ ելնելով կրթության սոցիալական արդարության՝ սահմանված նպատակից:

Անշուշտ, վերոնշյալ հանգամանքները չեն կարող ամբողջական համարվել Հայաստանում կրթության սոցիալական արդարության նախաձեռնության տեսանկյունից: Դրանք անպայմանորեն

պետք է լրացվեն երկրի կրթության համակարգի կոնկրետ ցուցանիշների ուսումնասիրությամբ և դիտարկմամբ: Այդուհանդերձ ներկայացված մոտեցումը կարող է հանդես գալ իբրև այդ կոնկրետ ջանքերն ուղղորդող համալիր մեթոդաբանություն, որի առկայությունը նախաձեռնության արդյունավետության հիմնական պայմաններից է:

EDUCATION AND SOCIAL JUSTICE

Zhanna Andreasyan

Ministry of Education and Science of Armenia, Center for

Education Projects PIU, Project Manager, PhD

The article reflects problems and principles of assuring social justice to the target groups of population while providing education on institutional and procedural levels. Some approaches of education management are discussed and proposed for further application.

**ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇԱՅԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՊՀ մանկավարժության ամբիոնի

դոցենտ, մ. գ. ք.

21-րդ դարասկզբի ժամանակակից գիտելիքահեն ու տեղեկատվական հասարակության առաջ ծառացած մարտահրավերներից մեկը շարունակական կրթությունն է ու դրա հայեցակարգային հիմքերի ձևավորումը, որը կնպաստի շարունակական կրթության մոդելների կառուցվածքային մշակմանը, իրագործմանն ու տարածմանը հասարակությունում: Շարունակական կրթության հայեցակարգի ու ռազմավարության առաջնային գաղափարը, որը քերևս պատկանում է «Կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» եվրոպական նախաձեռնությանը¹, ուրվագծեց հասարակության միկրոմակարդակից դեպի մակրոմակարդակ տանող զարգացման մի նոր ուղղություն զարգացող աշխարհում՝ ծառացնելով կրթության ոլորտի բազմաթիվ հիմնախնդիրների հրատապ լուծում: Քանզի ցանկացած գաղափարի, տեսական դրույթների, քաղաքացիավարական օրենքների ներմուծումը հասարակություն անհնար է առանց կրթության ոլորտում դրանց կիրարկման ու կյանքի կոչման:

¹ European Lifelong Learning Initiative – ELLI, 1990

Շարունակական կրթությունը արսետլոգիական ուսումնասիրություններում և շարունակական կրթության արսետլոգիզացիան

Հասարակությունում շարունակական կրթության դերի բարձրացման և դրա նկատմամբ վերաբերմունքի փոփոխության հետ կապված հիմնախնդիրները կազմում են կրթական արսետլոգիայի (կրթական արժեքաբանության) ուսումնասիրությունների ոլորտներից մեկը: Նման ուսումնասիրությունների արդյունքների տարածումը ոլորտի մասնագետների շրջանում ունի ռազմավարական նշանակություն, ինչը որոշում է շարունակական կրթության արժեքումը (արսետլոգիզացիան) և հաճախ պայմանավորում է կրթական գործընթացների առաջընթացն ամբողջությամբ:

Շարունակական կրթության նկատմամբ արժեքաբանական մոտեցումների ակտուալիզացիան անընդհատ գործընթաց է, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Այդ գործոններից առանցքային կարելի է համարել՝ 1) համաշխարհային կրթական դաշտի արսետլոգիզացիան, 2) ժամանակակից կրթության ճգնաժամը՝ պայմանավորված ձևավորված արժեքային վակուումով, 3) ինչպես նաև արժեքային առաջնահերթությունների սահմանման անհրաժեշտությունը և 4) ավտորիտարից հումանիստական-անձնակողմնորոշիչ կրթական հարացույցի անցումը²:

² Сластенин В. А., Чижакова Г. И., Введение в педагогическую аксиологию. М., «Академия», 2003, с.74.

**Համաշխարհային կրթական դաշտում
շարունակական կրթության արևելոլորդագիտության ցուցանիշները**

Համաշխարհային կրթական դաշտի արևելոլորդագիտության բնութագրից են արժեքային հարաբերությունների ձևավորումը և դրսևորումն ինքն իր, շրջապատող մարդկանց, ուսուցման, սեփական մասնագիտական գործունեության, շրջապատող միջավայրի ու աշխարհի նկատմամբ: Նման մոտեցման ձևավորումը և դրսևորումը հնարավոր են դարձնում մարդու **շարունակական կրթությունը**:

Համաձայն Կրթություն ամբողջ կյանքի ընթացքում եվրոպական նախաձեռնության՝ շարունակական կրթությունը՝ որպես կրթություն ամբողջ կյանքի ընթացքում, ներառում է ուսուցման բոլոր ձևերը՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն և մուլթիմեդիա հետբուհական³: Այն անընդհատ գործընթաց է և կոչված է խթանել մարդկանց զարգացումը՝ ստեղծելով պայմաններ անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների, արժեքների, փորձի ձեռք բերման համար, որոնք անհրաժեշտ են կյանքի ընթացքում:

Ժամանակակից մարդուն անհրաժեշտ է սովորել ամբողջ կյանքի ընթացքում: Շարունակական կրթության իրագործման համար մարդուն անհրաժեշտ է ունենալ **որակապես (ժամանակակիցի իմաստով) նոր կոմպերենցիաներ**: Տարբեր երկրներում գիտնականները ջանում են սահմանել այն որակները, որոնք ազդեցություն են ունենում տեղեկատվության յուրացման վրա և թույլ են տալիս ադեկվատորեն արձագանքել տեղի ունեցող իրադարձու-

³ <http://eurolocal.info/knowledgebase/resources>

թյուններին ամբողջ աշխարհում: Այդ իսկ պատճառով տեղի ունեցավ **արժեքային կողմնորոշիչների** հերթագայություն: Արժեքային կողմնորոշիչների ժամանակակից հերթագայությունը հիմնականում պայմանավորված է կրթության հումանացման հետ:

Կրթական իմպուլսները ուղեկցում են մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Դրանք բխում են ոչ միայն մարդու պահանջմունքներից, այլև նրա արժեքային կողմնորոշումներից: Պահանջմունքները մղում են մարդու որոշակի գործունեության, իսկ արժեքները կառավարում են մարդուն ամբողջ կյանքի ընթացքը: Արժեքները որոշում են կրթության ամբողջական գործընթացի իմաստը: Այստեղից կրթության հիմնական **գերիսնդիրը** դառնում է մարդու կրթական իմպուլսների պահպանումը, որն իր հերթին արմատավորված է էթիկական հենքի վրա:

Վերոնշյալ երեք հիմնական ցուցանիշները պահանջում են ՀՀ կրթության զարգացման ժամանակակից ուղղությունների (որոնք պայմանավորում են ժամանակակից հասարակական հիմնախնդիրները, որոնք հնարավոր չէ լուծել առանց կրթության համակարգում լուրջ ու էական փոփոխությունների) ձևավորում, որոնց թվին են պատկանում.

- Սովորողների զարգացման տեմպերի արագացումը, որի արդյունք է համարվում մարդկանց պատրաստվածությունը կյանքին արագ փոփոխվող հասարակության պայմաններում:

- Սովորողների ճկունության բարձրացում և համապատասխանեցում տեղեկատվական հասարակությանը, որի պայմաններում ընդլայնվում են միջնշակութային փոխներգործության մասշտաբները, իսկ դրա հետ կապված հատկապես մեծ կարևորություն

են ձեռք բերում հաղորդակցականության և հանդուրժողականության գործոնները:

- Կապիտալի և աշխատուժի բարձր մոբիլությունը, մրցակցության աճը աշխատաշուկայում:

- Հասարակության մեջ այն ոլորտների կրճատում, որտեղ հնարավոր էր կիրառել չորակավորված կամ թերի որակավորված մասնագետների աշխատուժը, ինչն էլ իր հերթին ենթադրում է մասնագիտական բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող աշխատակիցների պահանջարկի բարձրացում և դրանց մասնագիտական մոբիլության պահանջի բարձրացում:

- Հասարակության ժողովրդավարացում, ընտրության հնարավորությունների ընդլայնում, ինչն էլ իր հերթին առաջ է քաշում քաղաքացիների գիտակցական ընտրության բարձր պատրաստվածության անհրաժեշտություն:

- Գլոբալ խնդիրների լուծում միայն համագործակցության արդյունքում, նույնիսկ միջազգային համագործակցության շրջանակներում, ինչն էլ պահանջում է արժեքային աշխարհայացքի ձևավորում երիտասարդ սերունդների մոտ:

Ժամանակակից շրջանում ընթանում է կրթական միջազգային չափորոշիչների փոփոխություն:

Կրթության առաջատար զարգացումը ժամանակակից աշխարհում ունի որոշիչ նշանակություն յուրաքանչյուր երկրի համար ոչ միայն հասարակության առաջընթացի, այլև յուրաքանչյուր մարդու կյանքի կայացման ու հաջողվածության համար, այսպես ասած՝ որոշում է առանձին մարդու ճակատագիրը: Համաաշխարհային զարգացման ժամանակակից ուղղությունների որոշումը

նշանակում է ոչ միայն աճող և երիտասարդ սերունդների կրթության համակարգի արդիականացման անհրաժեշտություն, այլև մեծահասակների:

Քաղաքակրթության նոր մարտահրավերները շատ երկրների օրինաչափորեն տանում են կրթական նոր փոփոխությունների, բավականին խորը բարեփոխումների կրթական համակարգերում: Այդ երկրների թվին են պատկանում հատկապես հետխորհրդային երկրները, որովհետև այս երկրներում կրթության արժեքաբանական ակտուալիզացիան պայմանավորված է հատկապես ավտորիտարից հումանիստական կրթության համակարգի անցմամբ:

Որակապես (ժամանակակիցի իմաստով)

նոր կոմպերենցիաներ

Կրթության համակարգի ամենակարևոր արժեքաբանական նպատակներից է հասարակության մեջ կյանքի համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների զարգացումը: Վարկածն այն մասին, որ արժեքները փոխանցվում են կրթական գործընթացում, պրակտիկայում հաստատվում է նրանով, որ դպրոցական ծրագրերում շեշտադրվում են հումանիստական արժեքները, որոնցում առաջնահերթություն է տրվում ազնվությանը, աշխատասիրությանը, մարդկանց նկատմամբ հարգանքին, ապրումակցմանը, արժանապատվությանը:

Առանձնահատուկ արժեքային իմաստավորում է ստանում անհատականացման սկզբունքը, որը անձնակողմնորոշիչ մոտեցման շրջանակներում դիտարկվում է որպես երեխային անհատական

զարգացման գործընթացում համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելու կարևոր դրույթ:

Որակապես նոր կոմպետենցիաների ձևավորման համար շարունակական կրթության տեսանկյունից կարևոր է.

1. Կրթության ժամանակակից որակի ապահովում. այն պետք է ուղղված լինի ոչ այնքան սովորողների կողմից որոշակի գիտելիքների ամբողջության յուրացմանը, որքան ինքնուրույնության, անձի պատասխանատվության, անձնային որակների և ունակությունների, սովորելու, գործելու, ճանաչելու և ժամանակակից տնտեսական պայմաններում արդյունավետ աշխատելու ձգտման զարգացմանը:

2. Կրթության մասնաշաղկապության և հասանելիության ընդլայնում. ինչը ենթադրում է լիարժեք կրթության հավասար հնարավորությունների երաշխիքների ապահովում, շարունակական կրթության համակարգի ստեղծում մարդու ամբողջ ակտիվ կյանքի ընթացքում:

Արժեքային կողմնորոշիչների հերթագայություն.

«Շարունակական կրթությունը՝ որպես ինքնակողմնորոշված կրթություն»

Չնայած այն հանգամանքին, որ տարբեր երկրներում կատարված համեմատական քանակական վերլուծությունների տվյալները խոսում են այն մասին, որ կրթությունը եղել է աշխատանքի որակի ապահովման որոշիչ գործոն (իսկ կատարելագործման աղբյուրը ազգային շահույթի բարձրացումը), համաշխարհային կրթական

հանրությունը սխալ է համարում կրթության ռազմավարական դերի ճանաչումը՝ միայն հաշվի առնելով դրա ներդրումը տնտեսական աճի ու զարգացման գործում: Կրթության միայն տնտեսական գործառույթի ճանաչումը կարող է տանել նրան, որ մարդը այն կսկսի դիտարկել որպես տնտեսական նպատակներին հասնելու գործիք և միջոց: Այս մասին խոսվում է հատկապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի 50-ամյակին նվիրված հաշվետվության մեջ, որում կարևորությամբ է նշվում այն, որ պետք է մարդու մեջ տեսնել **ինքնանպատակությունը**, և պետք է տնտեսական նպատակները ծառայեցնել միայն մարդու զարգացման ու բարեկեցության խնդիրների լուծմանը:

Կրթության նկատմամբ արժեքային մոտեցումը՝ հիմնված հումանիստական և բարոյական սկզբունքների վրա, իր արտացոլումն է գտել կրթության նպատակների մեջ, որը պետք է ամբողջությամբ ուղղված լինի մարդու անձնային զարգացմանը, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը: Այն պետք է նպաստի փոխհասկացմանը, հանդուրժողականությանը և ընկերությանը բոլոր ազգերի ու ժողովուրդների միջև, և պետք է համահունչ լինի Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գործունեությանը՝ կապված աշխարհի աջակցության ռազմավարության հետ (ՅՈՒՆԵՍԿՕ-ի խարտիա): Նմանատիպ միտք է արտահայտվել նաև «Մարդկային զարգացման համաշխարհային զեկույց-1995»-ում, որում ընդգծված է հետևյալ գաղափարը. «Միավաբար պնդվում է, որ մարդկային զարգացումը մարդկային ռեսուրսների զարգացումն է, մարդկային կապիտալի մեծացումը: Դա նշանակում է նպատակների ու միջոցների թյուրըմբռնում: Ոչ մի դեպքում չի կարելի մարդուն դիտարկել որպես հա-

սարակ գործիք արտադրության մեջ, որն ապահովում է նյութական բարեկեցություն, և տեսնել դրանում գլխավոր նպատակը: Դա կլինի դերերի տարօրինակ ներկայացում»:

Նշելով հասարակական գործընթացների աստիճանական հումանացումը՝ տարբեր երկրների մասնագետները միաժամանակ ուշադրություն են դարձնում այն փաստին, որ դպրոցի բովանդակությունը մեծ ազդեցություն է ունենում անձնային այնպիսի բնորոշումների վրա, ինչպիսիք են՝ աշակերտների սոցիալական պատասխանատվությունը, վստահելիությունը, հանդուրժողականությունը: Հենց անձնային բնորոշումների ցուցանիշների հիման վրա, և ոչ թե աշակերտների առաջադիմությունից ելնելով, սահմանվում է դպրոցի արդյունավետության մակարդակը Արևմուտքում:

Հենց դա է պատճառը, որ վերջին ժամանակներում, ի հակառակ 20-րդ դարի (երբ կրթությունը այդքան էլ բարձր հեղինակություն չուներ իր դանդաղ արդյունքներ տալու պատճառով), կտրուկ աճել են կրթության՝ որպես համընդհանուր արժեքի հեղինակությունը և դիրքը, որը որոշում է անձի մասնագիտական և սոցիալական հաջողությունները⁴:

Անձի զարգացման գործընթացում իր ուրույն տեղն ու նշանակությունը պետք է ունենա կրթության բոլոր փուլերի հերթագայությունը: Ինչպես նշում է Քրիստոֆեր Դեյլը. «Յուրաքանչյուր անձ, զնահատելով ու փոփոխելով ինքն իրեն, իր անհատական զարգացման պլանավորման մեջ պետք է ներառի անընդհատ ուսուցման

⁴ Сластенин В. А., Чижаклова Г. И., Введение в педагогическую аксиологию. М., «Академия», 2003.

գործընթաց՝ ինքնակատարելագործման նպատակով»⁵։ Իսկ դրա համար անհրաժեշտ է կայուն դրդապատճառների ձևավորում դեռևս կրթության ոլորտում, ինչն էլ իր հերթին տանում է այսպես կոչված կրթական իմպուլսների ձևավորմանն ու պահպանմանը։

***Անճի կրթական իմպուլսների ամրակայում և պահպանում
ամբողջ կյանքի ընթացքում ՀՀ կրթության համակարգում***

Կրթական իմպուլսների ամրակայման ու պահպանման տեսանկյունից կարևոր է կրթության որակի արդիականացումը՝ հաշվի առնելով դրա արժեքային առաջնահերթությունները, որոնք արտացոլում են անձի սոցիալական պահանջները կրթության համակարգի նկատմամբ։

Հետխորհրդային երկրների առանձնահատուկ խնդիրներից է արժեքների, սոցիալական առաջնահերթությունների, հասարակության շերտավորման հետ կապված սոցիալական լարվածության հերթագայությունը շուկայական տնտեսությունից ժողովրդավարական հասարակության անցման պայմաններում։ Այդ խնդիրների լուծումը մեծապես կախված է հասարակության կրթվածության մակարդակից։ Միևնույն ժամանակ կրթության զարգացման բարձր մակարդակը ձևավորում է մրցակցություն համաշխարհային տնտեսությունում։ Այդ իսկ պատճառով *կրթական քաղաքականության կարևոր խնդիրներից է պետք համարել կրթության համա-*

⁵ Christopher Day (1999). Developing Teachers: The Challenges of Lifelong Learning. Routledge Falmer Press, P.92.

կարգի նկատմամբ նոր սոցիալական պահանջների իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Այդ պահանջներն ուղղված են հասարակության զարգացման գործում կրթության դերի բարձրացմանը: Դպրոցը պետք է դառնա սոցիալ-տնտեսական հարաբերությունների հումանացման, արժեքային նոր համակարգի ձևավորման կարևոր գործոն: Այն պետք է օգտագործի իր դաստիարակչական ներուժը երիտասարդ սերունդների մոտ մարդկանց նկատմամբ հարգանքի ձևավորման գործում, ինչը պետք է նպաստի բարեկեցությանն ամբողջ հասարակությունում: Ջարգացող հասարակությանն անհրաժեշտ են կրթված անդամներ, ովքեր կարող են ինքնուրույն որոշումներ կայացնել պատասխանատու ընտրության պահին, ի վիճակի են համագործակցության, առանձնանում են մոբիլությամբ, դինամիկությամբ, կառուցողականությամբ, պատրաստ են միջմշակութային փոխներգործության, ունեն պատասխանատվության զգացում պետության ճակատագրի համար և պատրաստ են մասնակցել նրա տնտեսության զարգացմանը: Կրթության համակարգը պետք է պատրաստի մարդկանց, ովքեր ոչ միայն ի վիճակի են ապրել քաղաքացիական հասարակությունում, այլև ստեղծել այն որպես այդպիսին:

Կրթության համակարգն իր արդիականացման գործընթացում առաջին հերթին պետք է կարողանա ապահովել հնարավորություններ ամբողջ հասարակության լիարժեք և շարունակական կրթությանն համար ամբողջ կյանքի ընթացքում՝ անկախ նրա ֆինանսական կարողություններից, ապրելու տեղից, ազգային պատկանելությունից և առողջական վիճակից, այնուհետև պետք է օգտագործի իր հնարավորությունները երեխաների և անչափահասների սոցիա-

լական ապահովության հարցում, ովքեր զրկված են ծնողական կամ համապատասխան այլ հոգաժողովություններից: Բացի ներքին նման խնդիրների լուծումից՝ կրթության համակարգն ի վիճակի է ստեղծել մրցակցություն միջազգային շուկայում ոչ միայն կրթության ոլորտում, այլև պետությունների հեղինակության բարձրացման մակարդակով: Դա իր արտահայտությունն է գտնում ոչ միայն հասարակության կողմից այդ ամենի ճանաչման մեջ, այլև կրթական ծառայությունների համբավի և էքսպորտի (արտահանման) պահանջների բարձրացման մեջ:

Կրթության համակարգի նկատմամբ արդի պահանջների իրացման, նրա սոցիալական դերի բարձրացման համար մի կողմից՝ անհրաժեշտ է հենց այդ համակարգի արդիականացում, մյուս կողմից՝ մարդկանց, պետության և հասարակության վերաբերմունքի փոփոխում կրթության նկատմամբ:

Հենց այդ վերաբերմունքն է հիմնական պատճառը, որ մարդիկ թերահավատորեն են վերաբերվում արդի կրթությանը: Այսպես՝ քիչ մարդիկ են կարողանում աշխատանք գտնել կրթություն ստանալուց հետո, իսկ կրթություն ստացածներն էլ խուսափում են աշխատել գյուղական և ծայրամասային վայրերում: Դրա հիմնական պատճառն այն է, որ լուրջ փոփոխություններ եղան մեր հասարակությունում 80-ական թվականների վերջերից և հատկապես 90-ական թվականներից սկսած: Ստեղծվեց անցումային մի ժամանակաշրջան, որը հատկապես իր ազդեցությունն է ունենում ոչ միայն հասարակական գիտակցության, այլև կրթության համակարգի վրա: Սակայն կրթությունը պետք է կարողանա պատվով հաղթահարել այս անցումային շրջանը, որպեսզի կարողանա նաև ձևավո-

րել ժամանակակից պահանջներին համապատասխան սերունդներ և նպաստի նրանց առողջ գիտակցության զարգացմանը: Այդ իսկ պատճառով անցումային շրջանում կրթության համակարգում արդիական ու հրատապ խնդիրներից է համարվում արժեքային առաջնահերթությունների սահմանման անհրաժեշտությունը: Այսպես՝ ժամանակակից ՀՀ կրթության համակարգում նկատվում են հատկապես ազգային արժեքների վերաիմաստավորում և տարածում: Սակայն ոչ միայն ազգային արժեքների ստեղծմանն ու տարածմանն է պետք ուշադրություն դարձնել, այլև համամարդկային արժեքների: Եվ հատկապես արդի հումանիստական և ժողովրդավարական հասարակության պայմաններում պետք է մեծ ուշադրություն դարձնել մարդու՝ որպես հիմնական արժեքի դիտարկմանը: Խուսափելու համար կրթության համակարգում արժեքային ճգնաժամերից և բևեռացումներից անհրաժեշտ են արժեքաբանական ուսումնասիրություններ կոնկրետ հասարակության պայմաններում, նրա առանձնահատկություններից ելնելով, գիտական մոտեցումների մշակում, տարածում և ներմուծում կրթական քաղաքականության արժեքային առաջնահերթությունների սահմանման ռազմավարության մեջ:

***Արժեքորումը՝ որպես շարունակական կրթության
հասարակությունում վավերացման պայման***

Ըստ Շ. Պերպերյանի մշակած տեսության՝ արժեքային վավերացումն իրականանում է ըստ հետևյալ օրենքների.

ա. Արժեքների բազմազանության և տեսակավորության օրենք,

- բ. Ձուգահեռականության օրենք,
- գ. Արժեքների փոխադարձաբար միմյանց լրացնելու օրենք,
- դ. Արժեքների արտաձգման օրենք,
- ե. Արժեք ինչպես գոյն է⁶:

Դրանից բխում են ուսուցման շարունակականության հետևյալ միտումները՝

1. *Չկապորել կոմպերենցիաներ՝ վերցնելու նոր ու բազմաբովանդակ գիրքերը ողջ կյանքի ընթացքում:*
2. *Հասնել զարգացման՝ հիմք ընդունելով աշխատանքային հնարավորությունները, ադեկվատ մասնագիտական պրոֆիլները, ինչպես նաև ուսուցման մասնագիտական ուղղությունը:*
3. *Ժամանակակից հասարակության մեջ ինֆորմացիոն տեսակետից ավելի բարձր գնահատել մրաժողությունը և դրա ձևավորման քանաչեները:*
4. *Սրեղծել գիրքերի չեռք բերման անհրաժեշտություն աշխարհի մասին, ոչ միայն սովորական խնդիրների լուծման համար գործունեության տարբեր ոլորտներում, այլև հասարակության զարգացմանն աջակցման, ինչպես նաև սոցիալական ամբողջական համակարգի ձևավորման համար:*
5. *Արժևորումը հնարավոր է՝ հաշվի առնելով արժեքային համակարգերը՝ իրենց սահմանված նորմերով:*

⁶ Ը. Ռ. Պերպերեան, «Արժեքաբանություն կամ արժեքներու իմաստասիրություն», էջ 39:

PROBLEMS OF LIFE-LONG LEARNING AXEOLOGY IN ARMENIA: FACTOR ANALYSIS

Anna Aleksanyan

PhD, Yerevan State University

The article discusses actual problems of value transformation through life-long education, as well as assesses the role of life-long education in the modern Armenia society.

**ՀԵՌԱՌՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ՏՀՏ
(ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ)
ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՄՈՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԿԱ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ**

ԱՐՏԱՇԵՍ ԽՈՒՐՇՈՒԳՅԱՆ

*ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի
հեռաուսուցման լաբորատորիայի տնօրեն, ս. գ. ք.*

Մանկավարժական հիմք

Ուսումնական ֆիլմերը կամ տեսանյութերը հաճախ են օգտագործվում ուսուցման մեջ: Դասավանդողը ընտրում է ուսուցման տեսաձայնային ռեսուրսները, ինչպես նաև դրանց ներկայացման ժամանակը և վայրը:

Ուսուցման կոնստրուկտիվիստական մոտեցման համաձայն՝ մարդիկ կառուցում են իրենց սեփական աշխարհընկալումը իրենց սեփական անհատական մտավոր մոդելների ստեղծման միջոցով: Կոնստրուկտիվիզմի հիմնական տարրը ինտերակտիվությունն է, որի միջոցով ուսումնական ռեսուրսների և փորձի վերահսկողությունը, ընտրությունը և մատչելիությունը սովորողին հնարավորություն են ընձեռում ակտիվ կերպով կառուցել իր սեփական գիտելիքը:

Ներկայումս դասավանդողների համար մանկավարժական խնդիրները դուրս են եկել ուսուցման/փոխանցման մոդելի կամ նույնիսկ սովորաբար լայնորեն ընդունվող կոնստրուկտիվիստական մոտեցման սահմաններից՝ տեղավորվելով համագործակցային, տեղայնացված և երկխոսության մոդելների մեջ:

Թվային տեսանյութն այլ վեբ-գործիքների հետ հեշտությամբ զուգորդելու հնարավորությունը թույլ է տալիս տեսանյութի՝ որպես զուտ ներկայացնելու և ուսուցանելու (մեկուսացված) գործիքի անցումը դեպի տեսանյութի՝ որպես ուսանողի գործունեության, համագործակցության և հաղորդակցության վրա կենտրոնացող գործիքի: Մանկավարժական այս անցումներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում Երեք «I»-երի շրջանակի միջոցով:

Երեք «I»-երի շրջանակը և դրա հիմքում ընկած մանկավարժական հեռանկարները¹.

ԱՐԺԵՔ	ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	ՎԵՐԱՀՄԱՈՒԹՅՈՒՆ	ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ
Պատկեր	Ֆիլմ, հեռուստատեսություն, տեսաժապավեն	Դասավանդող	Տեղեկատվության փոխանցման մոդել
Պատկեր + ինտերակտիվություն	Տեսասկավառակ, սելանի տեսահամակարգ, մուլտիմեդիա, CD-ROM	Ուսանող	Կոմստրուկտիվիստական մոդել
Պատկեր + երկկողմանի ինտերակտիվություն +	Վեբ ինտեգրում և հեռարձակվող մեդիա	Երկկողմանի	Համագործակցություն, համատեքստավորում

¹ Վերցված է *Կրթության մեջ Թվային վիդեո- և աուդիոնյութերի կիրառման մասին չեռնարկից* (The VideoAktiv նախագիծ) https://moodle.technion.ac.il/pluginfile.php/344724/mod_resource/content/0/Ulpan/VideoAktiv_Handbook_fin.pdf, վերջին մուտքը՝ 2016 թ. մայիսի 24-ին:

Տեսանյութի օգտագործումը ուսուցման մեջ

Այս բաժնի նպատակն է վերհանել ուսուցման ընթացքում օգտագործվող տեսանյութերի տեսակները՝ անդրադառնալով դրանց մանկավարժական արժեքին:

«Խոսող գլուխ» դասախոսություններ և գործնական պարապմունքներ

Մի շարք պրակտիկ մասնագետների համար ինքնաստեղծ կրթական տեսանյութերի մեկնարկային կետը «խոսող գլուխ» ձևաչափն է, այսինքն՝ դասախոսության, գործնական կամ լաբորատոր պարապմունքի տեսագրությունը, որտեղ դասավանդողը խոշոր պլանով ուղղակիորեն խոսում է կենդանի լսարանի կամ տեսախցիկի առջև: Այդուհանդերձ, արդյունքների փոխարկումը թվային տեսաձևաչափի կարող է հիասթափեցնող լինել սովորողի ներգրավման տեսանկյունից: Պատկերի կազմությունը հաճախ խնդրահարույց է, քանի որ կենդանի միջոցառումների ընթացքում դասավանդողները սովորաբար շարժվում են, ինչը կարող է շեղել ուշադրությունը, և պատկերի ու ձայնի որակը կարող է օպտիմալից ցածր լինել, եթե միջոցառումն ուղիղ ռեժիմով է նկարահանվել: Եթե դասավանդողը «տեղեկատվության լավ ներկայացնող է» է, ապա նրա խանդավառությունը և ստեղծագործական մոտեցումը կարող են կենդանի շունչ հաղորդել թեմային և գրավել ուսանողի ուշադրությունը:

Տեսանյութերի արխիվի օգտագործում

Դասավանդողների համար կրթական տեսանյութի օգտագործման երկրորդ եղանակն առկա տեսաձայնային արխիվային ռեսուրսների կիրառումն է: Վերջին տարիներին տեղի է ունեցել թվային արխիվների միջազգային տարածում՝ կրթական լսարանին առաջարկելով հեղինակային իրավունքով չպաշտպանված թվային մեդիա ռեսուրսներ: Մեծաթիվ պորտալներում տեղ գտած տեսանյութերը կարելի է որոնել, ընտրել, օգտագործել, խմբագրել և ներդնել, օրինակ՝ վիրտուալ ուսուցման տիրույթում:

Գործնական նպատակով կիրառվող տեսանյութերը

Տեսանյութը կարող է օգտագործվել ինչ-որ գործընթաց, ընթացակարգ ներկայացնելու նպատակով: Ուսուցողական տեսանյութերը վաղուց ի վեր կիրառվում են կրթության ոլորտում, սակայն թվային ձևաչափի հիմնական առավելությունն այն է, որ այլևս տեքստի ամբողջական գծային կառուցման հարկ չկա, և օգտատերերը կարող են համապատասխան ցանկից ընտրություն կատարել՝ ըստ անհրաժեշտության: Լավագույն լուծումները համատեղում են անիմացիոն կադրեր, «խոսող գլուխներ» և արխիվային նյութեր՝ սովորողի համար գրավիչ, հետաքրքիր և հարաբերականորեն ինտերակտիվ փորձառություն խթանելու նպատակով: Թերությունն այն է, որ առցանց ուսուցման առանձին տեսաուսումնական փաթեթների ստեղծումը խրթին է, ժամանակատար և կարող է ծախսատար լինել:

Փորձագետի հետ հարցազրույց կամ փորձագետի ներկայացում

Տեխնիկական տեսանկյունից՝ հրավիրված դասախոսի ներկայությունը լսարանում կարող է նման լինել «խոսող գլխի» ձայնագրմանը, սակայն մանկավարժական նպատակը, սովորաբար, գործող մասնագետի կամ փորձագետի խորը գիտելիքների և տեղեկացվածության միջոցով ուսուցումը համատեքստավորելն է կամ այլընտրանքային կարծիք ներկայացնելը: Նման միջոցառումներն օգնում են խթանել հետագա քննարկումները, որտեղ տեսանյութի բովանդակությունը սովորողների համար դառնում է վկայակոչման աղբյուր:

Տեսաբլոգեր՝ «մտածեք բարձրաձայն»

Լայն տարածում են գտել կրթական բլոգերը, որտեղ սուբյեկտը (սովորողը կամ դասավանդողը) տեսագրում է իր մտքերը և գործողությունները: Բլոգերի հաջողությունը կախված է ոչ ֆորմալ անհատական ռեֆլեքսիայից: Այս ձևաչափերի տեսանյութերի մշակման պարագայում այն պատրաստողի տոնայնությունը և տեսանյութում օգտագործվող տարբեր հումորային անդրադարձերը կարող են կարևոր նշանակություն ունենալ:

Իրավիճակային դեպքերի ուսումնասիրության/մոդելավորման և դերախաղերի տեսանյութեր

Այստեղ նպատակը լաբորատոր փորձերի մոդելավորումն է, երբ այդ փորձի անցկացման անվտանգությունը կարող է հարցականի տակ լինել, կամ դերախաղի անցկացումն է իրավիճակային

ղեպքերի ներկայացման միջոցով, որտեղ ուսանողները կարող են լսել տարբեր արձագանքներ և ունենալ տարբեր վարքային դրսևորումներ: Այս վարքագծերի վերլուծության միջոցով ուսանողները կարող են ավելի խորը պատկերացում ձևավորել դրված խնդիրների վերաբերյալ: Այս դեպքում տեսանյութն ապահովում է «իրական կյանքի» համատեքստը և/կամ հուզական ազդեցությունը:

Տեսանյութեր իրական իրադարձությունների կամ իրավիճակների վերաբերյալ

Այստեղ նպատակն այնպիսի գործողության նկարահանումն է, որը ֆիզիկապես հնարավոր չէ ներկայացնել լսարանում: Սա վերաբերում է լսարանից դուրս կատարվող իրադարձություններին, խնդիրներին, իրավիճակներին: Նմանապես, տեսանյութի միջոցով հասանելի են դառնում այն միջոցառումները, որոնց ուսանողները չեն կարողանում հաճախ մասնակցել, օրինակ՝ կլինիկական և արդյունաբերական ոլորտներում: Այս դեպքում կարող են դիտարկվել, մեկնաբանվել և քննարկվել իրական կյանքում տեղի ունեցող դեպքերը: Լսարանից դուրս գտնվող փորձառությունների հասանելիությունը հնարավորություն է ընձեռում համատեքստավորման և գիտելիքի արդյունավետ փոխանցման համար:

Ներկայացման/կատարողական հմտություններ և հետադարձ կապ

Ռեֆլեքսիվ ինքնատեսագրումը կիրառվել է տարիներ շարունակ՝ խթանելու սովորողների գործնական հմտությունները: Նպատակն է տեսագրել, վերանայել և բարելավել անհատների և խմբերի կատարողականը ռեֆլեքսիայի և քննարկումների միջոցով: Այս

մոտեցումը նպաստում է ինքնուրույն ուսուցմանը, մեծացնում է մոտիվացիան և դրդում է սովորողներին գտնել իրենց սեփական լուծումները՝ բարձրացնելով նրանց ինքնավստահությունը: Թեկուզև ուղղորդվելով՝ սովորողն այս գործընթացի լիարժեք մասնակից է: Այս տեսագրությունները կարող են հետագայում ներառվել ուսանողների էլեկտրոնային պորտֆոլիոներում:

Տեսանյութի արդյունավետությունը

Լավ տեսանյութը պետք է համապատասխանի մանկավարժական որոշ պահանջների: Ուսանողների մոտիվացիան և նրանց վրա ուսումնական նյութի ազդեցությունը կախված են թեմայի ընտրությունից և համապատասխան նյութ գտնելուց կամ մշակելուց: Տեսանյութը հզոր միջոց է, եթե նյութը համապատասխանում է ուսանողների ունեցած գիտելիքների մակարդակին, և եթե այն ուժեղ հույզեր է առաջացնում ներկայացվող թեմայի նկատմամբ:

Պետք է մաս տեղյակ լինել տեսանյութերի տարածման մեթոդներին: Ի՞նչ միջավայրում է ցուցադրվելու տեսանյութը: Արդյո՞ք դա լինելու է լսարանում ավանդական դասախոսության ընթացքում, թե ուսանողները այն դիտելու են տան պայմաններում իրենց համակարգչով: Արդյո՞ք նրանք դա դիտելու են խմբակային, թե անհատապես: Արդյո՞ք դիտումը կապված է որոշակի ժամանակահատվածի կամ տարածքի հետ, թե նրանք կկարողանան դիտել այն ցանկացած պահի և ցանկացած վայրում: Արդյո՞ք այն ցույց է տրվելու մեծ էկրանի վրա, թե համակարգչի: Տեսանյութի տևողությունը որոշելիս պետք է հաշվի առնել, թե որտեղ է այն ցուցադրվելու:

Առկա տեսանյութի օգտագործում, թե՞ սեփական արտադրություն

Ուսուցման ընթացքում տեսանյութ օգտագործելու ցանկության դեպքում առկա են տարբեր հնարավորություններ: Դուք կարող եք որոշել օգտագործել առկա տեսանյութերը, մշակել ձեր սեփական վերինարը և ստեղծել ձեր սեփական տեսանյութը: Գումար խնայելու առումով խորհուրդ է տրվում օգտագործման համար փնտրել պատրաստի նյութեր նախքան ձեր սեփականը պատրաստելը:

Այնուամենայնիվ, թե՛ պատրաստի նյութեր փնտրելը և թե՛ սեփականը ստեղծելն ունեն իրենց թերությունները և առավելությունները: Ձեր սեփական բովանդակությունը ստեղծելու դեպքում նյութը լավագույնս կծառայի ձեր սահմանած դասավանդման և ուսումնական նպատակներին: Դուք կարող եք ստեղծել հենց այն բովանդակությունը, որը, ձեր կարծիքով, անհրաժեշտ է: Սակայն դա կարող է պահանջել շատ ջանքեր և տեխնիկական ու տեխնոլոգիական հմտություններ, և ոչ բոլոր դասընթացավարները կամ դասավանդողները կարող են լավ տեսանյութ պատրաստել: Առկա նյութերի օգտագործումն ունի մեծ առավելություն այն իմաստով, որ ստեղծագործական ամբողջ աշխատանքն արդեն արված է (և ավելին, կատարված է մասնագետների կողմից, ովքեր գիտեն, թե ինչպես պատրաստել լավ տեսանյութ): Այդուհանդերձ, հնարավոր է, որ դուք ստիպված լինեք ընտրել և գուցե խմբագրել այն նյութը, որը վերաբերում է ձեր կոնկրետ դասընթացին: Ստորև ներկայացված սխեմայում նշված են առավելություններն ու թերությունները, որոնք կօգնեն ձեզ կատարել ճիշտ ընտրություն:

ՄԱՏՁԵԼԻ Է ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ	«ԽՈՍՈՂ ԳԼՈՒԽ» ՁԵՎԱԶՓԻ ՍՏԵՂԾՈՒՄ	ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
Youtube/Vimeo	Լսարանային դասախոսություն ձայնագրում	Դերախաղի տեսանկարահանում
Coursera	Վեբինար կամ վեբ-հեռարձակում	—
—	—	Անիմացիոն տեսանյութերի ստեղծում
Հեռուստատեսություն	—	Փաստավավերագրական ռճի տեսանյութ
Վավերագրական ֆիլմեր	—	Խաղարկային հարցազրույցի ձայնագրում
Տեսանյութերի արխիվներ	—	—
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ	ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ	ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ
Դյուրամատչելիություն	Մշակման փոքր ծախսեր	Մատուցվող նյութի որակի ապահովում
Ցածր բյուջե	Հեշտ կիրառելի ծրագրային ապահովում	Նյութի մատուցման գործընթացի բարձր վերահսկողություն
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Երբեմն վստահելիության պակաս տեսանյութի աղբյուրի նկատմամբ	Ծրագրային (խմբագրող) ապահովման խնդիր	Արտադրական մեծ ծախսեր (սարքավորումներ և ծրագրային
Անցանկալի գովազդ	Տեսախցիկով և ձայնի ապահովման տեխնիկայով հագեցվածության անհրաժեշտություն	Պահանջում է մուլտիմեդիա/տեսանյութերի խմբագրության և մոնիտինգի հմտություններ
URL-ի փոփոխության վտանգ (երբ այն ներդրված է)	Մուլտիմեդիա արտադրանք մշակելու համար տեխնիկական միջոցներ	Պահուստավորման կազմակերպում

Հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրներ	—	Ժամանակատար, ծախսատար
ՍԵՐՎԵՐ	ՍԵՐՎԵՐ	ՍԵՐՎԵՐ
արտաքին	արտաքին	արտաքին
—	ներքին	ներքին

€

€



Վեբ-դասախոսություններ

Ներկայացման համար նախատեսված համակարգչային ծրագրերի, օրինակ՝ PowerPoint-ի լայն օգտագործման միջոցով դասախոսները հնարավորություն ունեն ստեղծելու պարզ մուլտիմեդիա արտադրանք՝ ձայնով, պատկերներով և տեսահոլովակներով: Վերապատրաստմամբ զբաղվող մի շարք հաստատությունների համար սա այն եղանակն է, որով նրանք մատչելի են դարձնում լսարանային դասախոսությունները մուլտիմեդիայի միջոցով:

Սակայն այսօր բուռն զարգացում է ապրում նաև վեբինարների արտադրության ոլորտը: Վեբինարը **համացանցի միջոցով անցկացվող սեմինարի** կարճ անվանումն է: Այն իրենից ներկայացնում է ցուցադրություն, դասախոսություն, աշխատաժողով կամ սեմինար, որն իրականացվում է առցանց համաժողովների համար նախատեսված հատուկ ծրագրի միջոցով: Վեբինարի հիմնական հատկանիշը դրա ինտերակտիվ տարրերն են՝ տեղեկություն տալու, ստանալու և քննարկելու հնարավորությունը: Վեբինարը տարբեր-

վում է **վեր-հեռարձակումից**, որտեղ տեղեկատվության փոխանցումը միակողմանի է տեղի ունենում և չի ապահովում ներկայացնողի ու լսարանի միջև (կենդանի) հաղորդակցություն:

Թվային տեխնոլոգիան հարաբերականորեն դյուրին է դարձնում վեր-դասախոսությունների (կամ առցանց/թվային ցուցադրությունների) տիրույթում կողմնորոշումը և որոնումը, տեսագրությունը սովորաբար բաժանվում է ըստ թեմաների՝ կարճ իրար հաջորդող մասերի (որոնք նաև կոչվում են «հոլովակներ»), իսկ սլայդային ներկայացումները սինխրոնացվում են տեսագրությամբ և ձայնագրությամբ:

Վեբինարների և վեր-հեռարձակումների առավելությունն այն է, որ դրանք կարելի է օգտագործել ուսանողների մեծ խմբերին հասանելի դառնալու համար՝ անկախ նրանց (հեռու) գտնվելու վայրից: Դրանք նաև ներառում են դասավանդողի դեմքի արտահայտությունը և ժեստերի լեզուն, ինչը նպաստում է ուսանողների ներգրավվածության մեծացմանը:

Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված հեռարձակման ձևաչափերի տարբերությունները:

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ	ՄԱՏՈՒՑՈՒՄ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
• «Առանձին» վեր-հեռարձակում՝ հարստացնելու համար դասախոսությունը կամ լսարանային հանդիպումը (շրջված լսարանի հասկացություն)	«Խոսող գլուխ» Հեռարձակում (համացանց)	• Դիտումն ըստ պահանջի • Անկախ գտնվելու վայրից • Ցանկացած պահի և ցանկացած վայրում • Մասնակիցների ոչ համաժամանակյա մուտք • Անհատական օգտագործում • Կենդանի փոխազդեցության բացակայություն
• «Կենդանի» վեբինար	«Խոսող գլուխ» Հեռարձակում (համացանց)	• Հասանելի է որոշակի օր և ժամի • Անկախ գտնվելու վայրից • Մասնակիցների համաժամանակյա մուտք • Խմբակային օգտագործում • Կենդանի փոխազդեցություն

• Վեր-հեռարձակման/-վերինարի ինտեգրում ուսուցման այլ մեթոդներում	«Խոսող գլուխ» Հեռարձակում Էլեկտրոնային ուսուցում/ մուլտիմեդիա	• Դասախոսությունը տեղադրված է թվային ուսուցման միջավայրում և մեկ (կամ մի քանի) դասընթաց(ներ)ի ծրագր(եր)ում • Դիտվում է ըստ պահանջի • Անկախ գտնվելու վայրից • Ցանկացած պահի և ցանկացած վայրում կամ որոշակի ժամի • Ոչ համաժամանակյա և համաժամանակյա մուտք • Անհատական և խմբակային օգտագործում • Կենդանի և ոչ կենդանի ռեժիմով փոխազդեցություն
---	--	--

Խորհուրդներ վեր-դասախոսություններ իրականացնելու համար

Եթե դուք նախատեսում եք վեր-դասախոսություններ մշակել ձեր կազմակերպությունում, ապա ստորև կգտնեք մի քանի ընդհանուր խորհուրդներ, որոնք կարող են օգտակար լինել: Վերինար կամ վեր-հեռարձակում իրականացնելը էականորեն տարբերվում է լսարանում նյութը ներկայացնելուց: Դա պարզապես դասընթացավարին տեսագրելը չէ: Դուք պետք է տեղյակ լինեք հետևյալին՝

- տեխնիկական պայմաններ (բավարար թվային թողունակություն հեռարձակման համար),
- ճիշտ ծրագրի ընտրություն (տեխնիկական և հաղորդակցա-

կամ ասպեկտները),

- ձայնագրումը դյուրին դարձնող սարքավորումներ՝ տեսախցիկ, ձայնագրիչ և այլն (զնել կամ վարձակալել),
- սովորեցնել դասընթացավարին, թե ինչպես ստեղծել գրավիչ և արդյունավետ առցանց դասախոսություն,
- վերապատրաստել և նշանակել մոդերատոր (ով կօգնի դասընթացավարին կենդանի ձայնագրության ընթացքում),
- ապահովել տեխնիկական աջակցություն փորձարկման և (կենդանի ռեժիմով) ձայնագրման ընթացքում (մուտք գործելու հետ կապված խնդիրներ և այլն),
- համակարգել մարքեթինգային հաղորդակցության ասպեկտները՝ հրավեր, գրանցում և այլն:

Վեբինարի ձևաչափերը

Վեբինարը կարող է կառուցվել ամենատարբեր ձևաչափերով տարբեր նպատակների ծառայելու համար: Ստորև ներկայացված են որոշ հայտնի ձևաչափեր, որոնք դուք կարող եք հաշվի առնել:

ՁեվԱԶԱՓ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԱՌԱՎԵ- ԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԹԵՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐ
Մեկ բանա- խոս	Մեկ ներկայացնող է խոսում, պատաս- խանում լսարանի հարցերին	Վերինարի տեխ- նիկական գոր- ծիքներից օ- գտվելու գծով ավելի սակավ թվով մարդկանց վերապատ- րաստման կա- րիք	Միայնակ ներկայաց- նողն ավելի մեծ հավանա- կանություն ունի հեղինա- կություն դառ- նալու «լսա- րանի առջև», ինչը լսարա- նում ունանց մոտ կարող է առաջացնել դժկամություն դասընթացին մասնակցելու և հարցեր տա- լու տեսան- կյունից

Հարցազրույցի ոճ	Հարցազրուցավարը տալիս է մի շարք նախապես որոշված հարցեր	Ուսանողների ավելի մեծ ներգրավվում բազմաթիվ կարծիքներ լսելու արդյունքում: Այն հանգամանքը, որ հարցազրուցավարը հարցեր է տալիս փորձագետ(ներ)ին, հաճախ լսարանին խրախուսում է անել նույնը	• Ավելի շատ մարդկանց է անհրաժեշտ վերապատրաստել և կառավարել • Չայնագրությունը և փաստացի վերինարը պլանավորելը կարող է ավելի դժվար լինել
-------------------------------	---	--	--

Հանձնա- խմբի կառա- վարվող քննարկում	Բազմաթիվ մարդիկ են ներկա նույն պահին, երբ մոդերատորը ուղղորդում է քննարկումը	Առաջ է բերում տարբեր կարծիքներ և տեսանկյուններ	• Ավելի շատ մարդկանց է անհրաժեշտ վերապատրաստել և կառավարել • Չայնագրությունը և փաստացի վերինարը պլանավորելը կարող է ավելի դժվար լինել • Կարող է դժվարություն առաջանալ հանձնախմբի անդամներին միաժամանակ խոսելուց ետ պահելու առումով
---	---	---	--

Ինտերակ- տիվ	Լսարանի անդամ- ները լիարժեքորեն են մասնակցում դասընթացավարի կողմից տրված վարժություններին և ուղղորդվող քննարկումներին	Լավ իրակա- նացման դեպ- քում մասնակից- ները թեման ա- վելի լավ են ըն- կալում, քանի որ լիարժեքորեն են ներգրավվում քն- նարկմանը և վարժություննե- րի կատարմանը	• Կարող է ներառել մի- այն փոքր խումբ • Պահան- ջում է հմուտ և փորձառու դասընթացա- վար/ուղղոր- դող
-------------------------	--	---	---

Մեծահասակ լսարան գրավելու մոտեցումները

Շատ կարևոր է, որպեսզի դուք ունենաք առցանց դասախոսու-
թյուն պատրաստելու ճիշտ հմտություններ, քանի որ ձեզ անհրա-
ժեշտ է գրավել մեծահասակ լսարանի ուշադրությունը: PowerPoint-ի
միջոցով ներկայացումը պետք է շատ ավելի կառուցվածքային լի-
նի, որպեսզի դիտողները կարողանան դրա միջոցով կողմնորոշվել
թեմաների և սլայդների միջև: Բացի դրանից՝ կարևոր է նաև ներկա-
յացնողի (դասընթացավարի) դերակատարությունը, որը հաճախ
թերագնահատվում է: Հումորը, տոնայնությունը, ժեստերը, արտա-
սանությունը խիստ կարևոր գործոններ են: Հաշվի առեք, որ առ-
ցանց դասախոսություն լսելիս այն դիտողների ուշադրությունը
մնում է կենտրոնացած ոչ ավելի, քան 10-15 րոպե:

Ներկայացնողի և դիտողների միջև փոխազդեցությունը կօգնի
կենդանի պահել ձեր լսարանը: Ներկայացման համար նախատես-
ված համակարգչային ծրագրերը տարբեր գործիքներ են նախա-
տեսում լսարանի հետ փոխազդեցության մեջ մտնելու համար:

Հետևաբար, շատ ցանկալի է, որ ձեր առցանց դասախոսությունը մշակվի ինտերակտիվ տարրերի համադրմամբ, օրինակ՝ հարցեր, (առցանց) հարցումներ ներկայացման և քննարկումներ (կենդանի) դասախոսության ընթացքում: Թեև «խոսող գլուխը» տեսանյութի հարաբերականորեն պասիվ օգտագործման ձև է, լավ նախագծված լինելու և/կամ լավ մատուցման դեպքում «վիրտուալ պրոֆեսորը» կարող է զարմանալիորեն գրավիչ լինել: Եթե ցանկանում եք ավելին իմանալ գրավիչ և արդյունավետ առցանց դասախոսություն մշակելու մասին, համացանցում կգտնեք դրա հետ կապված բազմաթիվ խորհուրդներ:

- Ակտիվ ուսուցումը «սովորողին» մոտեցնում է իրական կյանքին և օգնում է ձեռք բերել հմտությունների և փոխել մոտեցումները՝ գուտ գիտելիքներ փոխանցելու փոխարեն:

- Գոյություն ունի անհատականացված ուսուցման կամ ուսանողակենտրոն մոտեցման նկատմամբ մեծացող հետաքրքրություն:

Ահա թե ինչու խիստ կարևոր է ուսումնական ծրագիր մշակելիս գնահատել կարիքները, ճանաչել լսարանը և բացահայտել հնարավոր մարտահրավերները՝ ուսուցման համապատասխան տեխնիկաներ ընտրելու համար:


Կրթական ոլորտի մասնագետներն այժմ հասկանում են այն երկու հիմնական կետերը, որոնք անհրաժեշտ է մտապահել ուսուցման ընթացքում.

- Ավելի արդյունավետ սովորելուն ուղղված մոտեցումների վերաբերյալ ընդհանուր սկզբունքներ:

- Մարդիկ տարբեր են. անհատները սովորում են տարբեր

ձևերով և ռիթմով:

Առաջին կետն ավելի դյուրին է ներկայացնել գրաֆիկական պատկերով՝



Երկրորդ կետը, որ մեծահասակներն *խկապես* սովորում են տարբեր ձևերով, առավել մեծ դժվարություն է ներկայացնում դասընթացը մշակողների համար: Մեծահասակներն ունեն ուսման տարբեր ոճեր: Գոյություն ունեն ուսման երեք ոճեր՝ տեսողական, լսողական և կինեսթետիկ: Տեսողական ոճով սովորողներին կարևոր է տրամադրել նկարներ, աղյուսակներ և այլ պատկերներ: Լսողական ոճով սովորողները սովորում են քննարկումների ձևով՝

խոսելու և լսելու միջոցով: Կինեսթետիկ ոճի պարագայում անհատը սովորում է գործողություն կատարելով, և նրա համար օգտակար են դերախաղերն ու քանավեճերը:

Մարդիկ մեծամասամբ նախընտրում են այս ոճերից որևէ մեկը, շատերն արձագանքում են նաև այս ոճերի համադրությանը: Դեռ ավելին, մեծահասակներին վերապատրաստելն ավելի դյուրին է, քան երեխաներին ուսուցանելը՝ անկախ երեխաների նախընտրած ուսման ոճից: Մեծահասակների կրթության (անդրագոգիկա) ոլորտում ուսումնասիրությունների համաձայն՝ մեծահասակները այլ կերպ են սովորում, քան երեխաները: Անդրագոգիկայի հիմնադիր Մալքոլմ Նոուելսը (Malcolm Knowles) սահմանել է մեծահասակների ուսուցման վեց սկզբունք՝

- Մեծահասակներն ունեն սովորելու ներքին մոտիվացիա և ինքնուղղորդվող են:
- Ուսման գործընթացում մեծահասակները հիմնվում են ունեցած կյանքի փորձի և գիտելիքների վրա:
- Մեծահասակները նպատակասլաց են:
- Մեծահասակները կարևորում են վերաբերելի նյութի մատուցումը:
- Մեծահասակները գործնական են, հիմնվում են իրենց աշխատանքային փորձի վրա:
- Մեծահասակները պահանջում են հարգալից վերաբերմունք²:

² Knowles M. (1984) *Andragogy in Action* (San Francisco: Jossey-Bass)

Բացի դրանից՝ սովորողների սեփական փորձառության վրա հիմնվելը, ինչպես նաև վերապատրաստման արդիականության և գործնականում կիրառելիության երաշխավորումը կապահովեն ուսուցման հաջողությունը:

Ուսումնական մոտիվացիայի հիմնախնդիրը մեծահասակների պարագայում

Գաղտնիք չէ, որ սովորողների *մոտիվացիան* ուսուցման արդյունավետության կարևորագույն տարրերից է: Նույնը կարելի է ասել մեծահասակների մասով: Գոյություն չունի ուսումնական մոտիվացիայի մեկ համընդհանուր տեսություն, և ուսուցման տարբեր իրավիճակներում կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ: Մեծահասակների համար հեռաուսուցման դասընթացներ մշակելիս այդ մոտեցումներից մի քանիսն առանձնահատուկ կարևորություն են ստանում:

Ինքնուրույն կողմնորոշվելու մոտեցումը

Այս մոտեցման հիմքում ընկած է «ինքնուրույն սովորելու մոտիվացիա» գաղափարը: **Սովորողը պետք է ունենա ուսման տեմպն ընտրելու ազատություն:** Դա հակասում է ուսման այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են վերջնաժամկետները, ուսուցման գործընթացի ամբողջական վերահսկողությունը և այլն: (Հետաքրքիր է ՄԹ-ի Բաց համալսարանի փորձը, որը ցույց է տալիս, որ առաջադրանքների ներկայացման հարցում ազատ ժամկետացանկ ունեցող դասընթացներն ունեն ուսանողների ուսումնական գործընթացից դուրս չմնալու առավելագույն միտում): Առցանց վերապատրաստումը մեծահասակներին կողմնորոշվելու հնարավոր-

րություն է ընձեռում ինքնուսուցման ռեսուրսների, ինչպես նաև որոշ չափով հեռուսուցման դասընթացների ընտրության մասով:

Իմացաբանական ինքնության մոտեցումը

Այստեղ նպատակն այն է, որ ուսուցման ողջ ընթացքում սովորողը պետք է կարողանա հաստատել այն միտքը, որ «ուսուցման այս տեսակը հենց ինձ համար է»: Այլ կերպ ասած՝ մեծահասակ սովորողների սովորելու մոտիվացիան հասնում է առավելագույնի, երբ նրանք տեսնում են, որ ճիշտ դասընթացի են մասնակցում բովանդակության, մակարդակի և արդյունքների առումով:

Ինքնընկալվող կարողությունների մոտեցումը

Հնարավոր է, որ մեծահասակները հաճախ չունենան իրենց կարողությունների իրատեսական ընկալում, ինչը կարող է խոչընդոտել իրենց հաջող ուսմանը, ուստի այս մոտեցումը մատնանշում է, որ կարևոր է օգնել մեծահասակ ուսանողներին մշակել իրենց կարողությունների ռացիոնալ ընկալում՝ նրանց ուսումնական մոտիվացիան խրախուսելու նպատակով:

Դրական հոգեբանություն՝ «Ուժեղ կողմերի» մոտեցում

Այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչն է մարդկանց գոհացում: Սովորողին աջակցելու տեսանկյունից «Ուժեղ կողմերի» մոտեցումը ձևավորվել է դրական հոգեբանության արդյունքներից և մասամբ հիմնված է Միացյալ Նահանգներում Անդերսոնի և Քլիֆթոնի հետազոտությունների վրա: Դրա ուշադրության կենտրոնում է սովորողի մոտիվացիայի խթանումը՝ շեշտելով ինքնագնահատման կարևորությունը՝ որպես ուսումնական առաջադիմության կենսական գործոն: Պրոակտիվ մոտիվացիոն աջակցությունը պետք է ներառի դրականի շեշտադրումը, առկա միջոցների և կարողու-

թյունների վրա կենտրոնացումը, նախորդ ուսումնական հաջողությունների և բարձր գնահատականների արձանագրումը և ներկայացումը, նպատակների և մոտիվացիայի սահմանումը ու ավելի շատ ջանքերի, ոչ թե ձեռքբերումների ճանաչման և գնահատման վրա կենտրոնացումը (և միայն այս ամենից հետո՝ անորոշությունների, վախերի և հմտությունների պակասի մասին խոսելը):

THE USE OF VISUAL MATERIALS IN TEACHING. ACTUAL APPROACHES TO MOTIVATING ADULTS' LEARNING

Artashes Khurshudyan

*PhD, Director, Distance learning laboratory,
Faculty of Sociology, Yerevan State University*

The article reflects of some modern approaches to integration of visualization as well as visual methods of teaching in adults' education methodology. It compares some theories on adults' learning with focus on supporting tools and methods which would encourage adults.

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ՔՐԻՍՏԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

*Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի «DRAA»
գլխահեղափոխական խմբի ղեկավար,
տեխ. գ.ք.*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոցիալ-տնտեսական պլանավորումը և կառավարումը, արտադրությունը և տրանսպորտը, նոր տեխնոլոգիաները, բանկերը և ֆոնդային բորսաները, լրատվական և հրատարակչական կենտրոնները, պաշտպանության ու անվտանգության համակարգերը, առողջապահությունը, կրթական համակարգը, գրասենյակները, որտեղ մշակվում են գիտական և գործարարական տվյալներ և վերջապես համացանցը ինքնին - այս ամենը կապված է արագընթաց զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների ու համակարգերի հետ:

Տեխնոլոգիա հեն հասարակարգի զարգացումը աշխարհը դարձնում է առավել թափանցիկ, ինֆորմացիայի անցումը մի տարրից մյուսին դառնում է ավելի արագ և հուսալի: Աշխարհ, որտեղ սիլիկոնային չիպերը կարող են խոսել, լսել և շփվել մարդկանց հետ, համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն հաշվարկներ կատարել, այլ նաև զգալ և գործել: Դա այնքան էլ հեռու ապագայի նկարագիր չէ:

Նախորդ մի քանի տարիների ընթացքում գիտատեխնիկական առաջընթացի տեմպը սկսեց կախված լինել տեխնոլոգիաներից:

Նանոտեխնոլոգիաները կարող են հիմնովին փոխել մեր օրյա մեքոդները, որոնք օգտագործվում են միկրոէլեկտրոնիկայում, օպտոէլեկտրոնիկայում և բժշկական արդյունաբերության մեջ: Ահա թե ինչու նանոտեխնոլոգիաներն ունեն աճի հսկայական ներուժ: Նանոտեխնոլոգիաներով կարող են ստեղծվել այնպիսի արտադրանքներ, որոնք հիմնովին կվերափոխեն, կհեղափոխեն տնտեսական փոխհարաբերությունները: Ահա թե ինչու ամեն անհատ և կազմակերպություն, ինչպես նաև բոլոր պետական մարմինները պետք է ներգրավվեն այս գործընթացներում՝ նպատակ ունենալով ապահովել Հայաստանի անվտանգությունը ու մրցունակությունը:

1. ԲԱՑ ՀԵՌԱՀԱՐ ԱՌՑԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԸ

Տեխնոլոգիահեն արդյունաբերությունը աշխարհում ամենահեռանկարային և ամենաարագ զարգացողներից մեկն է: Բնական է, որ զարգացման գործընթացին զուգահեռ՝ մեծանում են տարբեր ոլորտների մասնագետների թվային գրազիտության նկատմամբ պահանջները: Բացի դրանից՝ մինչլորտային նոր ճյուղերի ի հայտ գալը անհրաժեշտություն է ստեղծում նոր մասնագիտությունների: Հայաստանի տեխնոլոգիական շուկայում հայկական սփյուռքի գործոնը շատ արդիական է: Ներդրումների մեծ մասը գալիս է ԱՄՆ-ից և Եվրոպայից՝ երկրներ, որտեղ Հայաստանն ունի ազդեցիկ սփյուռք: Հայաստանում ստեղծվող տեխնոլոգիական արտադրանքի և ծառայությունների մեծամասնությունն արտահանվում է, այդ պատճառով վերոհիշյալ երկրներում տվյալ ապրանքների պահանջարկը ուղղակիորեն ազդում է Հայաստանի տեխնոլոգիական

շուկայի վրա: Այդ պատճառով արդիական են նոր մասնագիտությունների զարգացումը և եղած մասնագետների վերապատրաստումը:

Մինչ գիտելիքների արդիականացման գործընթացի մեկնարկը հարկ է ընտրել առավել նպատակային ցանցային ուսուցման մոդելը: Առկա հեռահար ուսուցման ցանցերը հիմնվում են հետևյալ մոդելների վրա.

Առաջին մոդել՝ էքստենճատ տեսակի կրթություն՝ կողմնորոշված դպրոցական և համալսարանական պահանջներին ու նախատեսված հաճախող ուսանողների համար, որոնք որոշ պատճառներով չեն կարողանում հաճախել առկա ուսումնական հաստատություններ:

Երկրորդ մոդել՝ բաց համալսարանի հիմքով կրթություն: Կրթական ամբողջական համակարգ է ուսանողների համար, որոնք սովորում են ոչ միայն առկա, այլ նաև հեռակա կամ հեռահար, այսինքն՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների հիմքի վրա, ներառյալ հեռահաղորդակցման, լրացուցիչ և ընդլայնված իրականության տեխնոլոգիաները: Նման ծրագրերը օգտագործվում են նաև տարատեսակ կրթական արտոնագրված վկայականների ստացման համար:

Երրորդ մոդել՝ կրթություն՝ հիմնված մի քանի ուսումնական հաստատությունների համագործակցության վրա: Նրանք նախատեսում են հեռահար ուսուցման միասնական ծրագրերի համատեղ պատրաստում տարբեր ուսումնական հաստատությունների առաջատար առարկաների համար: Հեռահար ուսուցման ծրագրերի պատրաստման նման համագործակցությունը թույլ է տալիս դրանք

դարձնել ավելի որակյալ և ֆինանսապես արդյունավետ: Ծրագրի երկարաժամկետ նպանակը՝ հնարավորություն տալ յուրաքանչյուր անհատի առանց լքելու իր երկրի սահմանները ու անգամ բնակավայրը ստանալու մրցունակ գիտելիքներ ու հմտություններ:

Չորրորդ մոդելը ինքնավար կրթական հաստատություններն են, որոնք հատուկ ստեղծվել են բաց հեռահար ուսուցում իրականացնելու նպատակով, որոնց ուսանողները կարող են ստանալ կրթություն տարբեր ուղղություններով: Նրանք մասնագիտանում են մուլտիմեդիայի կուրսեր ստեղծելու մեջ: Կրթությունը ամբողջությամբ ֆինանսավորվում է կազմակերպությունների և ընկերությունների կողմից, որոնք աշխատում են ունկնդիրների հետ:

Համաձայն www.quora.com և www.knowledgelover.com կայքերի՝ համատարած բաց հեռահար առցանց կրթական հարթակների MOOC (Massive Open Online Course) ցանկի առաջին տասնյակների համադրումից ստացվում է հետևյալ ցանկը՝

1. Edx,
2. Coursera,
3. NovoEd,
4. Udacity,
5. Khan Academy,
6. FutureLearn,
7. OpenUpEd,
8. Iversity,
9. Open2Study,
10. Canvas,
11. 10 gen Education,

12. Udemu,
13. Harvard open courses,
14. Mit open Courseware,
15. Adame.me:

Հարվարդի համալսարանը և Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանը հայտարարել են հեռահար ուսուցման ոլորտում իրենց համագործակցության մասին: Նոր նախագիծը ստացել է Edx անվանումը:

Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ամենահայտնի համալսարանները միավորել են իրենց ուժերը և ստեղծել իրենց **Coursera** նախագիծը, որը գրավում է առաջատար դիրքեր կրթական առցանց նախագծերի շարքում, քանի որ առաջարկում է 200 դասընթաց ավելի քան 1,2 միլիոն ուսանողական լսարանով: Ի տարբերություն Udacity-ի՝ Coursera-ն աշխատում է համալսարանների հետ, այլ ոչ թե անմիջապես դասախոսների հետ, ինչպես նաև առաջարկում է կուրսեր 18 տարբեր ուղղություններով: Coursera-ն աշխատում է 33 համալսարանների հետ 8 երկրներում, որտեղ, ԱՄՆ-ից բացի, մասնակցում են նաև Ավստրալիայի, Կանադայի, Հանկոնգի, Հնդկաստանի, Իսրայելի և Մեծ Բրիտանիայի համալսարաններ:

Ստենֆորդի պրոֆեսորը մարտահրավեր նետեց ավանդական դասական համալսարաններին՝ որակելով նրանց ժամանակատար, ոչ արդյունավետ և քանկ: **Udacity**-ն մասնավոր կրթական կազմակերպություն է, որը հիմնվել է Մեքսատիան Թրանի, Դավիթ Ստավենի և Մայկ Սոկոլսկիի կողմից: Այս հսկայական նախագծի առաջին կուրսում մասնակցություն են ունեցել 160.000 ուսանողներ 190 երկրից: Այսօր Udacity-ն առաջարկում է 14 դասընթացներ, բոլորն

անվճար են տրամադրվում: Ծրագրի ավարտից հետո ուսանողները իրենց ցանկությամբ կարող են ստանալ սերտիֆիկատներ, որի գինը մոտավոր 50-100 դոլար է կազմում: Ինչպես նաև կան կուրսեր, որի ավարտից հետո ցանկացողները կարող են հանձնել քննություններ հրավիրված մասնագետների ներկայությամբ, որի արժեքը կազմում է 150 դոլար:

Khan Academy-ն ամենատարածված և ամենամեծ լսարան ունեցող հարթակներից մեկն է ամբողջ աշխարհում: Նրա նպատակն է հասանելի լինել աշխարհի բոլոր անկյուններում: Մինչ օրս հանդես է եկել շուրջ 400 մլն (!) դասընթացով, և մասնակիցները լուծել են ավելի քան 2,5 մլրդ վարժություն¹: Ինչպես նաև հարթակն ունի 500.000 գրանցված ուսուցիչ տարբեր երկրներից: Տեսանյութեր կան 28 լեզուներով, այդ թվում՝ հայերեն: Հայերեն տեսանյութերի պատրաստման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար հայկական կայանն ունի երկու կոորդինատոր՝ Ամերիկայում և Հայաստանում²:

2. ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ԱՌՅԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴԵԼ

Էլեկտրոնային ուսուցումը կարող է լինել շատ օգտակար ուսուցման տարբեր գործունեությունների համար տարբեր ուսուցման միջավայրերում: Ինչևէ, տարբեր դասավանդման և ուսուցման

¹ Տե՛ս Балашова Ю. В. Особенности личностного развития студентов при дневном и дистанционном обучении // Среднее профессиональное образование, 2009, N 6, էջ 74-75:

² Տե՛ս Боброва И. И. Методика использования электронных учебно-методических комплексов как способ перехода к дистанционному обучению // Информатика и образование, 2009, N 11, էջ 124-125:

օրինակներ ապահովելու համար էլ-ուսուցումը պետք է գործ ունենա ավելի, քան պարզապես առցանց դասերի ընթերցումն է: Հետևաբար բովանդակությունը, ինչպես նաև հաղորդակցությունը և համագործակցությունը պետք է ապահովված լինեն բարձր անձնավորված վարվելակերպով էլ-ուսուցման համակարգերի կողմից:


Անձնավորված և ադապտացված համակարգերը կարևոր հարցեր են մի քանի հետազոտական բնագավառներում, ինչպես նաև առևտրային ապրանքների նախագծման և արդիականացման համար: Երկու արտահայտությունների հրատապությունը կարող է բացատրվել որպես ներքին ազդակի հետևանք՝ տրված համաշխարհային ցանցի (www) լայնածավալ տարածման միջոցով: Այսպիսի համակարգերի գրեթե բոլոր օգտվողները տեղյակ են լավ մասնագիտացված (հարմարեցված) տեղեկատվության քանակության աճին, նրանք կարող են դիմել հատուկ կարիքների համար: Ավելին, նրանք նաև տեղյակ են այն փաստին, որ շատ դեպքերում նրանք պատրաստ են վճարել կամ վտանգել անհատական տվյալների փոխանցման հետևանքները այդ ծառայությունները ապահովելու համար:

Այս դիտողությունները հաստատելու համար նշենք, որ համաձայն³ հետազոտությունների՝ նրանցից շատերը պատրաստ են այդպես վարվել: Հատկապես անձնավորված և ադապտացված համակարգերի բարձր արժեքը կարող է որոշվել տարբեր կիրառության բնագավառներում ինչպիսիք են էլեկտրոնային կոմերցիան և

³ *ChoiceStream*: “ChoiceStream Personalization Survey”, Consumer Trends and Perceptions, 2004, URL <http://www.choicestream.com>, last visit: 2006-04-09

աղապատացված էլ-ուսուցումը⁴: Այսօրվա կյանքի որոշ իրավիճակ-
ներում իրոք այսպիսի համակարգերի անհրաժեշտություն կա:

Հետևյալ Անձնավորված մոդելը (տե՛ս պատկեր 1-ում) տրված
է, որը նկարագրված է ստորև:



Պատկեր 1. Անձնավորված մոդելը⁵

Անձնավորված մոդելը հիմնականում սահմանում է փոխադրե-
ցությունը իր բաղադրիչների միջև:

«Անձնավորումը առանձնահատուկ օգտվողի նկատմամբ
աղապատացիա է» այսինքն՝ հիմնական խթանիչները կրճատվում են
և անձնավորված մոդելում գծագրվում են անձերով: Որպեսզի ընդ-
գրկվի ընդհանուր աղապատացիայի լրացուցիչ պահանջները սահ-
մանված է լրացուցիչ Աղապատացման Նպատակներ (ԱՆ (AT)):
Այսպիսով՝ ԱՆ-ը հնարավոր է դարձնում աղապատացիան դեպի

⁴ Hof, R. et al. “Now it's YOUR WEB”; Business Week, (October) 1998, 68-75; Kobsa, A., “Generic User Modeling”; User Modeling and User-Adapted Interaction, Kluwer Academic Publishers, the Netherlands, 2001, (11) 49-63; Cooperstein, D., et al. “Making Net Shoppers Loyal”; Forrester Research, Cambridge, MA, USA, 1999.

⁵ Garca-Barrios, V. M., “Personalization versus Adaptation? A User-centred Model Approach and its Application”; In Proceedings of I-KNOW' 05 Graz, Austria, June 29-July 1, 2005.

միջավայրային էությունները, որը նույնպես փոխազդում է համակարգի հետ, բայց «պարզապես անձնական» չեն (այսինքն՝ առանձնահատուկ օգտվողի չեն պատկանում): Ավելին, փոխազդեցության շերտեր խմբի (զգայական տարրեր և արտահայտության տեղեր) հիմնական բաղադրիչները անձնավորված մոդելում ներկայացված են փոխազդեցության ինտերֆեյսերի (ID) միջոցով, որը իր հերթին բաժանվում է մուտքի (IN) և ելքի (OUT) ինտերֆեյսերի: Որպեսզի օգտվողների համար աղապտացիան նկատելի դառնա, նրանց տեղեր (ավելի հստակ՝ սարք կամ հարմարություններ) են հարկավոր արտահայտվելու համար: Այդպիսով աղապտացիայի ազդեցությունը, հաջողությունը կարող են չափվել այսպես կոչված արտահայտության տեղերով, օրինակ՝ դիսփլեյի (մոնիտորի) էկրան, բարձրախոսներ կամ որևէ այլ արտաքին սարք:

Ընդհանուր առմամբ և շատ դեպքերում՝ համակարգը չի կարող աղապտացվել, եթե այն տեղյակ չէ իր արտաքին աշխարհից (միջավայրից (**Environment**)): Այսպիսով՝ անձնավորված մոդելում միջավայրի մասին հարկավոր է ներքին գիտելիք (մոդելավորման բաղադրիչները)՝ ներկայացված մոդելավորող սարքի (ME) միջոցով: Մոդելավորող սարքը բաժանված է օգտվողի մոդելի (UM) և այլ մոդելների (xM), որպեսզի համապատասխանաբար անձնավորվի կամ աղապտացվի: Այստեղ կարևոր է նշել, որ արտաքին աշխարհի մասին գիտելիքը չպետք է սկիզբ առնի միայն մուտքի ինտերֆեյսից, այլ նաև այն պետք է ձևավորվի այլ տեղեկատվական աղբյուրների հետ փոխազդեցության միջոցով (այս փաստը պարզաբանելու համար քննարկենք մի համակարգ, որը կառավարում է ներքին օգտվողի մոդելը, օգտվողի տվյալները՝ ձեռք բերելով ար-

տաքին որոնման սարքի միջոցով կամ արտաքին օգտվողի մոդելավորման սերվերի (shell) հետ փոխազդեցության միջոցով), այսինքն՝ լրացուցիչ Կոլեկտորի (**Collector (C)**) սահմանում է անհրաժեշտ:


Աղապատորները բաղադրիչներ են, որոնք պատասխանատու են աղապտացման գործընթացի վերահսկման և վարման համար: Այս թեզի համատեքստում ես շարունակում եմ օգտագործել աղապտորի և աղապտերի միջև նույն տարբերակումը:

Աղապտորը նկարագրում է բաղադրիչը, որը կարող է աղապտացնել ինչ-որ բան, իսկ աղապտերը էություն է, որը օգտագործվում է աղապտացման ենթակա առարկան փոխելու համար: Այսպիսով՝ աղապտորը կարող է գեներացնել կամ ընտրել աղապտեր, որպեսզի անձնավորված մոդելում փոփոխի աղապտացման ենթակա առարկան, ընդհանուր աղապտորը (մաս հայտնի է որպես «աղապտաված համակարգ») սահմանված է աղապտացված և անձնավորված սարքի (A&PE) միջոցով: Ավելին, աղապտացիան մեծ մասամբ սահմանափակված է հատուկ պայմաններով և պահանջներով, որոնք համապատասխանում են աղապտացման պարամետրեր խմբին: Այսպիսով՝ աղապտացման համատեքստը, կառուցները, սահմանափակումները, նպատակները և այլն անձնավորված մոդելում սահմանվում են աղապտացման կոնֆիգուրացիայի (Adaptation Configuration (AC)) միջոցով:

Աղապտացվելիությունը և աղապտացված տարողությունը անձնավորված մոդելում սահմանվում են էությունների շտեմարանով (ER), որտեղ ներկայացված են բոլոր աղապտացման ենթակա էությունները: Աղապտացված և անձնավորված սարքը կարող է վերցնել աղապտացման կամ անձնավորման ենթակա էությունները

(**AE or PE**) էությունների շտեմարանից և առաջացնել ադապտացված և անձնավորված էություններ (**AE* or PE***), որոնք մեծ մասամբ փոխանցվում և արտահայտվում են էլքի ինտերֆեյսում: Նաև քննարկվել է մասնավոր դեպք, որի համար ադապտացման և անձնավորման դասընթացներ (**AI or PI**) են գեներացվում, որպեսզի գործեն փոփոխություններ հենց էլքի ինտերֆեյսում:

Այս անձնավորված մոդելի հիմքով իմ կողմից փորձ է արվել փոփոխել անձնավորված մոդելը՝ հիմք ընդունելով ադապտացված էլ-ուսուցման համակարգի ընդհանուր կառուցվածքի համար հիմնական պահանջները: Փոփոխված մոդելը պատկերված է պատկեր 2-ում:



Պատկեր 2. Անձնավորված մոդելը

Անձնավորված մոդելի կիրառելիությունը և անձնավորման ու ադապտացման տարբերությունը ավելի լավ պարզաբանելու նպատակով դիտարկենք հետևյալ օրինակը՝ համակարգը կարող է

աղապատացնել օգտվողի էկրանի պայծառությունը (օրինակ՝ համաձայն միջավայրի լուսավորության դրդապատճառի), բայց կարող է լրացուցիչ անձնավորել էկրանի վրա ստացված բովանդակության դասավորության գույները (օրինակ՝ այն պատճառով, որ օգտվողը տառապում է դալտոնիզմով): Այս դեպքը կարող է հիմնավորվել միայն այն դեպքում, եթե էկրանի պայծառությունը չի մեկնաբանվել որպես օգտվողի մոդելի դինամիկ տարր: Ինչևէ, ենթադրվում է, որ այս աղապատացիան տեղի է ունենում սենյակի լուսավորության նկատմամբ և ոչ թե առանձնահատուկ օգտվողի նկատմամբ, քանի որ հենց նույն աղապատացիան տեղի է ունենալու ցանկացած այլ անձի համար, ով կօգտվի նույն էկրանից: Հետևաբար երբ դիմում ենք անձնավորմանը, միևնույն ժամանակ դիմում ենք հատուկ անվանական օգտվողի, ում համար համակարգը օգտագործում է անհատական օգտվողի մոդել: Անձնավորված մոդելում երկու գործընթացները համապատասխանաբար տեղի են ունենում հետևյալ կերպ՝ {աղապատացման նպատակներ → մուտքի ինտերֆեյս → այլ մոդելներ → աղապատացված և անձնավորված սարք → աղապատացման դասընթաց → ելքի ինտերֆեյս} և {անձեր → մուտքի ինտերֆեյս → օգտվողի մոդել → աղապատացված և անձնավորված սարք → անձնավորված էություն → ելքի ինտերֆեյս}:

Անձնավորումը աղապատացիա է անվանական օգտվողի նկատմամբ, ում համար ներքին և անհատական մոդել է հարկավոր, այսինքն՝ աղապատորը (աղապատացված բաղադրիչը) պետք է փոփոխի ինչ-որ հայտնի աղապատացման ենթակա էություն և պետք է փոխազդի օգտվողի կամ իր վերացական ներկայացման (օգտվողի մոդելի) հետ, որպեսզի գեներացնի ամենահարմար լուծումը

օգտվողի պահանջը և փոխազդեցության նպատակը բավարարելու համար⁶: Ես ցանկանում եմ այս սահմանմանը ավելացնել հետևյալը, որ ամենահարմար լուծումը գեներացնելու համար օգտվողի մոդելը պետք է պարունակի տեղեկատվություն օգտվողի նախապատվությունների, առանձնահատկությունների մասին և օգտվողի մասին այլ տեղեկատվություն:

3. ԱՌՅԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՀԱՍԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱՐԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ամենապահանջված և բարձր վարձատրվող մասնագիտությունը ողջ աշխարհում տվյալների վերլուծաբանի մասնագիտությունն է, որը հիմնված է մաթեմատիկական վիճակագրության, հավանականության տեսության, արհեստական բանականության, տվյալների և գիտելիքների հենքերի կառավարման, ծրագրավորման ոլորտների գիտելիքների ու հմտությունների վրա: Ի՞նչ խնդիրներ են սպասում երիտասարդ մասնագետին: Դիտարկենք, թե ինչպիսի հնարավորություններ են ընձեռվում տվյալների վերլուծաբանի գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման կամ արդիականացման համար, և որոնք են խոչընդոտները:

Հնարավորություններ՝

1. հասանելի են առցանց դասընթացներ անգլերեն՝ coursera [10], edX [11], udacity [12], ռուսերեն՝ coursera, openedu [13], yandex

⁶ Garca-Barrios, V. M., “Personalization versus Adaptation? A User-centred Model Approach and its Application”; In Proceedings of I-KNOW’ 05 Graz, Austria, June 29-July 1, 2005.

[14] և մի շարք այլ լեզուներով տարբեր հենքային գիտելիքներ ունեցողների համար,

2. աշխատանքային գործիքների /R, SQL, Python, Hadoop, SAS, Java, Matlab/ միջավայրերը հիմնականում անգլերեն են,

3. ոլորտի առաջատար մասնագետների կողմից Հայաստանում ձևավորված ցանցը ապահովում է լայնածավալ խորհրդատվություն /YerevaNN,.../:

Բարդություններ՝

1. Բացակայում են բաց թվային տվյալները, միևնույն ժամանակ անգամ փակ տվյալները կարիք ունեն լրամշակման, մինչ վերլուծաբանը հնարավորություն կունենա կիրառել:

2. Արտերկրում տեղադրված բաց տվյալները ներբեռնել շատ բարդ է գերմեն ծավալների, ինտերնետային կապի որակի ու արժեքի պատճառով:

3. Համակարգված չեն և հիմնականում անհասանելի են լեզվաճանաչողական համակարգերը՝ և՛ տեքստային, և՛ ձայնային:

4. Բացակայում է մինչոլորտային կապը, ինչը բարդացնում է նպատակային խնդիրների հստակ ձևակերպումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեխնոլոգիաների ամեն մի սերունդ փոխարինվում է նորով 3-5 տարին մեկ, և սա վստահաբար ուղղակի ազդեցություն ունի հայկական տեխնոլոգիաների շուկայի վրա: Առկա խնդիրների հաղթահարման հպատակով անհրաժեշտ են հետևյալ նախաձեռնությունները.

1. Մշակել Արհեստական բանականության և ռոբոտների շահագործման կանոնակարգերը, որոնք մաս կմերառեն անկախ զբաղվածության առկայության՝ մեծահասակներին վերապահված կայուն եկամուտի մասին և թվային արտադրանքի ու ծառայությունների հեղինակային իրավունքների վերաբերյալ դրույթները:

2. Թվային Հայաստան և այլ մամուլի մեջ նախաձեռնությունների շրջանակներում ստեղծել Հայաստանի տարածքում բաց տվյալների կուտակման կենտրոններ, որոնց անխափան աշխատանքի ապահովման նպատակով իրականացնել գերիզոր էներգակուտակիչ մարտկոցների տեղադրում:

3. Նախաձեռնել հայերենի համար համընդհանուր հասանելի Spellcheck ծրագրային լուծման մշակումը:

4. Նախաձեռնել հայերենով հաղորդակցվող ձայնային օգնականի ստեղծումը:

5. Մշակել մինչդուրսային արտալսարանային նախագծեր, որոշ նախագծերը խթանելու նպատակով մաս հակաթրոններ:

6. Չնավորել և իրականացնել անցում համակարգչային գրագիտության «ռազմավարությունից դեպի թվային գրագիտության» ռազմավարություն՝ ընդգրկելով ողջ հասարակությունը և տնտեսության բոլոր ճյուղերը:

ADULT KNOWLEDGE ADVANCEMENT ONLINE PLATFORMS

Kristina Sargsyan

PhD, Innovative Solutions & Technologies Center,

Research Team Leader

One of the major challenges of the Modern society is to allow each individual to fulfill their goals in a rapidly changing economy, continuously upgrade their knowledge and skills in line with their capabilities and requirements of the labor market. The Internet enables individuals to gain knowledge everywhere and at any time. It meets one of the most important requirements of the newest education problem - training according to demand or training timely. The purpose of the article is to describe the situation of adult education in Armenia through the use of online tools to identify current issues and to present approaches based on international experience to promote better solutions to problems in short-term and long-term perspectives.

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

ՄԵՃԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՆՆԱ ԱԳԱՄՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ,
արվեստագիտության թեկնածու*

Հայ ժողովուրդը դեռևս հնագույն ժամանակներից ունեցել է երաժշտությամբ զբաղվելու ամուր ավանդույթներ, երբ երաժշտությունն ընկալվում էր որպես անձի գեղագիտական զարգացման հզոր միջոց: Հայ մտածողներից շատերն իրենց ուսումնասիրություններում շեշտում էին երաժշտության դերը մարդու հոգեկան աշխարհի և մտածելակերպի զարգացման գործում՝ կապելով այն քերականության, խոսքի, բնագիտության և այլ արվեստների հետ /սկսած դեռևս Մեսրոպ Մաշտոցից մինչև Նարեկացի և մեր օրերը/:

Ետ նայելով և խոսելով Հայաստանում վերջին տասնամյակների մասին՝ թվում է՝ դեռևս ոչ վաղ անցյալում էին խորհրդային տարիները, երբ գրեթե յուրաքանչյուր ընտանիքում կար գոնե մեկ երեխա, որը հաճախում էր երաժշտական դպրոց և պրոֆեսիոնալ կերպով զբաղվում երաժշտությամբ: Բարձրորակ երաժշտական կրթություն էին առաջարկում երաժշտական ուսումնական հաստատությունները, բազմաթիվ էին արվեստի դպրոցները, երաժշտական խմբակներն ու երգչախմբերը, որոնք գործում էին յուրաքանչյուր հանրակրթական դպրոցում: Խորհրդային Հայաստանում ևս երաժշտական կրթությունը լայն մասսայականության իր առաքե-

լությունը փայլուն էր իրականացնում: Առավել քան ակտուալ էր սովետական ականավոր կոմպոզիտոր, մանկավարժ Դմիտրի Կաբալևսկու այս բանաձևը. «Հանրակրթական դպրոցում մասսայական երաժշտական դաստիարակությունը ոչ այնքան հենց երաժշտության ուսուցումն է, որքան երաժշտության միջոցով սովորողների հոգևոր աշխարհի և առաջին հերթին նրանց բարեկրթության վրա ազդեցություն ունենալն է¹»:

Սակայն Խորհրդային Միության փլուզումից հետո և Արցախյան պատերազմի տարիներին գեղագիտական դաստիարակության խնդիրը մոլեց հետին պլան հասկանալի և օբյեկտիվ պատճառներով: Հասարակությունը դժվարությամբ էր կարողանում լուծել իր առջև ծառացած սոցիալ-կենցաղային, նյութական բարեկեցության հարցերը: Ակտիվացավ միգրացիան, որի հետևանքով մեծաքանակ մասնագետներ, այդ թվում և երաժիշտ-մանկավարժներ լքեցին Հայաստանը:

Աստիճանաբար հետաքրքրությունը երաժշտական կրթության հանդեպ նվազեց, և սա սկսվեց դիտվել որպես լրացուցիչ կրթություն, որն առավելապես կախված է երեխայի դեպքում նրա ընտանիքի, մեծահասակի դեպքում՝ տվյալ անհատի ցանկությունից:

Եվ հարուստ ավանդույթներով հանդերձ՝ ժամանակակից հայ հասարակության մեջ, միգրացե մասնամբողջ աշխարհում երաժշտության դերը դարձել է առավել սպառողական, քան գեղագիտական:

¹ Кабалеvский Д., «Идейные основы музыкального воспитания в Советском Союзе», Музыкальное воспитание в современном мире, Материалы IX конференции Международного общества по музыкальному воспитанию (ИСМЕ), Москва, 1973, стр. 28.

Ինչպես դեռևս XX դարավերջին նկատել էր ուկրաինացի մաթեմատիկոս Գ. Սուվորովը. «Վտանգը նրանում չէ, որ մեքենաները կսկսեն մտածել ինչպես մարդը, այլ նրանում, որ մարդը կարող է սկսել մտածել, ինչպես մեքենա²»:

«Հնարավոր չէ պատկերացնել, որ ապագայի մարդու նշանակությունը կեդրավակվի միայն համակարգիչների հետ առնչությամբ: Այս վտանգի դեմ կարևորագույն հակաթույնը արվեստն է: Ես համարում եմ երաժշտական արվեստն ամենահարմարը լիարժեք մարդ ձևավորելու համար: Ոչ մի ուրիշ արվեստ չի արթնացնում այն աստիճանի ձգտում մեր մեջ՝ ճանաչելու արվեստի այլ տեսակները, որքան երաժշտությունը: Մարդու և մարդկային հասարակության ամենաառաջնային գեղարվեստական դրսևորման միջոցը երաժշտությունն է, երգը³»:

Ցավոք, սակայն, այսօր մարդիկ դիտում են երաժշտությունը՝ որպես ժամանցի, հաճույք ստանալու աղբյուր, քան ըմբռնում են երաժշտության նշանակությունը՝ որպես մարդու գեղագիտական ճաշակի զարգացման և իհարկե ընդհանուր դաստիարակության բաղադրիչ-միջոցներից մեկը:

Այդ պատճառով շատերն առավել հակված են զբաղվելու թեթև ժանրերով, էստրադային պոպուլյար երաժշտությամբ, որոնք սիրողական մակարդակ ունեն և որոշակի ու սահմանափակ գիտելիքներից այն կողմ չեն կարող անցնել, քան հաճախել երաժշտական դպրոց, տիրապետել որևէ գործիքի և այլն:

² Баренбойм Л., Путь к музицированию, «Советский композитор», Ленинград 1973, стр.17.

³ Նույն տեղում, էջ 19:

Պատճառներից մեկն էլ թերևս այն է, որ այսօր մեզանում չեն կատարվում վիճակագրական ուսումնասիրություններ երաժշտությանը զբաղվող անհատների և այլոց շրջանում, և առաջ չեն բերվում այն առավելությունները, որոնք կարող են ունենալ և հաստատապես ունեն այն անհատները, որոնք զբաղվել և զբաղվում են երաժշտությամբ: Չնայած, որ խնդրո վերաբերյալ ժամանակակից աշխարհում բազմաթիվ ուսումնասիրություններ են արվում, և այսօր երաժշտության ազդեցությունը մարդու կյանքի որակի և առողջության վրա առաջնային տեղ է զբաղեցնում մեյրոկենսաբանության, հոգեբանության և, ընդհանրապես, բժշկագիտական միջազգային գիտական ուսումնասիրություններում, ինչպես նաև վաղուց արդեն զարգացել է երաժշտական թերապիայի ճյուղը՝ որպես բազմաթիվ հիվանդությունների բուժման արդյունավետ միջոց, սակայն մեզանում, բնականաբար, արդյունավետ կլինեն գոնե կոնկրետ տեղային և փոքրիկ ուսումնասիրությունների անցկացումը և այդ արդյունքների տարածումը հասարակության մեջ ամենատարբեր միջոցներով: Պետք է սեփական փորձով ներկայացնել մարդկանց երաժշտական դաստիարակության և կրթության կարևորությունը, հատկապես ծնողական համայնքներում, որպեսզի երեխայի երաժշտությամբ զբաղվելը ոչ թե դիտեն միայն նրան զբաղեցնելու, հոբբի ունենալու, այլ դաստիարակելու, երևակայությունը զարգացնելու, կարգ ու կանոնի և ուշադրության կենտրոնացման զարգացման միջոց: «Մեզ համար թերևս բացահայտում չի լինի, եթե ասենք, որ սովորաբար տան մթնոլորտն է ներմուծում երաժշտությունը երեխայի աշխարհ: Դա կարելի է ցուցադրել ինչպես շատ և շատ հանճարեղ կոմպոզիտորների և կատարողների օրինակով, այնպես էլ

մեզանից շատերը դա կարող են փաստել սեփական փորձի օրինակներով⁴»։ Ահա այս պարզ ճշմարտությունն էլ հիմք ընդունելով՝ համարում ենք, որ կարևոր է մեծահասակների երաժշտական կրթությունը, որպեսզի այն հետագայում կարողանան փոխանցել երեխաներին։

Ինչպես ժամանակին նշել է XX դարի մեծանուն հունգարացի կոմպոզիտոր, մանկավարժ, բանահավաք Զոլտան Կոդալը, երբ նրան հարցրել են, թե ե՞րբ պետք է սկսել երեխայի երաժշտական դաստիարակությունը՝ 9 ամիս երեխայի ծննդից առաջ⁵։ Կոդալը պատասխանել է՝ ոչ, 9 ամիս երեխայի մոր ծննդից առաջ⁵։

Զե՞ որ այսօր մենք բողոքում ենք ցածրարժեք երաժշտության գոյությունից, և այդ պատճառով, նախ և առաջ, պետք է փորձենք երաժշտականացնել հասարակությանը, կրկին մասսայականացնել երաժշտական կրթությունը բառիս լավ իմաստով։

Անհրաժեշտ է նաև կոտրել այն կարծրատիպը, որ երաժշտությամբ կարող են զբաղվել միայն լավ երաժշտական ընդունակություններ դրսևորողները, չէ՞ որ երաժշտությունը նույնպես ունի իր գիտությունը, և ունենալով որոշակի գիտելիքներ՝ յուրաքանչյուր անհատ ի վիճակի է զբաղվել երաժշտությամբ։

«Յուրաքանչյուր երեխա ունի երաժշտական ընդունակություններ և պրակտիկորեն «ոչ երաժշտական» մարդիկ ուղղակի գոյություն չունեն։ Ես ենթադրում եմ, որ՝ ա/ նորմալ ընդունակություններ ունեցող անձը տիրապետում է նաև երաժշտական ընդու-

⁴ Бреали Д., Молодежь на концертах, Материалы IX конференции Международного общества по музыкальному воспитанию (ИСМЕ), Москва, 1973, стр. 141.

⁵ Баренбойм Л., Путь к музицированию, «Советский композитор», Ленинград 1973, стр.22.

նակություններին, բ/ երաժշտության հանդեպ հակվածությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, օրինակ՝ ռիթմական կամ հնչյունային ընկալման ոլորտում, երաժշտական հիշողությամբ, երաժշտական արվեստի և կատարողականության ընդունակությամբ, գ/ «ոչ երաժշտական» մարդկանց մեծամասնության մոտ դաստիարակության գործընթացում երաժշտական ընդունակությունները կամ չեն հայտնաբերվել, կամ զարգացվել են ոչ բավարար չափով և այդ կերպով աստիճանաբար կորսվել են⁶»:

Եվ, իսկապես, ինչու՞ ենք կարծում, որ երաժշտությամբ պետք է զբաղվեն միայն ընդունակություններ ունեցողները: Ինչու՞ երեխաներին դպրոց տանելիս մենք չենք հետաքրքրվում, թե արդյո՞ք երեխան ունի մաթեմատիկական կամ լեզվական ընդունակություններ, նույն մոտեցումն էլ պետք է գործի երաժշտության պարագայում: Չէ՞ որ մեր կյանքում մենք օգտագործում ենք մեր մաթեմատիկական գիտելիքները, բայց մաթեմատիկոս չենք:

Սա՝ ընդհանրական ակնարկ մեր իրականության մեջ երաժշտության դերի վերաբերյալ: Հիմա անցնենք այն խնդիրներին, որոնք, բխելով վերը նշված իրավիճակից, առաջանում են արդեն բարձրագույն կրթության շրջանակում:

Արդի ժամանակաշրջանում կրթական համակարգերի փոփոխությունները առաջադրեցին այն մարտահրավերները, որոնց այսօր փորձում են դիմակայել երաժշտական կրթության համակարգում: Հետխորհրդային տարածքում՝ մասնավորապես Հայաստանում, այսօր փորձում են ներդնել արևմտյան կրթական փորձը՝ եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու համար, ինչի ար-

⁶ Նույն տեղում, էջ 20:

դյունքում բարձրագույն կրթական համակարգում դեռևս արդիական լուծումներ պահանջող որոշակի խնդիրներ կան:

2005 թվականին Հայաստանը, միանալով Բոլոնյան գործընթացին, հետևողական կերպով փորձում է իրականացնել իր կրթական ծրագրերի համապատասխանեցման գործընթացը:

Համաեվրոպական բարձրագույն տարածքին ինտեգրվելը էականորեն ընդլայնում է նախկին հորիզոնները՝ թույլ տալով Հայաստանին և հայ ուսանողներին խուսափել մեկուսացումից:

Այս համատեքստում դիտարկելով, մասնավորապես, բարձրագույն երաժշտական կրթության ներկայիս իրավիճակը՝ տեսանելի է, որ ժամանակակից աշխարհում առաջացած մեծահասակների կրթության շրջանակում երաժշտական կրթությունը ևս իր խնդիրներն ու պահանջներն է ներկայացնում:

Մեր օրերում մեծահասակները ևս ձգտում են ստանալ երաժշտական բարձրագույն կրթություն՝ բացառապես հիմնվելով իրենց ցանկության վրա: Հայաստանում այսօր երաժշտական կրթություն ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք՝ անկախ իր ունեցած երաժշտական կրթությունից և փորձից: Չնայած որ նախկինում համալսարանի երաժշտական ֆակուլտետում կամ կոմսերվատորիայում սովորելու համար ուսանողը պետք է ունենար առնվազն երաժշտական դպրոցի կամ քոլեջի կրթություն, այսինքն՝ միջինում նվագագույնը 7 տարվա դպրոցական երաժշտական կրթություն, որին մեծամասամբ գումարվում էր նաև 4 տարվա միջին մասնագիտական, այսինքն՝ քոլեջի կրթություն, կամ երաժշտական տասնամյա դպրոցի լիարժեք ուսումնառություն, այսօր երաժշտական կրթություն ստանալու իրավունք է տրվում յուրա-

քանչյուր անհատի, ով չափահաս տարիքում առաջին անգամ ցանկություն է հայտնում պրոֆեսիոնալ կերպով զբաղվել երաժշտությամբ, ստանալ երաժշտական բարձրագույն կրթություն և երաժիշտ-մանկավարժի կամ կատարողի որակավորում՝ հետագայում հնարավորություն ունենալով նաև աշխատել որպես մանկավարժ։ Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ հատկապես երաժիշտ-մանկավարժի որակավորում ստանալու համար բուհական կրթական ծրագրերում ընդգրկված են և՛ վոկալ-երգչական, և՛ որևէ գործիքին (հիմնականում դաշնամուրին), և՛ նաև խմբավարական հմտություններին տիրապետելու անհրաժեշտությունն ու պահանջները։

Ահա այստեղ է, որ առաջանում են բազմաթիվ հարցեր և խնդիրներ՝ կապված սկսնակ մեծահասակներին երաժշտություն ուսուցանելու արդյունավետ կազմակերպման համար. մասնավորապես պե՞տք է արդյոք ունենալ հատուկ, առանձին մեթոդաբանություն՝ ուղղված մեծահասակների ուսուցմանը, և ինչպիսի՞ն պետք է այն լինի, ինչպիսի՞ նվագագանկ պետք է մշակել կարճ ժամանակում հատկապես գործիքին տիրապետելու բազային հմտություններ ձեռք բերելու համար և այլն։ Խնդիրներն, իհարկե, ավելի են բարդանում հեռակա ուսուցման պարագայում, երբ ուսանողը չունի դասախոսների հետ շփման ամենօրյա հնարավորություն, և աշխատանքի մեծ մասը, այդ թվում՝ քննաշրջանին պատրաստվելը, պետք է կարողանա կատարել ինքնուրույն։

Սակայն, այն մեծահասակները, որոնք դեռ նոր են սկսում զբաղվել երաժշտությամբ և ցանկություն են հայտնում նաև ստանալ պրոֆեսիոնալ կրթություն, նշում են, որ երաժշտության

սկզբնական հմտություններն ու գիտելիքներն իրենց դժվար են տրվում, և իրենց նախնական պատկերացումները չեն համընկնում իրականության հետ: Սա էլ իհարկե ունի իր բացատրությունը. այժմյան հասարակության մեջ ձևավորված է մի թյուր կարծիք, որ երաժշտական կրթությունը առավել դյուրին է, քան, ասենք, այլ գիտություններով զբաղվելը: Իհարկե, սա առաջանում է տեղեկատվության պակասից և սիրողական մակարդակով երաժշտությամբ զբաղվելու հնարավորությունների բացակայությունից. Հայաստանում գործող երաժշտական ընկերությունները, երգչախմբերը, նվագախմբերը նախատեսված են միայն պրոֆեսիոնալ երաժիշտների համար. չկան այլընտրանքային երաժշտական դասընթացներ սկսնակների համար, մասնավոր դպրոցներ առանց տարիքային սահմանափակման, սիրողական նվագախմբեր, ինչի արդյունքում էլ ստեղծվում է այն դատարկ միջավայրը, որտեղ առաջանում են այս խնդիրները: Երաժշտական գիտելիքներ ստանալու համար սկսնակը կամ դիմորդը պետք է դիմի մասնավոր ուսուցչի, իսկ այս պարագայում մեկ ուսուցչի հետ երաժշտական բոլոր առարկաները (տեսություն, տլֆեջո, երաժշտական գրականություն) յուրացնել գրեթե անհնար է:

Եվ ասիա այս նոր իրավիճակում սկսնակ մեծահասակները միանգամից ցանկանում են ստանալ բարձրագույն երաժշտական կրթություն, ինչը ցույց է տալիս, որ նրանց համար արդյունավետ երաժշտական պրոֆեսիոնալ կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր հնարավորություններ և ծրագրեր:

Մինչ պրակտիկ հարցերին անցնելը փորձենք նաև դիտարկել որոշ պատճառներ և այն մոտիվացիան, թե ինչու են մեծահասակ-

ները հասուն տարիքում ցանկություն ունենում զբաղվել երաժշտությամբ, երգել, տիրապետել որևէ գործիքի և այլն:

Ըստ մեր դիտարկումների՝ պատճառները դրա համար նախ և առաջ բխում են՝ ա) մարդկային էությունից, բ) հետխորհրդային երկրներում, ինչպիսին Հայաստանն է, դրանք նաև ժամանակի թելադրանքն են հանդիսանում, ինչի վերաբերյալ արդեն խոսեցինք ուսումնասիրության սկզբում:

Ինչպես նշում էր XX դարասկզբի հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ, ամերիկյան հանրահայտ հոգեբան Արախամ Մալլուն ստեղծագործական էությունն առհասարակ բնորոշ է մարդուն: Նա նկարագրում էր այն՝ որպես մարդային էության անբաժանելի հատկություն:

Մալլուի այս տեսությունը կարող է ելակետային լինել՝ հասկանալու համար, թե ինչն է դրդում մեծահասակներին սկսել զբաղվել երաժշտությամբ, դրա միջոցով ձգտել ինքնադրսևորման: Մասլուն գտնում էր, որ եթե ոչ բոլորը, ապա մարդկանց մեծամասնությունը կարիք ունի իր ներուժի ռեալիզացման, ինչը բնական է և անհրաժեշտ. հետևաբար, յուրաքանչյուր տարիքում անհատը կարող է ձգտել ստեղծագործական ինքնադրսևորման⁷:

Վերադառնալով բուն թեմային՝ նշենք, որ Հայաստանում, և ոչ միայն Հայաստանում, երաժշտական բարձրագույն կրթություն ստանալու համար դպրոցական և ուսումնարանական կրթության պարտադիր չլինելու հանգամանքը այսօր հանգեցրել է նոր մոտեցումների և մեթոդների մշակման պահանջին:

⁷ Hjelte L., Ziegler D., (1992), "Personality Theories: Basic Assumptions, Research, and Applications", (pp. 320-325), 3th ed., Russian edition, 402 pages.

Ինչպես նշվում է ռուսական ժամանակակից գիտական ուսումնասիրություններում. «Արվեստի ոլորտի ուսումնական հաստատություններ ընդունվելու գլխավոր չափանիշներ են համարվում օժտվածությունը, հատուկ ընդունակությունների առկայությունը, արվեստի միջոցով ինքնաարտահայտվելու ձգտումը»⁸:

Նույն հեղինակը, վերլուծելով Արևմտյան փորձը, իր հոդվածում շարունակում է. «Երաժշտական կրթության մեջ առաջնային պրոֆեսիոնալ աստիճանի ու կրթական պրոցեսի շարունակականության բացակայությունն Արևմուտքում հանգեցնում է սովորողների պրոֆեսիոնալ պատրաստվածության տարբեր մակարդակների ինչպես միջին, այնպես էլ բարձր օղակում»⁹: Այս դիտարկումները լիովին համընկնում են մեր իրականության և տիրող իրավիճակի հետ, և, իհարկե, ի հայտ է գալիս մոր ու մախադեպը չունեցող և հիմնավոր մի խնդիր՝ ինչպե՞ս մի քանի տարում՝ բուհական 4+2 /բակալավր+մագիստրատուրա/, պատրաստել պրոֆեսիոնալ երաժիշտ-մանկավարժներ, որոնք հետագայում ի վիճակի կլինեն, կատարողական գործունեությունից բացի, դասավանդել դպրոցներում և բարձրացնել երաժշտական դաստիարակության դերը ժամանակակից հասարակության մեջ:

Տեսանելի է դառնում, որ այս պայմաններում գրեթե անհնար է ունենալ համընդհանուր ծրագիր երաժշտական կրթության վերաբերյալ: Ծագում են այնպիսի հարցեր, ինչպիսին են, օրինակ,

⁸ Мусланова К.И., «Современное музыкальное образование на западе», Человек и образование № 1 (34), Издательство: Институт педагогического образования и образования взрослых РАО (Санкт-Петербург), 2013, стр. 152 (<http://elibrary.ru/item.asp?id=19021253>).

⁹ Նույն տեղում, էջ 153:

արդյո՞ք խնդիրները պետք է թողնել դասախոսների անհատական մոտեցմանը և մեթոդներին յուրաքանչյուր սովորողի համար, թե՞ այնուամենայնիվ որոշակի հաջողություններ գրանցելու համար պետք է սկսնակ մեծահասակների համար մշակել առանձին մեթոդներ և ձեռնարկներ:

Չէ՞ որ, այն ամենը, ինչին կարող է հասնել երաժշտությունը 6 կամ 7 տարեկանում ուսումնասիրել սկսած անհատը, որը մոտ 10 տարի աշխատանքից հետո է ունենում որոշակի արդյունքներ, մարդը, հասուն տարիքում սկսելով, պետք է կարողանա հաղթահարել և կուտակել պրոֆեսիոնալ հիմք առավելագույնը 6 տարվա ընթացքում, հատկապես գործիքին տիրապետելու խնդրում: Այսինքն՝ առաջ է գալիս անընդհատ շարունակական կրթության խնդիր, որին մեծահասակները պետք է հետամուտ լինեն: Իհարկե, հասուն տարիքում հաջողության հասնելուն խոչընդոտում են մաս որոշ հանգամանքներ: Չնայած այն փաստերին, որոնք ցույց են տալիս, որ նույնիսկ հասուն տարիքում անհատը կարող է հասնել լուրջ երաժշտական հաջողությունների, ինչպես, օրինակ, հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը (նշենք, որ նա սկսել է երաժշտությամբ զբաղվել 19 տարեկանում), ակնհայտ է, որ ոչ բոլոր սովորողներն են ի վիճակի կարճ ժամանակահատվածում հաջողություններ գրանցել, հատկապես երբ խոսքը գործիքային կատարողականությանն է վերաբերում:

Գոյություն ունեն մի շարք տարբեր բնույթի պատճառներ, որոնք կարող են դժվարություններ առաջացնել ուսումնական պրոցեսի ընթացքում: Առաջիններից մեկն, իհարկե, այն փաստն է, որ սովորողն արդեն երաժշտությամբ զբաղվելը պետք է սկսել փոքր հա-

սակում, երբ մարդն առավել ընկալունակ է, առավել անմիջական է ընդունում տպավորությունները և առավել վառ երևակայություն է դրսևորում:

Մեծահասակների հետ աշխատելու ընթացքում բախվում ես այնպիսի խնդիրների հետ, որոնք բնորոշ են նաև փոքրահասակ երեխաներին. թերթից նոտային տեքստի ընթերցման բարդություն, ստեղծագործության գեղարվեստական կերպարի բացակայություն, ստեղնաշարի կողմնորոշման բարդություն, մոտորիկայի զարգացում, բազմաձայն լսողության զարգացման բարդություններ և այլն:

Մեծահասակների մոտ խնդիրները կարող են բարդանալ ավելի մեծ հոգեբանական կաշկանդվածությամբ, բարդությամբ, ճնշվածությամբ և այլն: Սա կապված է այն բանի հետ, որ մեծահասակներն արդեն ունեն ձևավորված բնավորություն, կյանքի նկատմամբ սեփական պատկերացում ու փորձ և արդյունքում որևէ բարդության հանդիպելիս հոգեբանորեն առավել խոցելի են դառնում:

Չենք կարող չհամաձայնել այս հոդվածի հեղինակի հետ, որն առավել մանրամասն է անդրադառնում կոնկրետ խնդրին, և նույնպես նշել, որ այս դեպքում շատ կարևոր է գիտակցված աշխատանքը. «Եթե մենք պատրաստվում ենք երաժշտություն սովորեցնել մեծահասակ սկսնակներին, մեր մեթոդը պետք է հիմնված լինի մտածողության զարգացման սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր հմտություն՝ ձեռք բերված ուսումնական գործընթացում, պետք է լինի գիտակցված, այլ ոչ թե ստացվի բազմաթիվ և անիմաստ կրկնողությունների արդյունքում¹⁰»: Իհարկե, այսպիսի

¹⁰ Климай Е.В., «Современные тенденции в музыкальном образовании», Высшее образование в России, Издательство: Московский государственный университет

մոտեցումը լավագույնն է արտահայտում խնդրի էությունը, բայց երաժիշտ-կատարողների համար գաղտնիք չէ, որ գործիքին տիրապետելու համար, այնուամենայնիվ, վարժանքներն անհրաժեշտ են, մասնավորապես այնպիսի հմտությունների տիրապետման համար, ինչպիսին են տեքստը անգիր սովորելը, արագ տեմպերին, արտահայտչական հնարներին տիրապետելը և այլն: Այսինքն՝ բացառել վարժանքները այն դեպքում, երբ ուզում ենք որոշակի հմտություններ ստանալ, հնարավոր չէ:

Շատ կարևոր է վերլուծական աշխատանքը և՛ կատարողական հմտությունների ձևավորման, և՛ տեսական գիտելիքների ամրապնդման գործում: Մեծահասակների մոտ, ըստ մեր հարցման արդյունքում ստացած պատկերի, նշված բոլոր հարցերի պատասխաններում վերլուծական աշխատանքը գրեթե 0% է:

Մեծահասակ կատարողների մեծ մասը նշում է նաև երկարատև վարժանքներ կատարելու համար ժամանակի բացակայության մասին: Վերլուծական աշխատանքի շնորհիվ մեծահասակ սկսնակ կատարողը հնարավորություն ունի ձեռք բերելու պրոֆեսիոնալ մոտեցում դեպի երաժշտական ստեղծագործության կատարումը՝ թեկուզ տեսականորեն տիրապետելով կատարվելիք ստեղծագործության գեղարվեստական պահանջներին:

Առաջնային խնդիր է ժամանակակից մեթոդական ուղեցույցների, ինքնուսույցների և իհարկե առանձին նվագագանկով ժողովածուների մշակումը, որպեսզի կարճ ժամանակում հնարավոր լինի սովորողին տալ պատկերացումներ տարբեր դարաշրջանների,

ոճերի երաժշտության մասին և ծանոթացնել երաժշտության բազային գիտելիքներին, գործիքին տիրապետելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներին, տեսական հիմնավոր գիտելիքներին և այլն: Անհրաժեշտ է մշակել նաև մեթոդական ցուցումներով հագեցած ժողովածուներ, որտեղ, սկսելով պարզ պիեսներից և ստեղծագործություններից, հետևողական կարելի է զարգացնել սովորողի կատարողական հմտությունները մինչև որոշակի միջին մակարդակ, երբ առավել շնորհալի սովորողները կարող են կատարել, ասենք, որոշակի բարդության համերգային ստեղծագործություններ:

Իհարկե, անհրաժեշտություն է առաջանում նաև զուգահեռաբար ուսումնասիրել, քե սովորողների քանի տոկոսն է մնացնում հասնում հաջողության: Առաջանում է հարց. արդյո՞ք հնարավոր է կարճ ժամանակում պլանավորել և ունենալ արդյունքներ:

Այսպիսով, ակնհայտ է, որ ուսուցումը մեծահասակների մոտ չի կարող ընթանալ երեխաների համար նախատեսված ծրագրերով և մեթոդներով և պետք է ունենա իր յուրահատուկ մոտեցումները:

Մեր ուսումնասիրության ընթացքում ակնհայտ դարձավ, որ պետք է ունենալ համակողմանի մոտեցում և իհարկե մեծահասակին, առաջին հերթին, պետք է հետաքրքրել գեղարվեստական և վերլուծական աշխատանքի միջոցով:

Ընդհանրապես, մեծահասակ սկսնակների երաժշտական ուսուցումը պետք է ուղղված լինի դեպի կատարողի ինքնուրույն աշխատանքը: Ծրագրեր մշակելիս և ժողովածուներ կազմելիս պետք է անպայման հաշվի առնել սովորողների մոտ ինքնուրույն աշխատանքի հմտություն ձևավորելու անհրաժեշտությունը:

Ուսումնառությունն ավարտելիս մեծահասակ ուսանողները պետք է ունենան երաժշտական ստեղծագործության մատուցման և կատարման վերաբերյալ ինքնուրույն պատկերացումներ և մեթոդներ:

Հիմնական լուծումը մենք, առաջին հերթին, տեսնում ենք միջազգային փորձի ուսումնասիրման մեջ. հատկապես այս խնդրում կարևոր է Ռուսաստանի փորձը, որտեղ գործում են բազմաթիվ երաժշտական դպրոցներ առանց տարիքային սահմանափակման, ինչպես մասնավոր, այնպես էլ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հովանավորության ներքո¹¹: Ուսումնասիրելով և զուգակցելով այլ երկրների մասնագետների փորձը տեղային պահանջների հետ՝ պետք է կարողանալ համագործակցության եզրեր գտնել և Հայաստանում նույնպես ներդնել ու կիրառել նրանց փորձը:

Ահա այս ուղղություններով է այսօր անհրաժեշտ կատարել գործնական քայլեր երաժշտական կրթության և դաստիարակության դերը բարձրացնելու և երբեմնի վարկանիշը վերադարձնելու համար:

¹¹ Ободова. Ю., «Музыкальная школа для взрослых: О прошлом и настоящем любительского музыкального образования», Южно-российский музыкальный альманах № 1, 2013, стр. 73-76, (<http://elibrary.ru/item.asp?id=20468059>).

ACTUAL ISSUES OF MUSIC EDUCATION FOR ADULTS IN ARMENIA

Anna Adamyanyan

PhD, Associate professor, Armenian State Pedagogical

University after Kh. Abovyan

The present article reveals actual problems of music education in post-soviet Armenia due to new social-political and economical demands. Particularly it refers to the general problems of musical education in modern society and problems that occur in higher musical education for adults. The author observes and analyses numerous issues that arise and offers solutions for them, such as creating new methods of teaching and tutoring. It is also found that it is important to benefit from the international experience in this sphere.

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԱՆՁԱՆՅ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ԱՆՆԱ ԱՍՈՅԱՆ

*Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի
հանրահռչակման բաժնի վարիչ,
ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի հայցորդ*

ՀՀ թանգարանային մշակույթի կարևորագույն խնդիրներից է հասարակության բոլոր անդամների, այդ թվում՝ նաև հատուկ կարիքավոր անձանց համար կրթական միջավայրի ապահովումը: Թանգարանում ինչպե՞ս է իրականացվում կրթական գործընթացը, և ի՞նչ կրթական ծրագրեր են առաջարկվում հատուկ կարիքավոր խմբի այցելուներին: Հոդվածում անդրադարձ է կատարվում այս խնդիրներին:

Քսանմեկերորդ դարի թանգարանը վերաիմաստավորում է հասարակության մեջ ունեցած իր դերակատարությունը, որը սերտորեն կապված է կրթության հետ: Այժմ թանգարանները չեն սահմանափակվում միայն հավաքելու, պահպանելու, ցուցադրելու գործառույթներով, և նրանց համար կարևոր առաքելություն է դարձել կրթական գործունեությունը, որի արդյունքում էլ աստիճանաբար վերածվում են կրթական կենտրոնների, լաբորատորիաների:

Թանգարաններն ունեն անսահմանափակ հնարավորություններ և որպես կրթամշակութային հաստատություններ՝ կարող են բավարարել հասարակության յուրաքանչյուր անդամի ճանաչողական և կրթական պահանջները՝ նպաստելով վերջինիս սոցիալ-մշա-

կութային փորձի կուտակմանը: Պետք է ընդգծել, որ թեև թանգարանը ֆորմալ կրթության հաստատությունների շարքին չի դասվում, սակայն ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում կարող է մրցակցել կրթադաստիարակչական այլ կառույցների հետ: Ընդհանրապես ժամանակակից կրթությունը և մասնավորապես՝ թանգարանային կրթությունը, պահանջում է նոր տիպի մտածողության ձևավորում, ուսուցումը կազմակերպելու նորագույն միջոցներ և ձևեր: Թանգարանն առաջարկում է կրթության այլընտրանքային տարբերակներ, ձևեր, եղանակներ և հարացույցներ: Այլ կերպ ասած՝ հասարակության անընդհատ, շարունակական կրթության համար թանգարանը կարող է ապահովել համապատասխան միջավայր, իրականացնել անգամ աննկատ, առանց պարտադրանքի ուսուցում:

Արդի ժամանակաշրջանում փոխվել է նաև այցելւոյն, որը, բացի ցուցանմուշների դիտումից, էքսկուրսավարին լսելուց, ցանկանում է թանգարանում ինքնադրսևորվել, ստեղծագործել, մասնակցել մրցույթների, խաղերի, թատերականացված ներկայացումների և այլն:

Ակնհայտ է, որ մարդը, հասարակական էակ լինելով և գտնվելով որոշակի սոցիալ-մշակութային միջավայրում, ենթագիտակցաբար կամ գիտակցաբար անմիջականորեն իր վրա է կրում այդ միջավայրի ազդեցությունը: Ընդհանրապես կրթությունը սահմանվում է որպես մարդու ուսուցման և դաստիարակության նպատակաուղղված գործընթաց, այն որոշակի քանակի գիտելիքի, հմտությունների, կարողությունների, սոցիալական նշանակության փորձի յու-

րացման գործընթաց է և արդյունք¹: Փաստորեն, կրթությունը և՛ գործընթաց է, և՛ գործընթացի արդյունք, որը տեղի է ունենում մարդուն շրջապատող իրականության մեջ՝ որոշակի միջավայրում, որտեղ էլ իրականացվում են նրա զարգացումն ու ձևավորումը: Թանգարանային կրթական միջավայրում ենթադրվում է այցելուի հաղորդակցությունն նյութական և հոգևոր մշակութային արժեքների հետ, կրթամշակութային տարբեր ծրագրերի օգնությամբ՝ հաղորդակցությունն պատմամշակութային ժառանգության հետ: Թանգարանային միջավայրն ազդեցություն է ունենում այցելուի մտածողության վրա՝ նպաստելով թե՛ մտածողության, թե՛ գեղարվեստական ճաշակի զարգացմանը: Մարդը ձեռք է բերում հմտություններ, կարողանում է գնահատել թանգարանային նշանակության առարկաները, մասնակցել թանգարանային երկխոսությանը:

Կրթական գործառույթն իրականացնելիս թանգարանը հիմնվում է իր հավաքածուների, առավել կոնկրետ՝ այդ հավաքածուի կազմի մեջ մտնող թանգարանային առարկայի վրա, որը ճանաչողության և թանգարանային գիտելիքի սկզբնաղբյուրն է: «Կրթական միավորի /իմա՝ գործառույթի/ գլխավոր դերերից են առարկաներն ավելի հասանելի դարձնելը և սովորել ոգեշնչելը²»: Հնարավորինս օգտագործելով իր հավաքածուն՝ թանգարանը, բացի գիտելիքներ փոխանցելուց, նպաստում է նաև գնահատականներ, հայացքներ, հմտություններ և կարողություններ ձևավորելուն: Ավելին, թանգարանը յուրաքանչյուր անհատի մոտ կարող է առա-

¹ Тимофеева Л.С., Словарь музейно-педагогических терминов.// <http://www.twirpx.com>, 07.03.2014.

² Վիսվանի Մելիսա - Մոգան Կումար, Երեխաների համար գրելը Սինգապուրի ասիական քաղաքակրթությունների թանգարանում, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, 2012, էջ 140:

ջացնել պատասխանատվության զգացում՝ մարդու և բնության, մարդու և հասարակության, տարբեր ժողովուրդների միջև հարաբերությունների համար³:

Կարելի է եզրակացնել, որ թանգարանային կրթական միջավայրում այցելուին ուսուցման գործընթացում ներգրավելը կրթական գործառույթ իրականացնող յուրաքանչյուր թանգարանի գլխավոր խնդիրներից է: Թանգարանի՝ հասարակության պահանջներին արձագանքելու կարողությունը և իր գործունեությունը վերակառուցելու ճկունությունը յուրաքանչյուր հավանական այցելուի անմիջական մասնակցության հնարավորություններ են ստեղծում, ինչպես նաև անձի լիարժեք գոյատևման և հասարակական աջակցության երաշխիքն են⁴:

Ժամանակակից թանգարանը հետաքրքրություն է ներկայացնում հասարակության տարբեր տարիքային, սոցիալական խմբերի համար և կարևորագույն դեր ունի անձի սոցիալականացման⁵ գործընթացում, որին ուղղված է նաև թանգարանի կրթական գործառույթը: Թանգարանային կրթությունը վերաբերում է հասարակության բոլոր խմբերին՝ երեխաներ և մեծահասակներ, տեղացի-

³ Музееведение. Воспитание подрастающего поколения в музее: теория, методика, практика. М.: Изд. НИИК, 1989, 171 стр., стр. 6-10.

⁴ Տե՛ս Агапова Д. Культура участия: миллионы диалогов. Музей как пространство образования: игра, диалог, культура участия. Отв. ред. А. Шербакова. Сост. Н. Копеляская, М., 2012, էջ 20:

⁵ Անձի սոցիալականացումն ասելով պիտի հասկանալ՝ ա) նրա ինքնագարգացումը, ինքնորոշումը, ինքնաիրացումը, ինքնաբացահայտումը [Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն // Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, խմբ.՝ Մ. Մանուկյան - «Մանկավարժ» հրատարակչություն, Երևան, 2004, էջ 16], բ) անհատի ձևավորումն ու զարգացումը՝ որպես անձնավորության, ծնված օրվանից մինչև հասունացումը որպես հասարակության անդամի [Արզումանյան Ս., Հոգեբանություն, Երևան, «Ձանգակ-97», 2003, էջ 61]:

ներ և օտարերկրացիներ, առողջ և հատուկ կարիքներ ունեցողներ⁶: Այս կատեգորիաներից և խմբերից յուրաքանչյուրը պահանջում է տարբերակված մոտեցումների և մեթոդների կիրառում՝ հաշվի առնելով վերջիններիս հնարավորություններն ու պահանջմունքները: Անհրաժեշտ է նշել, որ այցելուների տարիքային, սոցիալական խմբերի առանձնահատկությունները պարտադրում են նաև թանգարանային տեղեկատվության հասկանալի և մատչելի փոխանցումը: Պետք է նկատել, որ տեղեկատվության հաղորդման համար թանգարանում բազմապիսի գաղափարների և զգացողությունների վրա հիմնված տարբեր հնարավորություններ կան, որոնք ներառում են. «Տեսողական՝ այն ինչ կարող ենք տեսնել ցուցադրությունում, լսողական՝ տարբեր միջավայրերում հանդես եկող ձայնային տոներ և հնչերանգներ, կինեսթետիկ (ֆիզիկական շարժում)՝ սովորում ենք շոշափելու, զգալու միջոցով, հոտառություն՝ ասելիքը ներկայացվում է բուրմունքների և հոտերի միջոցով, համային՝ ուտեստ ներկայացված ցուցադրությունում պահանջարկ կա նաև ծանոթանալու դրանց համին⁷»:

Թանգարանային տեղեկատվությունը, բացի զգայարաններից, կարելի է փոխանցել նաև տեխնիկական ու տեխնոլոգիական տարբեր միջոցների համադրմամբ: Ինչ վերաբերում է ընկալման գործընթացին, ապա այն կախված է ոչ միայն թանգարանային ցուցադրության կազմակերպումից, օգտագործվող տեխնիկական տարբեր միջոցներից, այլև այցելուների տարիքային առանձնա-

⁶ Основы музееведения: Учебное пособие, / отв.ред. Э. А. Шулепова.- М.: Едиториал УРСС, 2005.-504 стр., стр. 35.

⁷ Ուիմֆրեդրեխեն Նիք - Որբան քիչ, այնքան շատ: //«Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, 2012, էջ 71-72:

հատկություններից, մտավոր և գեղագիտական զարգացման աստիճանից, ընկալվող նյութի վերաբերյալ ունեցած գիտելիքների պաշարից:

ՀՀ թանգարանների հրատապ խնդիրներից է թանգարանային կրթության գործընթացում հատուկ կարիքավոր մարդկանց ներգրավումը: Պետք է նշել, որ հատուկ կարիքավոր անձանց խմբի մեջ մտնում են առողջական սահմանափակումներ ունեցող այցելուները՝ հեռաշարժողական խնդիրներ ունեցող, լսողական և տեսողական, մտավոր, հոգեկան զարգացման խանգարումներով անձինք:

Վերջիններս մյուս կատեգորիաների այցելուների հետ հավասար իրավունքներ ունեն, և թանգարանները ուսուցման համար անհրաժեշտ պայմանների հավասար հնարավորություններ պետք է ստեղծեն՝ չմոռանալով, որ նրանք ավելի շատ են հակված շարժվելու, շոշափելու, հաղորդակցվելու շրջապատող աշխարհի հետ, որպեսզի ճանաչեն:

Այսպիսով՝ ի՞նչ կարող է թանգարանը առաջարկել հատուկ կարիքավոր իր այցելուներին և ինչպե՞ս:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ աշխարհի թանգարաններն իրենց ուշադրության կենտրոնում են պահում նշված խմբերին: Օրինակ՝ ամերիկյան թանգարանների շարքում այս ոլորտում առաջինը Սմիթսոնյան թանգարանն⁸ է, որի մշակած ցուցադրության կազմակերպման լուծումները այսօր օգտագործվում են ամբողջ աշխարհում: Ցուցադրությունը հասանելի դարձնելու առաջին խնդիրը վերաբերում է նախ ցուցանմուշների, տեսաէկրանների տե-

⁸ Русина Лекух, Инклюзивные программы в музеях в США: технологии как залог доступа, http://mart-museum.ru/mart_articles/access-special-needs-in-american-museums// 18.12.2017

դադրմանը այնպիսի բարձրության վրա, որպեսզի հասանելի լինեն սայլակներով անձանց համար: 2013 թ. քանգարանն իր «հատուկ» այցելուներին առաջարկեց ստեղծել ատվիտոգիդ, որը պիտի ներառեր ողջ ցուցադրությունը: Նման առաջարկները լավ են նրանով, որ քանգարանի շուրջ ստեղծվում է համախոհների ընկերակցություն, որն էլ նպաստում է վերջիններիս սոցիալականացման գործընթացին:

Ռուսաստանի Դաշնությունում սահմանափակ կարողություններով մարդկանց սպասարկման համար 2011 թվականից պարտադիր պահանջներ են ներդրվել, և մինչև 2020 թ. հասարակական կյանքի բոլոր նշանակալի ոլորտներում, այդ թվում՝ քանգարաններում, պետք է ստեղծվեն անհրաժեշտ պայմաններ⁹:

Եվրոպական քանգարաններում տարածում ունեն հաշմանդամների համար ծրագրերը, որոնց ընթացքում օգտագործվում են հպեկրանային ընկալումները, ինչպես նաև երաժշտական թերապիայի, պարային վարժությունների մեթոդները՝ կույրերի և սահմանափակ կարողություններով այցելուների համար¹⁰:

Մեկ այլ օրինակ՝ Բրյուսելի երաժշտական գործիքների քանգարանն ունի սահմանափակ կարողություններով անձանց համար նախատեսված կրթական ծրագրեր. այսպես օրինակ՝ տեսողական խնդիրներով այցելուներին առաջարկվում են այնպիսի ծրագրեր, որոնց ժամանակ ակտիվանում են այլ զգայարանները՝ լսողության, շոշափելիքի: Մասնակիցները կարող են շոշափել գործիքները, նրանց առանձին մասերը, խաղերի միջոցով լսել, զգալ և հասկա-

⁹ Музей, доступный для каждого, 13.09.2016//

<http://blog.maugry.ru/blog/technologies/accessible-museum/> / 18.12.2017

¹⁰ Ашаева С. В., Формы работы в музее, с людьми с ограниченными возможностями, Омский научный вестник, серия Общество. История, Современность, №4 (89)2010, стр. 219-222

նալ մթնոլորտը: Դրանք մեկուկեսից-երկու ժամ տևողությամբ ծրագրեր են, որի ընթացքում մասնակիցները կարող են ծանոթանալ երաժշտական գործիքներին, նրանց հնչողությամբ, կարող են նվագել այդ գործիքները¹¹:

Լսողական խանգարումներ ունեցողներին շատ քանգարաններ առաջարկում են բջջային հավելվածներ, որտեղ ողջ տեղեկատվությունը ներկայացվում է տեքստով, որն էլ հարմար է դառնում ընկալման համար: Հատկապես մեծ պահանջարկ ունեն ուղորդող համակարգերն ու ծրագրերը, որոնք թույլ են տալիս այցելուին ինքնուրույն տեղաշարժվել. օրինակ՝ 2014 թվականից Բոստոնի գիտության քանգարանն իրականացնում է ծրագիր, որտեղ ուղորդումը կառուցված է բջջային հավելվածների և տարածքում տեղադրված լուսադիոդային լամպերի փոխազդեցությամբ¹²: Խոսքի և լսողության խանգարումով այցելուները էքսկուրսիաների համառոտ տարբերակներին կարող են ծանոթանալ ժեստերի լեզվով՝ ինտերակտիվ ծրագրերի ընթացքում:

Առանձնապես պետք է նշել աշխարհի քանգարաններում մեծ տարածում գտած, ինչպես նաև 2010 թ. սկսած հայաստանյան քանգարաններում իրականացվող «Hands on» կրթական ծրագրերը, որոնց ընթացքում մասնակիցները կարող են շոշափել, ձեռք տալ ցուցանմուշներին: Այս ծրագրերի ընթացքում օգտագործվում են նաև ցուցանմուշների կրկնօրինակները: Ավելին, 3D տպագրությունը թույլ է տալիս ստեղծել ոչ միայն քանդակների, այլև նկարների տարածական կրկնօրինակները: Տեսողական խանգարումով

¹¹ <http://www.mim.be/> 18.12. 2018

¹² <https://www.mos.org/> 18.12. 2018

այցելումներին առաջարկվում են մաս ծրագրեր, երբ նրանք կարող են ոչ միայն շոշափել ցուցանմուշները, այլև ծանոթանալ բրայլյան տառատեսակով ներկայացված տեղեկատվությանը:

Հատուկ կարիքավոր անձանց խմբերի համար վաղուց կիրառվող տարբերակ է արտ-թերապիան: Այն արվեստի միջոցով նպաստում է անհատի մտավոր, զգայական աճին, ինքնադրսևորվելուն: ՀՀ թանգարաններում նույնպես կիրառվում է այս տարբերակը. օրինակ՝ Ռուսական արվեստի թանգարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, ինչպես մաս Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում, որտեղ այցելուները կոմպոզիտորի երաժշտության տրամադրությամբ իրենց զգացողությունները, մտքումները ներկայացնում են գույների միջոցով: Տուն-թանգարանում այս ծրագրին մեծ ոգևորությամբ մասնակցել են աուտիզմով, ինչպես մաս առողջական այլ խնդիրներ ունեցող այցելուներ: Պետք է նկատել, որ շատ հաճախ այս մարդիկ ստեղծագործական կարողություններով օժտված վառ անհատականություններ են և արվեստի յուրօրինակ ընկալում ունեն: Թանգարանը, հնարավորություն տալով հաղորդակցվել մշակութային արժեքների հետ, նպաստում է այս կատեգորիայի այցելուների ստեղծագործական ինքնությունությանը, օգնում անգամ մասնագիտական կողմնորոշման առումով, բարելավում է նրանց կյանքի որակը:

Այսպիսով՝ հատուկ կարիքավոր անձանց խմբերին թանգարանային տեղեկատվությունը հասանելի դարձնելու համար կիրառվում են աուդիո, վիդեո մեթոդները, տեքստերի օգտագործումը, մուլտիմեդիայի հնարավորությունների օգտագործումը, ցուցանմուշների մակետների, կրկնօրինակների օգտագործումը, ժեստերի լեզուն, բրայ-

լյան տառատեսակի օգտագործումը, նորագույն տեխնոլոգիաների հնարավորությունները և այլն:

Ամփոփելով կարելի է նշել, որ ի տարբերություն ամերիկյան, եվրոպական, ռուսական թանգարանների՝ հայաստանյան թանգարաններում հատուկ կարիքավոր անձանց համար նախատեսված սակավաթիվ կրթական ծրագրեր են իրականացվում: Միաժամանակ տեղական թանգարաններն անհասանելի են մնում ոչ միայն թանգարանի ներսում տեղաշարժվելու, այլև մինչև թանգարան հասնելու առումով: Թեքահարթակների, տեսողական խանգարում ունեցողների համար կիրառվող ուղենշող ժապավենների բացակայությունը, թանգարանների կառույցների անհամապատասխանությունը անհասանելիության պատճառ են դառնում: Թանգարանի ներսում նրանց տեղաշարժվելուն հիմնականում խոչընդոտում են բազմաթիվ աստիճանավանդակների առկայությունը, վերելակների, տրամադրվող սայլակների բացակայությունը և այլն: Այս կատեգորիայի մարդկանց հետ աշխատելիս առանձնակի կարևորվում են նաև թանգարանային աշխատակիցների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, կրթական ծրագրերին հոգեբանների ներգրավումը, այցելուների մտավոր և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը:

Այսպիսով՝ չնայած ՀՀ թանգարանները վերջին տարիներին իրականացնում են կրթական ծրագրեր, սակայն կարելի է ասել, որ դրանք շատ քիչ են և բավարար չեն հատուկ կարիքավոր անձանց կրթությունը թանգարանային միջավայրում ապահովելու համար:

Առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեն: Դրանք են.

- քանդարանների տեխնիկական վերազինում, որը ցուցադրությունը կդարձնի առավել հասանելի,
- ցուցասրահների կառուցվածքի փոփոխություն՝ հարմարեցնելով կարիքավոր խմբերի ազատ տեղաշարժման համար,
- շարժման ուղիները մատնանշող, օրինակ՝ ժապավենների օգտագործում,
- էքսկուրսիոն ծրագրերի հարմարեցում,
- էքսկուրսիաների կազմակերպում՝ խաղային թերապիայի, ավագային թերապիայի, հեքիաթասացության թերապիայի տարրերով և այլն,
- քանդարանների աշխատակիցների վերապատրաստում՝ արդյունքում այս կատեգորիայից յուրաքանչյուր խմբի հետ աշխատելու մեթոդիկային տիրապետելու նպատակով:

Հատուկ կարիքավոր անձանցից հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար է նախատեսված Արամ Խաչատրյանի տուն-քանդարանի «Ու՞ր են տանում ճամփաները» մոդ կրթական ծրագիրը, որն իրականացվում է ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինքերնեյշնալի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Տուն-քանդարանում բազմաթիվ ծրագրեր են իրականացվում, սակայն մինչ օրս մեծահասակներին ուղղված ծրագրերին հատուկ ուշադրություն չի դարձվել: Ավելին, տուն-քանդարանը մշտապես անմատչելի և անհասանելի է եղել հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: Վերոնշյալ խնդիրները, այցելուների պահանջների արագընթաց փոփոխությունները, ինչպես նաև Արամ Խաչատրյանի համեր-

գային գործունեությունը ԽՍՀՄ սահմաններից դուրս համապարփակ ներկայացնելու կարևորությունը հաշվի առնելով՝ առաջարկվում է սույն ծրագիրը: Ծրագրի մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու 20-րդ դարի մշակութային բազմաշերտությամբ, տեղեկություն ստանալու նշանավոր երաժիշտների, դերասանների, հասարակական գործիչների և այլոց մասին, մարդիկ, որոնք այս կամ այն չափով առնչություն են ունեցել Ա. Խաչատրյանի հետ: Այս նպատակին հասնելու համար անդրադարձ է կատարվել այն փաստին, որ Ա. Խաչատրյանն իր համերգային գործունեության ընթացքում հյուրախաղերով հանդես է եկել 50-ից ավելի երկրների բներում, նշանավոր համերգասրահներում, անվանի երաժիշտների հետ: Շրջագայություններն ուղեկցվել են բազմաթիվ հանդիպումներով (սկսած Հռոմի պապից, Չ. Չապլինից, Է. Հեմինգուեյից մինչև տեղի հայկական համայնքի ներկայացուցիչները), ինչպես նաև հետաքրքրաշարժ պատմություններով:

Ծրագիրը նախատեսում է ստեղծել մի այնպիսի հարթակ, որը՝

- կներկայացնի Ա. Խաչատրյանի համերգային շրջագայություններով այցելած երկրների քարտեզագրությունը, ներառյալ այն քաղաքները, որոնք կարևոր դեր են կատարել նրա կյանքում,
- տեղեկություն կտա նշված բոլոր հանդիպումների մասին, և որտեղ հավաքված կլինեն հետաքրքրաշարժ պատմություններ:

Ծրագիրն առաջին հերթին նախատեսված է 16 տարեկանից բարձր հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: Թիրախային խմբի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով

այն, որ տուն-թանգարանը չունի սոցիալական այս խմբի համար նախատեսված կրթական ծրագրեր, որը պատճառաբանվում է քե-
քահարթականների բացակայությամբ, տուն-թանգարանի մուտքի,
ինչպես նաև ներսի բազմաթիվ աստիճանավանդակների առկայու-
թյամբ, որոնք խոչընդոտում են հենաշարժողական խնդիրներ ունե-
ցողներին տեղաշարժվելու թանգարանում, ինչի պատճառով էլ տա-
րիներ շարունակ տուն-թանգարանը անհասանելի է մնում նրանց
համար: Այսուհանդերձ, բացի նշված խմբի անձանցից, ծրագրին
կարող են մասնակցել նաև բոլոր այն մեծահասակները, որոնք հե-
տաքրքրված կլինեն 20-րդ դարի մշակութային կյանքով, Ա. Խա-
չատրյանի համերգային գործունեությամբ:

Ծրագիրը Բեռլինի Ֆրիդրիխսհայն-Կրոյցբերգի թանգարանի
մի մտահղացման հայաստանյան դրսևորումն է: Ծրագրի համար
նախատեսված տարածքում տեղադրվելու է աշխարհի քարտեզը:
Քարտեզի վրա նշվելու են այն վայրերը՝ մոտ 50-ից ավելի երկրներ,
որտեղ հյուրախաղերով հանդես է եկել Ա. Խաչատրյանը:
Ընդգրկվելու են նաև շրջագայությունների հետ հետաքրքրաշարժ
պատմություններ, տեղեկություններ՝ համերգների, ինչպես նաև Ա.
Խաչատրյանի հետ առնչություն ունեցած մարդկանց վերաբերյալ:
Բջջային հավելվածի միջոցով հնարավոր կլինի ստանալ տվյալ
երկրի հետ կապված ամբողջ տեղեկատվությունը: Մասնակիցը
հնարավորություն կունենա շրջագայել Ա. Խաչատրյանի անցած
ճամփաներով, լսել այն ստեղծագործությունները, որոնք կատար-
վել են տվյալ համերգների ընթացքում: Ա. Խաչատրյանի անցած
ճամփաներով «քայլելը» մասնակցի վրա զգայական ազդեցություն
է ապահովում՝ հնարավորություն տալով տեսանելի և առավել

պատկերավոր ընկալելու կոմպոզիտորի շրջագայությունների աշխարհագրությունը: Մասնակիցը կարող է իր հետաքրքրություններին համապատասխան ընտրել սեփական ճանապարհը:

Ծրագիրն անհատական է, որի պահանջարկը, ըստ մեր ուսումնասիրությունների, մեծ է: Բովանդակային առումով ևս ծրագիրն առանձնահատուկ է. տուն-թանգարանում Ա. Խաչատրյանի համերգային շրջագայությունների մասին ներկայացվում է միայն շրջայցի ընթացքում, այն էլ՝ սահմանափակ տեղեկություններ, ինչպես նաև չի տրվում շրջագայությունների ամբողջական պատկերը: Ստեղծվող ինտերակտիվ քարտեզի վրա առանձնացվելու են այն երկրներն ու քաղաքները, որոնք կապված են կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության հետ: Հետագայում այս ծրագիրը կարելի է զարգացնել՝ ստեղծելով նաև ծրագրի առցանց տարբերակը, ինչը նույնպես հայաստանյան թանգարանների կրթական ծրագրերի շարքում նորարարական դրսևորում կլինի:

Անհրաժեշտ է նշել, որ նախատեսվող ինտերակտիվ քարտեզը ստեղծվելու է շարժական տարբերակով, որը հնարավորություն կտա այցելուներին սպասարկել ոչ միայն տուն-թանգարանում, այլև նրա սահմաններից դուրս:

EDUCATION OF PEOPLE WITH DISABILITIES IN THE MUSEUM

Anna Asoyan

*Head of Organizing Exhibitions and
PR Departament in A. Khachaturian museum,
PhD student, Department of Cultural Studies,
YSU Faculty of History*

Educational activities have become an important mission for museums of 20th century. The museum offers alternative options for education, providing non-formal and informal education for society.

One of the most important issues of museum culture in Armenia is the provision of educational environment for all members of the society, including those with special needs. The article provides peculiarities of educational programs for people with special needs with the examples of American, European, Russian, and local museums, as well as the issues of productive work of museums in Armenia especially with this group.

It also presents a new educational program of Aram Khachaturian Museum for adult groups with problems of locomotive apparatus.

ՄԵՃԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԳՈԳԻԿ ԵՎ ԷՎՏԱԳՈԳԻԿ ՄՈԳԵԼԸ

ԱՐՄԻՆԵ ԳԱԼԼԱՔՅԱՆ

*Խ. Արուլյանի անվան ՀՊՄՀ սկզբնական
կրթության ֆակուլտետի փոխդեկան,
Մասնագիտական կրթության և կիրառական
մանկավարժության ամբիոնի դասախոս, մ. գ. ք.*

ՆԱԻԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Խ. Արուլյանի անվան ՀՊՄՀ մասնագիտական
կրթության և կիրառական մանկավարժության
ամբիոնի ասիստենտ, մ. գ. ք.*

***Ինքնակրթության չգրիտ նաև այն ժամանակ,
երբ աշխատում ես ուրիշների կրթության վրա:***

Ա. Դիստերվեզ

Ժամանակակից հասարակության առաջընթացի և զարգացման արդյունքում առաջին պլան է մղվում անձի ինտեգրումը սոցիումի մեջ, այսինքն՝ սկսած դեռևս վաղ տարիքից՝ նա յուրացնում է հասարակական արժեքներն ու սոցիալական փորձը, սակայն անձի ձևավորումը և կայացումը տեղի են ունենում ողջ կյանքի ընթացքում կրթության հենքի վրա:

Գաղտնիք չէ, որ այսօր մեր հասարակությունը «**դպրոց+բուն**» մոդելից անցում է կատարել «**Հարատև ուսումնառության**» մոդելին: Մեր երկրում ոչ ֆորմալ կրթության կարևորությունը պետականորեն ճանաչելու երաշխիք է 2009 թ. ՀՀ կառավարության կողմից պաշ-

տոնապես ընդունված «Ցկյանս ուսումնառության հայեցակարգը», որում ներառված են ոլորտի հիմնական գործառնությունները, խնդիրները, ինչպես նաև դրանց հնարավոր լուծման ուղիները¹: Նախ փորձենք մեկնաբանել, թե ինչ ենք հասկանում՝ ոչ ֆորմալ կրթություն ասելով:

Ոչ ֆորմալ կրթությունը կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն է, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառնության իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի²:

Մարդու կյանքի պատմությունը ցույց է տալիս, որ առանց կրթության մարդը դուրս է մնում կյանքի ընդհանուր շարժընթացից, ուստի մշտապես կարևորվում է մարդու ստացած կրթությունը, հատկապես համակարգված և շարունակական կրթությունը: Ինչ վերաբերում է մեծահասակների կրթությանը, այն իր տեղն ամրապնդել է քաղաքակիրթ և զարգացած հասարակություններում, և դրա իրականացման արդյունավետությանն ուղղվում են մեծ ռեսուրսներ ու ջանքեր: Հետևապես «Հարապի ուսումնառության» հայեցակարգն անչափ կարևոր է ցանկացած բանական էակի

¹ Ա. Ա. Սարգսյան - Մեծահասակների կրթության մեթոդներ և գործողություններ, Երևան, 2016, էջ 98:

² <http://edu.am/2017> ք.:

կյանքում: Հայաստանում նույնպես առկա է պահանջարկ մեծահասակների ոչ ֆորմալ կրթության ապահովման համար:

Մեր պատկերացմամբ նշված հայեցակարգի հիմնական բնութագրիչներն են՝

- ✓ անձի ինքնուրույնությունը և ակտիվությունը,
- ✓ կրթության կապը աշխատաշուկայի և գիտության արագընթաց զարգացման հետ,
- ✓ բոլոր տիպի ուսումնական հաստատությունների հասանելիությունը, հաջորդականությունն ու ամբողջությունը՝ անկախ ուսուցման ձևերից, մեթոդներից և միջոցներից,
- ✓ կրթության միջոցով սովորողների ադապտացիան կյանքի արագ փոփոխվող պայմաններին և կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին:

Այսինքն՝ մարդու անընդհատ կրթությունը պայմանավորված է ինչպես հասարակության սոցիալական պատվերով, այնպես էլ մարդու պահանջմունքներով:

Ժամանակակից հասարակության տնտեսական, տեխնիկական զարգացումները, աշխատաշուկայում մրցունակ լինելը դրդում են մարդուն անընդհատ ձեռք բերել նոր գիտելիքներ, զարգացնել հմտություններն ու կարողությունները: Այսինքն՝ կրթությունը կոչված է օգնելու մարդուն հարմարվել նոր գործունեության մեջ անընդհատ փոփոխվող պայմաններում: Ուստի **«Հարապի ուսումնառության»** հայեցակարգը անհրաժեշտ է դիտարկել ժամանակային (ուսումնառությունը դիտարկվում է ողջ կյանքի ընթացքում), անձնային և տարածության սահմաններում:

Մեծահասակների կրթությամբ և դաստիարակությամբ զբաղվող գիտությունը՝ **«անդրագոգիկա»**-ն, գիտական գրականության մեջ տարբեր ձևով է մեկնաբանվում.

- ✓ «գիտություն՝ մարդու ձևավորման և նրա ողջ կյանքի մասին» (Պ. Ֆուրտե),
- ✓ «տեսական մոտեցում մեծահասակների կրթությանը» (Նոթինգեմական համալսարանի մի խումբ հետազոտողներ),
- ✓ «արվեստ և գիտություն օգնելու մեծահասակին ուսումնառության մեջ» (Մ. Շ. Նոուլզ),
- ✓ «մանկավարժական գիտության նշանակալի ոլորտներից մեկը, որն ընդգրկում է մեծահասակների կրթության և դաստիարակության տեսական և կիրառական խնդիրները» (Բ. Մ. Բիմ-Բադ)³:

Իհարկե մոտեցումները շատ են ու տարբեր, սակայն այստեղից հետևում է, որ **«անդրագոգիկա»** եզրույթը իրենից ներկայացնում է գիտագործնական բնագավառ, որը հետազոտում և սահմանում է մեծահասակների կրթական գործընթացի օրինաչափությունները: Ներկայումս **«անդրագոգիկա»** հասկացությունը, նրա կատեգորիաները, հայեցակարգերը, օրինաչափություններն ու սկզբունքները գտնվում են ակտիվ կայացման փուլում: Ուստի **«Հարապի ուսումնառություն»**, քե՞ն **«Կրթություն ողջ կյանքի ընթացքում»**, ըստ էության նույն բովանդակությունն են արտահայտում, համաձայն որի՝ մարդը ամբողջ կյանքում չպետք է դադարի սովորելուց և ամենակարևորը սովորի ինչպես սովորել, այ սա է հիմնական առանցքը:

³ Т. А. Василькова, Основы Андрагогики, М. 2009, с. 14.

Հատկանշական է կանադացի հետազոտող Ռ. Կիդի տեսակետը, որը բնութագրական է մեկնաբանում «**Շարունակական կրթություն**» *հասկացությունը* (lifelong education). «Շարունակական կրթությունը սկսվում է դեռևս ընտանիքից և մանկապարտեզից: Այն ընդգրկում է իր մեջ ողջ դպրոցական տարիքը և երիտասարդությունը, ներառում է մեծահասակների բարձրագույն կրթությունը, ինչպես նաև ծերերի կրթական գործընթացը⁴»: Այսինքն՝ մարդը ցանկացած տարիքում պետք է սովորի, և պայմանավորված անձնավորության տարիքային ճգնաժամերով՝ կրթությունը լուծում է տարբեր խնդիրներ՝ հանդես գալով որպես մեծահասակների համար արդյունավետ ադապտիվ համակարգ:

Ներկայումս ՀՀ-ում գործում են մի շարք հեղինակավոր դպրոցներ, ռեսուրս կենտրոններ, հասարակական կազմակերպություններ՝ միջազգային և տեղական, բիզնես դպրոցներ, օտար լեզուների ուսուցման կենտրոններ, առողջ ապրելակերպի խորհրդատվություն իրականացնող կազմակերպություններ, տարբեր ուղղվածության ակումբներ, ամառային դպրոցներ, մեղիա դպրոցներ, մի շարք այլ հարթակներ, որոնք իրականացնում են բազմաթիվ սեմինարներ, դասախոսություններ, քննարկումներ, կլոր սեղաններ, դեբատներ, քրեյնինգներ՝ ուղղված մեծահասակների կոնկրետ հմտությունների, սեփական հաջողությունների մախսագծմանը և զարգացմանը, կրթական տուրիզմի կենտրոններ, որոնք առաջարկում են քեմատիկ հետաքրքիր էքսկուրսիաներ և աննախադեպ ժամանցի կազմակերպում դեպի մշակութային օջախներ: Մեծահասակի

⁴ Kidd R. The implication of continuing learning . – Toronto, 1966.

կյանքում նմանօրինակ ոչ ֆորմալ հարթակները ոչ միայն օգնում են ձեռք բերել նոր գիտելիքներ, այլև զարգացնում են ընդհանուր մշակույթը, փոխում նրա աշխարհայացքը, տալիս հուզական նոր լիցքեր՝ առաջացնելով հետաքրքրություն և ցանկություն ավելի խոր ուսումնասիրելու տվյալ երևույթը, որն ինքնին հիմք է հանդիսանալու մեծահասակի հետագա ինքնակրթության: ՀՀ-ում՝ մի շարք թանգարաններում, կան մեծահասակների համար նախատեսված կրթական ծրագրեր, որոնք պարբերաբար համալրվում են արտասահմանյան փորձով: Պարզապես հանրության բոլոր շերտերին նման տիպի կառույցների և հարթակների հասանելիությունը մեր օրերում իրատեսական չէ. դրա համար կան մի շարք պատճառներ՝ սկսած մարդու անձնային առանձնահատկություններից, հետաքրքրություններից, նախասիրություններից, խառնվածքի տիպաբանությունից, «Ես կոնցեպցիայից», անձի փիլիսոփայությունից, ներքին պահանջմունքներից ու աշխարհայացքից մինչև ինքնաճանաչում և անհրաժեշտ գիտակցության ձևավորում:

Լինելով պատերազմող երկիր, արձանագրելով տնտեսական աճի ցածր ցուցանիշներ, գտնվելով սոցիալական ծանր վիճակում, ունենալով գործազրկության բարձր մակարդակ՝ այսօր առավել քան կարևոր և կենսական նշանակություն է ձեռք բերում մեծահասակների կրթության հիմնախնդրի արդիականությունը: Ենթադրվում է, որ հասարակության «սոցիալական ապահովումը» պետք է ընկած լինի ժողովրդավարական պետության սոցիալական քաղաքականության հիմքում և համարվի նրա առանցքը, մինչդեռ մեր իրականության պատկերը շատ տխուր է: Հատկապես այն ավելի ցայտուն է արտահայտվում «սոցիալապես ոչ պաշտպանված

բնակչության խմբի մեծահասակների» շրջանում՝ նրանց, ովքեր հաշմանդամ են, գործազուրկ, նախկին զինծառայողներ են, բանտարկյալներ և այլն:

Մինչդեռ Համբուրգյան դեկլարացիայում մեծահասակների կրթության մասին նշվում է, որ մեծահասակների կրթությունը ոչ միայն իրավունք է, այլև 21-րդ դարի դուռը բացող բանալիներից մեկը⁵: Այստեղից եզրակացնում ենք, որ հանրության մեջ առկա խնդիրների (թե՛ ներանձնային, թե՛ միջանձնային և անգամ միջպետական) մեծ մասի արդյունավետ լուծումն ու կարգավորումը հնարավոր կլինեն՝ հասարակության կրթական ցենզը բարձրացնելով, գիտակցության նոր մակարդակի հասցնելով, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ձևավորելով և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ներգրավվածություն ապահովելով: Իսկ այդպիսի քաղաքացու ձևավորումը, նման կերպարի կերտումը պետք է իրականացվեն հոգեբանորեն առողջ ընտանիքներում՝ սոցիալական մի շարք ինստիտուտների հետ ակտիվ համագործակցության արդյունքում: Բարդ գործընթաց է սոցիալական ինստիտուտների առջև դրված, քանի որ կրթության և դաստիարակության միջոցով անձնավորության գիտակցությունը պետք է հասցնել այնպիսի մակարդակի, որ նա կարողանա գիտակցել, թե իրեն ինչ է անհրաժեշտ սովորել, իր պրիզմայով անցկացնի կարևորն ու առաջնայինը, որպեսզի կարողանա ճիշտ դրսևորվել հասարակության մեջ և հասնել ինքնիրացման: Իհարկե դրա հիմքում մի շարք անդրագոգիական ուսուցման սկզբունքներ են ընկած, որի պահանջներին համապա-

⁵ И. А. Колесникова, Основы Андрагогики, М. 2003, с. 195.

տասխան՝ բուիը պետք է կարողանա իրականացնել ուսուցման գործընթացը: Նկատենք՝ բուիերում փոխվել է գնահատման համակարգը, կարևորվում է ուսանողի մոտ վերջնարդյունքների ձևավորումը, խրախուսվում է ուսանողի ինքնավարությունը, հետևապես անհրաժեշտ է հաշվի առնել ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակ անդրագոգիական այն սկզբունքներ, որոնք հիմք են հանդիսանալու ուսանողի դրոշմատճառների զարգացմանը, դրանք են՝ առաջնայնությունը տրվում է ուսանողի կողմից սեփական ուսուցման գործընթացի ինքնուրույն կազմակերպմանը, դասախոսի հետ համատեղ գործունեությանը, անհատականացված ուսուցմանը, ուսուցման կոնտեքստայնությանը, սովորողի կենսափորձը, ուսուցման հաջորդականությանը, էլեկտիվ ուսուցմանը, ուսուցման վերջնարդյունքների արդիականացմանը, կրթական պահանջմունքների զարգացմանը: Նշված բոլոր սկզբունքների հիման վրա բուիում կրթական գործընթացի իրականացումը ֆորմալ մակարդակում անհրաժեշտություն է, քանի որ դա նպաստելու է անձնավորությանը՝ հետագայում ինքնակրթությամբ զբաղվելուն և զուգահեռ հանդես գալուն նաև ոչ ֆորմալ կրթական հարթակում: Միանշանակ ասել, որ այս ուսուցման սկզբունքներն ամբողջական են բուհական միջավայրի անդրագոգիկ մոդելի համար, չի կարելի, քանզի ենթադրվում է դրանց հետագա զարգացում, և անհնարին է հաշվի չառնել բուհական միջավայրի առանձնահատկությունները, պայմանները, ուսանողների տարիքային և անհատական առանձնահատկություններն ու հնարավորությունները: Եվ քանի որ անդրագոգիկ մոդելը հիմնվում է բացառապես սովորողի տարիքային առանձնահատկությունների վրա, իսկ մարդը 18-23 (25) տարեկան

համարվում է մեծահասակ կենսաբանական և սոցիալական առումով, գտնվում է հասունության կյանքի շեմին, որտեղ ինքնուրույն որոշումներ կայացնելու, գործունեություն ծավալելու և հասարակության մեջ ինքնուրույն դրսևորվելու կյանքի փուլն է, ուստի մանկավարժական մոդելին արդեն փոխարինելու է գալիս անդրագոգիկ մոդելը և հաշվի չառնել այդ ամենը, նշանակում է խոչընդոտել այն բոլոր գործընթացներին, որոնք կենսականորեն կարևոր են տարիքային այս խմբի համար:

Օրինակ՝ Ի. Ա. Ջիմնյայի կարծիքով՝ մարդու կյանքի նշված փուլն առանձնանում է ճանաչողական մոտիվացիայի բարձր մակարդակով, ակտիվ «մշակույթի կիրառմամբ», սոցիալական և հարողակցական բարձր ակտիվությամբ, սոցիալական և մտավոր հասունության ներդաշնակությամբ⁶:

Այս համատեքստում էլ մենք հարցումներ իրականացրինք ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Մեր հիմնական նպատակն էր պարզել մեծահասակների կրթական կարիքները ոչ ֆորմալ կրթական մակարդակում, սովորելու դրդապատճառները, առկա խոչընդոտները և դրանով պայմանավորված՝ բացահայտել՝ ինչպես են նրանք նախագծում և ծրագրում իրենց **«կարիերան»** և սեփական **«հաջողության բանաձևը» (հարցաթերթիկի մուշորի-նակը կցվում է հոդվածի վերջում):**

Մենք հարցումներն իրականացրել ենք ֆոկուս խմբերով, որի համար նախապես կատարել ենք նպատակային հարցվողների ընտրություն (ընդամենը 18 հոգի) և բաժանել նրանց երեք խմբերի՝

⁶ Змеев С. И., Андрагогика: основы теории, истории и технологии обучения взрослых. -М., 2007, с. 216.

ըստ համապատասխան կատեգորիաների՝ 6 ուսանողներ (տարբեր համալսարաններում սովորող, այդ թվում նաև՝ պետական և ոչ պետական), 6 գործազուրկներ (նրանցից մի քանիսը առողջական խնդիրների պատճառով անաշխատունակ էին) և 6 քաղաքացիներ (նրանք աշխատում էին պետական համակարգում, միայն մեկն ուներ մասնավոր տնտեսություն և զբաղվում էր անասնապահությամբ):

Ընդհանուր առմամբ հարցվողներին տրվել են 15 հարցեր, որի արդյունքում մեզ համար պարզ դարձավ կոնկրետ մասնակցողների կրթական կարիքները, նրանց գործունեության մոտիվները, առկա խոչընդոտները, նրանց հետագայի հետ կապված պլանները: Նախ մշեն, որ հարցվողների 60%-ը արական սեռի, իսկ մնացածը իգական սեռի ներկայացուցիչ էր, ընդ որում, հարցվողների 50%-ը 35 և ավելի տարեկան անձինք էին: Հարցվողների կեսից ավելին կարևորել էր կրթության դերն իրենց կյանքում, իսկ մի մասն էլ կարծում էր, որ իրենց տարիքը մեծ է սովորելու համար: Փաստենք, որ դրանք հիմնականում այն անձինք էին, ովքեր գործազուրկ էին (տնտեսապես ոչ ակտիվ), պետությունից ստանում էին սոցիալական աջակցություն և մտադրություն չունեին բարելավելու իրենց կենսամակարդակը. նրանք հարմարման և հաղորդակցման խնդիրներ ունեին, սակայն չէին գիտակցում դա: Երբ փորձեցինք պարզել՝ արդյոք նրանք մասնակցո՞ւմ են մարզպետարանի, զբաղվածության կենտրոնի կողմից իրականացվող որևիցե միջոցառման, սեմինարի կամ ձգտո՞ւմ են ձեռք բերել նոր հմտություններ աշխատելու, իրենց կյանքը բարելավելու համար, պատասխանը կրկին բացասական էր: Նման հոգեվիճակում երկարատև գտնվող անձը դրսևորում է

ասոցիալական վարքագիծ, դառնում է անտարբեր սեփական ընտանիքի, կյանքի, հասարակության նկատմամբ, բավարարվում են նրա ցածրագույն պահանջմունքները, և նա այլևս չի ձգտում կատարելության: Հուրախություն մեզ հարցման ընթացքում պարզվեց, որ հարցվողների մեծ մասը զբաղվում է ընթերցանությամբ, կարողանում է կազմակերպել իր ազատ ժամանցը, հաճախում է համայնքում կազմակերպվող տարբեր միջոցառումներին, մշակութային խմբակներին, իրեն համարում է հասարակությանը համընթաց քայլող մարդ: Այն հարցին, թե ինչպես են վերաբերվում ոչ ֆորմալ (հիարկե կանխավ մեր կողմից մեկնաբանվեց) կրթությանը, և ինչ առկա խոչընդոտներ կան դրա իրականացման համար, հարցվածների մի մասը դժվարացել էր պատասխանել, իսկ մնացած մասը նշել էր, որ ոչ մի հանգամանք չի խոչընդոտում իրենց ոչ ֆորմալ կրթության համար: Հարցվածների 40%-ը հստակ պատկերացնում էր իր հետագա «**կարիերայի**» ընթացքը և նախանշում «**սեփական հաջողության բանաձևը**», 30%-ը պատասխանել էր՝ չգիտեմ, իսկ 30%-ը դժվարացել էր պատասխանել, այսինքն՝ հարցվածների 60%-ի համար կյանքի տվյալ փուլում առաջնային և կարևոր չէր համարվում սեփական կարիերան, ինչը երևում էր հետագա կյանքի նկատմամբ նրանց ունեցած անորոշ տրամադրվածությամբ, ակնկալիքների և պլանների բացակայությունից: Իսկ այն հարցին, թե ինչպե՞ս են գնահատում մեծահասակների կրթության իրականացման հասանելիությունը իրենց տարածաշրջանի բնակիչների համար, նրանց մեծ մասը դժվարացել էր պատասխանել, իսկ մի մասն էլ գնահատել էր «բավարար»: Սա մեկ անգամ ևս խոսում է այն մասին, որ անհրաժեշտ է, որպեսզի մարգալետաբանները, քաղա-

քապետարաններն անընդհատ մշտադիտարկում անցկացնեն և վերլուծեն ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, ուսումնասիրեն և համադրեն միջազգային փորձը, վեր հանեն մարզի կամ քաղաքի առանձնահատկություններով պայմանավորված մարդկանց կրթական կարիքները և դրանք տրամադրեն համապատասխան Տարածքային զբաղվածության կենտրոններին՝ ակտիվ համագործակցելով տարբեր ՀԿ-ների, ռեսուրս կենտրոնների և մի շարք այլ ինստիտուտների հետ: Հետևապես պետք է ստեղծվեն ֆունկցիոնալ համակարգ՝ անհրաժեշտ պայմաններով, ենթակառուցվածքներով, համապատասխան հարթակներ՝ մեծահասակներին համար ապահովելու հասանելի կրթություն:

Ամփոփելով մեր հետազոտության արդյունքները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ Հայաստանում հասարակության մեջ առկա են կարծրատիպեր, որոնք խոչընդոտում են հասարակության կրթության շարունակականության ապահովման, ինքնազարգացման և ինքնակատարելագործման: Խնդրի բուն պատճառը սխալ մտածելակերպն է: Անհրաժեշտ է գտնել այն կենսական խթանները, շարժիչ ուժը, որոնք կողոպեն անձնավորությանը դեպի ինքնակրթության՝ ապահովելով նրա փիլիսոփայության դիալեկտիկան: Մեր իրականության մեջ մի շարք հարթակներ, այդ թվում՝ տարբեր հեղինակային դպրոցների ծառայություններ, հասանելի են միայն վճարելու պարագայում, գոյություն ունի նաև շարունակական ուսուցման վերաբերյալ տեղեկատվության պակաս: Հատկապես այդ հիմնախնդիրն առավել քան կարևոր է «սոցիալապես խոցելի» խավերի շրջանում, որոնք կկարողանան կրթության միջոցով հարմարվել և դուրս չմնալ կյանքի արագընթաց հոսքից: Մարդիկ պետք

է գիտակցեն, որ իրենց կյանքի որակը հնարավոր է բարելավել՝ լինելով կրթված և պատրաստ հարատև ուսումնառության: Սա պետք է մշտապես քարոզվի և տարածվի Հայաստանի Հանրապետության՝ հատկապես հեռավոր ծայրամասերում: Այսօր արդեն գիտելիքների միջոցով մարդկային շահերն ու սոցիալական վիճակը բարելավելու ժամանակն է:

Մեր կողմից ուսումնասիրված գիտամանկավարժական գրականության, ուսուցման անդրագոգիկ մի շարք սկզբունքների և կատարված հետազոտության արդյունքների հիման վրա, ինչպես նաև կանխատեսելով հասարակական հետագա զարգացումները՝ առաջարկում ենք **«Մեծահասակների ոչ ֆորմալ կրթության անդրագոգիկ և էվտագոգիկ մոդելը»**.

- ✓ Անհրաժեշտ տեղեկատվության ժամանակին հասանելիություն:
- ✓ Տարբեր էլեկտրոնային հարթակներից (օրինակ՝ <https://www.skill.am/>, <https://www.boon.tv>, www.mycareer.am և այլն) օգտվելու կարողություն:
- ✓ Մասնակցություն տարբեր տիպի սեմինարներին, ոչ մասնագիտական վերապատրաստումներին, թրեյնինգներին, դեբատներին և այլն:
- ✓ Սեփական հաջողության բանաձևը նախագծելու և կարիերայի հաջորդական քայլերը պլանավորելու կարողություն:
- ✓ Սեփական ուժեղ կողմերի վրա հենվելու կարողություն:
- ✓ Սեփական ժամանակը ճիշտ և արդյունավետ պլանավորել և օգտագործել:
- ✓ Հոգեբանորեն պատրաստ լինել հարատև ուսումնառության:

- ✓ Սովորել ինչպես սովորել:
- ✓ Անդամակցություն տարբեր տիպի հեղինակային դպրոցների, ակումբներին, ՀԿ-ին, ռեսուրս կենտրոններին և այլն:
- ✓ Ինքնաճանաչում և ինքնաիրացում:
- ✓ Միջմշակութային հաղորդակցման կարողություն:
- ✓ Սեփական հույզերը կառավարելու կարողություն:
- ✓ Համագործակցելու կարողություն:
- ✓ Վալեռլոգիական գրագիտության մշակույթի տիրապետում:
- ✓ Օտար լեզուներ սովորել:
- ✓ Ժամանակակից տեղեկատվական տարբեր ռեսուրսներից օգտվելու կարողություն:
- ✓ Կյանքի նկատմամբ դրական դիրքորոշում ունենալ:
- ✓ Կոմպետենցիաների զարգացում:
- ✓ Անդրադարձ կատարելու կարողություն:
- ✓ Ստեղծագործական և կառուցողական մտածելակերպի կրող:
- ✓ Չգտումը դեպի մասնագիտական ակմեին:

Մեր կարծիքով՝ այս մոդելն արդիական է, այն հնարավորություն կտա անձին ոչ միայն վերլուծելու և մշակելու ստացված տեղեկատվությունը, զբաղվելու ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ, այլև արդյունավետ և հաջողված ձևաչափով շարժվելու առաջ՝ դիմակայելով կյանքի մարտահրավերներին: Անճնադրությանը սովորեցնել և պատրաստել ոչ ֆորմալ կրթության անդրագոյիկ մոդելին, անհրաժեշտ է դեռևս դպրոցական նստարանից՝ պատրաստելով ինքնակրթության ամբողջ կյանքի ընթացքում: Իսկ դրա համար լավագույն օրինակը կարող է լինել մանկավարժը:

INFORMAL ADULT EDUCATION ANDRAGOGICAL AND EVTAGOGICAL MODEL

Armine Dallakyan

*PhD, Primary education faculty, Deputy dean, lecturer, Department of
professional education and applied pedagogy, ASPU after Kh. Abovyan*

Naira Martirosyan

*PhD, lecturer, Department of professional education
and applied pedagogy, ASPU after Kh. Abovyan*

The article discusses the importance and actual problems of informal education. Services provided by public schools and clubs and a number of platforms for adults are being interpreted. Modern approaches are also being analyzed due to which it is possible to integrate adults into society. And ways to solve this problem are also proposed. Inquiries about informal education are being implemented in Focus Groups. The experiment is done to eliminate the educational needs of today's adults. An andragogical and evtagogical model of informal adult education is being developed and offered based on a number of principles.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ.

21-ՐԴ ԴԱՐՈՒՄ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀՈՉԱԿԱԳԻՐ.....3

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Վանիկ Մելքոնյան
ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ԱՐԴԻ
ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԿԻՐԱՌՍԱՄԲ27

Արտակ Խաչատրյան
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍԱ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ 46

Մարինե Յարմալոյան
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՇՈՒՐՁ.....57

Արայոմ Տեր-Հարությունյան, Աննա Գաբրիելյան
ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԱՄՆ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....71

Արեմ Մկրտչյան
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ80

Սամվել Պիպոյան
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....95

Մարինա Գալստյան	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ	
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ	
ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՐՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ.....	111
Եվգինե Վարդանյան	
ՀԱՍՏՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ	
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ	
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	130
Արեւիկ Սարգսյան	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ	
ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ	
ՉԼՈՒԾՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ.....	146

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մկրտչյան	
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ	
ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....	163
Ժաննա Անդրեասյան	
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ	174
Աննա Ալեքսանյան	
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ	
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇԱՅԻՆ	
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ.....	192

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ՏՀՏ (ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ) ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արտաշես Խուրշուդյան	
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ	
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ	
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԿԱ	
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	209

Քրիստինա Սարգսյան	
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ	
ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՍԱՄԲ	
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	233

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Աննա Ադամյան	
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ	
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	251
Աննա Ասոյան	
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ	
ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.....	268
Արմինե Դալլաթյան, Նաիրա Մարտիրոսյան	
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ	
ԱՆԴՐԱԳՈԳԻԿ ԵՎ ԷՎՏԱԳՈԳԻԿ ՄՈԴԵԼԸ	283

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 23.07.2018:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 18.875:
Տպաքանակը՝ 120:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am